

# ՍՈՒՐԲ ՀՈԳԻ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## ՋՈՆ ԲԻԿԵՐ

ԷՂԻՍՈՆ ԲԻԿԵՐԻ ՀԵՏ



ԸՆԴԳՐԿՈՒՄ Է «ՍՈՒՐԲ ՀՈԳԻ» DVD ՀԱԿԱՔԱԾՈՒՆ

## Թանկագին ընկեր,

Դուք Աստծո ուրախությունն եք և Նրա սրտի բերկրանքը: Նա փափագում է ճանաչել ձեզ և ճանաչվել ձեր կողմից: Իր հետ ավելի մտերմանալու համար Աստված հրավիրել է ձեզ համագործակցության՝ տարածելու Երկնքի արքայությունը երկրի վրա: Ինչպես ասաց Պողոս առաքյալը՝ Աստված «նորովի ստեղծեց մեզ Քրիստոս Հիսուսում, որպեսզի կարողանանք կատարել այն բարի գործերը, որ Նա վաղուց ծրագրել էր մեզ համար» (Եփես. 2.10, NLT):

Մենք Աստծո զավակներն ենք և ցանկանում ենք հաճեցնել մեր Հորը: Այնուամենայնիվ, հաճախ չենք նկատում այն, ինչ Հիսուսը պարզորեն ասաց: Երբ մտերմորեն շփվում ենք Սուրբ Հոգու հետ, մենք զորություն ենք ստանում՝ Աստծո ծրագրերն իրականացնելու համար: Աստված չի ցանկանում, որ դուք պարզապես գործեք Իր համար. Նա հրավիրում է ձեզ՝ գործելու Իր հետ: Նա ցանկանում է լինել ձեր լավագույն ընկերը, կիսել ձեզ հետ ձեր կյանքի յուրաքանչյուր պահը: Նա ցանկանում է խոսել ձեզ հետ, խրախուսել և զորացնել ձեզ: Չկա ավելի հիասքանչ շփում, քան այն, որ Աստված առաջարկում է ձեզ Իր Հոգու միջոցով:

Տերը խոսեց սրտիս՝ դրդելով փոխանցել այս ուղերձը ձեզ և ձեր ծառայակից հոգևոր ավագներին ամբողջ աշխարհով: Խնդրում եմ, ընդունե՛ք սա իմ սիրո և աջակցության հետ միասին: Փոխանցե՛ք այս ուղերձը նրանց, ում ճանաչում եք: Ես հավատում եմ, որ այն կդառնա ավելի խորը և հարատև հաղորդության սկիզբ Աստծո հետ՝ թե՛ ձեր, թե՛ ձեր խմբակների անդամների համար:

Եթե դուք Աստծո զավակ եք, Սուրբ Հոգին խոստացել է, որ երբեք չի թողնի և չի լքի ձեզ: Նրա ընկերությունը ձրիաբար պատկանում է ձեզ: Այս գրքի էջերում գրված ճշմարտությունները վերափոխել են կյանքս, և ես աղոթում եմ, որ դուք նույնպես բեկունային հայտնություն ստանաք՝ ուսումնասիրելով այս ճշմարտություններն Աստծո խոսքից: Ի սրտե կցանկանայի իմանալ, թե ինչպիսի ազդեցություն թողեց այս ուղերձը ձեր կյանքում և այն մարդկանց կյանքերում, ում մասին հոգ եք տանում:

Ձեր եղբայրը Քրիստոսի մեջ՝

Ջոն Բիվեր



Ջոն Բիվեր

JohnBevere@gmail.com



Messenger  
International  
MessengerInternational.org

ՍՈՒՐԲ ՀՈԳԻ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԶՈՆ ԲԻՎԵՐ

ԷՖԻՍՈՆ ԲԻՎԵՐԻ ՀԵՏ

The Holy Spirit. An Introduction by John Bevere, Armenian

© 2014 Messenger International

[www.MessengerInternational.org](http://www.MessengerInternational.org)

Originally published in English as The Holy Spirit. An Introduction

Additional resources in Armenian by John & Lisa Bevere are available for free download at: [www.CloudLibrary.org](http://www.CloudLibrary.org)

To contact the author: [JohnBevere@ymail.com](mailto:JohnBevere@ymail.com)

«Սուրբ Հոգի. Ներածություն», հեղինակ՝ Ջոն Բիվեր, հայերենով

© 2014 Մեսինջեր Ինտերնեյշնլ

[www.MessengerInternational.org](http://www.MessengerInternational.org)

Սկզբնապես հրատարակվել է անգլերենով, «The Holy Spirit.

An Introduction» վերնագրով

Կարող եք անվճար ներբեռնել Ջոն և Լիզա Բիվերների այլ հեղինակային նյութեր հայերենով հետևյալ կայքէջում. [www.CloudLibrary.org](http://www.CloudLibrary.org)

Հեղինակի հետ կապ հաստատելու համար. [JohnBevere@ymail.com](mailto:JohnBevere@ymail.com)

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Այս ինտերակտիվ գրքի մասին .....	5
Ներածություն՝ Էդիսոն Բիվերի կողմից .....	7
1. Ո՞վ է Սուրբ Յոզիմ .....	9
2. Սուրբ Յոզու անհատականությունը.....	47
3. Փոխհարաբերությունների երեք մակարդակ .....	87
4. Ջորացված՝ Յոզով .....	123
5. Յոզու լեզուն.....	165
Հավելյալ գլուխ. Հարցեր և պատասխաններ Ջոն և Լիզա Բիվերների հետ .....	209
Հավելված. Ինչպե՞ս փրկություն ստանալ .....	234
Նշումներ.....	236

# Այս ինտերակտիվ գրքի մասին

Դուք կարող եք ընթերցել այս գիրքը սկզբից մինչև վերջ, ինչպես և մնացած բոլոր գրքերը: Այնուամենայնիվ, խրախուսում ենք ձեզ՝ օգտագործել հավելյալ ինտերակտիվ մասերը՝ նյութը ավելի խորապես ընկալելու համար:

Այս գրքի յուրաքանչյուր գլուխ բաժանված է հինգ ամենօրյա ընթերցանության բաժինների, իսկ գլխի վերջում յուրաքանչյուր բաժին ունի համապատասխան սերտողության նյութ: Սերտողության նյութի հետ մեկտեղ կարող եք ընթերցել մեկական բաժին մեկ օրվա ընթացքում, կամ ուսումնասիրել ներկայացված մասերը ըստ նախընտրության: Մենք առաջարկում ենք, որ խմբային ուսուցման մասնակիցները մեկ շաբաթվա ընթացքում ավարտեն մեկ գլխում գետեղված ընթերցանության բաժինները և սերտողության նյութերը:

Եթե դուք ընթերցում եք այս գիրքը «Մեսինջեր Չավաքածու» շարքի «Սուրբ Գոգի. Ներածություն» դասընթացի շրջանակներում, մենք առաջարկում ենք ձեզ դիտել կամ ունկնդրել յուրաքանչյուր շաբաթվա ուսումնական տեսանյութը և պատասխանել քննարկման հարցերին ամբողջ խմբակով: Այնուհետև գրքից ընթերցեք համապատասխան գլուխը, ինչպես նաև սերտողության նյութերը: Այս գրքի յուրաքանչյուր գլուխ ունի մեկ ուսումնական տեսանյութ: Յուրաքանչյուր գլխի քննարկման հարցերը ներկայացված են ամենօրյա սերտողության նյութերից հետո:

Այս ամենը ձեզ համար է:

# Ներածություն

Երբ հայրս առաջին անգամ խնդրեց, որ օգնեմ իրեն՝ գրել այս գիրքը, անմիջապես անվստահություն զգացի: Ես մտածեցի. «*Հավանաբար, նա դեռ չի աղոթել սրա համար*»: Անկեղծ ասած՝ չէի կարծում, որ արժանի թեկնածու էի: Երբ մտածում էի նրա խնդրանքի մասին, ստանդբուլումս լարվածություն էի զգում, ինչպես մեկ անգամ՝ բրեյթդանսի մրցույթի ամենաթեժ պահին:

Ես հարգալից կերպով խնդրեցի հորս՝ դիտարկել մի քանի այլընտրանքային տարբերակներ և ժամանակ հատկացնել՝ այդ հարցի շուրջ լրջորեն աղոթելու համար (միգուցե մեկ կամ երկու տարի): Այնուամենայնիվ, մեկօրյա աղոթքից հետո նա վստահ էր, որ ես ամենահարմար թեկնածուն էի այդ առաջադրանքի համար: Հորս համար կարևոր է, որ Սուրբ Հոգին «արգելված» չդառնա ավելի երիտասարդ սերունդների համար: Ես մոտավորապես քսանհինգ տարեկան եմ, և նա արժևորում է իմ ներդրումը այս գործի մեջ: Հայրս և ես գիտենք, որ շատերը՝ թե՛ երիտասարդ, թե՛ տարեց մարդիկ, կխուսափեն այս թեմայից, եթե չհասկանան, թե ով է Սուրբ Հոգին և ինչպես է Նա գործում:

Այնպես որ, թեև ես մտավախություններ ունեի, սակայն, ինչպե՞ս կարող էի մերժել հորս խնդրանքը. ես ստիպված էի համաձայնել:

Այն, ինչ տեղի ունեցավ դրանից հետո, նման էր մի ուղևորության, որը վերափոխեց կյանքս: Ես սկսեցի տեսնել Աստվածաշունչը նոր լույսով, երբ Աստված բացեց իմ աչքերը՝ ցույց տալով Իր Հոգու բազմաթիվ սքանչելիքները: Շուտով հասկացա, որ Սուրբ Հոգին՝ ամենասխալ հասկացված անձնավորություններից մեկն է եկեղեցում: Նրան վերագրվել են անթիվ պիտակներ և կարծրատիպեր, բայց մեզնից քչերն են իրապես ճանաչում Նրան:

Այս գիրքը յուրօրինակ ճանապարհորդություն է Սուրբ գրքով, որի նպատակն է՝ ավելի ոյուրին դարձնել Սուրբ Հոգուն որպես Անձ ներկայացնելը: Որոշ բաներ կարող են դժվարըմբռնելի թվալ, բայց ես խոստանում եմ, որ արժե ներդնել ձեր ժամանակը և ուժերը՝ այս ճանապարհորդությունը կատարելու համար:

Գրքի էջերն ընթերցելիս խնդրե՛ք Սուրբ Հոգուն՝ առաջնորդել ձեզ ամբողջ ճշմարտության մեջ: Նա կհեռացնի այն համոզմունքները,

որոնք հիմնված չեն Իր Խոսքի վրա: Դուք կհայտնաբերեք, որ Նա չի «պատկանում» որևէ հարանվանության կամ շարժման և, որ Նրան անկարելի է սահմանափակել որևէ սերնդի կամ տարիքային խմբի պատկանող մարդկանցով: Նա ուղարկվել է՝ Հիսուսին հայտնելու և Քրիստոսի Մարմինը զորացնելու համար: Նա բնակվել է մեր սրտերում և խոստացել է գործածել մեր կյանքերն ի բարին: Միակ բանը, որ պետք է անենք՝ մեր կյանքերը Նրա վերահսկողությանը հանձնելն է:

Անկարելի է գտնել ավելի լավ ընկերոջ կամ գործընկերոջ: Սուրբ Հոգին հավատարմորեն ձեզ հետ կլինի թե՛ դժվար, թե՛ ուրախ պահերին: Նա խոստացել է երբեք չթողնել և չլքել ձեզ, որովհետև դուք՝ Նրա սիրո և բերկրանքի առարկան եք: Պատրաստվե՛ք բացահայտել զարմանալի Սուրբ Հոգուն:

— Էդիսոն Բիվեր, «Մեսինջեր Ինտերնեյշնլ»-ի  
Գլխավոր գործառնական տնօրեն

«Բոլորս կարող ենք գալ Հոր մոտ նույն Սուրբ Հոգու միջոցով՝ շնորհիվ նրա, ինչ Քրիստոսն արեց մեզ համար» (Եփեսացիների 2.18, NLT):



## Ո՞վ Է Սուրբ Հոգին

«Բայց Մխիթարիչը (Խորհրդականը, Օգնականը, Բարեխոսը, Դատապաշտպանը, Ջորացնողը, Կողքին լինողը)՝ **Սուրբ Հոգին**, Ում Հայրը կուղարկի Իմ անունով [Իմ փոխարեն, Ինչ ներկայացնելու և Իմ փոխարեն գործելու համար], Նա կսովորեցնի ձեզ բոլոր բաները: Եվ Նա այնպես կանի, որ վերհիշեք (կհիշեցնի ձեզ, ձեր միտքը կբերի) այն ամենը, ինչ Ես ասել եմ ձեզ»:

— (Հովհաննես 14.26, AMP)

### Օր 1

**Ն**որ տարվա նախօրե էր: Ներսունս աղոթելու և ծոմ պահելու մղում զգացի: Ես հարցրի Տիրոջը.

- Աստվածաշնչի ո՞ր գիրքը պետք է կարդամ:

Ի զարմանս ինձ, ես լսեցի.

- Գործք առաքելոց գիրքը:

Ջարմանքիս պատճառն այն էր, որ նախորդ անգամ, երբ երկարատև ծոմապահության և աղոթքի էի պատրաստվում, ստացա ճիշտ նույն հրահանգը՝ «Կարդա՛ Գործք առաքելոց գիրքը»: Նախորդ ծոմապահությանս ընթացքում ինձ համար բացվեց Պողոս առաքյալի կյանքում նպատակի և գործողությունների հակասությունը, ինչի արդյունքում նա շատ դժվարություններ կրեց: Թույլ տվեք բացատրել:

Պողոսն ընտրվեց Աստծուց՝ Ավետարանը հեթանոսներին քարոզելու համար: Նա ասաց. «...ես քարոզիչ և առաքյալ կարգվեցի և հեթանոսների վարդապետ» (Բ Տիմոթ. 1.11): Սա հստակ, որոշակի հրահանգ է: Իր կյանքի ընթացքում նա խոսեց իր առաքելության մասին մի քանի անգամ: Առաջին առաքելական ճանապարհորդության ժամանակ Պողոսը հայտարարեց հրեաներին. «...ահա դեպի հեթանոսներն եմք դառնում: Որովհետև Տերն այսպես պատվիրեց մեզ, թե քեզ հեթանոսների լույս դրի...» (Գործք 13.46,47): Իր երկրորդ ճանապարհորդության ընթացքում նա համարձակ հայտարարեց. «...այսուհետև հեթանոսներին եմ գնում» (Գործք 18.6): Նա հռոմեացիներին գրեց. «...ես հեթանոսների

առաքյալ են...» (Հռոմ. 11.13): Նա շարունակ նման հայտարարություններ էր անում իր թղթերում:

Սակայն իր հրեա ազգակիցների հանդեպ սիրուց դրդված նաև ցանկանալով նրանց փրկությունը՝ Պողոսը մշտապես ժողովարաններ էր գտնում գրեթե այն քաղաքում, ուր այցելում էր: Իր սովորության համաձայն, սկզբում նա խոսում էր հրեաների հետ, մինչև կփորձեր հասնել հեթանոսներին. իրականում, հաճախ հրեաների մերժումն էր, որ մղում էր նրան դեպի հեթանոսները: Ինչպես տեսնում ենք, հրեաները դարձան Պողոսի ամենախիստ հալածանքների և ամենամեծ դժվարությունների պատճառը: Նրանք խռովություններ առաջացրին հեթանոս բնակչության մեջ և թշնամություն ստեղծեցին առաքյալների և հեթանոս կառավարիչների միջև: Նրանց պառակտիչ ծրագրերը դարձան Պողոսի դեմ կազմակերպված խռովությունների, նրա ձերբակալությունների, ծեծերի և նեղությունների մեծ մասի պատճառը: Թույլ տվեք մի կարևոր վերապահում անել. Աստված խորապես հոգում է հրեաների մասին: Ահա թե ինչու Հակոբոսը, Պետրոսը և Հովհաննեսը ուղարկվեցին նրանց մոտ. «Հակոբոսը, Պետրոսը և Հովհաննեսը, ովքեր հայտնի էին որպես եկեղեցու սյուներ... խրախուսեցին մեզ, որ շարունակենք քարոզել հեթանոսներին, քանի դեռ նրանք շարունակում էին իրենց աշխատանքը հրեաների հետ» (Գաղատ. 2.9, NLT):

Իմ նախորդ ծոմապահության ժամանակ ստացա հետևյալ ուղերձը. «Որդի՛ս, մնա այն շնորհքի շրջանակներում, որի համար ես կանչել եմ քեզ: Թույլ մի՛ տուր, որ քո բնական զգացմունքները կամ սերը ինչ-որ բաների հանդեպ՝ հեռացնեն քեզ այն աստվածային հանձնարարությունից, որ ունես»: Քանի որ շատ պարզ էի հիշում այդ վերապրումը, ես զարմացա, երբ Աստված խնդրեց ինձ ևս մեկ անգամ ամբողջությամբ կարդալ Գործք առաքելոց գիրքը: Ի վերջո, կային վաթսուներեց այլ գրքեր՝ ընտրության համար:

Ես այնքան ուրախ եմ, որ հնազանդվեցի. այս անգամ, կարդալով Գործք առաքելոց գիրքը, նկատեցի բոլորովին այլ բան (ինչն ապացուցում է, որ Աստծո խոսքն իսկապես կենդանի է): Այս անգամ ես պարզորեն տեսա, թե որքան էին առաջին եկեղեցու առաջնորդները և անդամներնապավինում Սուրբ Հոգուն և համագործակցում Նրա հետ, որքան էին նրանք կախված Սուրբ

Յոգուց և որքան էին խոսում Նրա մասին: Սուրբ Յոգին նրանց կյանքի կարևորագույն մասն էր. Նա ներգրավված էր եկեղեցու առաջնորդների և անդամների բոլոր գործերի մեջ: Նա մշտապես բացառիկ տեղ էր զբաղեցնում նրանց հասարակական ծառայության, հավաքությունների և խորհրդատուների մեջ. Նա մշտապես ներգրավված էր նրանց գործունեության մեջ: Ահա մի շարք արտահայտություններ, որոնք գրավեցին ուշադրությունս.

- «...ինչո՞ւ սատանան քո սիրտը լցրեց, որ դու սուտ խոսես Սուրբ Յոգուն...» (Գործք 5.3):
- «...Ի՞նչ է, որ միաբանվեցիք դուք, որ Տիրոջ Յոգին փորձեք...» (Գործք 5.9):
- «Եվ մենք Նրա վկաներն ենք այս բաների համար, և Սուրբ Յոգին էլ...» (Գործք 5.32):
- «...դուք միշտ Սուրբ Յոգուն հակառակվում եք...» (Գործք 7.51):
- «Եվ Յոգին ինձ ասաց, որ նրանց հետ զնամ...» (Գործք 11.12):
- «Եվ Նրանցից մեկը... Յոգով իմաց տվեց, թե... մեծ սով է լինելու...» (Գործք 11.28):
- «...Սուրբ Յոգուց ուղարկված...» (Գործք 13.4):
- «Որովհետև Սուրբ Յոգուն և մեզ հաճո երևաց...» (Գործք 15.28):
- «...Սուրբ Յոգուց արգելվելով, որ Ասիայի մեջ Աստծո խոսքը չխոսեն» (Գործք 16.6):
- «...ջանք էին անում, որ զնան դեպի Բյուքանիա, և Յոգին թույլ չտվեց նրանց» (Գործք 16.7):
- «...Պողոսը Յոգով վառվում էր՝ վկայելով...» (Գործք 18.5):
- «Արդյո՞ք Սուրբ Յոգին ընդունեցիք, երբ որ հավատացիք...» (Գործք 19.2):
- «Պողոսը հարկադրված էր զգուն Սուրբ Յոգուց՝ գնալու Մակեդոնիա» (Գործք 19.21, NLT):
- «Սուրբ Յոգին ասում է ինձ քաղաքից՝ քաղաք...» (Գործք 20.23, NLT):
- «Արդ զգույշ կացեք ձեր անձերին և ամբողջ հոտին, որի մեջ Սուրբ Յոգին ձեզ վերակացուներ դրեց...» (Գործք 20.28):

Նման խոսքերը շարունակ աչքի էին ընկնում այս գրքի էջերում: Ցավալի իրականությունն այն է, որ մենք չենք տեսնում նույնը ժամանակակից եկեղեցում: Այն, ինչ սովորական էր Գործք առաքելոց գրքի հավատացյալների համար, այսօր հազվագյուտ

երևույթ է դարձել: Ես նկատի չունեմ այլ մարդկանց. նախ և առաջ, ես խոսում եմ իմ մասին: Կարդալիս՝ գիտակցում էի, որ հաճախ հեռանում էի Աստծո Յոգու առաջնորդությունից, ընկերակցությունից, համագործակցությունից և ազդեցությունից. ես չէի վայելում այս ամենը, չէի ձգտում այս ամենին և կախված չէի այս ամենից: Երբ այս ճշմարտությունն ինձ համար ակնհայտ դարձավ, ինչպե՞ս կարող էի չկիսվել ձեզ հետ:

### **Նախնական պնդումներ**

Թույլ տվեք մի քանի նախնական պնդումներ անել, որոնք ավելի ու ավելի պարզ կդառնան, երբ շարունակենք այս կարևոր թեման.

Նախ, ըստ էության, չկա քրիստոնեական կյանք՝ առանց Սուրբ Յոգու:

- Առանց Սուրբ Յոգու՝ քրիստոնեությունը չոր, միապաղաղ և ձանձրալի է:
- Առանց Սուրբ Յոգու՝ մեր գործերը հյուժող և հոգնեցուցիչ են:
- Առանց Սուրբ Յոգու՝ չկա շփում Աստծո հետ:

Յեռացրեք Սուրբ Յոգուն որևէ եկեղեցուց, և կկատարվի երկուսից մեկը.

- Եկեղեցին կվերածվի հասարակական ակումբի:
- Եկեղեցին կդառնա կրոնական հաստատություն:

Ճշմարտությունն այն է, որ...

- Առանց Սուրբ Յոգու չկա հայտնություն: Իրականում, առանց Սուրբ Յոգու՝ Աստվածաշունչը մահաբեր է դառնում, որովհետև գրված է. «...գիրն սպանում է, այլ՝ Յոգին կենդանացնում է» (Բ Կորնթ. 3.6):
- Չկա տեսիլք՝ առանց Սուրբ Յոգու:
- Չկա ուրախություն՝ առանց Նրա:
- Չկա խաղաղություն՝ առանց Նրա:
- Չկա ազատություն՝ առանց Սուրբ Յոգու:

«Տերը՝ Հոգին է, և որտեղ Տիրոջ Հոգին է, այնտեղ ազատություն է»  
(Բ Կորնթ. 3.17, NLT):

Ուշադրություն դարձրեք «որտեղ Տիրոջ Հոգին է» արտահայտությանը: Մտածենք այս մասին: Աստծո Հոգին ամենագուր է՝ Նա ամենուր է ամեն ժամանակ: Դավիթն ասում է. «Ո՞ւր գնամ Քո Հոգուց, և Քո երեսից ո՞ւր փախչեմ» (Սաղմ. 139.7): Պատասխանը միանշանակ է՝ ոչ մի տեղ: Դավիթը շարունակում է. «Եթե ես մագլցեմ երկինք, Դու այնտե՛ղ ես: Եթե գետնի տակ իջնեմ, Դու այնտե՛ղ ես: Եթե թռչեի արշալույսի թևերի վրայով դեպի հեռավոր արևմտյան հորիզոնը, Դու կգտնեիր ինձ մեկ ակնթարթում. Դու արդեն սպասում ես ինձ այնտեղ» (Սաղմ. 139.8-10, MSG): Պարզից էլ պարզ է, որ նա *ամենուր* է ամեն ժամանակ:

Այդ դեպքում, մենք պետք է տանք հաջորդ հարցը. «Արդյո՞ք *ամենուր* ազատություն կա»: Կրկին կարդացե՛ք Պողոսի խոսքերը. «Որտեղ Տիրոջ Հոգին է, այնտեղ ազատություն է»: Մենք ապացուցեցինք, որ Նա *ամենուր* է, այնպես որ, կրկին՝ արդյո՞ք *ամենուր* ազատություն կա: Պատասխանն ակնհայտ է՝ ո՛չ: Չկա ազատություն հասարակաց տներում, սրճարաններում, բանտերում և հիվանդանոցներում: Ես եղել եմ թաղամասերում, դպրոցներում, ընտանիքներում և նույնիսկ եկեղեցիներում, որտեղ չկա ազատություն: Այդ դեպքում, ի՞նչ է հռչակում Աստվածաշունչը այս խոսքում: Ըստ իս, հետևյալն ավելի ճշգրիտ թարգմանություն է.

«Որտեղ որ Հոգին *Տեր* է, այնտեղ է ազատություն» (Բ Կորնթ. 3.17, հեղինակի բառափոխումը):

Հունարենում «Տեր» բառը «կյուրիոս»-ն է: Այն սահմանվում է որպես «գերագույն իշխանություն ունեցող»<sup>1</sup>: Սուրբ Հոգուն թույլ չեն տալիս իշխել սրճարաններում, բանտերում, հիվանդանոցներում կամ ընտանիքներում, և նույնիսկ բազմաթիվ եկեղեցիներում: Այնուամենայնիվ, դուք կարող եք ազատություն և արդարություն գտնել բոլորի համար այնտեղ, որտեղ Նա ընդունվում է որպես գերագույն իշխանություն ունեցող:

## Այս ուղերձի նպատակը

Այս ուղերձի նպատակն է՝ ծանոթացնել ձեզ Սուրբ Հոգու հետ՝ որպես *Անձնավորությամբ*: Նրա մասին կարելի է հատորներ գրել: Նրա մասին կարելի է խոսել օրեր, ամիսներ, նույնիսկ՝ տարիներ շարունակ:

Ես ավելի քան երեսուն տարի է՝ ամուսնացած եմ կնոջս՝ Լիզայի հետ: Նրան շատ լավ ճանաչելով հանդերձ, ես դեռ բացահայատում եմ այնպիսի կողմեր նրա անհատականության, հետաքրքրությունների, ցանկությունների և վարվելակերպի մեջ, որոնց մասին բոլորովին անտեղյակ էի: Վերջերս մենք մի քանի օր անցկացրինք միասին՝ տոնելով մեր ամուսնության երեսուներորդ տարեդարձը: Այդ ընթացքում ես իմացա որոշ բաներ նրա երազանքների, նախընտրությունների և նույնիսկ՝ կարողությունների մասին, որոնցից բոլորովին անտեղյակ էի:

Ինչ վերաբերում է Լիզայի կարողություններին, ես նույնիսկ գաղափար չունեի, որ նա գուլֆ խաղալու մեծ տաղանդ ունի: Լիզան գիտի, թե որքան է ինձ դուր գալիս այդ սպորտաձևը, և առաջարկեց՝ միասին խաղալ մի գեղեցիկ գուլֆի դաշտում ինը փոսիկով, այսինքն՝ սկսելով դաշտի կեսից: (Ես ընդամենը մեկ խաղ խաղացի նրա հետ, որովհետև մենք որոշել էինք միասին անցկացնել այդ ժամանակը): Յոթերորդ փոսիկը ձորի մյուս կողմում էր: Կինս միշտ բարդ առաջադրանքների սիրահար է եղել, այնպես որ, ես հարցրի, թե արդյո՞ք նա կցանկանար անցկացնել գնդակը ձորի մյուս կողմը: Գնդակը պետք է թռչեր 140 մետր՝ անցնելով վաթսուն մետր խորություն ունեցող ձորի վրայով. եթե հարվածը թույլ լիներ, գնդակը կընկներ օվկիանոսը: Ես մի հին գնդակ գտա Լիզայի համար (քանի որ չէի մտածում, որ կրկին կտեսնեի այն): Նա կանգնեց նշանառության համար նախատեսված հատվածում և այնպես հարվածեց, որ գնդակը թռավ 160 մետր՝ ընկնելով մյուս կողմի փոսիկը շրջապատող սիզամարգի վրա: Ավաղ, նոր տաղանդը հայտնաբերվեց միայն ամուսնության երեսուներորդ տարում:

Ամեն երեկո ընթրիքի ժամանակ Լիզան կիսվում էր գիտությամբ, իմաստությամբ, հետաքրքրություններով և ձգտումներով, որոնց մասին նախկինում չէր պատմել ինձ: Կարճ ասած՝ ես համակվել

էի երկյուղով նրանից, թե որքան խորություն կա այն զարմանալի անձնավորության մեջ, ում իմ կիցն են անվանում:

Անհնար է մի քանի գլուխներում և, նույնիսկ, բազմաթիվ հատորներում պատմել այն ամենը, ինչ գիտեմ Լիզայի մասին: Այնուամենայնիվ, կարող եմ ասել ձեզ, թե ինչպես ծանոթանալ և շփվել նրա հետ: Ես կարող եմ պատմել, թե ինչ է դուր գալիս նրան, ինչ հետաքրքրություններ նա ունի և ինչպես կարելի է աշխատել և հաղորդակցվել նրա հետ: Ես կարող եմ պատմել ձեզ նրա ուժեղ և թույլ կողմերի մասին: Կարող եմ պատմել, թե ինչ է նա սիրում կամ ինչը նրան բուրբոսի չի հետաքրքրում: Այս ներածական գիտելիքը կծառայի որպես հարթակ՝ նրա հետ մտերիմ շփում կառուցելու համար:

Եթե անկարելի է ամբողջությամբ պատմել Լիզայի մասին, ով ընդամենը մի քանի տասնյակ տարիներ է ապրել, ինչպե՞ս կարող եմ նույնիսկ փորձել ամբողջությամբ պատմել ձեզ Սուրբ Հոգու մասին, Ում կյանքը հավիտենից հավիտյան է: Դա պարզապես անհնար է: Այնուամենայնիվ, ես կարող եմ ներկայացնել ձեզ, թե ով է Նա: Ես կարող եմ պատմել ձեզ Նրա անհատականության և հետաքրքրությունների մասին, նաև այն մասին, թե ինչ է Նա սիրում: Ես կարող եմ սահմանել մեր փոխհարաբերությունները Նրա հետ և կիսվել մի քանի միջոցներով, որոնցով կարելի է հաղորդակցվել և համագործակցել Նրա հետ: Ես կարող եմ պատմել, թե ինչու է մեր շփումը Սուրբ Հոգու հետ այդքան կարևոր, և թե ինչպես է Նա զորացնում մեզ, որպեսզի կատարենք Աստծո ցանկությունները մեզ համար: Այս հիմքային գիտելիքները կօգնեն ձեզ՝ հաղորդակցվել Նրա հետ ավելի խորը և բովանդակալից:

## Օր 2

### Լուրջ թյուրըմբռնում

Կա մի սխալ, որը շատերն են գործում. մարդիկ փորձում են հասկանալ Սուրբ Հոգու *գործելակերպը* և *գորությունը*՝ առանց նախապես ճանաչելու Նրան՝ որպես *Անձնավորություն*:

Անչափ կարևոր է, որ մեր սրտերում և մտքերում որոշենք հետևյալը. արդյո՞ք հավատում ենք, որ Սուրբ Հոգին աստվածային Անձնավորություն է, Ով անսահմանորեն սուրբ, իմաստուն և զորավոր է, բայց և հրաշալիորեն մեղմ, զգայուն և գթասիրտ է: Արդյո՞ք մենք հավատում ենք, որ Նա արժանի է ընդունելու մեր երկյուղածությունը, համակրանքը, հավատքը, սերը և նվիրումը: Արդյո՞ք հավատում ենք, որ պետք է լիովին անձնատուր լինենք Նրան, թե՞ փոխարենը մենք համոզված ենք, որ Սուրբ Հոգին պարզապես Աստծուց բխող ներգործություն է՝ ինչ-որ աստվածային, առեղծվածային զորություն: Միգուցե մենք մտովի զուգորդում ենք Նրան «առատաձեռնության հոգի» կամ «նրցակցության հոգի» արտահայտություններից առաջացող պատկերացման հետ:

Վերջին տեսանկյունը մակերեսային և ոչ հասուն է: Այն նույնիսկ հերձվածություն է: Այս կերպով հավատալու դեպքում մենք հեշտությամբ տեղի կտանք հոգևոր գոռոզությանը և հպարտությանը, և արդյունքում կսկսենք այնպես վարվել, ասես «քրիստոնեական վերնախավի» ներկայացուցիչներ ենք:

Սակայն եթե մենք համարում ենք, որ Նա անսահման է մեծությամբ, փառքով, շուքով, իմաստությամբ, գիտությամբ և սրբությամբ, և եթե մենք հավատում ենք, որ Նա՝ որպես Անձնավորություն, կարող է Հոր և Որդու հետ միասին իշխել մեր կյանքում և գործածել այն ի բարին, մենք երեսնհիվայր կընկնենք Նրա առջև սուրբ երկյուղով:

Այն մարդը, ում կարծիքով Աստծո Հոգին ներգործություն կամ գերագույն զորություն է, մշտապես կասի. «Ես ցանկանում եմ ավելի շատ ստանալ Հոգուց»: Ի հակադրություն սրան՝ այն մարդը, ով դիտարկում է Աստծո Հոգուն որպես հրաշալի Անձնավորություն, կասի. «Ինչպե՞ս կարող եմ ավելի շատ տրվել Նրան»:

## Մեր պատկերացումը Նրա մասին

Պատճառներից մեկը, թե ինչու են շատերն Աստծո Հոգուն պատկերացնում որպես զուտ ներգործող ուժ, այլ ոչ թե Անձ, այն է, թե ինչպես են մարդիկ խոսում Նրա մասին: Երբևէ լսե՞լ եք, որ ինչ-որ մեկը Սուրբ Հոգուն վերաբերվի որպես առարկայի: Ես արդեն երեսուն տարվա ծառայող եմ, և եթե ինձ մեկական դուլար տային ամեն



անգամվա համար, երբ ես լսել եմ, թե ինչպես է ինչ-որ մեկը խոսել Աստծո Յոգու մասին՝ որպես առարկայի, ես հարուստ մարդ կդառնայի: Դժբախտաբար, մեզնից շատ-շատերը չեն վայելում Յոգու ներկայության լիությունը, որովհետև մենք հրաժարվում ենք պատվել Նրան՝ որպես Անձնավորության: Աստծո Յոգին չի դրսևորվի այնտեղ, որտեղ Նրան պատիվ չեն ցուցաբերում (տե՛ս Մատթ. 13.54-58, Սաղմ. 89.7):

Նշեմ, որ Սուրբ Յոգուն անվանելով «Անձնավորություն»՝ ես չեմ ցանկանում ասել, որ Նա մարդկային բնություն ունի: Ես պարզապես նկատի ունեմ, որ Նրան հատուկ են այն հատկանիշները, որոնք անձնային են համարվում: Սուրբ Յոգին Աստվածություն է, ոչ թե մարդ: Բայց մենք պետք է հիշենք, որ մարդիկ ստեղծվել են Աստծո պատկերով: Այնպես որ, ոչ թե Նա է մեզ նման, այլ մե՛նք ենք Նրա նման:

Մենք, այսինքն՝ եկեղեցին, որոշել է դիտարկել Նրան որպես «սուրբ իություն», ոչ թե որպես *Ամենասուրբ* Անձնավորություն: Նա փափագում է լինել մեր ամենամտերիմ ընկերը, սակայն մենք սահմանափակել ենք Նրա մասնակցությունը մեր կյանքում: Ցավալի ճշմարտությունն այն է, որ մենք անփութորեն մերժել ենք ամենաշատ բավականություն պատճառող փոխհարաբերությունը, որը երբևէ կարող ենք ճաշակել:

Դիտարկենք որոշ սուրբգրային հատվածներ, որոնք կատարելապես նկարագրում են Սուրբ Յոգու անհատականությունը.

- Նա միտք ունի (տե՛ս Յոռմ. 8.27):
- Նա կամք ունի (տե՛ս Ա Կորնթ. 12.11):
- Նա զգացմունքներ ունի, օրինակ՝ սեր և ուրախություն (տե՛ս Յոռմ. 15.30, Գաղատ. 5.22):
- Նա մխիթարում է (տե՛ս Գործք 9.31):
- Նա խոսում է (տե՛ս Եբր. 3.7). ավելին՝ Նա պարզ է խոսում (տե՛ս Ա Տիմոթ. 4.1):
- Նա սովորեցնում է (տե՛ս Ա Կորնթ. 2.13):
- Նրան կարող են տրտմեցնել (տե՛ս Եփես. 4.30):
- Նրան կարող են նախատել (կամ՝ հայհոյել) (տե՛ս Եբր. 10.29):
- Նրան կարող են հակառակվել (տե՛ս Գործք 7.51):
- Նրան կարող են ստել (տե՛ս Գործք 5.1-11):

Եթե այս հատկանիշներն ակնհայտորեն ներկայացված են Սուրբ գրքում, մենք պետք է հարցնենք. ինչո՞ւ մարդիկ այդքան սխալ պատկերացում ունեն Սուրբ Հոգու մասին:

## Աղավնի

Շատերը, մտածելով Սուրբ Հոգու մասին, անմիջապես աղավնի են պատկերացնում: Ինչո՞ւ է սա առաջին և ամենից հաճախ հանդիպող համեմատությունը: Մի՞թե Սուրբ Հոգին երբևէ հայտնվել է աղավնու կերպարանքով: Պատասխանը միանշանակ է՝ ոչ: Չորս Ավետարաններում մենք կարդում ենք, որ Աստծո Հոգին իջավ Հիսուսի վրա *աղավնու պես* (տե՛ս Մատթ. 3.16, Մարկ. 1.10, Դուկ. 3.22, Հովհ. 1.32): Մի՞թե մենք սովորաբար չենք ասում. «Նա վազում է քամու պես» կամ «Նա ցլի պես ուժեղ է»: Եթե ասեն, որ որդիս ցլի պես ուժեղ է, մի՞թե իմ խոսքերը նշանակում են, որ նա չորքոտանի կենդանի է: Իհարկե՝ ոչ: Նմանապես, ասել, որ Հոգին իջավ աղավնու պես, չի նշանակում՝ ասել, որ Նա աղավնի է:

Ինչ-որ մեկը կարող է ասել. «Բայց Ձոն, Նա ներկայացված է որպես բորբոքված կրակ Աստծո գահի առջև (տե՛ս Հայտն. 4.5): Այո, ճիշտ է, բայց Աստվածաշնչում նույնպես ասվում է. «Եվ տեսա, և ահա... երեցների մեջ մի Գառ կանգնած մորթվածի նման...» (Հայտն. 5.6): Ահա թե ինչպես է Հովհաննեսը նկարագրում Հիսուսին: Մենք նույնիսկ կասկած չունենք, որ Հիսուսը չորքոտանի կենդանի չէ: Միևնույն կերպով, Սուրբ Հոգին առեղծվածային կրակ չէ, որն այրվում է Աստծո գահի առջև:

## Այդ դեպքում, ո՞վ է Սուրբ Հոգին

Աստվածաշնչում հստակ ասվում է, որ Սուրբ Հոգին Աստվածության երրորդ Անձն է: Ծննդոց 1.26-ում գրված է. «Եվ Աստված ասաց. *Մեր* պատկերով և *Մեր* նմանության պես մարդ շինենք...»: Ուշադրություն դարձրեք, որ Աստված չի ասում. «մարդ շինենք»: Արարչագործության ներկայացումը պահանջում էր երեք առանձին Դերակատարների, որոնք երեք առանձին դերեր էին կատարելու:

Աստված խոսում էր իր մասին՝ անվանելով իրեն Հայր, Որդի և Սուրբ Հոգի:

Կարդանք Գործք 10.38-ը՝ տեսնելու համար Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն՝ որպես առանձին Անձերի:

«Այն *Հիսուսին*, որ Նազարեթից է, թե ինչպես Նրան *Աստված Սուրբ Հոգով* և զորությունով օծեց, որ ման եկավ բարի անելով և սատանայից բոլոր հարստահարվածներին բժշկելով, որովհետև Աստված Նրա հետ էր»:

Այս խոսքում մենք տեսնում ենք, թե ինչպես է *Հայրը* օծում *Հիսուսին Սուրբ Հոգով*. մենք տեսնում ենք երեք առանձին Անձերի, Ովքեր համագործակցում են հանուն մեկ ընդհանուր նպատակի:

Դիտարկենք ևս մեկ օրինակ.

«Եվ մկրտվելուց հետո *Հիսուսը* շուտով դուրս եկավ ջրից, և ահա երկինքը բացվեց Նրա համար, և Նա տեսավ *Աստծո Հոգին*, որ վայր էր իջնում աղավնու պես և գալիս Նրա վրա: Եվ ահա երկնքից ձայն եկավ, որ ասում էր. «Դա՛ է Իմ սիրելի Որդին, Որին ես հավանեցի»» (Մատթեոս 3.16,17):

Հիսուսի մկրտության նկարագրության մեջ դուք մեկ անգամ ևս կնկատեք, թե ինչպես է Աստվածությունը հայտնվում երեք առանձին Անձերով: Նախ՝ *Հիսուսը* մկրտվեց Հովհաննեսի կողմից, ապա *Աստծո Հոգին* իջավ Նրա վրա, և, ի վերջո, *Հայր Աստված* երկնքից հռչակեց. «Դա՛ է Իմ սիրելի Որդին, Որին ես հավանեցի»: Կրկին՝ Աստվածության երեք Անձերը համագործակցում են հանուն մեկ ընդհանուր նպատակի:

Թույլ տվեք մի պարզ օրինակ բերել, որը կօգնի նկարագրել այս ճշմարտությունը: Ջուրը (H<sub>2</sub>O) ունի երեք տարբեր վիճակ: Կախված ջերմաստիճանից՝ H<sub>2</sub>O-ն պինդ, հեղուկ կամ գազային վիճակում է: Ջուրը, որպես նյութ, բոլորովին չի փոխում իր մոլեկուլային կառուցվածքը, բայց ջրի դոսևորումը փոխվում է՝ կախված միջավայրից (ջերմաստիճանից): Նույն կերպով, Աստծո էությունը չի փոխվում: Տեսնելով Որդուն՝ դուք տեսնում եք Հորը. նույնպես, Հոգին ուղարկվեց, որպեսզի հայտնի մեզ Որդուն (տես Հովհ. 17.21, Եփես. 1.17,18): Աստված մեկ է իր նպատակով. այնուամենայնիվ, Նա ունի երեք արտահայտություն (Անձեր), Ովքեր առանձին գոր-

ծառույթներ են կատարում: Թեև կան երեք Անձեր, կա միայն մեկ Աստված: Երկրորդ Օրինաց 6.4-ում գրված է. «Լսի՛ր, ո՛վ Իսրայել, մեր Եհովա Աստվածը՝ Եհովան, մեկ է»: Հռոմեացիների 3.30-ում գրված է. «...մեկ Աստված է, որ արդարացնում է...»: Հակոբոս 2.19-ում նմանապես գրված է. «Դու հավատո՞ւմ ես, թե մեկ է Աստված, լավ ես անում...»: Այս ճշմարտությունը այս գրքի մնացած մասի անկյունաքարն է. կան երեք առանձին Անձեր, բայց միայն՝ մեկ Աստված:

### Օր 3

#### Առաջին Անձնավորությունը

Իրականում, Սուրբ Հոգին Աստվածության առաջին Անձն է, Ով հայտնվում է Սուրբ գրքում: Ծննդոց 1.1-ում գրված է. «Սկզբում Աստված ստեղծեց երկինքը և երկիրը»: Այժմ կարդանք երկրորդ խոսքը. «Եվ երկիրն անձև ու դատարկ էր, և խավար կար անդունդի վրա, և Աստծո Հոգին շրջում էր ջրերի վրայով»: Մենք տեսնում ենք Հոգուն հենց այստեղ՝ Ծննդոց 1.2-ում: Նա Աստվածության առաջին Անձն է Սուրբ գրքում, Ով նշվում է անունով:

Ինչ-որ մեկը կարող է հարցնել. «Բայց Ջոն, առաջին խոսքում գրված է՝ «Սկզբում Աստված ստեղծեց երկինքը և երկիրը»: Ինչպե՞ս կարող ես ասել, որ Սուրբ Հոգին Աստվածության առաջին Անձն է, ում մասին գրված է Սուրբ գրքում, եթե առաջին խոսքում գրված է Հայր Աստծո մասին: Շատ լավ հարց է: Հիշո՞ւմ եք, որ Աստված ասաց. «Մեր պատկերով... մարդ շինեմք»: Առաջին խոսքի հղումն Աստծուն՝ վերաբերում է Աստվածությանը, ոչ թե Աստվածության առանձին Անձերից մեկին: Այդ իսկ պատճառով, Աստվածության առաջին Անձը, Ում Աստվածաշնչում տեսնում ենք գործելիս, Սուրբ Հոգին է: Երկրորդ խոսքում գրված է. «Աստծո Հոգին [Սուրբ Հոգին] շրջում էր ջրերի վրայով»:

Կրկին վերադառնանք մեր սկզբնական հարցին. ո՞վ է Սուրբ Հոգին: Ես կարող եմ հավաստել, որ Նա ամենից զարմանալի, հրաշալի, բարի, մեղմ, զգայուն և զորավոր Անձն է այս երկրի վրա:

Միգուցե դուք պատասխանեք. «Ձո՛ն, այս երկրի վրա՞»: Իհա՛րկե, այս երկրի վրա: Մենք պետք է հասկանանք, որ Հայրը այստեղ՝ երկրի վրա չէ. Նա նստած է Իր գահին՝ Երկնքում: Նմանապես, Հիսուսը այստեղ՝ երկրի վրա չէ: Ես մշտապես լսում եմ, թե ինչպես են մարդիկ ասում. «Հիսուսն իմ սրտում է», սակայն Սուրբ գիրքը հստակ ցույց է տալիս, որ Նա նստած է Հոր աջ կողմը (տե՛ս Մարկ. 16.19): Գործք 1.9-11-ում գրված է.

«...նրանք նայելիս՝ վերացավ, և մի ամպ վեր առավ Նրան նրանց աչքերից: Եվ դեռ որ նրանք աչքերն ուղղած մտիկ էին տալիս դեպի Երկինք Նրա գնալուն, ահա երկու մարդիկ երևացին նրանց՝ սպիտակ հանդերձներով, և ասացին. «Ո՛վ գալիլեացի մարդիկ, ի՞նչ եք կանգնել և մտիկ եք անում դեպի Երկինք. այս Հիսուսը, որ ձեզնից վերացավ Երկինք, այսպես կգա, ինչպես Նրան տեսաք Երկինք գնալիս»»:

Այդ երկու մարդիկ, ովքեր իրականում հրեշտակներ էին, պարզ հայտնեցին աշակերտներին, որ Հիսուսը վերադառնալու է այնպես, ինչպես որ գնաց: Նա չի վերադառնա երկիր, մինչև Իր գալուստը՝ ամպերի վրա: Արդյո՞ք Հիսուսն արդեն վերադարձել է ամպերի վրա: Ակնհայտ է, որ ոչ: Սա նշանակում է, որ ներկայումս Հիսուսը դեռ Աստծո աջ կողմն է՝ Երկնքում:

Հիշե՛ք Ստեփանոսի քարկոծման պատմությունը: Գործք 7.55,56-ում գրված է. «Իսկ նա [Ստեփանոսը] լցված Սուրբ Հոգով՝ դեպի Երկինքը նայեց և Աստծո փառքը տեսավ, և Հիսուսին՝ կանգնած Աստծո աջ կողմը: Եվ ասաց. «Ահա տեսնում եմ Երկինքը բացված և Մարդու Որդուն՝ կանգնած Աստծո աջ կողմը»: Փորձեք պատկերացնել Հիսուսին Իր ամբողջ փառքով՝ կանգնած ի պատիվ Իր նահատակի, ակնկալելով այդ սրբազան պահը, որը հիշվելու էր սերունդներ շարունակ: Թեև այս հատվածը Ստեփանոսի փառավոր վերամիավորման մասին է Հիսուսի հետ, այս պատմությունը ևս մեկ հիշեցում է այն անհերքելի ճշմարտության մասին, որ ներկայումս Հիսուսն Իր Հոր կողքին է:

Իրականում, արդեն մոտավորապես երկու հազար տարի է՝ Հիսուսն այս փառավոր դիրքում է: Նա այստեղ՝ երկրի վրա չէ: Ես գիտեմ՝ մեզ դուր է գալիս ասել, որ Նա բնակվում է մեր սրտերում, սակայն իրականում Սուրբ Հոգին՝ Հիսուս Քրիստոսի Հոգին է, որ դարձրել է մեր սրտերն Իր բնակության վայրը:

Կարևոր է, որ հասկանանք՝ Սուրբ Հոգին անվանվում է թե՛ Հայր Աստծո Հոգի, և թե՛ Հիսուս Քրիստոսի (Որդու) Հոգի: Դիտարկենք մի քանի օրինակ:

Փիլիպեցիների 1.19-ում Պողոսը գրում է. «Որովհետև գիտեմ, թե այս բանը վերջապես ինձ փրկության պատճառ կլինի ձեր աղոթքով և *Հիսուս Քրիստոսի Հոգու* ձեռնտվությունով»: Հիսուսը շատ պարզ ասաց, որ ինքը պետք է գնա, որպեսզի Սուրբ Հոգին կարողանա գալ իր փոխարեն: Ակնհայտ է, որ այս խոսքում Պողոսը խոսում է Սուրբ Հոգու (Օգնականի) մասին, ոչ թե մարմնավորված Հիսուսի, որովհետև Հիսուսն այլևս երկրի վրա չէ:

Մատթեոս 10.20-ում Հիսուսը հռչակում է. «Որովհետև դուք չեք խոսողները, բայց ձեր Հոր Հոգին, որ ձեզանում խոսում է»: Հիսուսը խոսում էր այն ժամանակվա մասին, երբ իր աշակերտները հալածվելու էին և նեղությունների էին ենթարկվելու Ավետարանի պատճառով: Հոր Հոգին (Սուրբ Հոգին) առաջնորդելու էր և ճիշտ խոսքեր էր տալու նրանց:

Նույնիսկ այժմ, երբ գրում են, այս գրքի խոսքերը իմ գիտելիքների կամ փորձառության արդյունքը չեն: Իմ Հոր Հոգին է, որ սովորեցնում է իմ միջոցով: Ես փորձել եմ սովորեցնել իմ ուժերով. վստահեցնում եմ ձեզ, նման փորձերը դատապարտված են ձախողման: Նրա շնորհքով՝ Սուրբ Հոգու զորացման պատճառով է, որ ես այն եմ, ինչ եմ: Բարի լուրն այն է, որ Նա երբեք մենակ չի թողել ինձ. Նա միշտ օգնության է եկել: Երբ ես խոնարհությամբ անձնատուր եմ լինում Շնորհքի Հոգուն (տե՛ս Եբր. 10.29), Նա հավատարմորեն զորացնում է ինձ իմ տկարությունների մեջ:

## **Ինչպե՞ս են գործում Աստծո Երեք Անձերը**

Այս «երեքը՝ մեկում» հասկացությունը կարող է շատ դժվարըմբռնելի թվալ, քանի որ այն հակառակ է մեր մարդկային պատկերացմանը: Առաջին Կորնթացիների 12.5-7-ը ցույց է տալիս, թե ինչպես են Երեքը գործում՝ որպես Մեկ:

«Եվ պաշտոնները զանազան են, բայց Տերը նույնն է: Եվ ներգործությունները զանազան են, բայց Աստված նույնն է, որ ամենը ամենքի մեջ ներգործում է: Բայց ամեն մեկին տրված է Հոգու հայտնությունը օգուտի համար» (Ա Կորնթացիների 12.5-7):

Կարդալով այս հատվածը՝ մենք բացահայտում ենք, որ Հայրը, Որդին և Սուրբ Հոգին տարբեր պարտականություններ են կատարում: Հայրը ձեռնարկում կամ նախաձեռնում է (խոսք 6), Որդին տնօրինում է (խոսք 5), իսկ Սուրբ Հոգին հայտնում է (խոսք 7). այնուամենայնիվ, Նրանք գործում են միասին՝ հանուն մեկ ընդհանուր նպատակի:

Եթե մենք որոշենք տուն կառուցել, ի՞նչ պետք է անենք: Մենք պետք է վարձենք ճարտարապետի, աշխղեկի և շինարարների: Ըստ այս օրինակի՝ Հայր Աստված՝ ճարտարապետն է, Հիսուսը՝ աշխղեկն է, իսկ Սուրբ Հոգին՝ շինարարները, ովքեր կառուցում են տունը. Հոգին՝ արարչագործությունը «*հայտնողն*» է: Երեք դերերն էլ անչափ կարևոր են ցանկացած տան կառուցման համար:

### Աստծո մատը

Ուսումնասիրենք երկու սուրբգրային նկարագրությունն նույն իրադարձության մասին: Հիսուսը բժշկեց մի դիվահարի: Մարդիկ զարմացան, բայց փարիսեցիները մտածեցին՝ *Նա քշում է դևերին սատանայի օգնությամբ* (տե՛ս Մատթ. 12.23,24): Քսանութերորդ խոսքում գրված է Հիսուսի պատասխանը նրանց մտքերին. «Բայց եթե Աստծո Հոգով են հանում դևերը, ուրեմն Աստծո արքայությունը ձեզ վրա հասել է»:

Ղուկասը նույնպես հիշատակում է այս խոսքը, բայց այն մի փոքր տարբերվում է Մատթեոսի նկարագրությունից: Ղուկաս 11.20-ում գրված է. «Բայց եթե ես *Աստծո մատով* են հանում դևերին, ուրեմն Աստծո արքայությունը ձեզ վրա հասել է»: Ե՛վ Ղուկասը, և՛ Մատթեոսը խոսում են Սուրբ Հոգու մասին: Ղուկասը դիմում է մի հնարի, որը գրողները հաճախ են կիրառում. նա նկարագրում է այն գործառույթը, որը հատուկ է Սուրբ Հոգուն՝ խոսելով Նրա Անձի մասին: Այստեղից կարող ենք եզրակացնել, որ Սուրբ Հոգուն կարելի է նկարագրել որպես «Աստծո մատը»:

Սուրբ Հոգու գործառույթը կարելի է նկարագրել ոչ միայն որպես Աստծո մատը, այլ նույնպես՝ *Աստծո ձեռքը* և *Աստծո բազուկը*: Սուրբ գիրքը հայտարարում է, որ Աստված ազատեց Իր ժողովրդին «Ձորեղ ձեռքով և երկար մեկնած բազուկով» (Սաղմ. 136.12):

Սաղմոս 8.3-ում գրված է. «Երբ որ տեսնում եմ Քո երկինքը՝ *Քո մատների գործը*՝ լուսինն ու աստղերը, որ Դու հաստատեցիր...»: Հավատացյալների մեծամասնությունը չի գիտակցում, որ Սուրբ Հոգին է տեղադրել աստղերը և մոլորակները երկնքում. Նա է հայտնել ամբողջ ստեղծագործությունը: Հիշեք՝ Ծննդոց 1.2-ում գրված է. «Աստծո Հոգին շրջում էր ջրերի վրայով»: Նա սպասում էր, որ Հայրը նախաձեռներ արարչագործությունը: Որդին պետք է տնօրիներ այն՝ խոսելով. «Թող լույս լինի», որովհետև Հիսուսը՝ Աստծո խոսքն է: Երբ հնչեց «Թող լույս լինի» արտահայտությունը, Որդին տնօրինեց Հոր կամքը, և Սուրբ Հոգին ստեղծեց այն, ինչ Որդին խոսեց:

Իմ ամենասիրելի հատվածներից մեկը Աստծո Հոգու մեծության և փառքի մասին գրված է Եսայի 40.12-15-ում.

«Ուրիշ Ո՞վ է բռնել օվկիանոսներն Իր ափում: Ո՞վ է չափել երկինքներն Իր մատներով: Ուրիշ Ո՞վ գիտի երկրի կշիռը կամ կշռել է սարերը և բլուրները կշեռքի վրա: Ո՞վ կարող է խորհուրդ տալ Տիրոջ Հոգուն: Ո՞վ բավականաչափ գիտի՝ Նրան խորհուրդ տալու կամ սովորեցնելու համար: Մի՞թե Տերը երբևէ ունեցել է որևէ մեկի խորհրդի կարիքը: Մի՞թե Նա հրահանգների կարիք ունի այն մասին, թե որն է բարին: Մի՞թե ինչ-որ մեկը սովորեցրել է Նրան, թե որն է ճշմարիտը, կամ ցույց է տվել Նրան արդարության ուղին: Ո՛չ, որովհետև աշխարհի բոլոր ազգերը պարզապես մի կաթիլ են դուլի մեջ: Նրանք կշեռքի վրայի փոշուց ավելին չեն: Նա բարձրացնում է ամբողջ երկիրը, ասես այն մի ավազահատիկ լինի» (Եսայի 40.12-15, NLT):

Տասներկուերորդ խոսքում գրված է. «Ո՞վ է չափել երկինքներն Իր մատներով»: Դուք կարող եք տեսնել, որ Սուրբ Հոգին նկարագրվում է այն գործառույթով, որը հատուկ է Իրեն: Մտածե՛ք այս մասին. Տիրոջ Հոգին պահել է ամբողջ օվկիանոսը Իր ափում: Արդյո՞ք տեսնում եք, թե որքան զորավոր է Նա: Եվ, այնուամենայնիվ, Նա խոնարհեցրել է Իրեն և համաձայնել Հոր և Որդու հետ՝ գալ և բնակվել մեր մեջ: Ինչպիսի՞ զարմանալի իրողություն. այն երկյուղածություն է ներշնչում:



## Օր 4

### Սուրբ Հոգին Աստված է

Տեսնենք, թե ինչպիսին էր Սուրբ Հոգու դերը մարդու ստեղծման մեջ: Գրված է. «Եվ Եհովա Աստվածը հողի փոշուց շինեց մարդուն, և նրա ռունգերի մեջ կենդանության շունչ փչեց, և մարդը կենդանի հոգի եղավ» (Ծննդ. 2.7): Սուրբ Հոգին Նա է, Ով իրականում «շինեց» Ադամին և կյանք փչեց նրա ռունգերի մեջ: Որտեղի՞ց ես գիտեմ դա: Հոբ 33.4-ում գրված է. «Աստծո Հոգին է ստեղծել ինձ, և Ամենակարողի շունչը՝ ինձ կյանք տվել»: Սուրբ Հոգին ոչ միայն «շինեց» Ադամին և կյանք փչեց նրա ռունգերի մեջ. Նա նույնպես «շինեց» մեզ և կյանք փչեց մեր մեջ: Սաղմոս 139.13-ում գրված է. «Որովհետև Դու ստեղծեցիր իմ երիկամունքները, և ծածկեցիր ինձ իմ մոր որովայնում»: Իրականում, Աստծո Հոգին ստեղծել է այն ամենը, ինչ մենք տեսնում ենք, որովհետև Առակաց 26.10-ում գրված է. «Մեծ Աստված, Ով ստեղծեց ամեն ինչ...» (NKJV): Այն արարչագործությունը, որ մենք տեսնում ենք, ի հայտ եկավ, որովհետև Սուրբ Հոգին իրագործեց Հոր ստեղծարար ցանկությունը:

Հուսով եմ՝ այժմ ձեզ համար ակնհայտ է, թե ով է Սուրբ Հոգին: Դիտարկենք Նրա անուններից մի քանիսը, որոնք օգտագործվում են Աստվածաշնչում.

- Սուրբ Հոգի (96 անգամ)
- Տիրոջ Հոգի (28 անգամ)
- Աստծո Հոգի (26 անգամ)
- Հավիտենական Հոգի (Եբր. 9.14)
- Օգնական (4 անգամ Հիսուսի կողմից՝ Հովհաննեսի Ավետարանում)
- Մխիթարիչ (հաճախ է օգտագործվում «Էմփիլիֆայր» Աստվածաշնչում (AMP))
- Սուրբ (Սաղմ. 78.41)
- Տեր (Բ Կորնթ. 3.17)
- Ծննդարտության Հոգի (4 անգամ)
- Քրիստոսի Հոգի (Հռոմ. 8.9, Ա Պետր. 1.11)
- Հիսուս Քրիստոսի Հոգի (Փիլիպ. 1.19)

- Խորհրդի Յոգի (Եսայի 11.2)
- Գիտության Յոգի (Եսայի 11.2)
- Զորության Յոգի (Եսայի 11.2)
- Հանճարի Յոգի (Եսայի 11.2)
- Իմաստության Յոգի (Եսայի 11.2)
- Տիրոջ երկյուղի Յոգի (Եսայի 11.2)
- Ձեր Յոր Յոգին (Մատթ. 10.20)
- Փառքի Յոգի (Ա Պետր. 4.14)
- Շնորհքի Յոգի (Զաքարիա 12.10, Եբր. 10.29)
- Իրավունքի Յոգի (Եսայի 4.4)
- Այրող Յոգի (Եսայի 4.4)
- Կյանքի Յոգի (Հռոմ. 8.2)
- Սիրո Յոգի (Բ Տիմոթ. 1.7)
- Զորության Յոգի (Բ Տիմոթ. 1.7)
- Զգաստության Յոգի (Բ Տիմոթ. 1.7)
- Մարգարեության Յոգի (Հայտն. 19.10)
- Հայտնության Յոգի (Եփես. 1.17)
- Սրբության Յոգի (Հռոմ. 1.4)
- Սուրբ Աստծո Յոգի (4 անգամ Դանիելի գրքում)

Նա արժանի է. Նա զորավոր է. Նա հրաշալի է:

### **Հիսուսը լիովին կախված էր Սուրբ Յոգուց**

Հիսուսը լիովին կախված էր Սուրբ Յոգուց: Նրա ծնունդը Սուրբ Յոգուց էր, և Նա ուսված էր Յոգուց: Յորդանան գետի մոտ Յոգին զորացրեց Նրան, և Նա նույնիսկ մեկ հրաշք չգործեց, մինչև Յոգով մկրտվելը (տե՛ս Յովհաննեսի պամոթյունը Հիսուսի գործած առաջին հրաշքի մասին Գալիլեայի Կանայում. Յովհ. 1.29-34 և 2.1-11): Նա առաջնորդվում էր Յոգով և խոսում միայն այն, ինչ լսում էր Յոգուց:

Յովհաննես 14.10-ում Հիսուսն ասաց. «...այն բանը (կամ՝ խոսքերը), որ Ես խոսում եմ ձեզ հետ, Իմ անձից չեմ խոսում, բայց Հայրը, որ Ինձանում բնակված է, Նա է գործում այդ գործերը»:

Ուշադրություն դարձրեք, որ Հիսուսը չասաց. «Հայրը Երկնքում»: Նա ասաց. «Հայրը, որ Ինձանում բնակված է»:

«Մի րոպե, **Ջոն**. ուզում ես ասել, որ Հիսուսը Սուրբ Հոգուն Հայր էր անվանում»: Դե, իսկ ինչո՞ւ ոչ: Ահա թե ինչ ասաց Հրեշտակը Հովսեփին. «...մի՛ վախեցիր քեզ մոտ առնել քո կին Մարիամին, որովհետև նրանում ծնվածը Սուրբ Հոգուց է» (Մատթ. 1.20, NLT): Հիսուսի ծնունդը Սուրբ Հոգուց էր, այնպես որ կարելի է հասկանալ, թե ինչու էր նա Սուրբ Հոգուն անվանում «Հայրը, որ Ինձանում բնակված է»:

Իրականում, Հիսուսը և Սուրբ Հոգին մշտապես համագործակցում էին Հիսուսի երկրային կյանքի ընթացքում: Հիսուսն ասաց հետևյալը. «Որդին ոչինչ չի կարող անել Իրենից» (Հովհ. 5.19, NLT): Եթե անձամբ Հիսուսը՝ Աստծո Որդին, կարիք ուներ մշտապես համագործակցել Սուրբ Հոգու հետ՝ Իր առաքելությունը կատարելու համար, որքա՞ն ավելի մենք ունենք Հոգու օգնության կարիքը, որպեսզի կատարենք մեր առաքելությունները:

Ոչ ոք չի ճանաչում Սուրբ Հոգուն ավելի լավ, քան Հիսուսը, այնպես որ, եկեք տեսնենք, թե ինչ ասաց Հիսուսը Սուրբ Հոգու դերի, անձնավորության, հատկանիշների, զորության և այլ կարողությունների մասին մեր կյանքում: Հովհաննես 14.15-18-ում Հիսուսը հռչակում է.

«Եթե Ինձ սիրում եք, Իմ պատվիրանները պահեք: Եվ ես Հորը կաղաչեմ, և ուրիշ Մխիթարիչ (կամ՝ Օգնական) կտա ձեզ, որ մնա ձեզ հետ հավիտյան: Ճշմարտության Հոգին, որին այս աշխարհը չի կարող ընդունել, որ չի տեսնում Նրան, և ոչ էլ ճանաչում Նրան, բայց դուք Նրան ճանաչում եք, որովհետև ձեզ մոտ է մնում և ձեզ հետ կլինի: Ձեզ որք չեմ թողնի. կգամ ձեզ մոտ»:

Այս հատվածում շատ գանձեր կան: Առաջինը՝ դուք նկատեցիք, որ Հիսուսն ասաց. «Եթե Ինձ սիրում եք, Իմ պատվիրանները պահեք»: Հետաքրքիր է, որ նախքան Սուրբ Հոգու մասին խոսելը, Հիսուսը հիշեցնում է Իր գերագույն իշխանությունը ճանաչելու մասին: Նա անչափ կարևորում է մեր հնազանդությունը Իր պատվիրաններին: Պետրոսը հաստատում է այս ճշմարտությունը. «Եվ մենք Նրա վկաներն ենք այս բաների համար, և Սուրբ Հոգին էլ, որ Աստված Իրեն հնազանդվողներին տվեց» (Գործք 5.32): Աստված տալիս է Սուրբ Հոգուն նրանց, ովքեր հնազանդվում են Իրեն:

Այժմ ուշադրություն դարձրեք, թե ինչ է Հիսուսն ասում Հովհաննես 14.16-ում. «Եվ ես Հորը կաղաչեմ, և ուրիշ Մխիթարիչ կտա ձեզ»: Տեսնե՞ք, թե ինչ է «ուրիշ» հունարեն բառի արգմանությունը: Նոր կտակարանում կան երկու հունարեն բառեր, որոնք քարոզման վրա են «ուրիշ» բառով: Այս հունարեն բառերը «հետերոս»-ը և «ալլոս»-ն են: «Հետերոս»-ը նշանակում է «մեկ ուրիշը՝ այլ տեսակի», իսկ «ալլոս»-ը՝ «մեկ ուրիշը՝ նույն տեսակի»<sup>2</sup>: Հարցը հետևյալն է. այս բառերից ո՞րն է Հիսուսն օգտագործում այս խոսքում:

Մինչև պատասխանելը, թույլ տվեք մի օրինակ բերել, որը ցույց կտա տարբերությունը այս երկու բառերի միջև: Պատկերացրեք, որ ես որևէ մի բան տալիս ձեզ, օրինակ՝ խնձոր: Երբ ուտում եք այն, ես հարցնում եմ. «Մեկ այլ մի բան կցանկանա՞ք»:

Եթե դուք պատասխանեք՝ այո, և մի նարինջ ստանաք ինձնից, նշանակում է՝ ես «ուրիշ» մի բան տվեցի ձեզ: Այնուամենայնիվ, ես տվեցի ձեզ *մեկ ուրիշը՝ այլ տեսակի*: Նարինջը նույնպես մի բան է, բայց այն տարբերվում է խնձորից: Սա «հետերոս» բառի օրինակն է:

Իսկ եթե դուք խնդրեք ինձնից մեկ այլ մի բան և ստանաք երկրորդ խնձորը, կարող եք ասել, որ ես տվեցի ձեզ *մեկ ուրիշը՝ նույն տեսակի*: Սա «ալլոս» բառի օրինակն է:

Վերադառնանք մեր հարցին: Երբ Հիսուսն ասում է, որ Հայրը կտա մեզ «ուրիշ» Մխիթարիչ, ո՞ր բառն է Նա օգտագործում: Նա օգտագործում է «ալլոս» բառը: Նա ասում է. «Հայրը կտա ձեզ մեկ այլ Մխիթարիչ, Ով ճիշտ Ինձ նման է»: Այլ խոսքով՝ Հիսուսը նկատի ունի, որ և՛ Նա, և՛ Սուրբ Հոգին նույն տեսակի են:

## Օր 5

### Մեր ընկերը ամբողջ կյանքի ընթացքում

Մեկ այլ բառ, որը Հիսուսն օգտագործում է Հովհաննես 14.16-ում, Մխիթարիչ (կամ՝ Օգնական) բառն է: Հունարենում «մխիթարիչ» բառը՝ «պարակլետոս»-ն է: Հիսուսը նույնպես «պարակլետոս» է անվանվում Հովհաննեսի թղթերում. «Իմ որդյակներ... Բարեխոս

[պարակլետոս] ունենք Յոր մոտ՝ Յիսուս Քրիստոս արդարին» (Ա Յովհ. 2.1): Թե՛ Յիսուսը, թե՛ Սուրբ Յոզիմ կատարում են օգնականի կամ «պարակլետոս»-ի դերը: Ուրեմն, ի՞նչ է նշանակում այս բառը: Նոր կտակարանի ժամանակներում այս բառն օգտագործվում էր՝ նկարագրելու համար դատապաշտպանի, ով պաշտպանում էր ինչ-որ մեկի գործը<sup>3</sup>: Այն նույնպես օգտագործվում էր՝ նկարագրելու համար անձնական խորհրդականի, կամ խորհրդատուի, ով սովորեցնում է հաջողության հասնել կյանքում:

«Պարակլետոս»-ը բաղադրյալ բառ է. այն բաղկացած է երկու հունարեն բառերից՝ «պարա» և «կալեո»: «Պարա» նշանակում է՝ «շատ մոտ»<sup>4</sup>: Պողոսն օգտագործում էր այս բառը՝ նկարագրելու համար իր փոխհարաբերությունները Տիմոթեոսի հետ: Պողոս առաքյալը չուներ Տիմոթեոսից ավելի մտերիմ անձնավորություն (տե՛ս Փիլիպ. 2.20): Իմ կինը՝ Լիզան, «պարա» է ինձ: Չկա ոչ ոք այս երկրի վրա, ով ավելի մտերիմ է ինձ, քան նա: Ես կօգտագործեի այս բառը՝ նկարագրելով իմ փոխհարաբերությունները Լիզայի հետ:

Երկրորդ հունարեն բառը՝ «կալեո»-ն, նշանակում է՝ «կանչել ձեռքի շարժումով» կամ պարզապես «կանչել»<sup>5</sup>: Այս բառը հաճախ է օգտագործվում Սուրբ գրքում, երբ առաքյալները նկարագրում են իրենց կոչումները: Օրինակ՝ երբ Պողոսն ասաց. «Ես *կանչված* եմ որպես հեթանոսների առաքյալ», նա օգտագործեց հունարեն «կալեո» բառը: «Կոչում» հասկացությունը վերաբերում է կյանքի ընթացքին և գործունեությանը:

Միացնելով այս երկու հունարեն բառերը՝ մենք շատ ավելի լավ ենք հասկանում Յիսուսի խոսքերի իմաստը: Ըստ էության, Նա ասում է, որ *Սուրբ Յոզիմ մշտապես կանչված է՝ յուրաքանչյուրիսկողքին լինելու համար, որպեսզի տա մեզ խորհրդատվություն, ցուցումներ, հրահանգներ և խրատներ ամբողջ կյանքի ընթացքում*: Սա Նրա կոչումը կամ հանձնարարությունն է: Նա հավերժ մեզ հետ է, որպեսզի օգնի, և Նա երբեք չի հոգնում: Յիսուսն ասաց, որ Սուրբ Յոզիմ հավիտյան կրճակվի մեզ հետ (տե՛ս Յովհ. 14.16): Նա երբեք չի թողնի և չի լքի մեզ: Ինչպիսի՞ զարմանալի խոստում: Ըստ էության, Յիսուսն ասում է, որ Սուրբ Յոզիմ շարունակելու է Իր (Յիսուսի) աշխատանքը և առաքելությունը մեր կյանքերում:

Հաճախ ես լսում եմ, թե ինչպես են մարդիկ ասում. «Երանի՛ ես կարողանայի քայլել Հիսուսի հետ. ես այնքա՛ն շատ հարցեր կտայի Նրան»: Ինչո՞ւ չտալ այդ հարցերը Սուրբ Հոգուն: Սա կարևոր մի բնագավառ է, որտեղ մեր պատկերացումները Սուրբ Հոգու մասին ակնհայտ են դառնում: Եթե մենք համարում ենք, որ Նա պարզապես անորոշ էակ է, մենք չենք մոտենա Նրան՝ որպես մեկի, Ով կարող է մեզ սովորեցնել և մեր խորհրդատուն լինել: Սուրբ Հոգին Աստվածություն է, ոչ թե անդեմ էակ: Եթե ճշմարտապես հավատում ենք, որ Նա այնպիսին է, ինչպիսին նկարագրված է Խոսքում, մենք երկյուղածությամբ կմոտենանք Նրան՝ գիտակցելով, որ Նա ամենագետ և ամենազոր է, որ Նա և՛ ցանկանում է, և՛ կարող է սովորեցնել, օգնել ու խորհուրդներ տալ մեզ: Այո՛, Նա փափագում է մտերմորեն շփվել մեզ հետ:

Ցավալի է, բայց Սուրբ Հոգին, հավանաբար, ամենից անտեսված Անձնավորությունն է եկեղեցուն: Քանի՛ անգամ ենք միասին հավաքվել, և Նա պատիվ չի ստացել, և նույնիսկ չի հիշատակվել մեր կողմից: Որքա՛ն հաճախ է լինում, որ ամբողջ օրվա ընթացքում մենք նույնիսկ մեկ բառ չենք ասում Նրան, Ով կանչված է հավիտյան մեզ հետ բնակվելու և քայլելու համար:

## Ձարմանալի արտահայտություն

Հիսուսն աներևակայելի մի բան ասաց Հովհաննես 16.7-ում.  
«Բայց ես ճշմարտությունն եմ ասում ձեզ...»:

Մինչ կշարունակենք կարդալ այս հատվածը, թույլ տվեք մի պատկեր ձևավորել ձեր մտքում: Հիսուսը խոսում է Իր աշակերտների հետ: Երեք տարուց ավելի է՝ Նա այս մարդկանց հետ է: Այն ամենը, ինչ Հիսուսը երբևէ ասել է նրանց, կատարվել է: Նա ասել է. «Քանի՛, հանդարտվիր», և այն հանդարտվել է: Նա ասել է. «Դուք մի էլ կգտնեք այսինչ վայրում», և այդպես էլ պատահել է. հենց այդ վայրում նրանք էլ են գտել: Նա գիտեր, որ Իր աշխատակազմի մեջ դավաճան կար, նույնիսկ՝ մինչև դավաճանը որևէ քայլ կձեռնարկեր: Նա ասաց թզեմուն՝ չորանալ, և այն չորացավ քսանչորս ժամվա ընթացքում: Այն ամենը, ինչ Հիսուսն ասել էր, կատարվել է, բայց չնայած դրան՝ Նա ստիպված էր

նախորդել էր խոսքը «Բայց ես ճշմարտությունն եմ ասում ձեզ» արտահայտությամբ: Ըստ էության, Հիսուսը աներևակայելի մի բան էր ասելու աշակերտներին, այնպես որ, պետք է հավաստիացներ նրանց, որ էր ասածը ճշմարտություն էր:

Այսպիսով, ի՞նչ ասաց Հիսուսը նրանց: «Բայց ես ճշմարտությունն եմ ասում ձեզ, թե՛ լավ է ձեզ համար, որ ես գնամ, որովհետև, եթե չգնամ, Մխիթարիչը [պարակլետոսը] չի գա ձեզ մոտ, բայց եթե գնամ, Նրան կուղարկեմ ձեզ մոտ» (Հովհ. 16.7): «Նյու Լիվինգ» թարգմանության մեջ գրված է. «Իմ գնալը՝ լավագույնն է ձեզ համար»:

Պատկերացրեք ձեզ աշակերտների փոխարեն: Ձեր առաջնորդը, Ով, ինչպես գիտեք, Աստծո Որդին է, հենց նոր ասաց, որ պետք է թողնի ձեզ, և, որ Նրա հեռանալը ձեր օգտի համար է: Այդ խոսքերն անհեթեթ կթվային ինձ: Եթե Նա Աստված է, մի՞թե ձեզ համար ավելի օգտավետ չէր լինի, որ Նա մնար: Համոզված եմ՝ աշակերտները մտածում էին նույնը: Հենց այս պատճառով, Հիսուսը նախորդեց էր խոսքը «Ես ճշմարտությունն եմ ասում ձեզ» արտահայտությամբ:

Ինչո՞ւ էր աշակերտների և հավատացյալների գալիք սերունդների համար (որոնց թվում նաև մենք ենք) ավելի լավ, որ Հիսուսը գնար: Մտածե՛ք այսպես. եթե Հիսուսը չհեռանար երկրից, Սուրբ Հոգին չէր գա՝ մեր կողքին լինելու համար: Այնպես որ, եթե ես ցանկանայի ինչ-որ բան ստանալ Հիսուսից, պետք է անցնեի հազարավոր կիլոմետրեր՝ պարզապես Նրան հանդիպելու համար: Իմ ճանապարհորդությունը, հավանաբար, կսկսեր թռիչքով՝ դեպի Թել Ավիվ (որը կլիներ աշխարհի ամենածանրաբեռնված օդանավակայանը): Դրանից հետո ես պետք է մեքենա վարձեի, գնայի Գալիլեա և հույս ունենայի, որ կկարողանայի պատշաճ կացարան գտնել (բոլոր հյուրանոցները լեփ-լեցուն կլինեին): Այնուհետև ես պետք է փորձեի գտնել Հիսուսին, ինչը դժվար չէր լինի, որովհետև միլիոնավոր մարդիկ սպասելու էին՝ Նրա հետ խոսելու համար: Նրան գտնելուց հետո պետք է անցնեի հերթագրվելու ամենաբարդ համակարգով, որ երբևէ հայտնի է եղել մարդկությանը, որովհետև բոլորը կցանկանային ինչ-որ հարց տալ Հիսուսին կամ որևէ խնդրանքով դիմել Նրան:

Քանի որ հերթը խիստ շատ էր լինելու, իմ հանդիպումը Հիսուսի հետ, հավանաբար, կսահմանափակվեր ամենաշատը վաթսու

վայրկյանով, այնպես որ, ես պետք է նախապես պատրաստեի իմ հարցերը և խնդրանքները: Եվ հիշեք՝ Նա պետք է քննի և սնվի, այնպես որ, Նա, հավանաբար, բազմությամբ պետք է տրամադրեր օրական տասնչորս ժամ: Այդ դեպքում, Հիսուսը կկարողանար հանդիպել օրական 840 մարդու այն պայմանով, որ յուրաքանչյուրի հետ անցկացնելու էր 60 վայրկյան: Այսպիսով, մեկ միլիոն մարդու հանդիպելու համար Հիսուսից կպահանջվեր 1190 օր (3.26 տարի): Բայց հաշվի առեք, որ հերթերին մշտապես նոր մարդիկ էին ավելանալու... իսկ ի՞նչ կկատարվեր, եթե լիներ «հրատապ» հերթ նրանց համար, ովքեր իսկապես հրատապ կարիքներ ու խնդրանքներ ունեին: Այդ մարդիկ մշտապես կանցնեին իմ առջևից, ճի՞շտ է: Կարծում եմ՝ կարելի է ենթադրել, որ Հիսուսին հանդիպելը գրեթե անհնարին և անհավանական կլիներ:

Բարի լուրն այն է, որ Սուրբ Հոգին *մշտապես* հասանելի է մեզ համար: Նա քնելու կամ ուտելու կարիք չունի: Նա կարող է միաժամանակ խոսել միլիարդավոր մարդկանց հետ: Երբ մենք թույլ տանք, որ մեր պատկերացումը Սուրբ Հոգու մասին հիմնովին վերափոխվի Աստծո խոսքով, մենք կսկսենք հասկանալ, թե ինչու Հիսուսն ասաց. «Լավ է ձեզ համար, որ ես գնամ»:

Հիշեք, որ Սուրբ Հոգին ճիշտ Հիսուսի նման է: Նա սովորեցնում է Հիսուսի նման, Նա բացահայտում է աստվածային իրողությունները Հիսուսի նման, և Նա մեզ հետ է հենց հիմա: Արդյո՞ք սկսում եք հասկանալ, թե որքան զարմանալի է Նա: Նույնիսկ հիմա, երբ գրում եմ այս տողերը, Հոգին բացում է իմ աչքերը՝ ցույց տալով, թե ինչպես եմ սահմանափակել Նրա ծայրը և ներկայությունը իմ կյանքում: Կրկին Նա մեր առաջնորդն է, խորհրդականը, պահապանը և խորհրդատուն: Մեզ անհրաժեշտ է, որ Նա գործուն կերպով ներգրավված լինի մեր կյանքերում:

Հաջորդ գլխում կքննարկենք, թե ինչ է նշանակում մտերիմ լինել մեր զարմանալի Աստծո հետ:



## ՃԱՆԱԶԵՔ ՀՈԳՈՒՆ

*«Ես կիևնդրեմ Հորը, և Նա կտա չեզ մեկ այլ Մխիթարիչ (Խորհրդական, Օգնական, Բարեխոս, Դատապաշտպան, Չորացնող, Կողքին լինող), որ Նա մնա չեզ հետ հավիտյան՝ Ծննդարարության Հոգին...»:*

— Հովհաննես 14.1,17, AMP

Սուրբ Հոգին իսկապես զարմանալի է: Փրկությունից հետո, որը ստացանք Քրիստոսի միջոցով, Նա լավագույն պարզևն է, որ երբևէ կարող ենք ստանալ: Ո՞վ է Սուրբ Հոգին: Փորձառու գրող և հովիվ է.Ու. Թոգերը մինչև իր կյանքի ավարտը գրել է.

«Սուրբ Հոգին խանդավառություն չէ... Նա Անձ է: Թող սա տպավորվի ձեզանում. Սուրբ Հոգին ինչ-որ էակ չէ, ով գոյության մեկ այլ ձև ունի. Նա Անձ է՝ անձնավորության բոլոր հատկանիշներով և ունակություններով հանդերձ: Նա նյութ չէ, բայց Նա նյութականի հիմքն է... Սուրբ Հոգին ունի կամք, մտածողություն, զգացմունքներ, գիտելիք, կարեկցանք, կարողություն՝ սիրելու և տեսնելու, մտածելու, և լսելու, խոսելու և ցանկանալու՝ նույն կերպով, ինչպես ցանկացած անձ»<sup>1</sup>:

Ինչպե՞ս էիք պատկերացնում Սուրբ Հոգուն՝ այս դասընթացն սկսելուց առաջ: Ինչպե՞ս այս գլուխն ընդարձակեց ձեր պատկերացումն այն մասին, թե ով է Նա անձամբ ձեզ համար:

---

---

---

---

Ուշադրությամբ մտորե՛ք Աստվածաշնչից վերցված Սուրբ Հոգու անունների ցուցակի շուրջ (էջ 25-26): Ի՞նչ են հայտնում այս անունները Նրա մասին:

---

---

---

---

Աստժո հետ առողջ փոխհարաբերություններ կառուցելու համար կենսականորեն կարևոր է այն գիտելիքը, որ Սուրբ Հոգին՝ Հորը և Որդուն հավասար Անձ է: Թողերը շարունակում է...

«...Որդու էությունը՝ Սուրբ Հոգու էությունն է, և Հոր էությունը՝ նույնպես Սուրբ Հոգու էությունն է, և Սուրբ Հոգին Իր Եկեղեցուն է: Ուրեմն, ինչպիսի՞ն է նա կլինի. նա կլինի ճիշտ Հիսուսի նման: Ձեր Նոր կտակարանում դուք կարդացել եք և գիտեք, թե ինչպիսին է Հիսուսը. Սուրբ Հոգին ճիշտ Հիսուսի նման է, որովհետև Հիսուսն Աստված է, և Սուրբ Հոգին՝ Աստված է, և Հայրը՝ ճիշտ Որդու նման է: Դուք կարող եք իմանալ, թե ինչպիսին է Հիսուսը՝ իմանալով, թե ինչպիսին է Հայրը, և դուք կարող եք իմանալ, թե ինչպիսին է Հոգին՝ իմանալով, թե ինչպիսին է Հիսուսը»<sup>2</sup>:

Արդյո՞ք նորովի տեսնում եք Սուրբ Հոգուն: Արդյո՞ք Նրա բնավորության տարբեր կողմերը խրախուսում են ձեզ և ցանկություն են առաջացնում, որ նա ավելի մեծ մասնակցություն ունենա ձեր կյանքում:

---

---

---

---

---

---

---

---

**Հետագա ուսումնասիրության համար...**  
Հովհաննես 12.44,45, 14.8-11, Բ Կորնթացիների 4.4, Կողոսացիների 1.15-19, Եբրայեցիների 1.3

## ՆԱ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ Է, ՈՉ ԹԵ ԱՆԴԵՄ ԷԱԿ

«Տերը և Հոգին մեկ են և նույնն են...»:

— (Բ Կորնթացիների 3.17, CEV)

Որպես Աստծո գավակ՝ ձեզ տրվել է Նրա թանկ, խոստացված պարգևը՝ Նրա Սուրբ Հոգին (տե՛ս Գաղատ. 4.6): Նրա Հոգին պարզապես առեղծվածային գորություն կամ ուժ չէ, որը շարժվում է գալակտիկայով մեկ: Նրա Սուրբ Հոգին՝ *Ինքն* է, Իր էության ամբողջական լիությունը:

**Էնդրյու Սյուրին**, ով տասնիններորդ դարի ծառայող և ավելի քան 200 գրքի հեղինակ է, գրում է, որ Սուրբ Հոգին «մեկ է Հոր և Որդու հետ», և որ Նա տալիս է Աստծո փառքի «ամբողջական և կատարյալ հայտնությունը»: Հեղինակը շարունակում է.

«Այժմ Սուրբ Հոգին պետք է մերը դարձնի այն ամենը, ինչ Աստված խոստացել էր Հին ուխտում, և այն ամենը աստվածային շնորհքից, որ հայտնվեց և մոտեցավ մեզ Հիսուսի մեջ: *Նրա միջոցով Աստծո բոլոր խոստումներն իրականանում են, ամբողջ շնորհքը և փրկությունը Քրիստոսի մեջ դառնում է մեր անձնական սեփականությունը և վերապրումը*»<sup>3</sup>:

Դուք հասկացա՞ք սա: Սուրբ Հոգու միջոցով Աստծո բոլոր խոստումներն իրականանում և դառնում են մեր անձնական սեփականությունն ու վերապրումը: Սա պարզապես մարդկային կարծիք չէ, այլ՝ սուրբգրային ճշմարտություն: Ուշադրությամբ կարդացե՛ք այս խոսքերը և մտորե՛ք սրանց շուրջ:

«Թող օրհնությունը (փառաբանությունն ու գոհությունը) լինի Աստծուն և մեր Տեր Հիսուս Քրիստոսի (Մեսիայի) Հորը, Ով օրհնել է մեզ Քրիստոսում *ամեն հոգևոր* (Սուրբ Հոգու կողմից տրված) օրհնությունով երկնային թագավորության մեջ»:

— (Եփեսացիների 1.3, AMP)

«Այն ամենը, ինչը վերաբերում է կյանքին և Աստծուն հաճեցնելուն, հրաշքով տրվել է մեզ՝ Աստծո մոտ մեզ Հրավիրողին [Սուրբ Հոգուն] անձամբ և մտերմորեն ճանաչելու միջոցով: Սա լավագույն հրավերն է, որ մենք երբևէ ստացել ենք»:

— (Բ Պետրոս 1.3, MSG)  
{Բառերը քառակուսի փակագծերի մեջ ավելացված են պարզ լինելու համար}

«Բայց ինչպես գրված է. «Աչքը չի տեսել, ո՛չ էլ ականջն է լսել, ո՛չ էլ մարդու սիրտն է մտել այն բաները, որ Աստված պատրաստել է նրանց համար, ովքեր սիրում են Իրեն: Բայց Աստված, *Հոգու միջոցով*, թույլ է տվել, որ մենք իմանանք Իր գաղտնիքը: Որովհետև ոչինչ թաքնված չէ Հոգուց, նույնիսկ Աստծո խորը իմաստությունը»:

— (Ա Կորնթացիների 2.9,10, Ջ.Բ. Ֆիլիպս)

Ի՞նչ է հայտնում ձեզ Սուրբ Հոգին այս խոսքերի միջոցով:

---

---

---

---

Արդյո՞ք դուք սահմանափակում եք Սուրբ Հոգու ներկայությունը և զորությունը ձեր կյանքում այն պատկերացումների պատճառով, որ ունեք Նրա մասին: *Կանգ առեք և աղոթեք*: Խնդրե՛ք Նրան՝ ցույց տալ ձեզ, թե ո՞ր դեպքերում ունեք Նրա օգնության կարիքը՝ այդ պատկերացումները փոխելու համար: Գրե՛ք այն, ինչ Նա հայտնում է:

---

---

---

---

**Հետագա ուսումնասիրության համար...**  
Օգտագործե՛ք աստվածաշնչյան խոսքերի առցանց որոնման միջոցներ (օրինակ՝ [biblia.com](http://biblia.com) կայքէջը)՝ գտնելու համար «Հոգով», «Հոգու միջոցով» և «Հոգուց» բառեր պարունակող աստվածաշնչյան խոսքեր: Նույնպես կարդացե՛ք հետևյալ հատվածները:  
Ա Կորնթացիների 12.4-11, Գաղատացիների 5.5, Բ Թեսաղոնիկեցիների 2.13

## ՆԱ ԿՅԱՆՔԻ ՀՈԳԻՆ Է

«Որովհետև կյանքի Հոգու օրենքը Հիսուս Քրիստոսում՝  
ազատեց ինչ մեղքի և մահվան օրենքից»:

— (Հռոմեացիների 8.2)

Սուրբ Հոգին՝ կյանքի Հոգին է: Ինչպիսի՛ անուն. մտածե՛ք այս մասին: Կյանքը *ամեն ինչ է*. այն ընդգրկում է առողջությունը, աճը, թարմությունը, ուժերը, եռանդը և առույգությունը: Կյանքի Հոգու մեջ չկա մահվան ոչ մի ստվեր՝ հիվանդություն կամ տկարություն, հոգնածություն կամ հյուժվածություն, լճացում կամ քայքայում. Նրանում չկա մահվան որևէ դրսևորում:

Կյանքի Հոգին ներկա էր արարչագործության պահին. Նա կյանք էր փչում ամբողջ երկրով: Միջազգային միսիոներ և ավետարանիչ **Լեսթեր Սամրալը** հաստատում է սա՝ գրելով.

«Առաջին հատվածը Աստծո գրված Խոսքում, որտեղ մենք տեսնում ենք Սուրբ Հոգու գործունեությունը, Ծմնդոց 1.2-ն է: Ուշագրավ է, որ Աստվածաշնչի առաջին էջը և երկրորդ խոսքը ցույց են տալիս Սուրբ Հոգու գործունեությունը... Նա քառսից դուրս բերեց տիեզերքը, գեղեցկությունը և սքանչելիքները: Երկիրն անձև ու դատարկ էր: Աստված իրագործում էր Իր ստեղծարար գլուխգործոցը, և Սուրբ Հոգին շարժվեց՝ Նրան օգնելու համար: Աստծո Հոգին շարժվեց ջրերի վրայով, և *տիեզերքը* առաջացավ քառսից»:

Ձեր կյանքի ո՞ր բնագավառներում եք դատարկություն կամ քառս զգում: Որտե՞ղ կարիք ունեք, որ Սուրբ Հոգին *գեղեցկություն, կարգ ու կանոն* և *ազատություն* բերի: Աղոթե՛ք և խնդրե՛ք Նրան՝ ցույց տալ ձեզ այդ բնագավառները: Հանձնե՛ք դրանք Սուրբ Հոգուն աղոթքի միջոցով՝ խնդրելով Նրան՝ շարժվել այդ բնագավառներում և կարգ ու կանոն բերել՝ ինչպես արարչագործության ժամանակ:

---

---

---

---

---

Կարդացե՛ք Փիլիպեցիների 4.6-8, Ա Պետրոս 5.7, Սաղմոս 37.4-6

Արդյո՞ք հյուժված եք ձեր զբաղվածության կամ ապրելակերպի պատճառով: Կյանքի Յոգին ցանկանում է զորացնել ձեզ Իր կարողությամբ: Երբ ժամանակ անցկացնեք Նրա հետ և սկսեք ճանաչել Նրան, Նա կնորոգի ձեր ուժերը: Մի պահ մտորե՛ք Աստծո այս զորավոր խոստումների շուրջ.

«Մի՞թե չեք իմացել: Մի՞թե չեք լսել: Հավիտենական Աստված՝ Տերը, երկրի Արարիչը, չի թուլանում և չի հոգնում. Նրա հասկացողությունն անքննելի է: Նա ուժ է տալիս թուլացածին և հոգնածին, և ավելացնում է կարողություն չունեցողի ուժը [շատացնելով այն]»:

— (Եսայի 40.28,29, AMP)

«Ինքնին հասկանալի է, այնպես չէ՞, որ եթե կենդանի և ամենագո Աստված, Ով Հիսուսին հարություն տվեց մեռելներից, մուտք է գործում ձեր կյանք, Նա կանի նույնը ձեզանում, ինչ արեց Հիսուսի մեջ՝ կենդանացնելով ձեզ Իր համար: Երբ Աստված ապրում և շնչում է ձեզանում (և Նա այդպես էլ անում է, ինչպես որ Հիսուսի մեջ) դուք ազատվում եք այդ մահվան կյանքից: Քանի որ Իր Հոգին ձեզանում է, ձեր մարմինը նույնքան կենդանի կլինի, որքան Քրիստոսինը»:

— (Հռոմեացիների 8.11, MSG)

«Քրիստոսում ես ուժ ունեն ամեն ինչի համար, Նա զորացնում է ինձ [ես պատրաստ եմ ցանկացած բանի կամ՝ ցանկացած բան անելու կարողություն ունեն Նրա միջոցով, Ով ներքին ուժ է ներարկում իմ մեջ...]»:

— (Փիլիպեցիների 4.13, AMP)

Ի՞նչ է ասում Սուրբ Հոգին ձեզ այս խոսքերի միջոցով: **Աղոթք գրեք՝** խնդրելով կյանքի Հոգուն՝ *ներքին ուժ ներարկել ձեր մեջ* և դարձնել ձեզ նույնքան կյանքով լեցուն, որքան Հիսուսն էր, երբ քայլում էր այս երկրի վրա:

---

---

---

**Հետագա ուսումնասիրության համար...**  
Ծննդոց 1.2, Նեեմիա 9.6, Եսայի 40.12-15, Սաղմոս 8.3-9, 104.24-30, Հոբ 33.4

## ՄԵՆՔ ՊԵՏՔ Է ԼԻՈՎԻՆ ԿԱԽՎԱԾ ԼԻՆԵՆՔ ՆՐԱՆԻՑ

«... Դու հաջողության չես հասնի կարողությամբ կամ զորությամբ, բայց՝ Իմ  
Հոգով,- ասում է Չորքերի Տերը»:

— (Զաքարիա 4.6, GW)

Հիսուս Քրիստոսը՝ Աստծո Որդին, լիովին կախված էր Սուրբ  
Յոզուց՝ Յոր Յոզուց: Ամեն ինչ Նրա կյանքում՝ Մարիամի հղիանա-  
լուց մինչև Նրա հարությունը, Յոզու աշխատանքի արդյունքն էր:  
Սուրբ գրքում գրված է, որ...

Նա ծնվել էր Յոզուց – **Մատթեոս 1.20, Դուկաս 1.31-35**

Նա առաջնորդվում էր Յոզով – **Մատթեոս 4.1, Դուկաս 4.1**

Նա զորանում էր Յոզով – **Դուկաս 4.14,18,19, Յովհաննես 3.34**

Նա սովորում էր Յոզուց և հնազանդվում էր Նրան – **Յովհաննես 5.19,20,30, 14.10**

«Հիսուսն ասաց հրեաներին. «Կարող եմ հաստատարապես ասել այս  
ճշմարտությունը. Որդին չի կարող որևէ բան անել Ինքն Իրենով: Նա միայն  
կարող է անել այն, ինչ տեսնում է Հորն անելիս: Որդին իսկապես անում է  
միշտ այն, ինչ Հայրն է անում: Հայրը սիրում է Որդուն և ցույց է տալիս Նրան  
այն ամենը, ինչ Ինքն անում է... Ես չեմ կարող որևէ բան անել Ինչանով:  
Ինչպես լսում եմ Հորը, այնպես եմ դաստիարակում: Իմ դաստիարակներն արդար  
են, որովհետև Ես չեմ փորձում անել այն, ինչ Ես եմ ցանկանում, այլ այն, ինչ  
ցանկանում է Ինչ ուղարկողը»:

— (Հովհաննես 5.19,20,30, GW)

Ուշադրությամբ մտորե՛ք Հիսուսի տված հայտարարության  
շուրջ Յովհաննես 5-րդ գլխում (վերևում), որտեղ Նա խոսում  
է Սուրբ Յոզուց կախված լինելու մասին: Ի՞նչ է հայտնում ձեզ  
Սուրբ Յոզին Հիսուսի և Իր փոխհարաբերությունների մասին: Այս  
հայտարարությունը ձեզ համար մարտահրավե՞ր է, թե՞ խթան:

---

---

---

---

---

---

Կարդացե՛ք Գործք 5.32, Հռոմեացիների 8.16, Գաղատացիների 4.6, Ա Յովհաննես 3.24 և 4.13 խոսքերը: Կարո՞ղ եք նկատել երկու կրկնվող ճշմարտություն Սուրբ Հոգու և Նրա հետ մեր փոխհարաբերությունների մասին:

---

---

---

---

Ինչպես Գաղատիայի եկեղեցու հավատացյալները՝ մենք էլ երբեմն մոռանում ենք, թե որքան ունենք Սուրբ Հոգու կարիքը: Ուշադրությամբ կարդացե՛ք Գաղատացիների 3.2-9 և Ղուկաս 11.13 խոսքերը: Ի՞նչ դասեր կարող եք քաղել Սուրբ Հոգու շարունակական օգնությունն ընդունելու մասին և ինչպե՞ս կարող եք կիրառել դրանք ձեր կյանքում:

---

---

---

---



## ՆԱ ՉԵՐ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՆ Է

*«Ես կհստենմ չոր հեղ, և Նա կտա ձեզ մեկ այլ Ընկերոջ,  
որպեսզի դուք մշտապես ինչ-որ մեկին ունենաք ձեզ հեղ:  
Այս Ընկերը՝ ճշմարտության չոգին է»:*

— (Հովհաննես 14.16,17, GW)

Սուրբ Չոգին ցանկանում է լինել ձեր լավագույն ընկերը: Նա ցանկանում է լինել ձեր Օգնականը, Ով միշտ ձեր կողքին է՝ օրը քսանչորս ժամ և շաբաթը յոթ օր: Սուրբ գիրքը հռչակում է. «Այն Չոգին, Ում Նա բնակեցրեց մեզանում, փափագում է մեզ: Նա փափագում է, որ Չոգին [ընդունվի] նախանձավոր սիրով» (Չակոբ. 4.5, AMP):

Ճշմարիտ ընկերությունը Սուրբ Չոգու հետ անգին է: Նրա ներկայությունը և զորությունը մեզ տալիս են հավերժական բավականություն, որն անգերազանցելի է: Խոսելով Սուրբ Չոգու մասին՝ Չիսուսն ասաց. «Բայց նրանք, ովքեր խմեն այն ջրից, որ ես կտամ նրանց, երբեք չեն ծարավի: Այն ջուրը, որ ես կտամ նրանց, կդառնա նրանցում մի աղբյուր, որը կենսատու ջուր կմատակարարի նրանց և հավիտենական կյանք կտա» (Չովհ. 4.14, GNT): Մեկնաբանելով այս խոսքը՝ ավետարանիչ և ուսուցիչ **Ռ. Ա. Տորեյը** պնդում է.

«Ձուրը այս խոսքում՝ Սուրբ Չոգին է: Աշխարհը երբեք չի կարողանա բավականություն պատճառել: Ամեն ուրախության մասին, որ կա այս աշխարհում, պետք է ասվի հետևյալը. «Ով որ այս ջրից խմի, կրկին կծարավի»: Բայց Սուրբ Չոգին զորություն ունի՝ բավարարելու մարդկային անձի յուրաքանչյուր ցանկությունը: Սուրբ Չոգին և միայն Նա՝ կարող է բավականություն տալ մարդու սրտին:

Եթե անձնատուր լինեք Սուրբ Չոգու աղբյուրին ձեր սրտում, երբեք չեք ծարավի: Ինչպիսի՜ անասելի ուրախությամբ և աննկարագրելի բավականությամբ է Սուրբ Չոգին լցրել Իր կենդանի ջուրը բազմաթիվ մարդկանց մեջ: Արդյո՞ք ունեք այս կենդանի աղբյուրը ձեր ներսում: Արդյո՞ք այս աղբյուրը խցանված չէ: Արդյո՞ք այն բխում է հավիտենական կյանքի համար»:

Ստորեք Տորեյի հարցերի շուրջ. «Արդյո՞ք իմ ներսում կա այս կենդանի աղբյուրը: Արդյո՞ք ես վերապրում եմ Յոզու աննկարագրելի բավականությունը: Եթե ոչ, ի՞նչն է պատճառը»: Դրանից հետո խնդրեք Սուրբ Յոզուին՝ ցույց տալ ձեզ, թե ինչ կարող եք անել, որպեսզի ամեն օր ավելի ազատորեն անձնատուր լինեք Նրա ընկերությանը: Գրեք այն, ինչ Նա հայտնում է ձեզ:

---

---

---

*Լռությամբ մոտեցեք Տիրոջը* (Սուրբ Յոզուին): Խնդրեք, որ Նա հայտնի Իրեն՝ շատ ավելի, քան նախկինում: Խնդրեք Նրան, որ ձեզ վրա տեղա Իր սերը, բարեհաճությունը և խաղաղությունը՝ անձրևի պես: Մի՛ շտապեք: Հանդարտվեք և փորձառաբար ճանաչեք, որ Նա է Տերը: Գրեք այն, ինչ Նա ասում է ձեզ:

---

---

---

Դուք կարող եք ազատորեն լինել այնպիսին, ինչպիսին կաք՝ չփվելով Սուրբ Յոզուի հետ: Նա ամբողջովին ճանաչում է ձեզ: Երբեմն թվում է, թե չեք կարողանում «գտնել ձեզ», բայց Նա կարող է ցույց տալ, թե «որտեղ» եք դուք: Նա մշտապես բնակվում է ձեզանում, որպեսզի զորացնի, խրախուսի և առաջնորդի ձեզ: Դիմեք Նրան ցանկացած պահին, որտեղ էլ լինեք: Դուք չեք կարող հոգնեցնել կամ ձանձրացնել Նրան: Նա ձեր լավագույն ընկերն է:

---

---

---

**Աղոթք**  
Սուրբ Յոզի, հիմնովին ընդարձակիր իմ պատկերացումը Քո մասին: Օգնիր ինձ՝ տեսնել Քո անհատականությունը և դերը՝ որպես իմ Օգնական: Օգնիր ինձ՝ երբեք չսահմանափակել Քո ներկայությունը, զորությունը կամ ձայնը իմ կյանքում: Ես աղոթում եմ սա ինձ, իմ ընտանիքի և Քո ամբողջ Եկեղեցու համար, Հիսուսի անունով, ամեն:

# ՀԱՐՑԵՐ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

*Եթե ուսումնասիրում եք «Սուրբ Հոգի. Ներածություն» գիրքը՝ որպես «Մեսիաներ Հավաքածու»-ի ամբողջական դասընթացի մաս, խնդրում ենք՝ դիտելք ուսումնական տեսանյութ 1-ը:*

- 1 | Մեր քրիստոնեական կյանքը առանց Սուրբ Հոգու՝ չոր, միալար և անզոր է դառնում: Այդ դեպքում, ինչպիսի՞ն պետք է լինի մեր կյանքը Սուրբ Հոգու հետ: Անվանեք Հոգով լցված կյանքի դրական դրսևորումներ և կողմեր՝ որքան կարող եք:

*«Որովհետև Տերը՝ Հոգին է, և որպես  
Տիրոջ Հոգին է, այնպես ազատություն է»:*

— (Բ Կորնթացիների 3.17, NLT)

- 2 | Սուրբ Հոգին անդեմ էակ չէ, և ոչ էլ որևէ աստվածային, առեղծվածային զորություն: Նա Աստվածության Անձն է, Ով կրում է Հայր Աստծո և Որդի Աստծո *լիությունը*: Ինչպիսի՞ն հետևանքներ են լինում, երբ Սուրբ Հոգուն դիտարկում են որպես անդեմ էակի կամ առեղծվածային զորության: Ինչպիսի՞ն դրական արդյունքներ են լինում, երբ Սուրբ Հոգուն դիտարկում են այնպիսին, ինչպիսին Նա իրականում է՝ որպես Աստված:
- 3 | Սուրբ Հոգու մասնակցությունը սովորական էր առաջին հավատացյալների համար, բայց այն ավելի հազվադեպ երևույթ է մեր ժամանակվա հավատացյալների կյանքում: Ըստ ձեզ, ի՞նչը թույլ չի տալիս մեզ վայելել Աստծո Հոգուն, փնտրել Նրան, կախված լինել Նրա առաջնորդությունից և զորավոր ազդեցությունից: Անվանե՛ք մի քանի պատճառ:
- 4 | Որտե՞ղ է Հիսուս Քրիստոսը այս պահին: Եթե դուք հավատացյալ եք, արդյո՞ք Նա ապրում է ձեր սրտում: Ինչպե՞ս կարող եք ավելի ճշգրտորեն նկարագրել ձեր փրկությունը և խորհուրդն այն մասին, թե ինչպես է Աստված բնակություն հաստատում ձեր սրտում:

**Ավագներ.** Հանձնարարեք ձեր խմբակի անդամներին՝ կարդալ Մարկոս 16.19, Գործք 1.9-11, 7.55,56, Հռոմեացիների 8.34, Կորնթացիների 3.1 և Եբրայեցիների 10.12,13 խոսքերը՝ այս հարցի առաջին մասի համար, և Հռոմեացիների 8.9,10, Ա Կորնթացիների 3.16, 6.19 և Ա Հովհաննես 3.24 խոսքերը՝ հաջորդ մասի համար:

*«Հիտուք պարասխանեց և նրան ասաց. «Եթե մեկն Ինչ սիրում է, Իմ խոսքը կպահի, և Իմ Հայրը կսիրի նրան, և նրա մուր կզանք և բնակություն կանենք նրա մուր»»:*

— (Հովհաննես 14.23)

5 | Տերը՝ մեր Աստված, Մեկ է, սակայն Նա ունի երեք առանձին դրսևորումներ՝ *Հայր, Որդի և Սուրբ Հոգի*: Նկարագրեք Աստվածության յուրաքանչյուր Անձի հիմնական գործառույթները, և թե ինչպես են Նրանք համագործակցում՝ Աստծո կամքն իրականացնելու համար:

**Ավագներ.** Հանձնարարեք ձեր խմբակի անդամներին՝ կարդալ Ա Կորնթացիների 12.5-7-ը մաս արարչագործության պատմությունը Ծննդոց 1-ում և Հիսուսի խոսքերը Հովհաննես 5.17,19,20-ում:

**Հայր Աստծո Հոգի = Քրիստոսի Հոգի = Սուրբ Հոգի**

6 | Հիսուսն ասաց, որ Սուրբ Հոգին մեր Օգնականն է, մեր *պարակլետոսը*: Սա նշանակում է, որ Նա «մշտապես կանչված է յուրաքանչյուրիս կողքին լինելու համար, որպեսզի սովորեցնի մեզ և լինի մեր խորհրդականը Աստծո հետ մեր ամենօրյա ընթացքի մեջ»: Ինչպե՞ս է գիտելիքն այս մասին խրատխուսում և խթանում ձեզ Աստծո հետ ձեր ամենօրյա շփման մեջ:

7 | Սուրբ Հոգու Անձնավորության ինչպիսի՞ նոր հատկանիշներ եք տեսնում, որոնց մասին չեք իմացել անցյալում: Ինչպե՞ս է գիտելիքն այս մասին բացել ձեր աչքերը և ընդլայնել ձեր պատկերացումն այն մասին, թե Ով է Նա ձեր կյանքում:



## ՊԷՔԵ ² Ø ö à ö à ô Ø

- **Սուրբ Զոգին** Աստվածության Անձերից մեկն է, Ով կրում է Զայր Աստծո և Որդի Աստծո լիությունը:
- Նա անդեմ էակ կամ անեղծվածային զորություն չէ. Նա Աստված է:
- Նա սահմանափակված չէ ժամանակով կամ տարածությամբ. Նա կարող է միաժամանակ հաղորդակցվել բազմաթիվ մարդկանց հետ և օգնել նրանց:
- Նա մտերմորեն ներգրավված էր առաջին հավատացյալների կյանքում: Այսօր էլ Նա անչափ ցանկանում է ներգրավված լինել մեր կյանքի յուրաքանչյուր բնագավառում:
- Ըստ էության, չկա քրիստոնեական կյանք առանց Նրա: Այն մարդկանց, ովքեր ընդունում են Նրա զարմանալի ընկերությունը և շփումը, հազեցած և արկածային կյանք է սպասվում:
- Անձնապես ճանաչեք Նրան:

# Սուրբ Հոգու անհատականությունը

*«Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի զարմանալի շնորհքը, Աստծո առաք սերը,  
Սուրբ Հոգու մարերիմ ընկերությունը լինի ձեր բոլորի հետ»:*

— (Բ Կորնթացիների 13.13, MSG)

## Օր 1

**Ի**նչ-որ մեկի հետ մտերիմ փոխհարաբերություններ կառուցելու համար մենք նախ՝ պետք է ձգտենք հասկանալ, թե ինչ կա նրա սրտում: Ավելի խորը գիտելիքներն այն մասին, թե ինչ է դուր գալիս այդ մարդուն, իսկ ինչ՝ ոչ, թե ինչ նպատակներ և ձգտումներ նա ունի, կօգնեն մեզ՝ ավելի մտերմանալ նրա հետ: Նմանապես, եթե պատրաստվում ենք մտերմորեն շփվել Սուրբ Հոգու հետ, մենք նախ՝ պետք է հասկանանք Նրա անհատականությունը:

Նախորդ գլխում կարդացինք Հիսուսի զարմանք պատճառող խոսքերը. «...լավ է ձեզ համար, որ ես գնամ, որովհետև եթե չգնամ, Մխիթարիչը չի գա ձեզ մոտ, բայց եթե գնամ, Նրան կուղարկեն ձեզ մոտ» (Հովհ. 16.7): Սա նույն Հիսուսն է, Ով մեկ անգամ ասաց. «Ես կբացեմ Իմ բերանը առակներով. ես կասեմ բաներ, որոնք, աշխարհը ստեղծելուց ի վեր, ծածկված էին» (Մատթ. 13.35, AMP): Հիսուսը, Ով ամենամեծ Ուսուցիչն է, Ով հայտնեց աշխարհը ստեղծելուց ի վեր ծածկված առեղծվածները, փորձում է հանդգել Իր ամենամոտ հետևորդներին, որ ոչ թե Հիսուսը՝ Ով մարմնով նրանց հետ էր, այլ՝ Աստծո Հոգին է լինելու նրանց և գալիք սերունդների հավատացյալների լավագույն ընկերը: Ձարմանալի՜ է: Չգիտեն, թե ինչ էք մտածում այս մասին, բայց հասկանալով Նրա խոսքերը՝ ես ցանկանում եմ ավելի իմանալ Սուրբ Հոգու մասին:

Սկսենք՝ կարդալով Բ Կորնթացիների 13.13-ը: Պողոսը գրում է.

«Տեր Հիսուս Քրիստոսի շնորհքը և Աստծո սերը և Սուրբ Հոգու հաղորդությունը ձեր ամենի հետ»:

Պողոսն ընդգծում է Աստվածության յուրաքանչյուր Անձի ակնառու դերը մեր կյանքում: Նա սկսում է՝ գրելով. «Տեր Հիսուս Քրիստոսի շնորհքը...»: Որպես հավատացյալներ՝ մենք երբեք չպետք է մոռանանք, որ մեր ճիշտ դիրքն Աստծո առջև, որը Սուրբ Հոգու հետ զարմանալի փոխհարաբերությունների անկյունաքարն է, անհնարին կլիներ, եթե չլիներ մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի շնորհքը: Այս շնորհքն անկարելի է վաստակել, և սրան անհնար է արժանանալ. շնորհքը՝ Նրա կյանքի զորավոր պարգևն է, որով մենք ներում, փրկություն և զորություն ենք ստանում:

Պողոսը շարունակում է. «...և Աստծո սերը...»: Երբ մտածում եմ այն մասին, թե որքան եմ սիրում իմ որդիներին, չեմ կարողանում պատկերացնել, թե ինչպիսին կլիներ իմ կյանքը, եթե ընդամենը մեկ որդի ունենայի: Սակայն եթե պատկերացնեմ, որ ընդամենը մեկ որդի ունեմ, միտքն այն մասին, որ պետք է ուղարկեմ նրան՝ մահանալու իմ թշնամիների համար, անհավանական կթվար: Այնուամենայնիվ, մենք Աստծո թշնամիներն էինք, երբ Նա ծրիաբար տվեց Իր միակ Որդուն մեզ համար (տե՛ս Հռոմ. 5.10): Ինչպիսի՞ զարմանալի սեր: Արդյո՞ք ուրախ չեք, որ Հայրը սիրում է ձեզ: Թեև դուք Նրա թշնամին էիք, այժմ Նրա զավակն եք. ուրեմն որքան ավելի առատորեն Նա կշնորհի Իր սերը ձեզ: Նա սիրում է ձեզ անզուգական և լիակատար սիրով՝ հարազատի պես:

Ես այնքան եմ սիրում իմ երեխաներին, սակայն նրանց սիրելու և նրանցով ուրախանալու իմ կարողությունը չի կարող նույնիսկ համեմատվել այն սիրո հետ, որ Աստված տածում է մեր հանդեպ: Նրա Խոսքն ասում է. «...ո՛չ մահ, ո՛չ կյանք, ո՛չ հրեշտակներ, ո՛չ իշխանություններ, ո՛չ զորություններ, ո՛չ ներկա բաներ, ո՛չ գալու բաներ, և ո՛չ բարձրություն, ո՛չ խորություն, և ո՛չ մեկ ուրիշ ստեղծված բան կարող է մեզ բաժանել Աստծո սիրուց, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսն է» (Հռոմ. 8.38,39): Ինչպիսի՞ զարմանալի խոստում: Արդյո՞ք շնորհակալ չեք, որ ոչինչ չի կարող բաժանել ձեզ Հոր սիրուց:

Իսկ հիմա կարդանք Բ Կորնթացիների 13.13-ի վերջին մասը՝ մտապահելով, որ սա Պողոսի վերջին նամակն է կորնթացիներին: Այս գիրքը (որն իրականում նամակ է) լի է արտասովոր իմաստությանը և հայտնություններով: Պողոսը, Սուրբ Հոգու առաջնորդությամբ, ընտրում է հետևյալ խոսքը՝ որպես այս խորը նամա-



կի վերջաբան. «Սուրբ Յոզու հաղորդությունը ձեր ամենի հետ»։ Ուշադրություն դարձրեք, որ Պողոսը կապակցում է «հաղորդություն» բառը Սուրբ Յոզու հետ: Ես մեծացել եմ Կաթոլիկ եկեղեցում և զուգորդել եմ *հաղորդություն* բառը հացի և գինու հետ: Սակայն ակնհայտ է, որ այս խոսքում Պողոսը նկատի չունի դա: Իսկ ի՞նչ է նշանակում «Սուրբ Յոզու հաղորդությունը»: Եթե անդրադառնանք հունարեն բնագրին, կպարզենք, որ «հաղորդություն» բառը հունարեն «կոիմոնիա»-ն է: Ահա այս հունարեն բառի մի քանի սահմանումներ, որ ինձ հաջողվեց գտնել. «*շփում, ընկերակցություն, հաղորդակցություն, մտերմություն, բաժնեկցում, փոխհարաբերություններ, համագործակցություն, գործակցում և սերտ ընկերակցություն*»: Սա երկար և տպավորիչ ցուցակ է: Թույլ տվեք բաժանել այն երեք հիմնական խմբերի.

- Շփում
- Համագործակցություն
- Մտերմություն

### **Հաղորդությունը նշանակում է շփում**

Իմ բառարանում «շփում» բառը սահմանվում է որպես «ընկերական փոխհարաբերություն, ընկերակցություն, բաժնեկցում»։ Մտերիմ ընկերները շփվում են միմյանց հետ: Նրանք կիսվում և զրուցում են իրար հետ և մշտապես տեղյակ են լինում մեկը մյուսի գործերից:

Ինչպես նշեցի, ինձ շատ է դուր գալիս գոլֆը: Սովորաբար ես գոլֆ եմ խաղում մտերիմ ընկերներիցս մի քանիսի հետ, և մենք զրուցում ենք ամբողջ խաղի ընթացքում: Դա լավագույն միջավայրերից մեկն է որակյալ ժամանակ անցկացնելու համար, քանի որ քիչ շեղող հանգամանքներ կան: Ինձ շատ էր դուր գալիս թենիս խաղալ համալսարանում, բայց խնդիրն այն է, որ թենիս խաղալիս ես չէի կարողանում խոսել խաղակցիս հետ: Գոլֆը նախընտրելու հիմնական պատճառներից մեկը խաղակիցներիս հետ շփվելն է: Ես ավելի շատ մտերիմ փոխհարաբերություններ եմ ձևավորել գոլֆի դաշտում, քան ցանկացած այլ վայրում: Ահա թե որտեղ է տեղի ունենում իմ «շփումը»: Այժմ դուք միզուցե հասկանում եք, թե ինչու

են *ի սրտե* ցանկանում գոլֆ խաղալ կնոջս հետ. պատճառն այն է, որ ամբողջ աշխարհում չկա այնպիսի մարդ, ում հետ ցանկանում են շփվել ավելի շատ, քան նրա հետ:

Իմ ամենամտերիմ ընկերներից մի քանիսը «Մեսինջեր Ինտերնեյշնլ» թիմի անդամներ են: Մենք հաճախ ենք խոսում մեր մտադրությունների, դժվարությունների և նպատակների մասին: Ես իսկապես ապավինում եմ նրանց փորձառությանը և ընկերությանը: Չգիտեմ, թե որտեղ կլինեի այսօր՝ առանց այդ հրաշալի թիմի: Մենք մշտապես շփվում ենք: Առանց այդ շարունակական շփման՝ անկարելի կլիներ իրականացնել «Մեսինջեր Ինտերնեյշնլ»-ի առաքելությունը, որն է՝ սովորեցնել, հասնել և փրկել:

Սուրբ գրքում ակնհայտորեն երևում է, որ առաքյալները լիովին կախված էին այն շփումից, որ ունեին Սուրբ Հոգու հետ: Գործք առաքելոց գրքում գրված է. «Եվ հիմա ես [Պողոսը] կապված եմ Հոգով՝ Երուսաղեմ գնալու համար: Ես չգիտեմ, թե ինչ կլինի ինձ հետ՝ բացի նրանից, որ Սուրբ Հոգին ասում է ինձ քաղաքից՝ քաղաք, որ առջևում բանտ և տառապանք է սպասվում» (Գործք 20.22,23, NLT): Պողոսը խոսում էր Սուրբ Հոգու հետ այն մասին, թե ինչ էր լինելու իր հետ: Ուշադրություն դարձրեք, որ Սուրբ Հոգին չհայտնեց, որ նրան բանտ և տառապանք էր սպասվում միայն *մի* քաղաքում: Փոխարենը՝ քանի որ Պողոսը մշտապես շփվում էր Սուրբ Հոգու հետ, նա իմանում էր, որ այն *քաղաքներում*, որտեղ լինում էր, իրեն դժվարություններ էին սպասվում:

Չգիտեմ՝ դուք ինչպես, բայց եթե իմ մտերիմ գործընկերը, ում հետ շփում ունեմ, ասեր, որ ինձ տառապանքներ են սպասվում ամեն տեղ, ուր որ գնամ, ես հավանաբար կվիճարկեի նրա խոսքերը: Միգուցե ասեի. «Դու դեռ չե՞ս փոխել միտքդ», կամ՝ «Իսկ եթե զոնե մի փոքր փոխե՞նք խոսքերդ», կամ՝ «Չարժե՞ փոխարինել տառապանքները մի քանի թեթև անհարմարություններով»: Սուրբ Հոգին չէր ուրախանում այն պատճառով, որ Պողոսին տառապանքներ էին սպասվում. փոխարենը՝ Նա պատրաստում էր Պողոսին այն ամենի համար, ինչ առջևում էր, և Նա կարող էր անել դա, քանի որ նրանք մտերիմ շփում ունեին:

Երբեմն Սուրբ Հոգին այնպիսի բաներ է ասել ինձ, որոնք ես չէի ցանկանում լսել: Ես շարունակ հարցնում էի Նրան լսածիս մասին (հուսալով, որ այլ պատասխան կստանայի), բայց օրըստօրե

ստանում էի նույն ուղերձը: Երբ մենք նման կերպով ենք վարվում Սուրբ Հոգու հետ, ի վերջո Նա լռում է: Նա կարծես թե ցանկանում է ասել. «Ես արդեն պարզ ասել եմ քեզ. այժմ դո՛ւ պետք է որոշես՝ արդյո՞ք ընդունելու ես Իմ ցուցումները»: Երբ մտերիմ եք Սուրբ Հոգու հետ, երբեմն Նա կասի ձեզ այնպիսի բաներ, որ դուք պարզապես չեք ցանկանա լսել:

Գործք առաքելոցի 10-րդ գլխում Պետրոսն այսպիսի ցուցում ստացավ Սուրբ Հոգուց: Աստված մի տեսիլք տվեց Պետրոսին՝ ցույց տալով, որ Նա ցանկանում է շնորհել փրկությունը նաև հեթանոսներին: Խոսք 19-ում գրված է. «Եվ դեռ Պետրոսը այն տեսիլքի համար միտք էր անում, Հոգին նրան ասաց. «Ահա երեք մարդ քեզ որոնում է»»: Այդ մարդիկ եկել էին, որ ուղեկցեին Պետրոսին հեթանոս հարյուրապետի տուն, որտեղ Պետրոսը՝ որպես նվիրյալ հրեա, ոչ մի դեպքում չէր գնա: Այդ իսկ պատճառով, Սուրբ Հոգին պարզորեն ասաց նրան. «Լսի՛ր, ներքևում քեզ այցելուներ են սպասում, և ես ցանկանում եմ, որ գնաս նրանց հետ: Անհրաժեշտ է, որ կատարես այս հանձնարարությունը»: Սուրբ Հոգին գիտեր, որ Պետրոսն ուրախությամբ չէր ընդունի այդ ցուցումը. այնուամենայնիվ, Նա հանձնարարեց Պետրոսին՝ անել այն, ինչ Ինքը ցանկանում էր՝ առանց հավելյալ բացատրություններ տալու:

Մի քանի գլուխ առաջ մենք գտնում ենք ևս մեկ օրինակ, որտեղ կարիք կար վստահել Սուրբ Հոգուն: «Եվ Տիրոջ *հրեշտակը* խոսեց Փիլիպոսի հետ. «Վեր կաց և գնա հարավային կողմը՝ այն ճանապարհը, որ Երուսաղեմից իջնում է Գազա...»» (Գործք 8.26): Այստեղ գրված է, որ Տիրոջ հրեշտակը ցուցում տվեց Փիլիպոսին: Այստեղ գրված չէ, որ Փիլիպոսին հրեշտակ *հայտնվեց*. փոխարենը՝ գրված է. «Տիրոջ հրեշտակը *խոսեց* Փիլիպոսի հետ»: Այս հատվածը նույն կերպով է գրված բոլոր թարգմանությունների մեջ: Ինչո՞ւ է սա կարևոր: Այս հատվածից մենք կարող ենք եզրակացնել, որ Փիլիպոսը տարբերում էր հրեշտակային ձայնը Սուրբ Հոգու ձայնից, որովհետև ավելի ուշ նույն գլխում գրված է. «Հոգին էլ Փիլիպոսին ասաց. «Մոտեցիր և հասիր այդ կառքին»» (Գործք 8.29): Փիլիպոսը ճանաչում էր Սուրբ Հոգու ձայնը, նույնիսկ այն աստիճան, որ կարողանում էր տարբերել Հոգու ձայնը հրեշտակային ձայնից:

Ես այնքան հստակորեն եմ ճանաչում կնոջս ձայնը, որ կարող եմ տարբերել այն ամենուր, նույնիսկ եթե չտեսնեմ նրան: Միգուցե

մենք իրարից հեռու լինենք մարդկանցով լի մի սրահում, բայց երբ նա խոսի, ես կճանաչեմ նրա ձայնը տասնյակ այլ ձայներից, որոնք հնչում են այդ սրահում: Ահա թե ինչպես էին առաջին հավատացյալները ճանաչում Յոզու ձայնը: Կարող եմ պատկերացնել, թե ինչպես էր Փիլիպոսը պատմում այս պատմությունը Ղուկասին, ով գրում էր Գործք առաքելոց գիրքը: Միգուցե Փիլիպոսն ասում էր. «Ո՛չ, Ղուկաս, Յոզին չէր, որ խոսեց ինձ հետ քաղաքում: Խոսողը՝ հրեշտակ էր: Բայց Յոզին ինձ ասաց, որ մոտենամ կառքին»: Արդյո՞ք մենք այդ աստիճան ճանաչում ենք Նրա ձայնը: Միգուցե կա ավելի՞ մեծ մտերմություն Յոզու հետ, որը մենք դեռ չունենք:

Երբ Փիլիպոսն անապատում էր, Սուրբ Յոզին պատվիրեց նրան՝ մոտենալ մի կառքի: Ինչո՞ւ էր այդ հանդիպումը կարևոր: Կառքում նստած մարդը եթովպիայի երրորդ իշխանավորն էր: Այդ եթովպացու փրկությունը դարձավ Ավետարանի տարածման սկզբին իր երկրում՝ շնորհիվ այն իշխանության և ազդեցության, որ նա ուներ: Եթե Փիլիպոսը զգայուն չլիներ Յոզու առաջնորդությանը, նա մեծ հնարավորություն բաց կթողներ:

Մի քանի գլուխ անց, մենք գտնում ենք մեկ այլ պատմություն Տիմոթեոսի, Պողոսի և Շիղայի մասին:

«Եվ Փռյուզիան և Գաղատացիների երկիրը ման եկան [Տիմոթեոսը, Պողոսը և Շիղան]՝ Սուրբ Յոզուց արգելվելով, որ Ասիայի մեջ Աստծո խոսքը չխոսեն: Երբ որ եկան Մյուսիայի կողմերը, ջանք էին անում, որ զնան դեպի Բյութանիա, և Յոզին թույլ չտվեց նրանց» (Գործք 16.6,7):

Ուշադրություն դարձրեք. գրված է, որ նրանք «արգելվեցին» Սուրբ Յոզու կողմից և, որ «Յոզին թույլ չտվեց նրանց»:

Արդյո՞ք սկսում եք հասկանալ, թե առաջին հավատացյալները որքան շատ էին շփվում Սուրբ Յոզու հետ: Մի՞թե այսօր ամեն ինչ պետք է այլ ձևով լինի: Մի՞թե մենք Աստծուն ծառայելու ավելի լավ հնարավորություն ունենք, քան Սուրբ Յոզով առաջնորդվելն է: Մի՞թե Առաջին եկեղեցու առաջնորդների մեթոդները չափազանց հասարակ էին այն պատճառով, որ նրանք չէին տիրապետում ժամանակակից տեխնոլոգիաներին: Իհարկե՝ ոչ: Ոչ մի տեխնոլոգիա կամ միջոց չի կարող փոխարինել Սուրբ Յոզու ձայնին: Այդ առաջնորդներն ակնկալում էին, որ Յոզին մտերմորեն ներգրավված

լինել իրենց կյանքերում. նրանք ողջունում էին Նրա ներկայությունը և հարգանքով էին վերաբերվում Նրան: Ոչինչ չի փոխվել. այսօր Յոզիմ փափագում է ունենալ նույն մտերիմ շփումը մեզ հետ:

Ինչպե՞ս կարելի է պատկերացնել, որ Լիզան և ես ժամեր և օրեր անցկացնենք մեր տանը՝ առանց մեկ բառ փոխանակելու: Որքա՞ն ծիծաղելի կլինել: Ո՞վ կցանկանա այդպիսի ամուսնություն ունենալ: Ես սիրում եմ իմ կնոջը և ցանկանում եմ մոտ լինել նրան: Ավելի քան երեսուն տարի է՝ մենք ամուսնացած ենք, բայց եթե նա ամուսնացած չլիներ (փա՛ռք Աստծուն, որ այդպես չէ), ես շարունակ կսիրահետեի նրան: Նա միակ մարդն է ամբողջ աշխարհում, ում հետ ամենից շատ եմ ցանկանում շփվել: Նույն կերպով էլ Սուրբ Յոզիմ փափագում է մտերմորեն շփվել ձեզ հետ:

Քսանչորս տարի է՝ պարբերաբար գիշերում եմ հյուրանոցային համարներում և երբեք չեմ ձանձրացել: Ինչպե՞ս կարող եմ ձանձրանալ, երբ ամեն վայրկյան Աստծո հետ եմ: Նա իմ սենյակում է՝ ինձ հետ: Ահա թե ինչու այն ժամանակը, որը ես անցկացնում եմ հյուրանոցային համարներում, պաշտպանված է: Հաճախ ասում եմ. «Ես չեմ ցանկանում ժամանակ անցկացնել իմ ճանապարհորդական թիմի հետ. ես ցանկանում եմ առանձնանալ, որպեսզի շփվեմ Սուրբ Յոզու հետ»: Ես սիրում եմ լսել Նրան: Սխալ մի՛ հասկացեք. ինձ դուր է գալիս շփվել մարդկանց հետ. իրականում ես շատ շփվող մարդ եմ և բոլորովին մենակյաց կամ ճգնավոր չեմ: Շատ եմ սիրում մարդկանց, բայց իսկապես արժևորում եմ իմ ժամանակը և շփումը Սուրբ Յոզու հետ:

## Օր 2

### **Հաղորդությունը նշանակում է համագործակցություն**

Հաջորդ բառը, որը կարող է օգտագործվել՝ «կոինոնիա»-ն նկարագրելու համար, *համագործակցությունն* է: Մենք տեսնում ենք «համագործակցություն» բառի օրինակը Ղուկասի Ավետարանում. «Եվ երբ որ այս արին, ձկների մի մեծ բազմություն ներս փակեցին,

և նրանց ուռվանը պատռվում էր: Եվ նշան էին անում մյուս նավի մեջ լինող *ընկերների*, որ գան՝ իրենց օգնեն, և նրանք եկան, և երկու նավը լցրին՝ մինչև որ թաղվում էին» (Ղուկ. 5.6,7): «Ընկերներ» բառը հունարենում «մետոքոս»-ն է (*կոինոնիայի* հոմանիշներից մեկը), որը սահմանվում է որպես «գործընկեր, գործակից, աշխատակից»<sup>1</sup>: Այդ մարդիկ գործընկերներ էին: Մենք հասկանում ենք նրանց օրինակից, որ հաջող համագործակցության համար պահանջվում է և՛ հաղորդակցություն, և՛ գործողություն: Նրանք պետք է նշան անեին իրենց գործընկերներին, իսկ վերջիններս պետք է օգնության գային:

Այժմ կարդանք մի խոսք, որը, միգուցե, ամենաշատ երկյուղածությունն ներշնչողն է Նոր կտակարանում: Պողոսը գրում է. «Մենք Աստծո գործակիցներն ենք» (Ա Կորնթ. 3.9): Մի՞թե զարմանալի չէ: Ինձ դուր է գալիս այս խոսքը՝ Վեյմութի թարգմանությամբ. «[Մենք] գործակիցներ ենք Աստծո հետ և Աստծո համար»: Մեզ հնարավորություն է տրվել աշխատելու երկնքի և երկրի Արարչի հետ և Նրա համար: Այս ճշմարտությունը կարելի է ասել մեկ այլ ձևով. մենք աշխատում ենք՝ *համագործակցելով Աստծո հետ*: Ինչպիսի՞ զարմանալի հրավեր:

Արդյունավետ գործընկերները սովորում են սերտորեն համագործակցել: Ես մեծացել եմ Միչիգան լճի մոտ, և շատ ժամանակ եմ տրամադրել նավարկությամբ զբաղվելուն: Ես հաճույքով էի վարում մեր ընտանեկան առագաստանավը: Բացի այդ՝ երկու տարի հաճախել եմ նավավարության դպրոց և նույնիսկ մասնակցել եմ մրցույթների: Առաջին մրցութային նավարկություններից մեկի ժամանակ ինձ խնդրեցին աշխատել մի հայտնի կապիտանի թիմի հետ, ում անձնակազմը լավագույներից մեկն էր: Թիմի անդամները ոգեշնչվել էին՝ իմանալով, որ միանալու էի նրանց: Սակայն մեր առաջին նավարկության ժամանակ ես ավելորդ էի զգում ինձ: Կապիտանը կարգադրություններ էր անում, և անձնակազմն արագորեն գործի էր անցնում: Ամեն մեկը ճշտորեն գիտեր, թե ինչ պետք է աներ. նրանք զբաղեցնում էին իրենց տեղերը նավի վրա, այնինչ ես խիստ շփոթված էի զգում: Թեև ինձ հրահանգներ էին տրվել, ես դեռ չէի ընտելացել իմ դերին: Անձնակազմի մյուս անդամները միացյալ գործունեության ռիթմ ունեին, որը ես դեռ պետք է սովորեի:

Սուրբ Գոգու հետ համագործակցելը նման է այդ անձնակազմի

անդամը լինելուն: Դուք պետք է աշխատեք Նրա հետ: Իմ առաջին քարոզի ընթացքում կինս և նրա ընկերուհին քնեցին առաջին շարքում. պատճառն այն էր, որ ես սերտորեն չէի համագործակցում Սուրբ Յոզու հետ: Որոշ ժամանակ պահանջվեց, մինչև որ սովորեցի համագործակցել Նրա հետ, երբ քարոզում էի: Նույնը կատարվեց, երբ սկսեցի գրքեր գրել: Ես գրեցի իմ առաջին գիրքը մեկ տարվա ընթացքում: Այդ տարին լի էր հիասթափություններով, բայց ես սովորում էի համագործակցել Նրա հետ: Ի վերջո, սկսեցի շատ ավելի հեշտ և արագ գրել: Ես իմացա, որ այս երկու բնագավառներում էլ Նա ունի իր դերը, իսկ ես՝ իմը, և որ այս տեսակի համագործակցությունը՝ Նրա կամքն է:

Գործք առաքելոցի 15-րդ գլխում տեսնում ենք համագործակցության ձևերից մեկը՝ գործողության մեջ: Առաքյալները նամակ էին կազմում, որը պետք է ուղարկվեր բոլոր հեթանոս հավատացյալներին: Նրանք գրեցին. «Որովհետև Սուրբ Յոզուն և մեզ հաճո երևաց...» (Գործք 15:28): Ահա թե ինչպիսին է համագործակցությունը: Այս առաջնորդները հստակորեն արտահայտեցին թե՛ Սուրբ Յոզու, թե՛ իրենց կարծիքը տվյալ հարցի վերաբերյալ: Երկու կողմերը միասնաբար որոշում կայացրին: Երկու կողմերն էլ իրենց դերերն ունեին. նրանք գործընկերներ էին Աստծո թագավորության գործի մեջ:

Համագործակցության նույն գաղափարը կարելի է տեսնել Հին կտակարանում: Հիշե՛ք, երբ Աստված այցելեց Աբրահամին կաղնու ծառերի մոտ, որպեսզի քննարկեր Սոդոմը և Գոմորը ոչնչացնելու մասին Իր ծրագիրը (տե՛ս ԾՆՆդ. 18): Ակնհայտ է, որ Աստված դիտարկում էր Աբրահամին որպես Իր գործընկերը: Աստված և Աբրահամը քայլելով բարձրացան մի ժայռի վրա, և Աստված ասաց. «Ես իսկապես ցանկանում եմ պայթեցնել այս երկու քաղաքները: Ի՞նչ կասես, Աբրահամ» (հեղինակի բառափոխումը): Աբրահամը խիստ մտահոգվեց, որովհետև իր զարմիկն ապրում էր այդ քաղաքներից մեկում: Բավականաչափ քննարկումներից հետո նա, ի վերջո, համոզեց Աստծուն՝ չկործանել այդ քաղաքները, եթե դրանցում հնարավոր լիներ տասը արդար մարդ գտնել:

Ակնհայտ է, որ Աստված արժևորեց Աբրահամի ներդրումը: ԾՆՆդոց 18:17-ում Նա ասում է. «Մի՞թե ես Աբրահամից ծածկող եմ՝ ինչ որ անելու եմ»: Մենք պարզ տեսնում ենք՝ Աստված ցանկանում

էր, որ Աբրահամը տեղյակ լինէր իր ծրագրերի մասին: Պատճառն այն էր, որ Աբրահամը մտերիմ հաղորդություն ունէր կամ մտերմորեն *համագործակցում* էր Աստծո հետ:

Նման դեպք տեղի ունեցավ նաև Մովսեսի կյանքում: Աստված ասաց նրան. «Եվ հիմա թո՛ղ տուր ինձ, որ իմ բարկությունը նրանց վրա բորբոքվի և փչացնեն նրանց [Իսրայելի զավակներին] և քեզ մեծ ազգ շինեն» (Ելից 32.10): Լսելով սա՝ Մովսեսն սկսեց համոզել, որ Աստված թողնի իր բարկությունը և փոխի իր ծրագրերը: Այսօր մենք հեշտորեն կարդում ենք այդ հատվածը և նշանակություն չենք տալիս նրան, ինչ տեղի ունեցավ: Բայց մի պահ մտածեք. Մովսեսը կարող էր հիշեցնել Աստծուն այն մասին, թե ինչն էր լավ իր և իր ժողովրդի համար, նույնիսկ այն բանից հետո, երբ Աստված ասաց. «Թո՛ղ տուր ինձ»: Պատճառն այն էր, որ Մովսեսը սերտորեն համագործակցում էր Աստծո հետ:

Այնուամենայնիվ, կարևոր է, որ հասկանանք հետևյալը. Աստված Ամենակարող է, և Նա մշտապես արժանի է մեր երկյուղածությանը: Միայն Նրա շնորհքով և զորությամբ է, որ մենք կարող ենք լինել Նրա գործակիցները: Նա որոշել է դարձնել մեզ իր տիեզերական ծրագրի մասնիկը, և կայացնելով այդ որոշումը՝ անասելի արտոնություն է շնորհել մեզ:

Մենք դիտարկեցինք երկու տպավորիչ պատմություններ Հին կտակարանից, բայց փաստն այն է, որ Աբրահամը և Մովսեսը չունեին այն, ինչ այսօր ունենք մենք: Այս հավատքի հսկաները նման կերպով կարող էին համագործակցել Աստծո հետ միայն հազվագյուտ դեպքերում: Այնուամենայնիվ, Սուրբ Հոգին ապրում է մեր ներսում օրը քսանչորս ժամ և շաբաթը յոթ օր: Կարիք չկա, որ սպասենք Նրա այցելությանը կաղնու ծառերի մոտ կամ բարձրանանք Սինա սարի վրա՝ Նրա հետ հաղորդակցվելու համար: Նա հասանելի է մեզ ամեն ժամանակ: Եվ ամենակարևորն այն է, որ Նա ցանկանում է համագործակցել մեզ հետ. Նա ցանկանում է առաջնորդել մեր քայլերը և լսել, թե ինչ ենք մտածում:

Հոգին մշտապես մեզանում է, և բացի այդ՝ Նա քնելու կարիք չունի: Վերջերս, գիշերվա ժամը 2.20-ին ես արթուն էի, ոգևորությունից չէի կարողանում քնել, քանի որ հաջորդ օրը՝ առավոտից մինչև երեկո ծառայելու էի: Այնպես որ, վեր կացա անկողնուցս և խոսեցի իմ Գործընկերոջ հետ: Եվ գիտե՞ք ինչ. Նա արթուն էր:



Ձարմանալի՜ է: Նա չասաց. «Ձո՛ն, ինչո՞ւ արթնացրիր ինձ»: Եթե փորձեի խոսել կնոջս հետ, նա կասեր. «Ձո՛ն, ինչո՞ւ ես այսքան շուտ արթնացնում ինձ»: Եթե պատասխանեի. «Սիրելի՛ս, ես պարզապես ցանկանում եմ գրուցել քեզ հետ», նա հավանաբար բարձով կհարվածեր ինձ: Նա գնահատում է իր քնի ժամերը, և ես գիտեմ, որ պետք չէ արթնացնել նրան (նույնը վերաբերում է ինձ՝ հակադարձ հանգամանքների դեպքում): Բայց Սուրբ Հոգին ընդունում է ինձ ցանկացած ժամին: Նա ոգեշնչմամբ ցանկանում է քննարկել ինձ հետ գալիք օրվա մասին, և երբեմն որոշ դրվագներ է ցույց տալիս այն իրադարձություններից, որոնք տեղի են ունենալու այդ օրվա ընթացքում: Ահա թե ինչու եմ սիրում իմ ամեն օրը սկսել Նրա ներկայության մեջ: Նա իմ Գործընկերն է, և մեր հաղորդությունը՝ իմ օրվա կենսականորեն կարևոր մասն է:

Կարևոր է նշել, որ Սուրբ Հոգին՝ ավագ Գործընկերն է այս փոխհարաբերության մեջ: Պողոսն ասաց Եփեսոսի եկեղեցու երեցներին. «Արդ զգո՛ւյշ կացեք ձեր անձերին և ամբողջ հոտին, որի մեջ *Սուրբ Հոգին ձեզ վերակացուներ դրեց*, որ արածեցնեք *Աստծո* եկեղեցին, որ Իր արյունով ստացավ (կամ՝ զմեց)» (Գործք 20.28): Ուշադրություն դարձրեք՝ Պողոսը չասաց. «...այն հոտը, որի մեջ Հիսուսը ձեզ վերակացուներ դրեց»: Այս խոսքը կատարելապես նկարագրում է Հիսուսի համագործակցությունը Սուրբ Հոգու հետ: Հիսուսը զմեց Աստծո եկեղեցին «Իր արյունով»: Սուրբ Հոգին՝ որպես Աստվածության Անձ, Ով ներկայումս բնակվում է երկրի վրա, նշանակում է Եկեղեցու վերակացուներին և տնօրինում է Եկեղեցու գործերը: Նա Ղեկավարն է, կամ, այլկերպ ասած, ավագ Գործընկերը: Պողոսը քաջատեղյակ էր այն փաստի մասին, որ Սուրբ Հոգին բնակվում է մեզ հետ և մեզանում:

Մեկ այլ օրինակ կարելի է գտնել Գործք առաքելոցի 13-րդ գլխում. «Սրանք երբ որ Տիրոջը պաշտոն էին մատուցում և ծոմ էին պահում, Սուրբ Հոգին ասաց. «Ինձ համար որոշեք Բառնաբասին և Սողոսին այն գործի համար, որ ես նրանց կանչել եմ: Եվ նրանք էլ Սուրբ Հոգուց ուղարկված՝ իջան Սելևկիա...» (խոսքեր 2,4): Կրկին, այս օրինակում Սուրբ Հոգին համագործակցում էր (հաղորդության մեջ էր) առաքյալների հետ: Հիշեք՝ Հիսուսը Իր Հոր հետ է՝ Երկնքում: Սուրբ Հոգին ուղարկվեց երկիր, որպեսզի համագործակցի մեզ հետ այս զարմանալի կյանքի ընթացքում:

## Օր 3

## Սերտ ընկերակցություն

Եվս մեկ անգամ կարդանք Բ Կորնթացիների 13.13-ը. «Տեր Հիսուս Քրիստոսի շնորհքը և Աստծո սերը և Սուրբ Հոգու հաղորդությունը ձեր ամենի հետ»: Այժմ, երբ սահմանեցինք Սուրբ Հոգու *հաղորդությունը* որպես *շփում* և *համագործակցություն*, սկսեք ընկալել այս խոսքը՝ համաձայն այս երկու բառերի, որոնք մենք ուսումնասիրեցինք: Արդյո՞ք հասկանում եք Պողոսի արտահայտության մեծությունը: Բայց սա դեռ ամենը չէ: *Կոհնոնիա* բառը նույնպես նշանակում է «սերտ ընկերակցություն»:

Ես «կմատնեմ» իմ տարիքը այս օրինակով. մտածելով *սերտ ընկերակցության* մասին՝ ես հիշում եմ «Բիթլզ» խմբին: Երբ երիտասարդ էի (Բիթլզ խմբի բաժանվելուց շատ առաջ), և ինչ-որ մեկն ասում էր՝ Փոլ Սաքքարտնի, ես անմիջապես մտաբերում էի «Բիթլզ» խմբի այլ մասնակիցների՝ Ջոն Լենոնին, Ջորջ Հարիսոնին և Ռիմոզո Սթարին: Այդ ժամանակ նույնիսկ չէի մտածում նրանց մասին՝ որպես առանձին մարդկանց. նրանք պարզապես «Բիթլզ» *խումբն* էին:

Սերտ ընկերակցության մեկ այլ օրինակ է «Երեք ծաղրատեղի» ֆիլմը: Նրանք «երեք ծաղրատեղի» չէին լինի, եթե Սոին, Լերին և Գանգրահերը միասին չլինեին: Ֆիլմի ցանկացած դրվագ այդ հերոսներից միայն մեկի մասնակցությամբ, անհեթեթ կթվար: «Երեք ծաղրատեղի» ֆիլմը հազեցած էր, քանի որ երեք հերոսները միասին էին: Նրանք կախված էին մեկը մյուսից:

Երբ մտածում եմ Սուրբ Հոգու հետ սերտ ընկերակցություն ունեցող մարդկանց մասին, առաջիններից մեկը, ում հիշում եմ, դր. Դեյվիդ Յոնգի Չոն է: Դր. Չոն աշխարհի ամենամեծ եկեղեցիներից մեկի հովիվն է: Ես երբեք չեմ մոռանա, երբ առաջին անգամ հանդիպեցի նրան 1980-ական թվականներին: Նա առաջին անգամ էր այցելում այն եկեղեցին, որին ես անդամակցում էի: Ես աշխատում էի եկեղեցում, և իմ պարտականությունների մեջ էր մտնում հյուրընկալելը, ես արդեն մի քանի տարի այդ ծառայության մեջ էի, այնպես որ, հավանաբար, արդեն հյուրընկալել էի մի քանի տասնյակ քարոզիչներին: Այնուամենայնիվ, իմ հանդիպումը դր. Չոյի հետ բացառիկ էր: Երբ նա նստեց իմ մեքենան, Տիրոջ ներկայությունը նրա հետ միասին ներս եկավ: Ես անմիջապես սկսեցի լաց լինել:

արցունքները հոսում էին այտերովս: Ես փորձեցի լուռ մնալ, քանի որ չէի ցանկանում անհանգստացնել նրան մինչև ծառայության սկսվելը, բայց՝ չդիմացա, և մեղմ ու զգաստ ձայնով ասացի.

- Դր. Չո՛ւ, Աստված այստեղ է՝ մեր մեքենայի մեջ:

Նա ժպտաց և գլխով արեց.

- Ես գիտեմ:

Այն, ինչ տեղի ունեցավ, օրինաչափ է թվում ինձ, երբ մտաբերում եմ, թե որքան է դր. Չոն գրել և քարոզել Սուրբ Հոգու հետ հաղորդության մասին: Ես լսել եմ, թե ինչպես էր նա ասում, որ աղոթում է օրական երկուսից չորս ժամ, հիմնականում՝ Սուրբ Հոգով: Դր. Չոն առաջնային է համարում Սուրբ Հոգու հետ որակյալ ժամանակ անցկացնելը. այդ իսկ պատճառով, Աստծո ներկայությունը զորավոր կերպով արտահայտվում է նրա կյանքում:

Տարիներ առաջ, մի մեծ եկեղեցում, կիրակնօրյա հավաքույթի ժամանակ ես քարոզում էի Սուրբ Հոգու մասին: Այդ օրը, երբ եկեղեցի վերադարձանք՝ երեկոյան ծառայությունն անցկացնելու համար, երկրպագությունից հետո ես պետք է քարոզեի մոտավորապես քառասունհինգ րոպե: Փոխարենը՝ Սուրբ Հոգին սկսեց գործել. մարդիկ բժշկվում և փրկվում էին: Գրեթե երկու ժամ ես չէի կարողանում վերցնել բարձրախոսը: Ի վերջո, երբ բեմ բարձրացա, եկեղեցու հովիվը (ով բնավ մեղմ կամ թույլ տղամարդ չէր) մոտեցավ ինձ՝ արցունքներն աչքերին, և ասաց.

- Չոն, ութ տարվա ընթացքում, ինչ ես առաջնորդել եմ այս եկեղեցին, երբեք այսքան ուժգին չեմ զգացել Աստծո ներկայությունը:

Ես անմիջապես պատասխանեցի.

- Պատճառն այն է, որ այսօր առավոտյան մենք խոսեցինք Սուրբ Հոգու մասին: Երբ խոսում ես Նրա մասին, Նա հայտնվում է:

Այս օրինակը կատարելապես ցույց է տալիս, թե ինչ կկատարվի, եթե մենք՝ «հասարակ» հավատացյալներս, սերտ ընկերակցություն ունենանք Հոգու հետ:

## **Հաղորդությունը նշանակում է մտերմություն**

*Կոինոնիա* բառի վերջին իմաստը «մտերմությունն» է, որն, իրականում, ամենից շատ է համապատասխանում այս բառի գործածությանը Բ Կորնթացիների 13.13-ում: Մտերմությունը կարող է զարգանալ միայն շփման կամ փոխհարաբերությունների շնոր-

հիվ, բայց այն ավելին է, քան այս երկուսը: Մտերմությունը՝ խորը փոխհարաբերություն է, որն ընդգրկում է սրտի մտքերը, գաղտնիքները և ցանկությունները:

Աստվածաշնչի «Մեսիջ» թարգմանության մեջ (MSG) գրված է. «Սուրբ Յոզու մտերիմ ընկերությունը ձեր բոլորի հետ» (Բ Կորնթ. 13.14): Ինձ համար մտերմությունը՝ ընկերության ամենախորը մակարդակն է: Երբեք մի՛ մոռացեք, որ Սուրբ Յոզին ցանկանում է լինել ձեր ընկերը. Նա փափագում է շփվել ձեզ հետ: Յակոբոս 4.5-ում գրված է. «...Նախանձով փափագում է Յոզին, որ բնակված է մեզանում»: Նա նախանձավոր է և փափագում է ստանալ ձեր ժամանակն ու ուշադրությունը: Պարզապես մտածե՛ք. Սուրբ Յոզին՝ Աստված է, և Նրանից ոչինչ թաքնված չէ: Նրա գիտությունը, իմաստությունը և հանճարը անսահման են, և Նա փափագում է հայտնել Իրեն ձեզ: Երբ ես գիտեմ, որ ինչ-որ բան մեծ արժեք կամ կարևորություն ունի, ի սրտե ցանկանում եմ կիսվել դրանով իմ մտերիմների հետ: Յավանաբար, սա վերաբերում է նաև ձեզ: Սուրբ Յոզին նույնպես բացառություն չէ:

Շատ հաճախ հավատացյալները փորձում են մոտենալ Յիսուսին՝ առանց հաղորդակցվելու Սուրբ Յոզու հետ: Սա նման է փարիսեցիների սխալին: Նրանք ասում էին Յիսուսին. ««Մենք անօրեն զավակներ չենք... Միակ Յայրը, որ ունենք, Ինքը՝ Աստվածն է»»: Յիսուսն ասաց նրանց. «Եթե Աստված ձեր Յայրը լիներ, դուք կսիրեիք Ինձ, որովհետև ես այստեղ եմ եկել Աստծուց: Ես չեկա Ինքս Ինձանով. Աստված ուղարկեց ինձ»» (Յովհ. 8.41,42, NIV): Փարիսեցիները ցանկանում էին շփվել Յոր հետ՝ առանց Յիսուսի: Նրանք չէին ցանկանում ընդունել, որ Աստված այլ ծրագիր ուներ: Յիսուսը բացատրեց փարիսեցիներին, որ Ինքը և Իր Յայրը՝ մեկ են: Ավելի ուշ Նա նույնիսկ ասաց. «Եթե իրականում ճանաչեք Ինձ, դուք նույնպես կճանաչեք Իմ Յորը» (Յովհ. 14.7, NIV): Բայց փարիսեցիները պարզապես չցանկացան լսել Նրան: Քանի որ նրանք հրաժարվում էին մոտենալ Յորը՝ Որդու միջոցով, այդ պատճառով էլ չունեին ճշմարիտ շփում Յոր հետ:

Նույն կերպով, Յիսուսը հստակ ցույց է տալիս, որ Նա այլևս երկրի վրա չէ, և որ Յայրն ուղարկեց Սուրբ Յոզուն (Նրան, Ով ճիշտ մեր Փրկչի նման է)՝ մեր Օգնականը լինելու համար (տե՛ս Յովհ. 16.7): Յոզին ուղարկվեց՝ Յիսուսին հայտնելու համար, ինչպես

որ Որդին ուղարկվել էր՝ Յորը հայտնելու համար: Մենք պետք է հիշենք, որ Սուրբ Յոզիմ սիրում է փառավորել Յիսուսին: Այնպես որ, եթե իսկապես ցանկանում եք ավելի ճանաչել Յիսուսին, դուք պետք է ժամանակ անցկացնեք Սուրբ Յոզու հետ: Յոզիմ պարզորեն կհայտնի ձեզ Յիսուսին: Բայց Սուրբ Յոզիմ կհայտնվի միայն այնտեղ, որտեղ Նա պատիվ է ստանում: Երբ պատվենք Յոզուն, Նա կհայտնի Իրեն մեզ: Այդ դեպքում մենք և՛ կվայելենք Նրա զարմանալի ներկայությունը, և՛ ավելի խորը գիտություն կստանանք Նրա մասին, Ում Նա հայտնում է:

Ավելի քան երեսուն տարի լինելով ծառայության մեջ՝ ես երբեք չեմ տեսել որևէ բացառություն այս ճշմարտությունից. այն մարդիկ, ովքեր մտերմորեն ճանաչում են Յիսուսին, նույնպես շատ մտերիմ են Սուրբ Յոզու հետ: Այս փաստն օրինաչափ է, որովհետև Յոզիմ է հայտնում Յիսուսին:

### **Չասկանալ Յոզու անհատականությունը**

Եթե ցանկանում եմք մտերիմ լինել ինչ-որ մեկի հետ, պետք է ձգտենք ճանաչել նրա անհատականությունը: Այդ ժամանակ մեր շփումն ավելի հարուստ կդառնա, իսկ մտերմությունը՝ ավելի խորը:

Բավականին երկար ժամանակ էր՝ ես նույն կերպով էի վերաբերվում իմ չորս որդիներին: Բնական է, նման վերաբերմունքի արդյունքում խնդիրներ առաջացան: Ինչո՞ւ է դաստիարակության այսպիսի ձևն անարդյունավետ: Որովհետև որդիներիցս յուրաքանչյուրը եզակի անհատականություն ունի: Կինս զգայուն էր այս հարցում, և սովորեցրեց ինձ, թե ինչպես հաշվի առնել նրանց տարբերությունները: Երբ սկսեցի հասկանալ որդիներիս եզակի առանձնահատկությունները, շփումը նրանց հետ մեծապես բարելավվեց:

Քանի որ ես շատ մտերիմ եմ կնոջս հետ, կարող եմ հասկանալ, թե ինչպես է նա արտահայտվում: Մենք այդքան մտերիմ ենք դարձել, որովհետև ավելի քան երեսուն տարի է՝ ամուսնացած ենք, իսկ մտերմությունը՝ միմյանց հետ որակյալ ժամանակ անցկացնելու արդյունք է: Լիզան կարող է մի հայացք ուղղել ինձ, և ես կարող եմ էջեր գրել այն մասին, թե ինչ է ցանկանում ասել: Այլ դեպքերում, առանց նրանից մեկ բառ լսելու, արդեն գիտեմ, թե ինչ է ցանկանում

Լիզան: Եթե ասեիք ինձ. «Ձո՛ն, առավոտյան ես ձեզ հյուրասիրելու եմ խոզի ապխտած միս, ձու և վարսակով շիլա», ես կարող էի վստահաբար պատասխանել. «Գիտեք, Լիզան խոզի ապխտած միս և վարսակով շիլա չի ցանկանա»: Կարիք չէր լինի հարցնել նրան այս մասին. ես արդեն գիտեմ, որ խոզի ապխտած միսը և վարսակով շիլան նրան դուր չեն գալիս: Սա շատ մակերեսային օրինակ է, բայց նույնը ճշմարիտ է ավելի անձնական հարցերի դեպքում: Նման տեսակի մտերմությունը ձեռք չի բերվել մեկ օրում: Այն ձևավորվել է տարիների ընթացքում՝ միմյանց որակյալ ժամանակ տրամադրելով և մտերմորեն շփվելով: Ոչ ոք չգիտի կնոջս ճաշակն ավելի լավ, քան ես, և ոչ ոք չգիտի իմ ճաշակն ավելի լավ, քան կինս: Նմանապես, մենք ավելի ու ավելի ենք ճանաչում Սուրբ Հոգուն, երբ որոշում ենք կայացնում շփվել Նրա հետ և ժամանակ անցկացնել Նրա ներկայության մեջ:

## Օր 4

### Ճանաչել Նրա բնությունը

Հովհաննեսի Ավետարանի 14-16 գլուխներում Հիսուսը, խոսելով Սուրբ Հոգու մասին, տասնինն անգամ օգտագործում է «Նա», «Նրա» և «Իր» դերանունները: Ավելի քան ակնհայտ է, որ Սուրբ Հոգին Անձ է: Նրան Անձ անվանելով՝ ես դարձյալ նկատի չունեմ մարդ-արարած: Հիշե՛ք, որ մարդիկ են ստեղծված Աստծո նմանությամբ: Սա նշանակում է, որ «անձնավորությանը» հատուկ հատկանիշները նախ և առաջ արտացոլում են այն, ինչ գոյություն ունի Աստծո մեջ, բայց Աստված մեր ճշգրիտ նմանությունը չէ: Նա այնպիսի հատկանիշներ ունի, որոնք երբեք չեն տեղավորվի մարդկային «կաղապարի» մեջ:

Վերջերս հայտնագործություն արեցի, որն իսկապես օգնում է ինձ՝ շփվել Սուրբ Հոգու հետ: Ես ուսումնասիրում էի այն դերանունները, որոնք վերաբերում են Սուրբ Հոգուն՝ Նոր կտակարանի հունարեն բնագրում, և նկատեցի, որ այն հունարեն դերանունը, որը հաճախ է օգտագործվում Սուրբ Հոգուն անվանելու համար, չե-

զոք սեռի է (այսինքն՝ այն հստակորեն արական կամ իգական չէ): Իրականում այն կարող է օգտագործվել թե՛ արական, թե՛ իգական իմաստով, և նկարագրել միայն մեկ անձի (ինչպես հայերեն «նա» դերանունը, թարգմ. մեջբ.):

Անգլերենում չկա նման դերանուն: Անգլերենում կան «he», «she» և «it» դերանուններ: «it» դերանունը վերաբերում է առարկայի կամ կենդանու: «he» դերանունը արական է, իսկ «she» դերանունը՝ իգական: Անգլերենում չկա եզակի թվով չեզոք սեռի դերանուն, որը կարող է թե՛ արական, թե՛ իգական իմաստ ունենալ: Հունարենում կա այսպիսի դերանուն, և այն հաճախ է օգտագործվում, երբ խոսքը Սուրբ Հոգու մասին է: Կրկին, այս դերանունը վերաբերում է կենդանի էակի, ոչ թե առարկայի:

Նման առանձնահատկություն կա նաև Հին կտակարանում: Եբրայերեն բնագրերում կան շատ դեպքեր, երբ Սուրբ Հոգուն վերագրվող գործողությունը իգական սեռի է իր գործառույթով (ոչ թե իգական՝ ձևով): Հրեաները հաճախ էին օգտագործում բառերն ըստ գործառույթի (առաջին հերթին նշելով գործողությունը, ոչ թե գործող անձին կամ առարկան): Աստվածաշնչում Սուրբ Հոգին ոչ մի տեղ նկարագրված չէ որպես իգական անձնավորություն, բայց նրա գործողություններից որոշները իգական հատկանիշներ ունեն:

Սա խորը թեմա է, որը չեմ կարող մանրամասնորեն ներկայացնել այս գրքի շրջանակներում, բայց թույլ տվեք շատ պարզ ասել հետևյալը. ես չեմ կարծում, որ Սուրբ Հոգին իգական սեռի է: Թույլ տվեք կրկին և ավելի պարզ գրել. Սուրբ Հոգին իգական սեռի չէ: Կան մարդիկ, ովքեր նման բան են սովորեցնում, բայց իմ կարծիքով՝ այդ ուսմունքն անհիմն է և խիստ զգացմունքային ընկալման արդյունք է: Խնդրում եմ՝ մեկընդմիջտ հեռացրեք այդ հասկացությունը ձեր մտքից. Սուրբ Հոգին աստվածուհի չէ:

Ես ցանկանում եմ ասել հետևյալը. մենք պետք է հիշենք, որ Աստված չի ստեղծվել մեր պատկերով. մենք ենք ստեղծվել Նրա պատկերով: Ես գիտեմ, որ այս ճշմարտությունը տարրական է թվում, բայց և խիստ կարևոր է մեր հետագա ուսումնասիրության համար: Ծննդոց 1.27-ում գրված է. «Աստված ստեղծեց *մարդ արարածներին* Իր պատկերով: Աստծո պատկերով Նա ստեղծեց նրանց՝ արու և էգ» (NLT): Այլ թարգմանությունների մեջ գրված է. «Աստված ստեղծեց մարդուն» կամ՝ «մարդկությանը»: Իմ կարծի-

քով, «մարդ արարածներ»-ը կամ «մարդկություն»-ը՝ այս խոսքի թարգմանության լավագույն տարբերակն է: Այնպես որ, Ծննդոց գրքում տեսնում ենք, որ Աստված ստեղծեց տղամարդկանց և կանանց *իր պատկերով*: Մենք պետք է տանք հետևյալ հարցը. եթե Նա ստեղծել է թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց իր պատկերով, մի՞թե չի նշանակում, որ «կանացի» համարվող հատկանիշները նույնպես առաջացել են Աստծուց: Արդյո՞ք հնարավոր է, որ Սուրբ Հոգու անհատականությունը գերազանցի մեր պատկերացումը արականի կամ իգականի մասին: Պետք է որ այդպես լինի, քանի որ և՛ տղամարդիկ, և՛ կանայք ստեղծվել են Աստծո պատկերով:

Համոզված եմ, որ նկատել եք. խոսելով Սուրբ Հոգու մասին՝ ես մշտապես նկատի ունեմ արական սեռը, և կշարունակեմ այդպես վարվել: Գաղափարն այն մասին, որ Սուրբ Հոգու որոշ հատկանիշներ կարող են իգական համարվել լեզվական տեսանկյունից, բավականին բարդ և շփոթեցնող է: Այնուամենայնիվ, գրեցի այս մասին հատուկ նպատակով: Ես չէի ընդգրկի այս թեման, եթե չհամարեի, որ իմանալով այս մասին՝ դուք կկարողանաք ավելի լավ հասկանալ Սուրբ Հոգուն և ավելի մտերմորեն շփվել Նրա հետ:

## Նա մեղմ և զգայուն է

Մինչև շարունակելը, թույլ տվեք մի փոքր պատմել իմ անցյալից: Հայրս Երկրորդ համաշխարհային պատերազմի վետերան է: Նա իննսուներեղ տարեկան է, և ես անչափ սիրում եմ նրան: Հորս դասերը մեծապես օգնել են ինձ կյանքիս ամբողջ ընթացքում: Այնուամենայնիվ, կար մի բան, որի համար նա չէր պատրաստել ինձ. նա չէր սովորեցրել, թե ինչպես պետք է վերաբերվեի ապագա կնոջս: Մի անգամ Պետրոսն ասաց. «Հասկացողությամբ վերաբերվեք ձեր կնոջը, ում հետ միասին ապրում եք» (Ա Պետր. 3.7, NLT): Երբ ամուսնացա Լիզայի հետ, ես չէի վերաբերվում նրան «հասկացողությամբ»: Լիզան կյանքիս առաջին սերն էր: Նրանից առաջ ես ոչ մի կնոջ հետ մտերիմ փոխհարաբերություն չէի ունեցել, այնպես որ, ես չփվում էի նրա հետ այնպես, ինչպես կշփվեի ընկերներիցս մեկի հետ: Հասկանալի է, որ այդ մոտեցումն անհաջող էր: Ես պետք է սովորեի՝ ինչպես շփվել նրա հետ՝ *որպես կնոջ*:



Օրինակ՝ ես պետք է սովորեի մեղմորեն խոսել Լիզայի հետ: Դժբախտաբար, երբեմն կոպտորեն էի խոսում ընտանիքիս անդամների հետ: Գոհություն Աստծուն, որ Սուրբ Հոգին հանդիմանում է ինձ, և դրանից հետո ես կարողանում եմ ներողություն խնդրել և շտկել մեր փոխհարաբերությունները: Մի անգամ ես շատ կոպիտ խոսեցի որդիներիցս մեկի հետ և ստիպված էի ներողություն խնդրել նրանից: Որդիս արագորեն ներեց ինձ, և մեր շփումը վերականգնվեց: Բայց Լիզան այլ կերպ արձագանքեց իմ վարքին: Նա վշտացած էր մի քանի օր շարունակ: Նա չէր վիրավորվել ինձնից, պարզապես զգայուն էր փոխհարաբերությունների մեջ: Որդիս և ես գրեթե անմիջապես հաշտվեցինք, բայց ես պետք է մի փոքր ջանք գործադրեի, որպեսզի վերականգնեի շփումը կնոջս հետ: Այդ միջադեպից երկու օր անց Լիզան ասաց ինձ.

- Մինչև հիմա մարմնովս դող է անցնում, երբ հիշում եմ, թե ինչպես խոսեցիր մեր որդու հետ:

Ես հասկացա, որ դա Լիզայի կյանքի պարզևներից մեկն է: Ինչպես կանանց մեծ մասը, նա սերտորեն կապված է իր հարազատների հետ և խիստ պաշտպանողական վերաբերմունք ունի նրանց հանդեպ, ովքեր մտերիմ են իրեն:

Արդյո՞ք հնարավոր է, որ Սուրբ Հոգին նույնպես ունի այս սերտ կապվածության հատկանիշը, որը մենք սովորաբար կանացի ենք համարում: Աստվածաշնչում ասվում է. «Մի՛ տրտմեցրեք Աստծո Սուրբ Հոգուն...» (Եփես. 4.30): Ինչպես նշում է Ռիկ Ռենները «Հունարենի գանձերը» գրքում, *տրտմել* բառը բնագրում ունի «խորը տրտմություն և վիշտ» իմաստը: Այն ծագում է մի բառից, որը նշանակում է այնպիսի ցավ, որը կարելի է զգալ միայն երկու մարդկանց միջև, ովքեր խորապես սիրում են միմյանց: Պողոսը, ըստ էության, ասում է հետևյալը. «Մի՛ վշտացրեք և ցավ մի՛ պատճառեք Նրան, Ով խորապես սիրում է ձեզ»: Այժմ կարդանք այս խոսքը իր համատեքստով.

«Մի՛ օգտագործեք անպարկեշտ կամ վիրավորական բառեր: Այն ամենը, ինչ ասում եք, թող բարի և օգտակար լինի, որպեսզի ձեր բառերը խրախուսական լինեն լսողների համար: Եվ *մի՛ տրտմեցրեք* [վշտացրեք] Աստծո Սուրբ Հոգուն ձեր ապրած կյանքով: Հիշեք՝ Նա համարել է ձեզ Իրենը՝ երաշխավորելով, որ դուք փրկված կլինեք փրկության օրը: Ազատվեք ամբողջ դառնությունից, զայրույթից,

բարկությունից, կոպիտ բառերից և չարախոսությունից, ինչպես և ամեն տեսակի չար վարքից: Փոխարենը՝ բարի եղեք մեկդ մյուսի հանդեպ, մեղմորեն վերաբերվեք միմյանց՝ ներելով մեկդ մյուսին ճիշտ այնպես, ինչպես Աստված Քրիստոսի միջոցով ներեց ձեզ» (Եփես. 4.29-32, NLT):

Արդյոք տեսնո՞ւմ եք Սուրբ Հոգու մեղմությունը:

Մեղմությունը ճշմարիտ զորություն է, որը հիացմունքի է արժանի: Պողոսը պատվիրում է մեզ մեղմորեն վերաբերվել միմյանց: Եթե ես ցանկանում եմ առողջ, կենդանի փոխհարաբերություններ ունենալ կնոջս հետ, ավելի լավ է մեղմ վարվեմ և հանդարտորեն խոսեմ որդիներիս հետ: Նմանապես, եթե ցանկանում եմք առողջ և կենդանի շփում ունենալ Սուրբ Հոգու հետ, պետք է զգայուն լինենք այն ամենի հանդեպ, ինչը տրտմեցնում է Նրան: Շատ հետաքրքիր է, որ Պողոսը նույնացնում է Հոգուն տրտմություն պատճառելը հետևյալ վարքագծի հետ՝ *անպարկեշտ կամ վիրավորական խոսքեր, զայրույթ, բարկություն, կոպիտ բառեր և չարախոսություն*: Կինս տրտմում է նմանատիպ վարքի հանդիպելիս: Մի՞թե սա վկայությունն է, որ Հոգուն բնորոշ է սերտ կապվածության հատկանիշը, որը մենք սովորաբար կանացի եմք համարում:

Ուշադրություն դարձրեք, որ Պողոսը չի գրում. «Մի՛ տրտմեցրեք Հիսուսին»: Նմանապես, նա չի գրում. «Մի՛ տրտմեցրեք Հորը»: Նա մասնավորապես նշում է. «Մի՛ տրտմեցրեք Սուրբ Հոգուն»: Սուրբ Հոգին բնակվում է մեր սրտերում: Նա գնում է այնտեղ, որտեղ մենք եմք գնում. սա խոսում է մտերիմ փոխհարաբերության մասին: Այդ իսկ պատճառով, Նա խորապես ազդվում է այն ամենից, ինչ թույլ եմք տալիս մեր կյանքերում:

Նայե՛ք այս հատվածին մեկ այլ տեսանկյունից: Եթե ինչ-որ մեկը կոպիտ խոսի ինձ հետ, դա այնքան էլ չի անհանգստացնի ինձ: Բայց եթե ինչ-որ մեկը կոպիտ խոսի կնոջս հետ, լուրջ խնդիրներ կունենա: Հիսուսը նմանատիպ միտք արտահայտեց, երբ ասաց. «Եվ ով որ Մարդու Որդու [Հիսուսի] դեմ բան ասի, կներվի նրան, բայց ով որ Սուրբ Հոգու դեմ ասի, նրան չի ներվի ո՛չ այս աշխարհում, և ո՛չ գալու աշխարհում» (Մատթ. 12.32): Մի՞թե հետաքրքիր չէ, որ Հայր Աստված (Ով հայտնվել էր Որդու միջոցով, Ով խոսում էր միայն համաձայն Իր Հոր կամքի) Իր պաշտպանությունն է դնում Սուրբ Հոգու վրա: Հայրը չսահմանեց նման տեսակի պաշտպանություն

այն փոխհարաբերությունների մեջ, որ մենք ունենք Հիսուսի կամ Իր հետ, բայց արեց դա Սուրբ Հոգու համար:

Հոր, Որդու և Սուրբ Հոգու միջև փոխհարաբերությունները ոչ այլ ինչ են, եթե ոչ առեղծված, որ միգուցե երբեք չկարողանանք հասկանալ: Հետաքրքիր է նշել այս առանձնահատկությունը Սուրբ Հոգու և մեր փոխհարաբերությունների մեջ: Մենք պետք է արժևորենք և պաշտպանենք շփումը Նրա հետ: Կարևոր է, որ հիշենք. մենք կարող ենք տրտմություն պատճառել Նրան և երբեմն, նույնիսկ, խորը տրտմություն: Ինչո՞ւ է շատ կարևոր իմանալ այս մասին: Պատճառն այն է, որ Նրա ներկայությունը չի դրսևորվի ձեր կյանքում, եթե չհասկանաք՝ ինչպես հաղորդակցվել Նրա հետ:

## Օր 5

### Նա զգայուն է, բայց և՛ ուժեղ

Սուրբ Հոգին կոչվում է Մխիթարիչ, այնպես չէ՞: Ո՞ւմ մոտ են երեխաները սովորաբար վազում, երբ վիրավորված են զգում իրենց. մայրերի մոտ: Հաշվի առնելով սա՝ մի քանի նահանգներ ԱՄՆ-ում օրինագծեր են ստեղծել, որոնցում ընդգծվում է կին սպաների դերը անչափահաս հանցագործների հետ աշխատելիս: Հավայան կղզիներում օրինագիծ կա, որը խրախուսում է վերջերս ձերբակալված անչափահասների առաջին հաղորդակցությունը կին սպայի հետ: Նրանք հասկացել են, որ դեռահասներն ավելի լավ են արձագանքում կին սպաներին: Կանայք բնականորեն մխիթարելու և սփոփելու ներքին կարողություն ունեն: Կրկին խոսելով այս մասին՝ ես նկատի չունեմ, որ Սուրբ Հոգին կին է:

Ինչ-որ առումով, ես նմանեցնում եմ Սուրբ Հոգուն Դավիթ թագավորին: Երբևէ նկատե՞լ եք, թե որքան մեղմ էր Դավիթը, որքան զթասիրտ և զգայուն: Երբ Աբիսողոմը մահացավ, նա լաց եղավ, թեև հենց նա էր կարգադրել բանակին՝ վերջ տալ Աբիսողոմի ապստամբությանը (տե՛ս Բ Թագ. 19): Բազում առիթներով Դավիթը լաց էր լինում և երգեր էր գրում: Նրա փոխհարաբերությունները Հովնաթանի հետ ընկերության լավագույն օրինակներից մեկն է Սուրբ գրքում: Բայց մի՛ մոռացեք, որ Դավիթը պատերազմող էր, նա

պարտության մատնեց հսկա Գողիաթին և սպանեց հազարավոր մարդկանց: Նա Ջորավորների առաջնորդն էր, որը, հավանաբար, ամենաահեղ մարտական խումբն էր Իսրայելի պատմության մեջ (տե՛ս Բ Թագ. 23): Մի անգամ Դավիթը նույնիսկ որոշեց սպանել մի մարդու, ով հրաժարվեց ջուր և սնունդ տալ իր հետևորդներին (տե՛ս Ա Թագ. 25): Դավիթը թուլամորթ չէր. նա պատերազմող էր, բայց միևնույն ժամանակ՝ մեղմ և զգայուն:

Թույլ տվեք հիշեցնել, որ Սուրբ Յոզու անուններից մեկը՝ Ջորության Յոզի է (տե՛ս Եսայի 11.2): Նա ամենազոր է. նա բնավ թույլ կամ անկարող չէ, միևնույն ժամանակ, բարեսիրտ և խորապես զգայուն է: Ինչպիսի՞ զարմանալի Աստված:

Մի՛ տազնապեք, եթե դժվարանում եք հասկանալ Նրա անհատականությունը: Մենք պետք է մշտապես հիշենք, որ Նրա անհատականությունը չի կարող լիովին ընկալվել մեր սահմանափակ մարդկային հասկացողությամբ: Այնուամենայնիվ, նա խոստացել է հայտնել Իրեն մեզ, եթե մենք մոտենանք Նրան: Ինչպիսի՞ հրավեր:

Ինչպես արդեն նշել էի, հնարավոր չէ լիովին նկարագրել Սուրբ Յոզու առեղծվածը և փառքը (տե՛ս Ա Կորնթ. 2.6-16): Իմ նպատակն է՝ պարզապես ներկայացնել Նրան, որպեսզի դուք սկսեք բացահայտել Նրա մեծությունը և վայելեք Նրա ներկայությունը ձեր կյանքում:

## **Ձգո՛ւյշ եղեք, որ չտրտմեցնեք Նրան**

Վերջերս գրեթե հեռուստացույց չէի դիտում: Ես աղոթքի և Խոսքի մեջ էի և զորավոր կերպով հաղորդակցվում էի Աստծո հետ: Այդ ընթացքում մեկ անգամ մտա մեր հյուրասենյակը, որտեղ որդիներս գեղարվեստական ֆիլմ էին դիտում: Այդ ֆիլմը վատը չէր, բայց ես սենյակ մտա սպանության դրվագի ժամանակ: Տեսնելով այն՝ անմիջապես դուրս եկա սենյակից: Քանի որ շատ զգայուն էի դարձել Յոզու հանդեպ մեր հաղորդության ընթացքում, ես կարող էի զգալ, որ այդ պատկերները տրտմություն էին պատճառում Նրան:

Մենք երբեք չպետք է մոռանանք, որ Յոզին մշտական բնակություն է հաստատել մեզանում: Երբ կինոթատրոն եք գնում՝ որևէ ֆիլմ դիտելու, դուք ձեզ հետ տանում եք Նրան՝ տիեզերքի Աստծուն, Ով սուրբ է և անսահմանորեն զորավոր: Նա մշտապես ձեզ հետ է,

որովհետև նա խոստացավ, որ երբեք չի թողնի և չի լքի ձեզ: Բայց դուք կհայտնաբերեք հետևյալը. երբ ստիպեք Սուրբ Յոզուև՝ հայտնվել այնպիսի իրավիճակներում, որոնք տրտմեցնում են Նրան, նա լռելու է:

Ինչպե՞ս վարվել, եթե տրտմություն ենք պատճառել Յոզուև: Մենք պետք է անմիջապես ներողություն խնդրենք, բայց ներողությունը պետք է խորը և անկեղծ լինի: Երբ ես տրտմեցնում եմ կնոջս, արագորեն ասված «արի ամեն ինչ մոռանանք» արտահայտությունը օգուտ չի տալիս: Լիզան գիտի, թե ինչ կա իմ մտքում: Նա զգում է, թե երբ եմ ցանկանում պարզապես մոռանալ տեղի ունեցածի մասին, և երբ եմ անկեղծորեն ցանկանում անդրադառնալ այն խնդրին, որը խզեց մեր փոխհարաբերությունները: Լիզայի նպատակը՝ ինձ դատապարտելը չէ, այլ՝ համոզվելը, որ մեր փոխհարաբերությունների մեջ չկա կեղծավորություն կամ արհեստական վերաբերմունք: Նույն կերպով, Աստծո Յոզին նախանձավոր է մեր հանդեպ. նա չի ցանկանում ունենալ մակերեսային փոխհարաբերություններ, այլ՝ անկեղծ մտերմություն:

Ավելի վաղ այս գլխում ես պատմեցի, թե ինչպես էի կոպտորեն խոսել որդիներիցս մեկի հետ: Յաջորդ մի քանի օրերի ընթացքում Սուրբ Յոզին շարունակ հիշեցնում էր ինձ այդ իրադարձությունը անձնական աղոթքիս ժամանակ: Նա չէր դատապարտում ինձ, այլ անդրադառնում էր իմ՝ Իր հետ ունեցած հաղորդությանը: Ես չէի հասկանում, թե որքան խորն էի տրտմեցրել Նրան: Սկզբում մի քանի անգամ ներողություն խնդրեցի, ինչը, սակայն, դրդված չէր ճշմարիտ աստվածային տրտմությունից: Ես ավելի շատ ցանկանում էի մոռանալ այդ դեպքը և շարժվել առաջ: Այնուամենայնիվ, նրա մեղմ շարունակական մղումը ճշմարիտ, խորը, աստվածային տրտմություն առաջացրեց ինձանում, ինչը, իր հերթին, մաքրեց իմ անձը (միտքը, կամքը և զգացմունքները):

Պողոսը նույն կերպով դիմեց կորնթացիների եկեղեցուն այն բանից հետո, երբ նրանց հարաբերություններն Աստծո հետ խզվել էին անհնազանդության պատճառով: Նա գրեց (և կարդալով նրա խոսքերը՝ մտապահեք, որ դրանք Աստծո Յոզուց են).

«Պարզապես տեսեք, թե ինչ կատարեց ձեզանում այս աստվածային տրտմությունը: Ինչպիսի՞ փութաջանություն, ինչպիսի՞ մտահոգություն՝ ձեր անձերը մաքրելու մասին, ինչպիսի՞ վրդովմունք, նաև

տազնապ, ինչպիսի՜ ձգտում՝ ինձ տեսնելու համար»  
(Բ Կորնթացիների 7.11, NLT):

Փա՛ռք Աստծուն, որ մենք ներված և մաքրված ենք Գառան արյունով: Բայց թեև մենք՝ հավատացյալներս, ճիշտ դիրք ունենք Աստծո առջև, մենք դեռ պետք է նորոգենք մեր հաղորդությունը Սուրբ Յոզու հետ այն դեպքում, եթե տրտմեցրել ենք Նրան: Պողոս առաքյալը հանդիմանեց կորնթացիներին, մինչև որ նրանք ճշմարտապես զղջացին. նույն կերպով, Սուրբ Յոզին շարունակ հանդիմանում է մեզ, որովհետև Նա նախանձավոր է և ցանկանում է, որ մենք անկեղծորեն շփվենք Նրա հետ: Այն աստվածային տրտմությունը, որ վերապրեցի, անկեղծ ջերմեռանդություն առաջացրեց ինձանում՝ իրավիճակը շտկելու համար: Բացի այդ, իմ ներսում ձգտում առաջացավ՝ վերականգնելու իմ հաղորդությունը Աստծո հետ: Փա՛ռք Աստծուն, որ Սուրբ Յոզին արագորեն ներում է մեզ:

Երբեք մի՛ մոռացեք. Սուրբ Յոզին մեղմ, գթասիրտ և մխիթարող է (հատկանիշներ, որոնք հաճախ վերագրվում են կանանց), բայց նույնպես ուժեղ և զորավոր է, և նման է պատերազմողի (հատկանիշներ, որոնք հաճախ վերագրվում են տղամարդկանց): Մենք պետք է ավելի ու ավելի ճանաչենք Նրա անհատականությունը, եթե ցանկանում ենք մտերմորեն շփվել Նրա հետ: Մենք պետք է հաղորդակցվենք Նրա հետ՝ Նրա պայմաններով: Երբ սկսում ենք ավելի լավ հասկանալ, թե ով է Սուրբ Յոզին, կարող ենք ավելի խորը հաղորդություն ունենալ Ամենակարողի հետ:

Երբեմն փորձում եմ խոսել կնոջս հետ գոլֆի մասին: Ես կարող եմ, օրինակ, ասել.

- Սիրելի՛ս, գիտե՞ս, այսօր 68 միավոր եմ հավաքել:

Որդիներս կոգեշնչվեն և կասեն.

- Հայրի՛կ, պատմի՛ր մեզ ամեն մի հարվածի մասին:

Իսկ կնոջս ավելի շատ հետաքրքրում է, թե ինչի մասին եմ խոսել խաղակիցներիս հետ գոլֆի դաշտում: Նրան, իրականում, փոխհարաբերություններն են ոգեշնչում: Եթե ես ցանկանում եմ հաղորդակցվել Լիզայի հետ նրա մակարդակի վրա, պետք է խոսեմ այն թեմաների մասին, որոնք հետաքրքրում են նրան: Նույն ձևով, մենք պետք է հայտնաբերենք, թե ինչ է հետաքրքրում և հաճեցնում Աստծո Յոզուն: Երբ ուսումնասիրենք Նրա մեծությունը՝ կարդալով Խոսքը և արդյունավետ ժամանակ անցկացնելով Նրա ներկայության մեջ, Նա հավատարմորեն Իրեն կհայտնի մեզ:

## Սերտողություն. Օր 1

# ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԵՔ ԼՍԵԼ ԱՍՏԾՈՒ ՁԱՅՆԸ

«Ով որ Աստծուն է պարկանում, լսում է այն, ինչ Աստված ասում է...»:

— (Հովհաննես 8.47, NIV)

Այո, դուք կարող եք լսել Աստծո ձայնը: Նա դեռ խոսում է Իր ժողովրդի հետ այսօր, և Նա խոսում է մեզ հետ Իր թանկ Սուրբ Հոգու միջոցով: Հեղինակներ **Հենրի Բլեքբերի** և **Քլոդ Քինգի** ձգտումն է, որ քրիստոնյաներն ավելի խորը, ավելի անձնական փոխհարաբերություններ ունենան Աստծո հետ: Նրանք գրում են.

«Աստված պարզխոսում էր Իր ժողովրդի հետ Գործք առաքելոց գրքում: Նա պարզորեն խոսում է մեզ հետ այսօր: Գործք առաքելոցի ժամանակներից մինչև օրս, Աստված խոսել է Իր ժողովրդի հետ *Սուրբ Հոգով*: ...Քանի որ Նա մշտապես ներկա է հավատացյալի ներսում, այդ իսկ պատճառով Նա կարող է պարզ խոսել ձեզ հետ ցանկացած պահին և ցանկացած ձևով, որ Նա ընտրում է»<sup>1</sup>:

Հիսուսը հայտարարեց, որ Նա Բարի Հովիվն է, իսկ մենք՝ Նրա գառները, ովքեր կարող են լսել Նրա ձայնը և ճանաչել այն: Մտորե՛ք Նրա խոսքերի շուրջ Հովհաննես 10.3-5,11,14,27-ում: Ի՞նչ է հայտնում ձեզ Սուրբ Հոգին:

---

---

---

---

Սուրբ Հոգու անուններից մեկը՝ *ճշմարտության Հոգի* է: Ինչո՞ւ է Նրան այսպիսի անուն տրված: Բլեքբերին շարունակում է.

«...Մենք չենք կարող հասկանալ Աստծո ճշմարտությունը, եթե Աստծո Սուրբ Հոգին չհայտնի այն: Նա մեր Ուսուցիչն է: Երբ Նա սովորեցնում է ձեզ Աստծո խոսքը, նստեք Նրա առջև և արձագանքեք Նրան: Երբ աղոթում եք, ուշադրություն դարձրեք, թե ինչպես է Նա գործածում Աստծո խոսքը, որպեսզի հաստատի ձեր սրտում այն խոսքը, որ ստացել եք Աստծուց: Հետևեք, թե ինչ է

Նա անուն ձեզ շրջապատող հանգամանքներում: Այն Աստված, Ով խոսում է ձեզ հետ աղոթքի ժամանակ, և այն Աստված, Ով խոսում է ձեզ հետ Սուրբ գրքից՝ նույն Աստվածն է, Ով գործում է ձեր շուրջը: Ամբողջ Աստվածաշնչում Աստված խոսում է Սուրբ Հոգու միջոցով: Նա խոսում է աղոթքի, իրավիճակների և եկեղեցու միջոցով, որպեսզի հայտնի իր նպատակները և իր ճանապարհները»<sup>2</sup>:

Այսպիսով, ի՞նչ կարող է հայտնել ձեզ Սուրբ Հոգին: Ուշադրությամբ կարդացե՛ք Հիսուսի խոսքերը Հովհաննես 14.26, 15.26 և 16.12-15-ում և առանձնացրե՛ք հինգ բան, որ Հոգին սովորեցնում է:

---



---



---



---

Ո՞րն է Աստծո ձայնը ճանաչելու բանալին: Բլեքբերին և Քինգը շարունակում են.

«Աստծո ձայնը ճանաչելու բանալին՝ բանաձև չէ: Դա մեթոդ չէ, որին կարող եք հետևել: Աստծո ձայնը ճանաչելը բխում է Աստծո հետ մտերիմ սիրային փոխհարաբերությունից: ...Ձեր շփման մեջ, երբ Աստված խոսում է ձեզ հետ, իսկ դուք պատասխանում եք, կգա մի պահ, երբ դուք ավելի ու ավելի պարզ կճանաչեք Նրա ձայնը»<sup>3</sup>:

Աստծո ձայնը ճանաչելու և լսելու բանալին՝ *շփումն* է: Ենովքը, Նոյը, Աբրահամը և շատ ուրիշներ անձամբ վերապրել են սա, և դուք կարող եք անել նույնը: Ի՞նչ սկզբունք կա Ամովս 3.7, Դանիել 2.22 և Սաղմոս 25.14 խոսքերում, որն արտացոլվում է Հովհաննես 15.5, Ա Կորնթացիների 2.9,10 և Եփեսացիների 1.9 խոսքերում: Արդյո՞ք սա խրախուսում է ձեզ՝ որպես «վերջին օրերի» հավատացյալ:

---



---



---



---

Օրինակների համար **կարդացե՛ք** Ենովքի (Ծննդ. 5.21-24), Նոյի (Ծննդ. 6.9,18), Աբրահամի (Ծննդ. 18.16-22) և Պետրոսի (Գործք 10.9-23) կյանքերի մասին:



## ՆՐԱ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՐ ԿԵՆՍԱԿԱՆ ԿԱՐԻՔՆ Է

«Դու ասացիր. «Փնորրե՛ք Իմ երեսը [որոնե՛ք Իմ ներկայությունը և ունեցե՛ք դրա պահանջը՝ որպես չեղյալ կենսական կարիք]»: Իմ սիրտն ասում է Քեզ.  
«Քո երեսը (Քո ներկայությունը), Տե՛ր, ես կփնորեն...»»:

— (Սաղմոս 27.8, AMP)

Դավիթը նման չէր այն սովորական մարդկանց, ում ճանաչում էր: Կար *մեկ բան*, որ վառվում էր նրա սրտում. մեկ ձգտում, որը կլանում էր նրա գիտակցությունը: Նա փափագում էր Աստծո ներկայությանը: «Այն *մեկ բանը*, որ խնդրում եմ Տիրոջից, - ասաց նա, - այն բանը, որ ամենից շատ եմ փնտրում՝ Տիրոջ տանը ապրելն է իմ կյանքի բոլոր օրերում՝ զնայվելով Տիրոջ կատարելություններով և մտորելով Նրա Տաճարում» (Սաղմ. 27.4, NLT):

Ոչինչ, բացարձակապես ոչինչ այնքան արժեքավոր չէ, որքան Աստծո ներկայությունը, որը բնակվում է մարդու հետ, և Աստծո համագործակցությունը մարդու կյանքում: Քանի որ Հայրը և Որդին երկնքում են, Սուրբ Հոգին է, Ով հայտնում է Աստծո ներկայությունը երկրի վրա յուրաքանչյուր հավատացյալի ներսում և նրա միջոցով: Նիկոլաս Հերմանը, ով ավելի հայտնի է **Եղբայր Լոուրենս** անունով, սովորեց «գործադրել Աստծո ներկայությունը»: Նրա առաքելությունն էր՝ օգնել այլ մարդկանց՝ վերապրել նույն բանը: Տասնյոթերորդ դարում ապրող այս վանական ծառայողն ասում էր.

«Ամենասուրբ և անհրաժեշտ սովորությունը մեր հոգևոր կյանքում՝ Աստծո ներկայությունը գործադրելն է: Սա նշանակում է՝ շարունակական վայելք զգալ Նրա աստվածային ընկերակցության մեջ, խոնարհաբար և սիրով խոսել Նրա հետ ամեն ժամանակ և յուրաքանչյուր պահին՝ առանց որևէ ձևով սահմանափակելու այդ խոսակցությունը»<sup>4</sup>:

Կանգ առե՛ք և մտածե՛ք. *որքանով է Աստծո ներկայությունը կարևոր իմ կյանքում: Ինչպիսի՞ն կլինի կյանքն առանց Նրա: Պատ-*

կերացրե՛ք, որ առավոտյան արթնանում եք առանց Սուրբ Հոգու ներկայության: Վերանայե՛ք Նրա անունների ցուցակը (տե՛ս էջ 25-26), և նորոգված պատկերով գրե՛ք, թե որքան կարևոր է Նրա ներկայությունը ձեզ համար:

---

---

---

---

---

---

**Որտե՞ղ և ե՞րբ պետք է վերապրենք Սուրբ Հոգու ներկայությունը:** Լուրերնսը շարունակում է.

«Անհրաժեշտ չէ, որ մնանք եկեղեցում՝ Աստծո ներկայության մեջ մնալու համար: Մեր սրտերը կարող ենք դարձնել անձնական աղոթքատներ և մտնել այնտեղ ամեն ժամանակ՝ Աստծո հետ առանձին գրուցելու համար: Այս գրույցները կարող են լինելսիրով լի և հեզաբարո, և յուրաքանչյուրը կարող է շփվել Աստծո հետ այս ձևով: Արդյո՞ք կա որևէ պատճառ՝ այդ շփումը չսկսելու համար»<sup>5</sup>:

Անկասկած, ձեզ անհրաժեշտ է որակյալ ժամանակ անցկացնել Սուրբ Հոգու ներկայության մեջ, երբ լիովին կկենտրոնացնեք ձեր ուշադրությունը Նրա վրա: Այս ժամանակն ընդգրկում է հետևյալը. կարդալ Նրա Խոսքը, խոսել Նրա հետ և լսել Նրան, գոհանալ Նրանից և գովերգել Նրան և պարզապես լուռ նստել: Կանգ առեք և աղոթե՛ք. «Սուրբ Հոգի, ինչպիսի՞ն պետք է լինի իմ անցկացրած առանձին ժամանակը Քեզ հետ կյանքիս այս շրջանում»: Գրե՛ք, թե ինչ է Նա հայտնում:

---

---

---

---

---

Ինչպե՞ս կարող եք գործադրել Աստծո ներկայությունը: Եղբայր Լուրերնսը գրում է. «Պարզապես եկեք Աստծո առջև... և սևեռեք ձեր ուշադրությունը Նրա ներկայության վրա: Եթե ձեր միտքը երբեմն թափառում է, մի՛ անհանգստացեք, որովհետև

անհանգստությունը միայն ավելի կշեղի ձեզ: Թույլ տվեք, որ ձեր կամքը մեղմորեն վերադարձնի ձեր ուշադրությունը Աստծուն... *գարգացրեք Նրա հետ հաճախ խոսելու սուրբ սովորությունը*»<sup>6</sup>: Կանգ առեք և աղոթեք. «Սուրբ Հոգի, ի՞նչ կարող եմ անել, որպեսզի ուշադրությունս ավելի սևեռեմ Քեզ վրա»: Լսե՛ք, թե ինչ է Նա պատասխանում, և գործադրե՛ք դա ձեր կյանքում:

**Հետագա ուսումնասիրության համար...**

Կարդացե՛ք Ա Մնացորդաց 16.9-11, Սաղմոս 22.26, 105.3,4, Առակաց 8.17,18, Եսայի 55.1-3, 6 Երեմիա 29.11-13, Մատթեոս 6.33, Եբրայեցիների 12.1,2

## ՆԱ ՅԱՆԿԱՆՈՒՄ Է ՄՈՏ ԼԻՆԵԼ ՁԵԶ

*«Ահա՛: Ես կանգնած եմ դռան առջև և մշտապես թակում եմ: Եթե որևէ մեկը լսի, թե ինչպես եմ կանչում նրան, և բացի դուռը, Ես ներս կմտնեմ և կշփվեմ նրա հետ, և նա՛ Ինչ հետ»:*

— (Հայտնություն 3.20, TLB)

Աստված Սուրբ Հոգու Անձի միջոցով ցանկանում է ավելի մոտ լինել ձեզ, քան ցանկացած մարդ, ով ապրում է այս երկրի վրա: Նա ցանկանում է *մտերմություն*՝ փոխհարաբերությունների ամենախորը մակարդակը, որ կարելի է վերապրել:

Ինչ-որ մեկն ասել է, որ Աստծո հետ մտերիմ լինելը նման է նրան, որ «Աստված տեսնում է իմ ներսը», և դա ճիշտ է: Սուրբ Հոգին կարող է մուտք գործել այնտեղ, որտեղ ոչ մի մարդ չի կարող՝ մեր շնչի և հոգու ներսը: Նա սահմանափակված չէ ժամանակով և տարածությամբ: Հոգին ոչ միայն քննում է և գիտի մեր սրտերը, այլ նույնպես քննում է և գիտի Աստծո սիրտը: Նա հայտնում է մեզ Աստծո խորը մտքերը, գաղտնիքները և ցանկությունները, որպեսզի կարողանանք «տեսնել Նրա ներսը»:

*«Տիրոջ [քաղցր, բավականություն պատճառող ընկերության] գաղտնիքը ունեն նրանք, ովքեր վսիսենում են Նրանից (երկյուղածություն են տածում Նրա հանդեպ և երկրպագում են Նրան), և Նա ցույց կտա նրանց Իր ուխտը և կհայտնի նրանց դրա [խորը, ներքին] նշանակությունը»:*

— (Սաղմոս 25.14, AMP)

Կրկին, Սուրբ Հոգին՝ «ճշմարտության Հոգին» է, Ով առաջ-նորդում է մեզ ամեն ճշմարտության մեջ: Կա՞ արդյոք որևէ հարց Աստծո կամ Հիսուսի մասին, որի պատասխանը ցանկանում եք ստանալ, կամ որևէ սուրբգրային հատված, որ ցանկանում եք հասկանալ: Աղոթե՛ք և խնդրե՛ք Սուրբ Հոգուն, որ ցույց տա դրա ճշմարիտ, խորը իմաստը և հայտնի, թե ինչպես է դա վերաբերում ձեզ: Գրե՛ք այն, ինչ Նա հայտնում է:

*«Եվ Հիսուսը բացատրեց նրանց այն, ինչ ասված էր Իր մասին բոլոր Սուրբ գրքերում՝ սկսելով Մովսեսի գրքերից և բոլոր մարգարեների գրվածքներից»:*

— (Ղուկաս 24.27, GNT)

Հոգին հայտնում է ճշմարտությունը ոչ միայն Սուրբ գրքի մասին, այլ նույնպես մեր մասին և այն ամենի, ինչ կա մեր կյանքում:

Կա՞ արդյոք որևէ բնագավառ ձեր *կյանքում*, որը դուք պարզապես չեք հասկանում: Միգուցե հանկարծակի բարկանում եք կամ լքվում եք վախով որոշակի իրավիճակներում՝ առանց ակնհայտ պատճառների: Սուրբ Հոգին գիտի, թե ինչու եք այդպես վարվում: Կանգ առեք և աղոթեք. «Սուրբ Հոգի, ո՞րն է այսպիսի վարքի իրական, հիմքային պատճառը: Տո՛ւր ինձ Քո աչքերը՝ տեսնելու համար: Ի՞նչ պետք է փոխեմ իմ կյանքում, որպեսզի հաղթահարեմ սա»: Գրե՛ք այն, ինչ Նա հայտնում է:

---

---

---

---

Արդյո՞ք կա որևէ *հանգամանք* ձեր անցյալում կամ ներկայում, որը դուք չեք հասկանում: Հոգին հասկանում է այն: Կանգ առեք և աղոթեք. «Սուրբ Հոգի, ցո՛ւյց տուր ինձ ճշմարտությունն իմ իրավիճակի մասին: Ինչպե՞ս ես Դու տեսնում այն: Ի՞նչ ես փորձում փոխել իմ մեջ, և ինչպե՞ս կարող եմ համագործակցել Քեզ հետ»: Գրե՛ք այն, ինչ Նա հայտնում է:

---

---

---

**Հետագա ուսումնասիրության համար...**

*Հիսուսը մտերիմ էր Հոր հետ.* Մատթեոս 14.22,23, 17.1-5, Մարկոս 1.35, 6.31,46,47, Ղուկաս 5.16, 6.12

*Աստժո Հոգին մոտենում է մեզ, երբ մենք մոտենում ենք Նրան.* Սաղմոս 16.8, 34.18, 73.28, 145.18, Եբրայեցիների 10.22, Հակոբոս 4.8

# ԶԳՈՒՅՆ ԵՂԵՔ, ՈՐ ՉՏՐՏԱՆԵՑՆԵՔ ՆՐԱՆ

«Եվ մի՛ արդյունքերեք Աստուծո Սուրբ Հոգուն ձեր կյանքի ոճով:  
Հիշե՛ք՝ Նա համարել է ձեզ Իրենը...»:

— (Եփեսացիների 4.30, NLT)

Սուրբ Հոգու հետ շփումն անգնահատելի է: Նրա հայտնված ներկայությունը կյանք է պարզևուն մեր կյանքի յուրաքանչյուր բնագավառում: **Քեթրին Կուլմանի** համար, շփումը Սուրբ Հոգու հետ՝ կյանքի ոճ էր: Միլիոնավոր մարդիկ լսեցին, թե ինչպես էր նա խոսում Աստծո սիրո և Նրա Հոգու զորության մասին. շատերը վերապրեցին Նրա հրաշագործ բժշկությունը: Իր գրքում, որը կոչվում է «Մեծագույն զորությունն աշխարհում», Կուլմանը բացատրում է, թե ինչն է տրտմեցնում Հոգուն.

«...Թեև Սուրբ Հոգին Երրորդության կարող զորությունն է, Նա *զգայուն* է, և Նրան հեշտությամբ կարելի է տրտմեցնել: Անկասկած՝ այս հրաշալի անձնավորությունը կարող է տրտմել դառնության, բարկության, զայրույթի և չարախոսության պատճառով: Այլ խոսքով՝ մարդու կյանքում Նա կարող է տրտմել ցանկացած բանից, որը հակառակ է հեզությանը, երկայնամտությանը, սիրով իրար համբերելուն և Հոգու միաբանությունը խաղաղության կապով պահելու ջանքերին»<sup>7</sup>:

Անչափ կարևոր է հասկանալ, թե ինչն է տրտմեցնում (տխրեցնում) Հոգուն, և դրդում Նրան, որպեսզի չհայտնի իր ներկայությունը մեր կյանքում: Ուշադրությամբ կարդացե՛ք Եփեսացիների 4-րդ գլուխը, որը բացատրում է, թե ինչ է նշանակում՝ տրտմեցնել Սուրբ Հոգուն (հատկապես ուշադրություն դարձրե՛ք 1-6 և 17-32 խոսքերին):

Ինչպիսի՞ *վերաբերմունքներ, մտածելակերպեր և արարքներ* են նշված 17-24 խոսքերում, որոնք տրտմեցնում են Սուրբ Հոգուն:

---

---

---

---

---

---

---

---

Եփեսացիների 4.17-24-ում նկարագրված է այն կենսաճը և մտածելակերպը, որը տրտմեցնում է Հոգուն և բաժանում է մեզ Նրա հայտնված ներկայությունից:

Ամփոփե՛ք 25-31 խոսքերում նշված ընդհանուր վարքագծերը, որոնք տրտմեցնում են Հոգուն: Ժամանակ հատկացրե՛ք և նույնպես գրի առե՛ք այն առանձին գործերը, որոնք նշված են այս հատվածում:

---

---

---

Եփեսացիների 4.25-31-ը ցույց է տալիս, թե ինչ տեսակի արարքները մարդկանց հանդեպ կարող են տրտմություն պատճառել Հոգուն և բաժանել մեզ Նրանից:

Այո, մենք կարող ենք տխրեցնել Հոգուն, բայց բարի լուրն այն է, որ մենք նույնպես կարող ենք ուրախացնել Նրան: Ուշադրությամբ կարդացե՛ք 1-7,14,15,25,29 և 32 խոսքերը և անվանե՛ք այն վարքագծերը, որոնք ուրախություն են պատճառում Հոգուն:

---

---

---

Ձեր պատասխանը պատրաստելիս ուշադրություն դարձրե՛ք Հոգուն տրտմեցնող արարքների հականիշների վրա:

Սուրբ Հոգուն չտրտմեցնելու բանալին՝ *սրբության և միաբանության* հոգուն ձգտելն է և այն պահպանելը: Այն դեպքում, երբ հպարտությունը և պղծությունը դադարեցնում են Հոգու աշխատանքը, *խոնարհությունը* բուռն ընթացք է տալիս դրան: *Լռությամբ եկեք Աստծո առջև*: Հարցրե՛ք Նրան. «Արդյո՞ք ես այնպիսի բան եմ անում, որը տրտմեցնում է Քեզ»: Ապաշխարե՛ք այն ամենի համար, ինչ Նա հայտնում է, և խնդրե՛ք Նրա շնորհքը, որպեսզի վարվե՛ք խոնարհությամբ և սրբությամբ, քանի որ նման վարքն ուրախացնում է Նրան և հրավիրում է գործելու ձեր կյանքում:

---

---

---

## ԴՈՒՔ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՏՈՒՆՆ ԵՔ

*«Իհարկե դուք գիտեք, որ դուք՝ Աստծո փաճարն եք,  
և որ Աստծո Հոգին ապրում է ձեզանում»:*

— (Ա Կորնթացիների 3.16, GNT)

Ամենակարող Աստված՝ ամենագետ, ամենազոր Արարիչը, Ով ստեղծել է ամեն ինչ՝ փոքրագույն մոլեկուլներից մինչև հսկայածավալ գալակտիկաները, որոշել է բնակվել ձեր սրտում: Այո, եթե դուք հավատացյալ եք, նույն Հոգին, Ով հարություն տվեց Հիսուս Քրիստոսին մեռելներից, ապրում է ձեզանում:

Հովիվ, հեղինակ և հունարենի մասնագետ **Ռիկ Ռենները** բացատրում է, թե ինչ է նշանակում՝ լինել Աստծո Հոգու տունը.

«Գալով ձեր սրտի մեջ՝ Սուրբ Հոգին մի տուն պատրաստեց: Այդ տունն այնքան հարմարավետ էր, որ Նա ուրախ էր, որ բնակվելու էր ձեր ներսում: Նա տեղափոխվեց, հաստատվեց և մշտապես բնակվեց ձեր սրտում՝ Իր *նոր տանը*:

Երբ դուք փրկվեցիք, մեծագույն հրաշքը տեղի ունեցավ ձեր սրտում: Սուրբ Հոգին վերցրեց ձեր հոգին, որը մահացած էր անօրենության և մեղքի մեջ, և հարություն տվեց այն նոր կյանքի համար: Նրա գործը ձեր ներսում այնքան փառավոր էր, որ երբ այն ավարտված էր, Նա ասաց, որ դուք Իր գլուխգործոցն եք (տե՛ս Եփես. 2.10): Այդ պահին ձեր հոգին դարձավ *Աստծո հիասքանչ տաճարը*<sup>8</sup>:

Դուք տանում եք Աստծո Հոգուն ձեզ հետ ամենուր, դուք ընդգրկում եք Նրան այն խոսակցության մեջ, որին ներկա եք, և ներգրավում եք Նրան այն գործի մեջ, որին մասնակցում եք: Կանգ առեք և մտածե՛ք այս մասին:

Արդյո՞ք այս ճշմարտությունը *խրախուսում, ոգեշնչում և զորացնում է ձեզ*: Ինչպե՞ս է այն ազդում ձեր աղոթքների վրա:

---

Կարդացե՛ք Աստծո խոստումները Եփեսացիների 3.14-20, Դուկաս 12.11,12, Հովհաննես 14.12-17, Կողոսացիների 1.27, Բ Տիմոթեոս 1.13,14 և Հռոմեացիների 8.1-17 խոսքերում:



Արդյո՞ք այս ճշմարտությունը մարտահրավեր է նետում կամ հանդիմանում է ձեզ: Արդյո՞ք ձեր պատասխաններն աղոթքի են մղում ձեզ:

---

---

---

---

Մտածեք այն մասին, թե ինչ եք դիտում և լսում, այն մարդկանց մասին, ում հետ շփվում եք, և այն զբաղմունքների մասին, որոնց մասնակցում եք:

Ինչպե՞ս կնկարագրեիք ձեր ներկա հաղորդակցության մակարդակը Սուրբ Հոգու հետ: Արդյո՞ք վայելում եք Նրա շփումը, համագործակցությունը և մտերմությունը: Արդյո՞ք լսում եք Նրա ձայնը և վերապրում եք Նրա իրական, հայտնված ներկայությունը ձեր կյանքում: Իսկ միզուցե ձեր ներսում «ընդհանուր մաքրման» կարի՞ք կա, որպեսզի Նա կարողանա ավելի հարմարավետ զգալ Իրեն ձեզանում՝ զգալ ինչպես տանը: Աղոթե՛ք և խնդրե՛ք Նրան՝ ցույց տալ ձեր սրտի վիճակը: Ի՞նչ է Նա ասում: Ի՞նչ քայլեր է խնդրում, որ ձեռնարկեք:

---

---

---

---

*«Այսպիսով, թանկագին եղբայրներ և քույրեր, աղաչում եմ ձեզ՝ ձեր մարմինները փվեք Աստծուն այն ամենի շնորհիվ, ինչ Նա արել է ձեզ համար: Թող որ դրանք կենդանի և սուրբ զոհ լինեն՝ այնպիսին, որը Նա ընդունելի կհամարի: Մա՛ Սուրբ Հոգուն ճշմարտապես երկրպագելու շնն է: Մի՛ պատճենեք այս աշխարհի վարքագիծը և սովորությունը, այլ թույլ փվեք Աստծուն՝ վերափոխել ձեզ նոր մարդու՝ փոխելով ձեր մտածելակերպը...»:*

— (Հռոմեացիների 12.1,2, NLT)

# ՀԱՐՑԵՐ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

Եթե դուք ուսումնասիրում եք «Սուրբ Յոզի. Ներածություն» գիրքը՝ որպես «Մեսիաններ Հավաքածու»-ի ամբողջական դասընթացի մաս, խնդրում ենք՝ դիտելք ուսումնական տեսանյութ 2-ը:

Մենք **հաղորդություն** ունենք Սուրբ Յոզու հետ:

*Հաղորդություն* բառը հունարենում *կոինոնիա* բառն է, որը նշանակում է. «*շփում, ընկերակցություն, հաղորդակցություն, մտերմություն, բաժնեկցում, փոխհարաբերություններ, համագործակցություն, գործակցում և սերտ ընկերակցություն*»: Հաղորդության այս տեսակները կարելի է բաժանել երեք հիմնական խմբերի՝ շփում, համագործակցություն և մտերմություն:

- 1 | Սուրբ Յոզին ցանկանում է անխափան հաղորդություն (կոինոնիա) ունենալ Աստծո որդիների և դուստրերի հետ: Այս հաղորդությունն ընդգրկում է *շփումը*, ընկերական փոխհարաբերությունները, բաժնեկցումը կամ կյանքը միմյանց հետ կիսելը: Ինչո՞ւ է կարևոր պատրաստակամորեն ընդունել Սուրբ Յոզու ընկերությունը և քաջատեղյակ լինել այս մասին: Ի՞նչ կարող է տեղի ունենալ, եթե մենք չանենք սա:
- 2 | Շփման հետ մեկտեղ, Սուրբ Յոզին ցանկանում է *համագործակցել* մեզ հետ: Ինչպիսի՞ գործնական քայլեր են ձեռնարկում գործընկերները, որպեսզի օգնեն միմյանց՝ հաջողության հասնել: Մեր օրերում ինչո՞վ է եզակի համագործակցությունը Սուրբ Յոզու հետ՝ համեմատելով այն համագործակցության հետ, որ Աստծո հետևորդները, օրինակ՝ Աբրահամը կամ Մովսեսը, ունեին Հին կտակարանում: Դուք քաջալերվո՞ւմ եք՝ իմանալով այս մասին:
- 3 | Հաղորդությունը Սուրբ Յոզու հետ ավելի խորն է, քան պարզապես շփումը կամ համագործակցությունը: Այն նույնպես ընդգրկում է *մտերմությունը*՝ սերտ ընկերակցությունը: Ինչպե՞ս մենք՝ հավատացյալներս, կարող ենք այս մակարդակի հաղորդություն ունենալ Սուրբ Յոզու հետ:

**ՊԱՏԻՎ**

*Հարգանքի կամ բարձր գնահատականի ցանկացած արվահայություն՝ խոսքով կամ գործողությունով: Ըստ էության, պատվել նշանակում է՝ գնահատել, արժևորել, հարգանք ցուցաբերել և համակրանքով վերաբերվել:*

— մեջբերված է **Նոյ Վեբսթերի** Անգլերենի ամերիկյան բառարանից (1828)

- 4 | Սուրբ Յոզու գլխավոր առաջադրանքն է՝ հայտնել, թե ով է Յիսուսը, և պատիվ ու փառք բերել Նրան: Նա կհայտնի Քրիստոսին, նաև կհայտնի Իրեն, եթե անկեղծ պատվի արժանանա: Ուշադրությամբ կարդացեք պատվի սահմանումը: Ինչպե՞ս կարող ենք պատվել Սուրբ Յոզուն անձամբ և միասնաբար՝ որպես Նրա Եկեղեցի:
  
- 5 | Թեև Սուրբ Յոզին (Աստծո Յոզին) երբեք չի նկարագրվում Սուրբ գրքում՝ որպես իգական սեռի ներկայացուցիչ, Նրա վարքագիծը երբեմն իգական է՝ ըստ գործառնության: Ուշադրությամբ կարդացեք Ծննդոց 1.27-ը և բացատրեք, թե ինչ է հայտնում այս խոսքը Աստծո բնավորության մասին, որն ընդգրկում է Սուրբ Յոզու բնավորությունը: Ինչպե՞ս է այս ճշմարտությունն ազդում ձեր և Սուրբ Յոզու շփման վրա:
  
- 6 | Սուրբ Յոզին շատ նուրբ, մեղմ և մխիթարող բնավորություն ունի: Եթե ուշադիր չլինենք, մենք կարող ենք տրտմեցնել կամ հանգցնել Յոզուն. մենք կարող ենք տխրեցնել Նրան և այնպես անել, որ Նա դադարի գործել մեր կյանքերում: Ուշադրությամբ մտորեք Եփեսացիների 4.29-32 խոսքերի շուրջ և նշեք որոշ գործողություններ, որոնք տրտմեցնում են Յոզուն: Ինչո՞վ է Յոզուն տրտմեցնելը տարբերվում Յոզուն հանգցնելուց, որի մասին գրված է Ա Թեսաղոնիկեցիների 5.19-22-ում: Ինչպե՞ս մենք կարող ենք զգուշանալ այս երկուսից:

7 | Մարդկանց հայտնի յուրաքանչյուր մեղք կարող է ներվել՝ բացի մեկից՝ *Սուրբ Հոգուն հայհոյելուց*: Կարդացե՛ք Հիսուսի զգուշացումը Սատթեոս 12.22-32-ում (ինչպես նաև՝ Մարկոս 3.22-30 և Ղուկաս 12.10): Այս խոսքերի լույսի ներքո նկարագրե՛ք, թե ինչ է նշանակում հայհոյել Սուրբ Հոգուն: Ձեր կարծիքով, ինչո՞ւ Հիսուսը այսքան խստորեն խոսեց այս մեղքի դեմ:



## ԳԼԽԻ ԱՄՓՈՓՈՒՄ

- Սուրբ Հոգին ցանկանում է շարունակական հաղորդություն ունենալ մեզ հետ:
- Հաղորդությունը բաղկացած է շփումից, համագործակցությունից և մտերմությունից:
- *Շփումը* միացյալ կապ է հաղորդակցման և բաժնեկցման կամ կյանքն իրար հետ կիսելու միջոցով:
- *Համագործակցությունը* միացյալ աշխատանքն է. այն գործողություն է ավելացնում մեր հաղորդակցմանը:
- *Մտերմությունն* ընկերության ամենախորը մակարդակն է, որում մենք կիսվում ենք սրտի մտքերով, ցանկություններով և գաղտնիքներով Սուրբ Հոգու հետ, իսկ Նա կիսում է մեզ հետ այն, ինչ կա Իր սրտում:
- Սուրբ Հոգին, Ով լիովին Աստված է, ընտրել է մեր սրտերը (հոգիները) որպես Իր տուն՝ այնտեղ մշտապես բնակվելու համար:
- Մենք պետք է զգույշ լինենք, որպեսզի չտրտմեցնենք Նրան, որովհետև Նա մեղմ և հեզ է, և կարող է մեծապես տրտմել մեր սխալ արարքների պատճառով:

## Փոխհարաբերությունների երեք մակարդակ

*«Հանուն ձեր ավանդույթի (կանոնների, որոնք փոխանցվել են ձեր նախահայրերից)՝ դուք մի կողմ եք դրել Աստծո խոսքը [գրկելով այն ուժից և հեղինակությունից՝ անարդյունավետ դարձնելով այն]: Չուսուցող մարդիկ (կեղծավորներ): Եսային փայլուն կերպով և ճշմարտապես մարգարեսացավ ձեր մասին՝ ասելով. «Այս մարդիկ մոտենում են Բնչ իրենց քերականներով և պարվում են Բնչ իրենց շուրթերով, բայց նրանց սրտերը երբ են պահված և հեռու են Բնչնից: Նրանք ապարդյուն են երկրպագում Բնչ, որովհետև նրանք սովորեցնում են մարդկանց պարվիրականները՝ որպես վարդապետություններ»»:*

— Հիսուս (Մատթեոս 15.6-9, AMP)

### Օր 1

Հիսուսը դիմեց փարիսեցիներին այս սթափեցնող խոսքով, որովհետև նրանք թույլ էին տվել, որ *ավանդույթն* ավելի կարևորվեր, քան Աստծո խոսքը: Բառարանը «ավանդույթ» բառը սահմանում է որպես «մտքերի, գործողությունների կամ վարքի ժառանգած, ընդունված ձև»: Ակնհայտ է, որ ավանդույթն ինքնին վատ բան չէ: Կան շատ հրաշալի ավանդույթներ, որոնք պահում ենք թե՛ ես, թե՛ իմ ընտանիքը, թե՛ ընկերներս: Այնուամենայնիվ, փարիսեցիները ավանդույթը (մտքերի ընդունված ձևը) բարձրացրին ավելի, քան Աստծո խոսքը, ինչի պատճառով Աստծո խոսքն անարդյունավետ դարձավ նրանց կյանքերում: Այս ճշմարտությունը վավերական է նաև այսօր: Մենք պետք է համոզված լինենք, որ մեր պատկերացումը ճշմարտության մասին սահմանվում է Աստծո խոսքով, ոչ թե անցողիկ զգացմունքներով, ավանդույթներով կամ մարդկային փիլիսոփայություններով:

Հիսուսը շարունակեց բացատրել, որ փարիսեցիների ավանդույթը խզել էր իրենց փոխհարաբերություններն Արարչի հետ: Փաստորեն, Նա հայտարարեց, որ նույնիսկ նրանց երկրպագությունն Աստծուն՝ ապարդյուն էր, որովհետև նրանք ավելի շատ հավատք ունեին մարդկանց վարդապետությունների (ուսմունքների

և պատկերացումների) հանդեպ: Փարիսեցիները երբեք հնարավորություն չէին ունենա ճշմարտապես մտերիմ լինել Աստծո հետ, քանի դեռ չէին ապաշխարել իրենց կուրությունից և չէին ընդունել ճշմարտությունը: Նմանապես, Յոզու շփունը վայելելու համար մենք պետք է մի կողմ դնենք մարդկանց մտքերը և ավանդույթները, և ընդունենք Աստծո մասին այն ճշմարտությունը, որն ակնհայտորեն գրված է Իր Խոսքում: Այլապես՝ Աստծո հետ մտերմորեն շփվելու մեր փորձերն անարդյունավետ կլինեն, ինչպես և փարիսեցիներինը:

### Մեծագույն Ուսուցիչը

Մինչև Սուրբ Յոզու հետ մտերմանալը, ես կարդում էի իմ Աստվածաշունչը և մտածում. «*Ես սիրում եմ Աստծուն ամբողջ սրտով, բայց այս ամենը մի փոքր անհետաքրքիր է*»: Իրականում, ես չէի խնդրում Սուրբ Յոզուն՝ մասնակցել աղոթքներիս և Աստվածաշնչի ուսումնասիրությանը: Ես հայտնաբերեցի, որ միայն Սուրբ Յոզին է կենդանացնում Աստվածաշունչն իմ սրտում: Շնորհիվ Նրա առաջնորդության՝ Աստվածաշունչը դառնում է շատ ավելին, քան պարզապես խոսքեր. այն դառնում է կյանքի եղբայրները: Կորնթացիների երկրորդ թղթի 3.6-ում գրված է.

«Նա կարողություն է տվել մեզ՝ լինելու Իր նոր ուխտի ծառայողները: Սա գրված օրենքների ուխտ չէ, այլ՝ Յոզու: Յին գրված ուխտն ավարտվում է մահվամբ, բայց այս *նոր ուխտի* ներքո Յոզին կյանք է տալիս» (NLT):

Մեր «նոր ուխտը», որն արտահայտված է Աստծո Խոսքով, պարզապես օրենքների և կանոնների ցուցակ չէ: Այն հենց կյանքն է, և կյանք է փչում նրանց մեջ, ովքեր հնազանդվում են իր իշխանությանը: Մենք կարող ենք վայելել այս նոր ուխտի լիությունը միայն Յոզու միջոցով, որովհետև Նա է հայտնում զարմանալի առեղծվածն այն մասին, թե ով ենք մենք Քրիստոսի մեջ (որը հենց Նոր կտակարանի ուղերձն է): Ահա թե ինչու մենք պետք է հրավիրենք մեծագույն Ուսուցչին՝ Յոզուն, մասնակցելու մեր աստվածաշնչյան ուսումնասիրությանը:



Երբևէ ունեցե՞լ եք ուսուցիչ, ով ջերմեռանդորեն չէր վերաբերվում այն առարկային, որն ուսուցանում էր: Ես հայտնաբերել եմ, որ ամենավատ դասերն անցնում են նման մարդկանց հետ: Նրանց դասերին մասնակցելը նման է ատամի ցավին դիմանալուն: Նմանապես, երբևէ ունեցե՞լ եք ուսուցիչ, ով պարզապես չի սիրել իր աշակերտներին կամ ուսանողներին: Ինչպիսի՞ թշվառ իրավիճակ: Բարի լուրն այն է, որ Սուրբ Հոգին ջերմեռանդորեն ցանկանում է հայտնել աստվածային իրողությունները, և Նա նույնպես անչափ սիրում է ձեզ: Նա ցանկանում է, որ դուք ունենաք յուրաքանչյուր պարզևը, որ Քրիստոսը ձրիաբար շնորհել է ձեզ: Եթե մենք խնդրենք և թակենք, Նա ամբողջովին կհայտնի մեզ կյանքի խորհուրդները:

### **Մթնոլորտը և ներկայությունը**

Դժբախտաբար, այնպիսի տպավորություն է, որ հաճախ մենք փորձում ենք ապրել այս զարմանալի քրիստոնեական կյանքը՝ առանց մեր Առաջնորդի ներկայության և խորհրդի: Գործնականում, այսօր Սուրբ Հոգին օտար է շատ եկեղեցիներում: Մենք անգիտակցաբար փոխարինել ենք Նրա ներկայությունը լավ մթնոլորտով: Թվում է, թե մենք գրեթե խոչընդոտում ենք Աստծո Հոգու դրսևորումները, որովհետև մի քանիսը «տարօրինակ կերպով» են արձագանքել Նրա ներկայությանը կամ փորձել են կեղծել այն:

Սխալ մի՞ հասկացեք ինձ. ես հավատում եմ, որ մեր եկեղեցական ծառայությունները պետք է հրաշալի մթնոլորտում անցնեն: Վերջին մի քանի տարիների ընթացքում եկեղեցում շատ անհրաժեշտ մշակութային փոփոխություններ են տեղի ունեցել, որոնք նաև վերաբերում են մթնոլորտին: Եկեղեցին շատ առումներով ավելի համապատասխան և գրավիչ է դարձել աշխարհի համար: Ես հավատում եմ, որ սա հաճեցնում է Աստծուն: Ինչպես Պողոսն ասաց. «Ես նույնպես փորձում եմ հաճեցնել ամեն մեկին ամեն ինչում, որ անում եմ: Ես չեմ անում պարզապես այն, ինչ լավ է ինձ համար. ես անում եմ այն, ինչ լավ է ուրիշների համար, որ շատերը կարողանան փրկվել» (Ա Կորնթ. 10.33, NLT): Մենք մեծ աշխատանք ենք կատարել՝ գործադրելով մեր անհատական ստեղծարար

կարողությունները, և օգտվել ենք տեխնոլոգիական նորույթներից: Մի քանի նորարար վայրեր, որտեղ եղել են, եկեղեցիներ էին: Քրիստոսի Մարմնի անդամները պետք է նորարար մարդիկ լինեն, ովքեր հետևողականորեն նորանոր ստեղծարար մակարդակների են բարձրանում: Բայց եկեղեցին երբեք չի զբաղեցնի իր զորության, սիրո և իշխանության դիրքը այս երկրում, եթե չիրավիրի Սուրբ Յոզուև իր բոլոր գործերի մեջ: Հիշեք՝ Նա մեր ավագ գործընկերն է:

Բարի լուրն այն է, որ մենք կարող ենք ունենալ թե՛ հրաշալի մթնոլորտ, թե՛ Նրա դրսևորված ներկայությունը: Ես այնքան են ոգեշնչվում, երբ հնարավորություն են ունենում այցելել եկեղեցիներ, որոնք միաժամանակ ակնառու են այս երկու բնագավառներում: Ոչ մի դեպքում զոհ չգնաք այն գաղափարին, որ Սուրբ Յոզուև ներկայության դրսևորումը կխանգարի մարդկանց՝ մուտք գործել Արքայության մեջ: Մենք պետք է հիշենք, որ կորսվածները ձգտում էին առաքյալներին, ոչ թե մերժում նրանց, այն պատճառով, որ նրանք համագործակցում էին Սուրբ Յոզուև հետ: Ցանկացած առաջընթաց, որ մենք, որպես եկեղեցի, կարող ենք ունենալ՝ առանց Յոզուև մասնակցության, ի չիք կդառնա:

Նույնիսկ Հիսուսը՝ Աստծո Որդին, ոչինչ չարեց, մինչև Սուրբ Յոզուև զորությունը ստանալը (տե՛ս Ղուկ. 4.1-15): Ղուկաս 4.14,15-ում գրված է. «Եվ Հիսուսը *Յոզուև զորությանը* ետ դարձավ Քալիլեա, և Նրա համբավը դուրս գնաց այն գավառի բոլոր կողմերը: Եվ Նա սովորեցնում էր նրանց ժողովարաններում, և ամենից փառավորվում էր»: Ուշադրություն դարձրեք. այս խոսքը հայտնում է մեզ, որ Նա «ետ դարձավ Յոզուև զորությանը»: Այս հատվածում գրված է, թե ինչ կատարվեց այն բանից հետո, երբ Հիսուսը քառասուն օր անցկացրեց անապատում՝ փորձվելով սատանայից: Նա դուրս եկավ անապատից *Յոզուև զորությանը*, և վերադառնալով Նազարեթ՝ հռչակեց.

«Տիրոջ Յոզին Ինձ վրա է, որի համար էլ օծեց Ինձ. Նա Ինձ ուղարկել է աղքատներին ավետարանելու, սրտով կոտրվածներին բժշկելու, գերիներին թողություն քարոզելու, և կույրերին՝ տեսողություն, խոցվածներին ազատ արձակելու, Տիրոջ ընդունելի տարին քարոզելու» (Ղուկաս 4.18,19):

Հիսուսը կարողացավ կատարել Իր Հոր կամքն այս երկրի վրա, քանի որ Նա գործում էր Աստծո Հոգու զորությամբ: Նույն զորությամբ Եկեղեցին պետք է քարոզի Ավետարանը՝ հոգով աղքատներին, բժշկություն բերի կոտրված սիրտ ունեցողներին, ազատություն հռչակի գերիներին, առաջնորդի մարդկանց՝ պարզ տեսներու համար, ազատ արձակի ճնշվածներին և հայտնի ճշմարտությունն այն մասին, որ Աստծո ձեռքը չի կարճացել՝ փրկելու համար: Բայց մենք երբեք չենք կարողանա իրականացնել այս երկնային առաջադրանքը, եթե *չապավինենք Հոգու զորությանը*: Հիսուսն ուներ Հոգու զորության կարիքը. մի՞թե սա չի վերաբերում մեզ:

## Օր 2

### Մենք ավելի շատ ունենք Հիսուսի կարիքը

Ես ի սրտե ցանկանում եմ, որ այն մարդիկ, ովքեր մեր եկեղեցիներ են հաճախում, վերապրեն Հիսուս Քրիստոսի հայտնված ներկայությունը: Ես մշտապես լսում եմ, թե ինչպես են մարդիկ ասում. «Մենք ավելի շատ ունենք Հիսուսի կարիքը մեր եկեղեցիներում», և լիովին համաձայն եմ այս արտահայտության հետ: Բայց ո՞վ է հայտնում մեզ Հիսուսին: Սուրբ Հոգին: Ինչպես ավելի վաղ նշեցինք, Սուրբ Հոգին միջոց չէ, որին պետք է ձգտենք. Նա Անձ է, ում պետք է պատվենք և պատրաստակամորեն ընդունենք: Ինչո՞ւ չպետք է ցանկանանք, որ ճշմարտության Հոգին ներկա լինի ամեն ինչում, որ մենք անում ենք: Մեկ անգամ Հիսուսն Իր աշակերտներին ասաց.

«Տակավին շատ բան ունեմ ձեզ ասելու, բայց հիմա չեք կարող տանել: Բայց երբ որ Նա՝ ճշմարտության Հոգին գա, կառաջնորդի ձեզ ամեն ճշմարտության մեջ, որովհետև Իր անձից չի խոսի, այլ ինչ որ կ'լսի, կ'խոսի, և զալու բաները կպատմի ձեզ: Նա [Սուրբ Հոգին] Ինձ [Հիսուսին] կփառավորի, որովհետև Իմից կառնի և կպատմի ձեզ: Ամեն ինչ որ Հայրն ունի, Իմն է. նրա համար ասացի ձեզ, թե՝ Իմից կառնի և կպատմի ձեզ» (Հովհաննես 16.12-15):

Սուրբ Յոզիմ փառավորուն է Յիսուսին: Սուրբ Յոզու միջոցով է, որ Յիսուսը հայտնվում է մեզ: Մենք չենք կարող շրջանցել Աստծո կողմից սահմանված կարգը: Եթե ցանկանում ենք, որ Յիսուսի ներկայությունն ավելի շատ լինի մեր կյանքերում, պետք է ավելի մտերիմ հաղորդակցություն ունենանք Սուրբ Յոզու հետ: Ահա թե ինչու է Սուրբ Յոզիմ կոչվում Քրիստոսի Յոզի (տե՛ս Ա Պետր. 1.11, Հռոմ. 8.9): Երբ Յոզիմ խոսում է մեզ հետ, Նա ներկայացնում է Յիսուսին: Սուրբ Յոզիմ պարզապես «հաճելի հավելում» չէ քրիստոնեական կյանքին. Նա Քրիստոսի էությունն է երկրի վրա: Նրա ներկայության դրսևորումը չի լինի այնտեղ, որտեղ Նա պատիվ չի ստանում: Այդ իսկ պատճառով, եթե հրաժարվենք պատվել Յոզուն, մենք չենք վերապրի Քրիստոսի ներկայությունը և զորությունը: Միգուցե հենց սա՞ է պատճառը, որ աշխարհը (Քրիստոսի վերափոխող զորության թիրախը) հաճախ համարում է, որ Եկեղեցին զուրկ է թե՛ կյանքից, թե՛ զորությունից:

## Մտերիմ ընկերություն Աստծո հետ

Հաղորդակցության վերջնական նպատակը՝ մտերիմ, անձնական ընկերությունն է: Աստծո Յոզիմ ցանկանում է լինել ձեր ընկերը: Նա փափագում է մտերմորեն շփվել ձեզ հետ: Հակոբոսն ասում է. «Նախանձով փափագում է Յոզիմ, որ բնակված է մեզանում» (Հակոբ. 4.5): Ի՞նչ է Նա փափագում. փափագում է մտերմություն ունենալ ձեզ և ինձ հետ: Մի՞թե մենք չենք ցանկանում նույնը այն մարդկանց հետ, ովքեր ամենամոտոն են մեզ: Ուշադրություն դարձրեք, որ Նա *նախանձով* է փափագում: Պարզ ասած, սա նշանակում է, որ Նա չի հանդուրժելու, եթե մենք հետաքրքրվենք այլ «սիրահետողներով», ինչպես որ իմ կինը երբեք չի կիսվի ինձ հետ իր սրտի գաղտնիքներով, եթե ես մեկ այլ կնոջ սիրահետեմ:

Աստված ցանկանում է մեր ամբողջական նվիրումը: Ընդամենը մեկ խոսք առաջ Հակոբոսի թղթում գրված է հետևյալը. «...այս աշխարհիսերը (կամ՝ ընկերությունը) թշնամություն է Աստծո դեմ...» (Հակոբ. 4.4): «Թշնամություն» բառի բառարանային սահմանումը հետևյալն է. «թշնամանքի, ատելության, չարակամության, ներհակության զգացում կամ վիճակ»: Այս բառերը բավականին

խիստ են: Մենք կարող ենք տալ հետևյալ հարցը. ինչո՞ւ է աշխարհի սերը թշնամություն առաջացնում Աստծո դեմ:

Այս աշխարհի ընկերը լինելը նշանակում է՝ առաջնորդվել մարմնի ցանկություններով, ձգտել շահի, կարգավիճակի կամ դիրքի: Սուրբ Հոգին գիտի, որ այս ամենի վերջը ունայնություն և դատարկություն է: Աստված նախանձավոր կերպով սիրում է մեզ, և Նա ատում է՝ տեսնելով, թե ինչպես ենք մենք սիրախաղ անում այնպիսի բաների հետ, որոնք միայն հանգեցնելու են մեր անձերի անկմանը: Երբեք մի՛ մոռացեք, որ Աստված կատարյալ Հայր է, և ինչպես յուրաքանչյուր հոգատար հայր՝ Նա ցավում է, որ իր զավակները բավարարվում են ցանկացած բանով՝ բացի լավագույնից: Ահա թե ինչու Նա չի հանդուրժի մեր ընկերությունն այս աշխարհի հետ: Հիսուսը ցանկանում է, որ դուք վերապրեք կյանքն ավելցուկով (տե՛ս Հովհ. 10.10), իսկ Հոգին հայտնում է Որդու ցանկությունները: Հիշե՛ք, որ Աստվածությունը մեկ է՝ Իր նպատակով: Աստված ի սրտե ձգտում է մտերիմ փոխհարաբերություններ ունենալ Իր զավակների հետ: Երբ սիրախաղ ենք անում այս աշխարհի հետ, չենք կարող խորը մտերմություն ունենալ Նրա հետ: Ինչպիսի՞ ողբերգական կորուստ և ցավ է այն պատճառում մեր Հոր սրտին:

## **Շատ ավելին, քան փրկությունը**

Ես հասկացա, որ Աստծո մտադրությունները մեզ համար շատ ավելին են, քան փրկությունը: Փրկությունը չպետք է դառնա մեր «վերջին կայանը»: Այո՛, մեր փրկության իրողությունն այնքան հրաշալի է, որ վեր է մեր ըմբռնումից. բայց մեր տեղը երկնքում՝ ընդամենը այն ամենի սկիզբն է, ինչ Աստված ցանկանում է տալ մեզ: Աստված ուղարկեց Իր Որդուն, որպեսզի մենք կարողանանք զարմանալի կյանք ունենալ նաև այստեղ՝ երկրի վրա: Ինչո՞ւ: Որովհետև մեզ համար իսկապես դժվար կլինի արդյունավետ կերպով տարածել Նրա թագավորությունը, եթե ճնշված ենք այս աշխարհի վախերով և ցանկություններով:

Մի անգամ Պողոսն ասաց. «...աստվածապաշտությունն ամեն բանի համար օգտակար է՝ ունենալով այժմյան և գալու կե-

նաց խոստմունքը» (Ա Տիմոթ. 4.8): Ուշադրություն դարձրեք *աստվածապաշտություն* բառի վրա: Միայն նա, ով ճանաչում է Աստծուն, կարող է աստվածապաշտություն ունենալ, որովհետև *աստվածապաշտությունը նշանակում է՝ լինել Աստծո նման*: Ինձ համար դժվար է լինել ինչ-որ մեկի նման, ում հետ հազվադեպ են շփվում: Երբ ժամանակ ենք անցկացնում մարդկանց հետ, նրանք սովորաբար ընդօրինակում են մեզ ինչ-որ բաներում: Ահա թե ինչու է Հակոբոսն իր հաջորդ խոսքում՝ աշխարհի հետ ընկերության մասին, գրում հետևյալը. «Մոտեցե՛ք Աստծուն, և Նա կմոտենա ձեզ...» (Հակոբ. 4.8): Աստված ցանկանում է ժամանակ անցկացնել ձեզ հետ, որպեսզի դուք կարողանաք Իր նման դառնալ: Մենք աստվածապաշտ ենք դառնում Աստծո հետ մտերիմ փոխհարաբերություններ ունենալու միջոցով, իսկ Աստծո հետ նման փոխհարաբերություններ ձևավորելը հնարավոր է միայն Նրա Հոգու միջոցով (տե՛ս Ա Կորնթ. 2):

Հաճախ երբ հավատացյալները կարդում են. «Այս աշխարհի սերը թշնամություն է Աստծո դեմ», նրանք անմիջապես փորձում են լիովին առանձնանալ աշխարհից: Իհարկե, սա անիմաստ է: Ինչպե՞ս Եկեղեցին կարող է շահել աշխարհը, եթե իրեն առանձնացնի մարդկանցից: Որպես Եկեղեցի՝ մենք պետք է հետևենք Հիսուսի օրինակին: Կորսվածները ձգտում էին շփվել Հիսուսի հետ: Նա ժամանակ էր անցկացնում հարկահավաքների և մարմնավաճառների հետ՝ այն մարդկանց հետ, ում՝ կրոնական առաջնորդները վերևից էին նայում: Նա նույնիսկ հաճախում էր նրանց երեկույթներին, բայց և տարբերվում էր այդ մարդկանցից: Հիսուսն էր օրինակով ցույց տվեց, թե ինչ է նշանակում՝ լինել այս աշխարհում, բայց ոչ՝ այս աշխարհից: Նրա սիրտը ցավում էր այն մարդկանց համար, ումից խորշում էին նախանձավոր կրոնասերները: Ինչո՞ւ էր Նա այդ աստիճան նվիրված «աստվածապաշտ» մարդկանց կողմից արհամարհվածներին: Հիսուսը գիտեր, որ նրանք խոնարհ էին և ձգտում էին ավելիին: Նա չէր հաճախում նրանց երեկույթներին՝ նրանց գործերին մասնակցելու համար: Նա գնում էր, որպեսզի նոր ճանապարհ ցույց տար նրանց:

Նմանապես, մենք կանչված ենք հասնելու թե՛ բարոյապես ապականված, թե՛ բարոյապես կոտորված մարդկանց: Եթե Եկեղեցին

չլինի Քրիստոսի ձեռքերը և ոտքերը, ապա ո՞վ կլինի: Մենք, և միայն մենք ենք Նրա մարմինը: Այժմ մենք *Քրիստոսում* ենք շնորհքի վերափոխող զորության շնորհիվ: Մենք ծառայում ենք որպես Նրա դեսպաններ (ովքեր տարածում են Նրա անունը և ներկայացնում են Նրան) երկրի վրա: Եթե մենք չտանենք Աստծո ճշմարտությունն ու լույսը այս աշխարհին, այլևս ոչ ոք չի տանի:

### Օր 3

#### Լուռ Ջենտլմենը

Շփվելով Սուրբ Հոգու հետ՝ ես հայտնաբերեցի, որ Նա ջենտլմեն է: Նա երբեք չի հասկացնի մեզ Իր կամքը: Եթե մենք հրաժարվենք Նրա հետ հաղորդակցվելուց, Նա կլռի:

Ավելի քան քսանհինգ տարի է՝ ես ճանապարհորդում և ծառայում եմ: Այս ընթացքում որոշ դիտարկումներ եմ արել այն վարորդների մասին, ովքեր դիմավորում են ինձ օդանավակայաններում: Նրանք մշտապես բարի և անչափ սիրալիր են, մանրամասնորեն բացատրում են, թե որտեղ եմ ես հյուրընկալվելու և որ ժամերին եմ լինելու իմ ծառայությունները: Բայց սովորաբար նրանք չեն խոսում ինձ հետ, քանի դեռ ես չեմ սկսել խոսակցությունը: Պատճառն այն է, որ հովիվները կարգադրում են նրանց՝ խոսակցության մեջ չմտնել ինձ հետ, քանի որ, միգուցե ես աշխատելու կամ ծառայությանը պատրաստվելու կարիք ունեմ մեքենայի մեջ: Ծառայողական տարիների ընթացքում հանդիպել եմ բազմաթիվ ծառայող սրտեր ունեցող վարորդների, և անչափ շնորհակալ եմ նրանց համար: Այդ իսկ պատճառով, ինձ հանդիպող վարորդներիցես մշտապես հետաքրքրվում եմ նրանց ընտանիքի մասին, թե ինչ ծառայություն ունեն եկեղեցուն: Եթե ես չնախածեմ զրույցը, միգուցե մենք գնանք ամբողջ ճանապարհը՝ առանց որևէ իմաստալից շփման:

Ես հավատում եմ, որ Սուրբ Հոգին նման բնավորության գիծ ունի: Նա չի հաղորդակցվի մեզ հետ, քանի դեռ չենք ցանկանում լսել Նրա ձայնը: Եթե մենք չենք մոտենում Նրան, Նա հաճախ լուռ է մնում: Հիշեք՝ Հակոբոսն ասաց, որ Աստված մոտենում է մեզ,

երբ մենք մոտենում ենք Նրան: Մենք պատասխանատու ենք առաջին քայլն անելու համար: Մենք պետք է գիտակցաբար սկսենք հաղորդակցվել Նրա հետ: Պարզ ասած՝ ձեզ ուղղված է բոլոր ժամանակների մեծագույն հրավերը: Այժմ դուք պետք է քայլ անեք:

Շատ հավատացյալներ տեղյակ չեն այս ճշմարտության մասին: Այս պատճառով ես հաճախ լսում եմ, թե ինչպես են մարդիկ ասում. «Ինչո՞ւ Աստված չի խոսում ինձ հետ», կամ «Մի քանի տարի է՝ Աստված չի խոսել ինձ հետ»: Արդյո՞ք այս մարդիկ ձգտում են հաղորդություն ունենալ Աստծո հետ այնպես, ինչպես սովորեցնում է Աստվածաշունչը: Եթե մենք ցանկանում ենք մոտ լինել Աստծուն, պետք է ձգտենք ճանաչել Նրան, և սա նշանակում է, որ մենք պետք է ձգտենք ընկերանալ Նրա Յոգու հետ:

Ես խրախուսում եմ ձեզ՝ ջանասիրաբար ձգտել Սուրբ Յոգու հետ հաղորդությանը: Դուք կգարմանաք՝ տեսնելով, թե ինչպես է Նա պատասխանում ձեզ: Ինչպես իմ վարորդներից շատերը, Սուրբ Յոգին ձեզ հետ կմնա, անկախ նրանից՝ դուք հաղորդակցվո՞ւմ եք Նրա հետ, թե՞ ոչ, որովհետև Նա խոստացել է, որ երբեք չի թողնի և չի լքի ձեզ (տե՛ս Եբր. 13.5): Բայց եթե դուք չանեք առաջին քայլը, Նա, որպես կանոն, լուռ կմնա, և դուք երբեք չեք վայելի Նրա ներկայության լիարժեք դրսևորումը և Նրա հաղորդության առավելությունները ձեր կյանքում:

## Աստծո խորին իրողությունները

Եվս մեկ անգամ կարդանք Յովհաննես 16-ի այս հատվածը.

«Կա շատ ավելին, որ ես ցանկանում եմ պատմել ձեզ, բայց հիմա դուք չեք կարող կրել դա: Երբ ճշմարտության Յոգին գա, Նա կառաջնորդի ձեզ ամբողջ ճշմարտության մեջ: Նա չի խոսի Իր նախաձեռնությամբ, այլ կասի ձեզ այն, ինչ լսել է: Նա կպատմի ձեզ ապագայի մասին: Նա փառք կբերի Ինձ՝ պատմելով ձեզ այն, ինչ ստանում է Ինձնից: Այն ամենը, ինչ պատկանում է Յորը, Իմն է. ահա թե ինչու ես ասացի. «Յոգին կպատմի ձեզ այն, ինչ Նա ստանում է Ինձնից»» (Յովհաննես 16.12-15, NLT):

Յիսուսն այս մասին խոսեց Իր խաչելությունից առաջ, երբ վերջին պահերնանցկացնում էր աշակերտների հետ: Մի փոքր



ուշ այդ երեկո Նա ձերբակալվեց հռոմեացի սպաների կողմից և մահվան դատապարտվեց: Ակնհայտ է, որ այս պահերը կարևոր և ծանրակշիռ խոսքերի համար էին:

Ուշադրություն դարձրեք, որ Հիսուսն ասում է. «Կա շատ ավելին, որ ես ցանկանում եմ պատմել ձեզ, բայց հիմա դուք չեք կարող կրել դա» (խոսք 12): Հիսուսն ամեն ինչ էր այս տղամարդկանց համար, ովքեր Նրա հետ էին մի քանի տարի շարունակ: Յուրաքանչյուրը թողել էր իր ընտանիքը, ընկերներին և աշխատանքը՝ Նրան հետևելու համար: Աշակերտները, հավանաբար, մտածում էին. «*Հետաքրքիր է, թե ինչ է մեզ պետք՝ ամեն ինչ լիարժեք կերպով հասկանալու համար*»: Բայց հանկարծ Հիսուսը մի արտասովոր խոստում տվեց. «Երբ ճշմարտության Հոգին գա, Նա կառաջնորդի ձեզ *ամբողջ ճշմարտության մեջ*» (խոսք 13): Այլ խոսքով՝ «Թեև հիմա ես ձեզ հետ եմ (մարմնով), դուք այնպիսի վիճակում չեք, որ կարողանաք ստանալ այն ամենը, ինչ պետք է տամ ձեզ: Բայց ես ուղարկում եմ ձեզ Սուրբ Հոգուն, և Նա կխոսի Իմ խոսքերը, կհայտնի Իմ կամքը և կպատրաստի ձեզ այն ամենի համար, ինչ պետք է կատարվի»: Ինչպիսի՞ խոստում: Հիշեք Հիսուսի խոսքերը, որ ասաց այդ երեկո.

«Բայց ես ճշմարտությունն եմ ասում ձեզ, թե լավ է ձեզ համար, որ ես գնամ, որովհետև եթե չգնամ, Մխիթարիչը չի գա ձեզ մոտ, բայց եթե գնամ, Նրան կուղարկեմ ձեզ մոտ» (Հովհաննես 16.7):

Հուսով եմ՝ դուք նորովի եք սկսում հասկանալ այս խոսքերը: Աստված այնպես չի խոսում, որ մենք չհասկանանք Իրեն, այլ՝ ճիշտ հակառակը: Բոլորս ցանկանում ենք մտերմորեն ճանաչել նրանց, ուն սիրում ենք, և Աստված էլ է այդպիսին: Երբ Հիսուսը երկրի վրա էր, Նա լիարժեք կերպով ցույց տվեց, թե ինչ էր Հայրը տվել մարդկանց (տե՛ս Եբր. 1.1-3, Կողոս. 1.15-19): Այնուամենայնիվ, ինչպես գիտենք, այժմ Հիսուսը երկնային Հոր աջ կողմում է: Սուրբ Հոգին՝ Աստվածության այն Անձն է, Ով բնակվում է Աստծո ժողովրդի հետ և նրանց մեջ այստեղ՝ երկրի վրա, այնպես որ, Աստծո խորը իրողությունները ճանաչելու համար մենք պետք է ճանաչենք Նրա Հոգուն՝ ճշմարտության Հոգուն:

## Կասկածամիտ Թովմասը

Այն բանից հետո, երբ Հիսուսը հարության առավ մեռելներից, աշակերտներից տասը մի տան մեջ էին, որի դուռը կողպված էր: Հանկարծ Հիսուսը հայտնվեց. աշակերտներն ապշել էին: Հիսուսն ստիպված էր համոզել նրանց, որ Ինքը ուրվական չէր: Տասը աշակերտներն ուրախացան հարության հրաշքի համար, և կարճ ժամանակ անց այդ մասին պատմեցին Թովմասին, ով նրանց հետ չէր այն պահին, երբ Հիսուսը հայտնվել էր: Լսելով այդ լուրը՝ Թովմասը տվեց իր տխրահռչակ պատասխանը. «Եթե Նրա ձեռքերում բևեռների նշանը չտեսնեմ, և իմ մատը չդնեմ բևեռների տեղը, և իմ ձեռքը չկոխեմ Նրա կողը, չեմ հավատա» (Հովհ. 20.25):

Մի քանի օր անց տասնմեկ աշակերտները միասին էին մեկ այլ տան մեջ, երբ հանկարծ Հիսուսը կրկին հայտնվեց: Մինչև որևէ բան ասելը կամ անելը, Նա անմիջապես դիմեց Թովմասին՝ կարծես թեստելով. «Լավ, Թովմաս, արի՛ զբաղվենք անհավատության հարցով»: Հիսուսն ասաց նրան. «Բե՛ր քո մատը այստեղ և տե՛ս Իմ ձեռքերը, և քո ձեռքը բեր և Իմ կողը կոխիր, և մի՛ եղիր անհավատ, այլ՝ հավատացյալ» (Հովհ. 20.27): Թովմասը պատասխանեց. «Ո՛վ իմ Տեր, և ո՛վ իմ Աստված»: Այժմ կարդացե՛ք, թե ինչ պատասխանեց Հիսուսը նրան.

«Որովհետև տեսար Ինձ, հավատացիր. երանի՛ նրանց, որ չեն տեսել և հավատում են» (Հովհաննես 20.29):

Ըստ էության, Հիսուսն ասում էր. «Թովմաս, կա մարդկանց օրինյալ խումբ, ովքեր կհավատան՝ առանց տեսնելու»: Ես մտածում էի. «Հիսուս, Դու բավականին խիստ վարվեցիր նրա հետ: Այդ մարդն արդեն պառկած է հատակին: Ակնհայտ է՝ նա շատ վատ է զգում իրեն: Նա ապաշխարո՞ւմ է: Իսկ Դու նայում ես նրան և ասում՝ Երանի՛ նրանց, որ չեն տեսել և հավատում են»: Ես չէի կարողանում հասկանալ, թե ինչո՞ւ Հիսուսն այդքան խստորեն վարվեց Թովմասի հետ: Բայց մի օր Տերը խոսեց ինձ հետ. «Ես չէի հանդիմանում Թովմասին, պարզապես ասում էի հետևյալը. «Նրանք, ովքեր ճանաչում են Ինձ Իմ Հոգով, կարող են մտերմության շատ ավելի բարձր մակարդակի հասնել, քան նրանք, ովքեր ֆիզիկապես են ճանաչել Ինձ»»:

## Օր 4

### Փոխհարաբերությունների երեք մակարդակ

Իրականում ի՞նչ նկատի ուներ Յիսուսը՝ խոսելով Թովմասի հետ: Այս հարցին պատասխանելու համար թույլ տվեք բացատրել, թե ինչու կարելի է ավելի խորը մտերմություն ունենալ հավատքով, քան երևույթով:

Կա փոխհարաբերությունների երեք մակարդակ՝ ֆիզիկական, շնչավոր և հոգևոր: Ամենացածր (ամենամակերեսային) մակարդակը *բնական* կամ *ֆիզիկական* մակարդակն է: Շատ սիրային փոխհարաբերություններ սկսվում են այս մակարդակի վրա, այսպիսի մտքերով. «Նա շատ դուրեկան կին է», կամ «Նա շատ դուրեկան տղամարդ է», կամ «Միգուցե սկսենք հանդիպե՞լ»: Դժբախտաբար, ամուսնանալիս զույգերի մեծ մասը միայն այս մակարդակի շփում ունի: Նրանք մտածում են. «Ես կարող եմ անտեսել այն փաստը, որ մենք լավ չենք ծանաչում իրար, որ իրականում չենք շփվել իրար հետ և չունենք ընդհանուր համոզմունքներ կամ հետաքրքրություններ, այն պատճառով, որ այդ կինը կամ տղամարդը ինձ դուր է գալիս»: Նման դեպքերում, փոխհարաբերությունների շնչավոր մակարդակը թերզարգացած է: Հարսանեկան զանգերը դողանջում են, մեղրամիսն ավարտվում է, և սկսվում է կյանքը: Այս ամուսիններն ստիպված կլինեն հասկանալ, որ պետք է ավելի մտերմանան իրար հետ, հակառակ դեպքում, կունենան դժբախտ ամուսնություն: Եթե նրանք չձգտեն ավելի խորը մտերմության, կինը կունենա իր հետաքրքրությունները իր ընկերական միջավայրում, իսկ ամուսինը կունենա իր հետաքրքրությունները իր ընկերական միջավայրում: Ի վերջո, նրանք պարզապես միասին կգոյատևեն: Իհարկե, Աստված չի ծրագրել, որ ամուսնությունն այդպիսին լինի:

Փոխհարաբերությունների հաջորդ մակարդակը վերաբերում է մարդու *շնչին* կամ *անհատականությանը*: Դավիթը և Յովնաթանն այս մակարդակի փոխհարաբերություններ ունեին. «...Յովնաթանի սիրտը (կամ՝ անձը) կապվեց Դավթի սրտի (կամ՝ անձի) հետ, և Յովնաթանը նրան իր անձի պես սիրեց» (Ա Թագ. 18.1): Երբ Յովնաթանն սպանվեց, Դավիթը ողբաց. «Ցավում եմ քեզ համար,

եղբայրս՝ Յովնաթան: Դու ինձ խիստ սիրելի էիր. բարձր եր ինձ համար քո սերը կանանց սիրուց» (Բ Թագ. 1.26): Դավիթը չէր խոսում այլասերված մարմնական հարաբերությունների մասին: Նրանց միջև չկար ոչ մի մարմնական հրապուրանք: Դավթի և Յովնաթանի փոխհարաբերությունները շնչավոր մակարդակի վրա էին, և բոլորովին ազատ էին անբնական մարմնական գործածությունից: Այնուամենայնիվ, նրանք կարողացան այնպիսի սերտ ընկերություն ձևավորել, որը շատ ավելի խորն էր ֆիզիկական հարաբերություններից (որը Դավիթը նկատի ուներ՝ խոսելով «կանանց սիրո» մասին):

Ամուսնությունը պետք է կառուցված լինի շնչավոր մակարդակի վրա: Սխալ մի՛ հասկացեք ինձ. փոխհարաբերությունների ֆիզիկական կողմը շատ կարևոր է: Իմ կինն անչափ գրավիչ է ինձ համար. ես համարում եմ նրան աշխարհի ամենագեղեցիկ կինը: Բայց կան փոխհարաբերությունների ավելի խորը մակարդակներ, որ ամուսինները կարող են ձգտել և պետք է հասնեն: Իրականում, Լիզայի անհատականությունը շատ ավելի հմայիչ է, քան նրա մարմինը:

Ցավոք, ես լսել եմ բազմաթիվ պատմություններ այն մասին, թե ինչպես են մարդիկ լքել իրենց ամուսիններին կամ կանանց ինչ-որ մեկի պատճառով, ում հետ ծանոթացել են առցանց շփման միջոցով: Մի քանի տարի առաջ ես քարոզում էի մի եկեղեցում, և ծառայությունից հետո մի տղամարդ մոտեցավ ինձ: Նա շրջապատված էր վեց փոքրիկ երեխաներով: Երկուսը նրա ձեռքերում էին, մյուս երկուսը գրկել էին նրա ոտքերը, ևս երկուսը վազվզում էին ճեմասարահում: Քանի որ նա շատ տրտմած տեսք ուներ, ես հարցրի.

- Դուք լա՞վ եք զգում ձեզ:

- Ո՛չ, - ասաց նա: - Այսօր կինս թողեց ինձ և մեր վեց երեխաներին՝ մի տղամարդու պատճառով, ում հետ ծանոթացել էր համացանցի միջոցով:

Նրա «շնչավոր» փոխհարաբերություններն այդ տղամարդու հետ այն աստիճան էին զարգացել, որ նա ցանկացավ թողնել այն տղամարդուն, ում հետ տարիներ շարունակ ամուսնացած էր: Ավելին՝ շնչավոր կապն այնքան ուժեղ էր, որ բաժանեց այդ կնոջն իր երեխաների մասին հոգալու և նրանց կողքին լինելու բնական հակվածությունից:

Փոխհարաբերությունների շնչավոր մակարդակը հաճախ պահանջում է նվազագույն կամ ոչ մի ֆիզիկական շփում: Ահա թե ինչու փոխհարաբերությունները, որոնք սկսում են իրարից շատ հեռու գտնվող մարդկանց միջև, հաճախ ավարտվում են ամենահաջողակ ամուսնություններով: Պատճառն այն է, որ զույգը կարողանում է կենտրոնանալ շնչավոր կամ անձնային կապի զարգացման վրա՝ առանց շեղվելու ֆիզիկական հրապուրամքի պատճառով:

### **Փոխհարաբերությունների բարձրագույն մակարդակը**

Փոխհարաբերությունների բարձրագույն կամ ամենախորը մակարդակը *հոգևորն* է: Հենց այս մակարդակը նկատի ունեւր Հիսուսը՝ խոսելով Թովմասի հետ: Պողոսը գրում է. «Որովհետև ո՞վ է մարդկանցից ճանաչում մարդու *մտքերը*՝ բացի այդ մարդու հոգուց, որն իր մեջ է» (Ա Կորնթ. 2.11, NASB): Այլ խոսքով՝ դուք չեք կարող իմանալ մարդու իրական մտքերը և դրդապատճառները, քանի դեռ կապ չեք հաստատել նրա հոգու հետ:

Ինչպես արդեն նշեցի, վերջերս Լիզան և ես տոնեցիք մեր ամուսնության երեսուներորդ տարեդարձը: Իմ ամենահաճելի հուշերից մի քանիսը այդ տարիների ընթացքում այն էր, որ մենք նստում էինք մեր լողավազանի մոտ և խոսում Աստծո և Նրա խոսքի մասին: Մենք շատ ժամանակ ենք անցկացրել՝ զրուցելով այս գրքի մասին: Երբ պատմում էի, թե ինչ էր Աստված դրել իմ սրտում, նա պատասխանում էր իմաստությամբ և հայտնությամբ, որոնք ավելի էին լուսավորում այն, ինչ Հոգին հայտնում էր ինձ: Քանի որ երկուսս էլ մտերիմ փոխհարաբերություններ ունենք Հոգու հետ, մենք կարող ենք հաղորդակցվել խորը, հոգևոր մակարդակի վրա:

Հոգևոր հաղորդակցությունը այն հիմնական պատճառներից մեկն է, թե ինչու ենք Լիզան և ես միասին աղոթում: Աղոթելիս մենք շփվում ենք Հոգու իրողությունների շուրջ, և մեր միջև հոգևոր կապ է ստեղծվում: Մենք նույնպես որոշել ենք, որ «Մեսիմքեր Ինտերնեյշնլ» ծառայության անձնակազմը ամեն աշխատանքային օրը սկսի տասնհինգ րոպե տևող միաբան աղոթքով, քանի որ ցանկանում ենք, որ մեր թիմի անդամների միջև հոգևոր կապ լինի:

Այս աղոթքի ժամանակը զարմանալի կերպով է ազդել մեր աշխատակազմի անդամների փոխհարաբերությունների վրա: Նույնը ճշմարիտ է ցանկացած փոխհարաբերությունների դեպքում. շփումը հոսքի և աղոթքի շուրջ կզարգացնի մտերմության ամենախորը մակարդակը մարդկանց միջև, քանի որ այն հոգևոր կապ է ստեղծում:

Կա տարբերություն հոգևոր իրողությունների մտավոր քննարկման և ճշմարիտ հոգևոր շփման միջև: Երբեմն մարդիկ խոսում են ինձ հետ Աստվածաշնչի մասին, և ես գիտեմ, որ նրանք ընդամենը տեղեկություններ են փոխանցում: Ինչպե՞ս կարող եմ համոզված լինել դրանում: Այն, ինչ նրանք ասում են, անչափ հոգնեցուցիչ է. այն հյուծում է միտքս: Նրանք խոսում են իրենց մտքից, ոչ թե հոգուց: Բայց կան մարդիկ, ովքեր խոսում են հոգևոր իրողությունների մասին իրենց հոգուց: Ես կարող եմ ժամերով զրուցել նման մարդկանց հետ՝ առանց հոգնելու, որովհետև մեր կապը հոգևոր մակարդակի վրա է:

## Օր 5

### Ճանաչել Աստծուն Նրա Հոգով

Այժմ ամբողջությամբ կարդանք Ա Կորնթացիների 2.11-ը.

«Որովհետև ո՞վ է մարդկանցից ճանաչում մարդու *մտքերը*՝ բացի այդ մարդու հոգուց, որն իր մեջ է: Այդպես էլ Աստծո *մտքերը* ոչ ոք չի ճանաչում՝ բացի Աստծո Հոգուց» (NASB):

Այն հունարեն բառը, որը թարգմանված է «մտքեր», լավագույնս սահմանվում է որպես՝ «կեցության վիճակը կամ բաղադրությունը»: Ըստ էության, Պողոսն ասում է, որ մարդը չի կարող ճանաչել Աստծո ճշմարիտ «բաղադրությունը» (նկատի ունենալով այն, ինչ կա Նրա սրտի խորքում)՝ առանց ճանաչելու Աստծո Հոգուն: Այս ճանաչողությունը շատ ավելին է այն մակերեսային գիտելիքից, որը ստացվում է նվազագույն ջանք գործադրելով կամ առանց որևէ ջանք գործադրելու: Գրեթե յուրաքանչյուրը Միացյալ Նահանգներում գիտի, թե ով է երկրի նախագահը, բայց

մեծամասնությունը չունի անձնական շփում նրա հետ: Մենք չգիտենք նրա սրտի ցանկությունները, մղումները և իրական համոզմունքները: Նմանապես, մենք չենք ճանաչի Աստուծո՛ւ «ընդհանուր գիտելիքից» ավելի բարձր մակարդակի վրա, եթե չբացահայտենք Նրան Նրա Յոգով:

Պողոսը շարունակում է. «Մենք չենք ընդունել այս աշխարհի հոգին, այլ այն Յոգին, Ով Աստուծոց է, որպեսզի կարողանանք հասկանալ այն բաները, որ ձրիաբար տրվել են մեզ Աստուծոց» (Ա Կորնթ. 2.12, ESV): Ինչպիսի՞ գարմանալի արտահայտություն: Ոչ ոք չգիտի Աստծո մտքերը՝ բացի Նրա Յոգուց (խոսք 11), բայց Նա տվել է Իր Յոգին մեզ: Այժմ, շփվելով Աստծո Յոգու հետ, մենք կարող ենք մտերիմ լինել Արարչի հետ *հոգևոր մակարդակի վրա, որը փոխհարաբերությունների բարձրագույն մակարդակն է:*

Պողոսը շփում էր Յոգու հետ այս մակարդակի վրա: Թեև նա երբեք չէր հանդիպել մարմնով եկած Յիսուսին, նա գրում էր. «Իմացնում են ձեզ, եղբայրներ, այն Ավետարանը, որ ինձնից ավետարանվեց, որ այն մարդուց չէ: Որովհետև ես էլ ո՛չ մարդուց առա այն, և ո՛չ էլ սովորեցի, այլ՝ Յիսուս Քրիստոսի հայտնությունով» (Գաղատ. 1.11,12): Ինչպե՞ս էր Յիսուսը հայտնվել Պողոսին: Պողոսը պարզ ասում էր, որ այս հայտնությունը չէր ստացել որևէ մարդուց: Եթե նա այս հայտնությունը մարդուց չէր ստացել և չէր շփվել մարմնով հայտնված Յիսուսի հետ, ապա, հավանաբար, ստացել էր *Քրիստոսի Յոգու* (Սուրբ Յոգու) միջոցով:

Արդյո՞ք հնարավոր է, որ Պողոսը ավելի խորը շփում ունենար Յիսուսի հետ այն պատճառով, որ երբեք չէր տեսել Նրան մարմնով: Պետրոսը, ով շփվել էր մարմնով հայտնված Յիսուսի հետ, իր կյանքի վերջում մի նամակ գրեց, որտեղ նշեց. «...մեր սիրելի եղբայր Պողոսը նույնպես գրեց ձեզ այն իմաստությամբ, որ Աստված տվեց նրան՝ խոսելով այս բաների մասին իր բոլոր նամակներում: *Նրա մեկնաբանություններից մի քանիսը դժվարըմբռնելի են...*» (Բ Պետր. 3.15,16, NLT): Պետրոսն անձնապես շփվել էր Յիսուսի հետ մի քանի տարի շարունակ: Նա ներկա էր, երբ Յիսուսը փառավորվեց Այլակերպման սարի վրա: Նա տեսել էր Յիսուսի խաչելությունը, նաև հանդիպել էր Յիսուսին և շփվել էր Նրա հետ հարությունից հետո: Այնուամենայնիվ, այս աշակերտը, ով տարիներ շարունակ վայելել էր շփումը մարմնով

հայտնված Յիսուսի հետ, ասաց, որ Պողոսի հայտնություններից մի քանիսը, որ նա ստացել էր Յոզուց, դժվարըմբռնելի են: Անձամբ ես հավատում եմ՝ այս խոսքը ցույց է տալիս, որ Պողոսն ավելի խորը մտերմություն ուներ Յիսուսի հետ, քան Պետրոսը:

Նոր կտակարանի գրքերի մեծ մասը Պողոսը գրել է Յոզուց ռզեշնչմամբ, սակայն նա չէր շփվել մարմնով հայտնված Յիսուսի հետ: Նա կարողացավ անել դա, քանի որ Յոզին է, Ով ամբողջովին հայտնում է Յիսուսին: Յիշե՛ք Յիսուսի խոսքերը. «Կա շատ ավելին, որ ես ցանկանում եմ պատմել ձեզ, բայց հիմա դուք չեք կարող կրել դա: Երբ ճշմարտության Յոզին գա, նա կառաջնորդի ձեզ ամբողջ ճշմարտության մեջ [կտա ձեզ ամբողջական հայտնությունը]» (Յովհ. 16.12,13, NLT): Պողոսը չէր կարող հիմնել այն հավատքը ֆիզիկական շփման վրա, որ ուներ Յիսուսի հանդեպ, քանի որ երբեք չէր հանդիպել մարմնով եկած Յիսուսին: Նա հարկադրված էր հավատալ և ստանալ՝ առանց տեսնելու: Ըստ էության, այս տեսակի շփումը հեռացրեց ցանկացած ֆիզիկական գործոն, որը կարող էր խանգարել այն ամենին, ինչ Յոզին փորձում էր հայտնել նրան: Յենց սա նկատի ուներ Յիսուսը՝ դիմելով Թովմասին: Այն փաստը, որ Պողոսը չուներ շփում մարմնավորված Յիսուսի հետ, որի վրա կարող էր հիմնվել, նշանակում էր, որ նա պետք է լիովինապավիներ իր հոգևոր *փոխհարաբերությանը* Տիրոջ հետ: Նա այլընտրանք չուներ:

Ինչպես Պողոսը, մենք նույնպես հնարավորություն ստացանք հետևել Յիսուսին՝ առանց հնարավոր թյուրըմբռնումների, որոնք կարող էին առաջանալ ֆիզիկական շփման հետևանքով: Ջարմանալի է, որ մենք կարող ենք ավելի մոտ լինել Յիսուսին՝ առանց Նրան տեսնելու, քան Նրան տեսնելով: Քանի որ չուներք Յիսուսի հետ ֆիզիկապես շփվելու կարողություն, մենք պետք է հաղորդակցվենք Նրա հետ Քրիստոսի Յոզով, Ով բնակվում է մեզանում՝ կառուցելով խորը, հոգևոր փոխհարաբերություններ Աստծո հետ: Որքա՛ն հրաշալի է:

## **Շփվե՛ք Նրա հետ ավելի խորը մակարդակի վրա**

Աստված գիտի, որ մեր մարմինը (դեռևս) փրկված չէ: Մեր հոգիները փրկված են. նրանք Յիսուսի ճշգրիտ պատկերն ու



նմանությունն ունեն (տե՛ս Ա Յովի. 4.17): Մեր անձերը փրկագնման ընթացքի մեջ են (տե՛ս Յակոբ. 1.21): Բայց մեր բնական մարմինները դեռ պետք է փրկվեն:

Արդյո՞ք նկատել եք, թե որքան հեշտությամբ ենք հոգնում ինչ-որ բաներից: Մարդը կարող է նոր մեքենա գնել, և արդեն մեկ շաբաթ անց այն հնաճ է թվում: Սա չփրկագնված մարմնի բնությունն է: Մարմնական մակարդակը շատ քիչ խորություն ունի. այն կարճատև է և վաղանցիկ: Այդ իսկ պատճառով, Աստված Իր բարությանը ասում է. «Ես չեմ հայտնվում Իմ ժողովրդին ֆիզիկապես: Ես հնարավորություն կտամ նրանց՝ հաղորդակցվել Ինձ հետ Իմ Յոգով, որպեսզի կարողանան իրապես ճանաչել Ինձ»: Աստված կարծես ասում է. «Ես հեռավոր կապ եմ պահպանելու նրանց հետ, ում սիրում եմ, որպեսզի նրանք կարողանան իրապես ճանաչել Իմ սիրտը»:

Որպես եկեղեցի՝ մենք Քրիստոսի Յարսնացուն ենք: Աստված մեզ պատրաստում է Իր հետ աներևակայելի ամուսնության: Նա թույլ է տալիս, որ ճանաչենք Իրեն ամենախորը (հոգևոր) մակարդակով, մինչև ֆիզիկական մակարդակով ճանաչելը: Ահա թե ինչու հետագայում Պողոսը գրեց. «Ուրեմն, այսուհետև մենք ոչ ոքի չգիտենք մարմնի կողմից, թեև Քրիստոսին էլ գիտեինք մարմնի կողմից, այլ հիմա այլևս չգիտենք» (Բ Կորնթ. 5.16): Մենք ճանաչում ենք Նրան Յոգով՝ կենդանի Աստծո Յոգով: Կար ժամանակ, երբ Քրիստոսը հայտնված էր մարմնով, բայց հիմա, քանի որ Նա այլևս ֆիզիկապես այս երկրի վրա չէ, մենք հնարավորություն ունենք ճանաչել Նրան Յոգով:

Եթե անտեսենք հաղորդությունը Յոգու հետ, մենք կգրկվենք Որդուն ճանաչելու հնարավորությունից: Յոգին քննում է ամեն ինչ Աստծո սրտում և մտքում, որպեսզի հայտնի մեզ Յիսուսին: Եթե ցանկանում եք խորը փոխհարաբերություններ ունենալ Աստծո հետ, դուք պետք է առաջ անցնեք այն մակերեսային գիտելիքից, որ ունեք Նրա մասին, և սկսեք բացահայտել Նրա ճշմարիտ ինքնությունը: Այս ճանապարհորդությունը հնարավոր է միայն Սուրբ Յոգու հետ հաղորդության միջոցով: Ահա թե ինչու մենք չենք կարող հարել ցանկացած ավանդույթի (մտքերի ընդունված ձևի) Սուրբ Յոգու մասին, որը հիմնված չէ Աստծո հավիտենական խոսքի վրա: Եթե մենք թույլ տանք, որ թյուրըմբռնումները, անձնական

նախապաշարմունքները կամ բացասական փորձառություններն աղճատեն մեր պատկերացումը Հոգու մասին, մենք չենք վայելի Աստծո փառավոր ներկայության խոստումը մեր կյանքերում: Մենք չենք կարող ճանաչել Աստծուն՝ առանց Նրա Հոգու:

Ես հավատում եմ, որ դուք կարող եք այնպիսի փոխհարաբերություններ ունենալ Հոգու հետ, որ կցանկանաք այն, ինչ Նա է ցանկանում, և կզգաք այն, ինչ Նա է զգում: Փոխհարաբերությունների ամենախորը՝ հոգևոր մակարդակը հասանելի է ձեզ: Այս մակարդակի վրա դուք կբացահայտեք այնպիսի մտերմություն ձեր Արարչի հետ, որի նմանը չկա: Այնուամենայնիվ, դուք պետք է ձգտեք ճանաչել Սուրբ Հոգուն, եթե պատրաստվում եք մտերմորեն հաղորդակցվել Նրա հետ: Ինչպե՞ս կարող եք ճանաչել Նրան. կարդալով Նրա Խոսքը և ժամանակ անցկացնելով Նրա ներկայության մեջ: Աստված ցանկանում է մոտենալ ձեզ: Դուք պետք է ընդամենը առաջին քայլն անեք դեպի Նա:

Մի պահ մտորե՛ք ստորև բերված հատվածի շուրջ և թույլ տվեք Հոգուն՝ աշխատանք կատարել ձեր սրտում: Դիմե՛ք Աստծուն՝ խնդրելով՝ հեռացնել ցանկացած մտածելակերպ (քող), որը թույլ չի տվել ձեզ՝ վերապրել Նրա ներկայությունը: Երբ այդ քողերը հեռացվեն, դուք կկարողանաք տեսնել Նրան՝ ինչպես երբևէ: Երբ նայեք Նրա դեմքին (որակյալ ժամանակ անցկացնեք Նրա հետ՝ որպես Նրա մտերիմ ընկեր), Նա կվերափոխի ձեզ Իր նմանությամբ: Ես կավարտեմ Պողոս առաքյալի հետևյալ խոսքերով.

«Բայց, երբ ինչ-որ մեկը դառնում է Տիրոջը, այդ քողը վերցվում է: Որովհետև Տերը՝ Հոգին է, և որտեղ Տիրոջ Հոգին է, այնտեղ ազատություն է: Այնպես որ, ում քողը հեռացվել է, կարող է տեսնել և արտացոլել Տիրոջ փառքը: Եվ Տերը, Ով Հոգին է, մեզ դարձնում է ավելի ու ավելի նման Իրեն, երբ մենք փոխվում ենք Նրա փառավոր պատկերով» (Բ Կորնթացիների 3.16-18, NLT):

## ԸՆԴՈՒՆԵՔ ՆՐԱՆ՝ ՈՐՊԵՍ ՁԵՐ ՈՒՍՈՒՑՉԻ

*«Դուք սրացել եք Սուրբ Հոգին, և Նա ապրում է ձեզանում, այնպես որ, դուք կարիք չունեք, որ որևէ մեկը սովորեցնի ձեզ, քե ինչն է ճշմարտությունը: Որովհետև Հոգին սովորեցնում է ձեզ այն ամենը, ինչի կարիքը ունեք, և այն, ինչ Նա սովորեցնում է, ճշմարտություն է. դա սուր չէ: Ուրեմն, ճիշտ այնպես, ինչպես Նա սովորեցրել է ձեզ, մնացեք շփման մեջ Քրիստոսի հետ»:*

(Ա Հովհաննես 2.27, NLT)

Սուրբ Հոգին բազմաթիվ դերեր է կատարում մեր կյանքում, բայց, հավանաբար, ամենամեծը ուսուցչի դերն է: Նա մշտապես ինչ-որ բան է սովորեցնում մեզ: Նա կատարյալ ծնող է, Ով մշտապես ապրում է մեր ներսում՝ առաջնորդելով և շտկելով մեզ Իր մեղմ, սիրող բնավորությամբ:

Սուրբ գիրքը՝ Հոգու անժամանակյա դասագիրքն է. Աստվածաշնչում գրված են Աստծո մտքերը: Աստծո պես մտածելու, խոսելու և վարվելու համար մեզ անհրաժեշտ է Նրա խոսքը և այն հասկանալու կարողությունը: Մեր ուսուցչի նպատակն է՝ առաջնորդել մեզ ամբողջ ճշմարտության մեջ, և Նա անում է դա՝ Աստվածաշնչից ճիշտ ժամանակին հայտնելով այն խոսքերի իմաստը, որոնց կարիքն ունենք: Հեղինակ և հովիվ Ֆրենսիս Ֆրենջիփեյնը պերճախոսաբար պնդում է.

Տիրոջ խոսքը Սուրբ Հոգու հետ միասին այն փոխադրամիջոցն է, որը տանում է դեպի վերափոխումը՝ Քրիստոսի պատկերով... խոսքը՝ Աստված է: Սուրբ գիրքը Աստված չէ, բայց այն Հոգին, որ փչում է այդ խոսքերից, Աստված է: Եվ այս Սուրբ Հոգուն պետք է պատվել որպես Աստծո: Այդ իսկ պատճառով, երբ փնտրում եք Տիրոջը... աղոթեք, որ չկարդաք խոսքը միայն ձեր մտքով: Փոխարենը՝ խնդրեք Սուրբ Հոգուն՝ խոսել ձեր սրտի հետ խոսքի միջոցով... Երբ խոնարհությամբ ծնկի եք գալիս Տիրոջ առջև, խոսքը պատվաստվում է ձեր անձի մեջ՝ դառնալով ձեր էության մասը (տես Հակոբ. 1.21)»<sup>1</sup>:

Կանգ առեք և ինքներդ հարցրեք. «Ինչպե՞ս եմ ես մոտենում Աստծո խոսքին: Արդյո՞ք հրավիրում եմ իմ Ուսուցչին՝ սովորեցնել ինձ: Արդյո՞ք ես ուշադրությամբ եմ կարդում խոսքը, կամ՝ արդյո՞ք ինչ-որ բաներ եմ ստանում խոսքից»: Իսկ հիմա հարցրեք Յոզուին. «Ի՞նչ կարող եմ այլ կերպ անել, որպեսզի խոսքը կենդանանա և դառնա իմ էության մասը»: Գրե՛ք և գործադրե՛ք այն, ինչ Նա հայտնում է:

---



---

Արդյո՞ք Աստծո հետ անցկացրած ժամանակը միակն է, երբ Յոզին սովորեցնում է: Ո՛չ: Նա միշտ է սովորեցնում, և եթե դուք զգայուն եք Նրա ձայնի հանդեպ, Նա կարող է ամեն քայլափոխին սովորեցնել ձեզ: Ֆրենչիփեյնն առաջարկում է.

«...Մշտապես նոթատետր և գրիչ ունեցեք ձեզ մոտ: ...Սենք կանչված ենք Նրա մեջ բնակվելու, ոչ թե Նրան երբեմն այցելելու համար: ...Դուք պետք է այնպիսի լսող ականջ զարգացնեք, որ Յոզին կարողանա խոսել ձեզ հետ ամենուր և ամեն ինչի մասին: Պատվե՛ք Նրան, և Նա կպատվի ձեզ»<sup>2</sup>:

Սա կարող է տարբեր ձևերով արտահայտվել յուրաքանչյուրի համար: Օգտագործե՛ք այն միջոցը, առարկան կամ սարքը, որն առավել հարմար է ձեզ: Կարևորն այն է, որ դուք լսեք, երբ Նա խոսում է, և հիշեք այն, ինչ Նա ասում է:

Ուշադրությամբ մտորե՛ք այս խոսքերի շուրջ: Ի՞նչ է հայտնում ձեզ Յոզին խոսքի մասին:

**Բ Տիմոթեոս 3.16,17, Բ Պետրոս 1.12-21**

---



---

**Երկրորդ Օրինաց 6.6, 11.18, Սաղմոս 119.9-11, Կողոսացիների 3.16**

---



---

**Սաղմոս 19.8, 119.105, 130 Առակաց 4.20-23, 6.20-23**

---

---

**Եբրայեցիների 4.12, Չակոբոս 1.21, Երեմիա 23.28,29**

---

---

*«Կանչիր Ինչ, և Ես կպարաստանեմ քեզ: Ես կպարունեմ քեզ սքանչելի և  
զարմանալի բաներ, որ ինքդ երբեք չէիր կարողանա հասկանալ»:*

— (Երեմիա 33.3, MSG)

## ՆՎԻՐՎԵՔ ՆՐԱՆ՝ ՈՐՊԵՍ ՏԻՐՈՋ

*«Հիտուը պատրասխանեց. «Ամենակարևոր պատվիրանը սա է. ...Տերը՝ մեր Աստված, մեկ և միակ Տերն է: Եվ դու պետք է սիրես Տիրոջը՝ քո Աստծուն, քո ամբողջ սրտով, քո ամբողջ անջով, քո ամբողջ մտքով և քո ամբողջ զորությունով»»:*

— (Մարկոս 12.29, NLT)

Տերը՝ Ով Հոգին է, ի սրտե սիրում է մեզ և ցանկանում է, որ մեր սերն ուղղված լինի միայն Իրեն: Նա չի ցանկանում, որ մեր սերը կամ ուշադրությունն ուղղված լինեն այս աշխարհին կամ ցանկացած բանի, որ այս աշխարհում է: Նա ասում է.

«Մի՛ սիրեք այս աշխարհի ճանապարհները: Մի՛ սիրեք այս աշխարհի բարիքները: Աշխարհի սերը ձեզնից քանոն-հեռացնում է Հոր հանդեպ սերը: Գրեթե ամեն ինչ, որ կատարվում է այս աշխարհում՝ ձեր կամքը կատարելու ցանկությունը, ամեն ինչ ձեզ համար ցանկանալը և կարևոր թվալու ցանկությունը, ոչ մի կապ չունի Հոր հետ: Դա պարզապես մեկուսացնում է ձեզ Նրանից: Աշխարհը և իր ամբողջ ցանկությունը, ցանկությունը, ցանկությունը մոտենում է իր վախճանին, բայց նա, ով կատարում է Աստծո կամքը, հաստատված է հավիտյան»:

— (Ա Հովհաննես 2.15-17, MSG)

**Կարդացե՛ք** սրան առնչվող սուրբգրային հատվածները. Մատթեոս 16.24-26, Տիտոս 2.12-14, Հակոբոս 4.4-6, Հովհաննես 15.18-21, Հռոմեացիների 12.2

**ԻՆՉԻՆ ԵՔ ԴՈՒՔ ՆՎԻՐՎԱԾ:** Անկեղծորեն քննեք ձեզ՝ հարց-  
նելով.

*Ո՞վ կամ ի՞նչն է ստանում իմ ժամանակի և ուշադրության մեծ մասը: Ինչո՞վ եմ զբաղվում ազատ ժամանակ:*

*Ո՞վ կամ ի՞նչ է ոգեշնչում ինձ: Արդյո՞ք տեխնոլոգիական նորությունները կամ նորաձևության միտումները պատշաճ տեղ են զբաղեցնում իմ կյանքում:*

---

---

*Ինչի՞ վրա եմ փող ծախսում:*

---

---

*Ինչի՞ մասին եմ ամենից շատ մտածում: Ինչի՞ մասին եմ հաճախ խոսում: Ինչի՞ համար եմ պարբերաբար աղոթում:*

---

---

---

Մեր խոսքերը հայտնում են, թե ինչին ենք նվիրված: Հիսուսն ասաց, որ մեր բերանից դուրս է գալիս այն, ինչով լի է մեր սիրտը (տե՛ս Ղուկ. 6.45):

Վերանայե՛ք ձեր պատասխանները: Հարցրե՛ք Սուրբ Հոգուն. «Արդյո՞ք կարիք ունեմ, որ փոխես իմ առաջնահերթությունները: Կա՞րդյոք ինչ-որ բան, որ կուռք է դարձել իմ կյանքում: Կա՞րդյոք ինչ-որ բան, ինչին ես ձգտում եմ ավելի շատ, քան Քեզ»: Ի՞նչ է Նա պատասխանում: Ինչպիսի՞ քայլերի է Նա դրդում ձեզ ձեռնարկել՝ ձեր նվիրվածությունը Իրեն վերադարձնելու համար:

---

---

---

Մտորե՛ք Աստծո խոսքերի շուրջ Մատթեոս 6.19-21-ում և Կողոսացիների 3.1-17-ում: Օգտագործե՛ք այս խոսքերը, որպեսզի *նվիրման աղոթք գրեք՝* խնդրելով Սուրբ Հոգուն, որ օգնի ձեզ հավատարիմ մնալ Տիրոջը՝ ձեր Աստծուն:

---

---

---

## ԱՍՏԻՃԱՆԱԲԱՐ ԱՃ՝ ՆՐԱ ՆՆՈՐՀՔՈՎ

*«Մենք կերպարանափոխվում ենք՝ ավելի նմանվելով Մեսիային. մեր կյանքերն աստիճանաբար ավելի պայծառ և ավելի գեղեցիկ են դառնում այն ընթացքում, երբ Աստված մուտք է գործում մեր կյանքերի մեջ, և մենք դառնում ենք Նրա նման»:*

— (Բ Կորնթացիների 3.18, MSG)

Խաչվելուց կարճ ժամանակ առաջ Հիսուսը մի բանալի խոսք ասաց Սուրբ Հոգու մասին. «Ես դեռ ասելու շատ բաներ ունեմ ձեզ, բայց դուք չեք կարող ընդունել դրանք հիմա: Բայց երբ Ընկերը զա՛ճճմարտության Հոգին, նա կբռնի ձեր ձեռքը և կառաջնորդի ձեզ ամբողջ ճճմարտության մեջ...» (Հովհ. 16.12,13, MSG):

Հիսուսն ամենագետ է. Նա կարող էր խոսել Իր աշակերտների հետ տարբեր ճճմարտությունների մասին, թեև գիտեր, որ նրանք դեռ չէին կարող հասկանալ Իր ասածները: Նրանց ժամանակ էր հարկավոր՝ հոգևորապես աճելու համար: Երբ Նա մահացավ, հարություն առավ և Երկինք համբարձվեց, Հայրն ուղարկեց Իր Հոգուն՝ օգնելու մեզ, որ աստիճանաբար աճենք Նրա շնորհքով:

Արդյո՞ք լավ ծնողը կակնկալի, որ իր նորածին երեխան հասկանա, թե ինչ է բազմապատկումը, կամ իր երեխան, որ նոր է քայլել սովորում, կարողանա հարկային տեղեկանք լրացնել: Ո՛չ: Նմանապես, Սուրբ Հոգին սպասում է, մինչև մենք բավականաչափ հասունանանք՝ հասկանալու համար այն ճճմարտությունը, որ Նա պետք է ասի մեզ: Նա ոչ միայն առաջնորդում է մեզ ամեն ճճմարտության մեջ Սուրբ գրքի մասին, այլ նույնպես առաջնորդում է դեպի ճճմարտությունը մեր, մեր երեխաների, մեր առողջության, մեր հանգամանքների և շատ ավելիի մասին:

Համաձայն Աստծո խոսքի՝ մենք հոգևորապես աճում ենք (դառնում ենք Հիսուսի նման)՝ աճելով հավատքի և փառքի մեկ մակարդակից մյուսը<sup>3</sup>: Մենք մեր մասն ունենք այս գործընթացի



մեջ, ինչպես և Սուրբ Հոգին՝ իրենը: Ուշադրությամբ մտորե՛ք Փիլիպեցիների 1.6, 2.12,13, Ա Թեսաղոնիկեցիների 5.23,24 և Եբրայեցիների 13.20,21 խոսքերի շուրջ: Ի՞նչ է հայտնում ձեզ Հոգին այս խոսքերում Քրիստոսի մեջ հոգևորապես աճելու մասին: Արդյո՞ք կրկնվող միտք եք նկատում այս խոսքերում:

---

---

---

---

---

---

---

---

**Չարիզ Սփերջենը** Անգլիայի ամենահայտնի քարոզիչն էր տասնիններորդ դարի երկրորդ կեսին: Նա պտղաբեր գրող էր, գրում էր բազմաթիվ թեմաներով, ներառյալ՝ Սուրբ Հոգու և հոգևոր աճի մասին: Սփերջենն ասել է.

«Մենք վստահում ենք Հիսուսին այն, ինչ ինքներս չենք կարող անել: Եթե մեր սեփական ուժերը բավական լինեին, ինչո՞ւ պետք է սպասեինք Նրանից: Մեր գործը հավատալն է, Տիրոջ [Սուրբ Հոգու] գործը՝ մեզ նորովի ստեղծելը: Նա մեր փոխարեն չի հավատալու, ոչ էլ մենք Նրա փոխարեն պետք է կատարենք վերածննդի աշխատանքը: Մեզ համար բավական է հնազանդվել այս շնորհալի պատվիրանին: Տերն է, որ ներգործելու է մեր մեջ վերստին ծնունդը»<sup>4</sup>:

Միգուցե մտածեք. «*Ես պետք է հոգևորապես ավելի հասուն լինեմ*»: Տեղի մի՛ տվեք այդ մտքին. այն ճիշտ չէ: Դուք ընդամենը դատապարտություն կզգաք և կկորցնեք ձեր հոգևոր ուժերը: Կանգ առեք և աղոթե՛ք. «Սուրբ Հոգի, ըստ Քեզ, որտե՞ղ եմ ես հիմա (ո՞րն է իմ հոգևոր հասունության մակարդակը)»: Ի՞նչ է Նա ասում ձեզ:

---

---

---

---

---

<sup>4</sup>Դուք պետք է տեսնեք ձեզ այնպես, ինչպես Հոգին է տեսնում: Խնդրե՛ք Նրան՝ շնորհք տալ ձեզ, որպեսզի ընդունեք ձեր ներկա հոգևոր վիճակը և շարունակեք ձեր աճը:

Արդյո՞ք խելահեղորեն փորձել եք փոխել ինքներդ ձեզ: Եթե այո, ապա ինչպե՞ս: Ի՞նչն եք հիմա այլ կերպ տեսնում:

---

---

---

---

## ԱՐԺԵՎՈՐԵ՛Ք ԱՅՆ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ, ՈՐ ՆԱ ՍՏԵՂԾՈՒՄ Է

*«Սիրե՛ք չեր ինքնության կենտրոնից. մի՛ կեղծեք: ... Եղե՛ք լավ ընկերներ,  
ովքեր խորապես սիրում են. սովորե՛ք լինել երկրորդական դերում»:*

— (Հռոմեացիների 12.9,10, MSG)

Մենք ստեղծվել ենք, որպեսզի շփվենք Յոր և այլ մարդկանց հետ: Ինչպիսի՞ն կլիներ ձեր կյանքը՝ առանց հաղորդակցության: Եթե ձեր կյանքից հեռացնեիք բոլոր փոխհարաբերությունները, որոնք իմաստավորում են ձեր կյանքը, ի՞նչ կունենայիք: Միայնակ, դատարկ կյանք:

*Փա՛ռք Աստծուն փոխհարաբերությունների համար:* Աստվածապաշտ ընկերն անգնահատելի է: Լավ ընկերը ձևավորում է մեր միտքը, զգացմունքները և հոգին, ինչպես որ երկաթը սրում է երկաթը: Լավ ընկերը սիրով ցույց է տալիս սխալը և անհրաժեշտության դեպքում շտկում է: Լավ ընկերը տոնում է ձեր հաջողությունները և խրախուսում է կյանքի դժվարություններով անցնելու համար:

*«Ավելի լավ է քեզ համար, որ ընկեր ունենաս, քան լիովին մենակ լինես,  
որովհետև այդ ժամանակ դու ավելի մեծ հաճույք կստանաս նրանից,  
ինչ վստահում ես: Եթե ընկնես, ընկերդ կարող է օգնել և բարձրացնել քեզ:  
Բայց եթե ընկնես և կողքիդ ընկեր չունենաս, ուրեմն իսկապես  
փորձանքի մեջ ես»:*

— (Ժողովող 4.9,10, CEV)

Մենք ինացանք, որ կա փոխհարաբերությունների երեք մակարդակ՝ ֆիզիկական, շնչավոր և հոգևոր: Ինչպե՞ս է գիտելիքն այս մասին օգնում ձեզ, որպեսզի հասկանաք ներկա փոխհարաբերությունները: Ո՞ւն հետ շփվելիս է այս գիտելիքն առավել օգտակար: Ինչո՞ւ:

---

---

---

---

---

---

---

---

Ամենախորը, ամենաիմաստալից շփումը, որ կարող եք ունենալ մարդկանց հետ, հոգևոր մակարդակի վրա է: Նկարագրե՛ք այդ տեսակի շփումը: Ինչպիսի՞ առավելություններ ունի հոգևոր մակարդակի շփումը ֆիզիկական կամ շնչավոր մակարդակներից:

---

---

---

---

---

---

---

---

Կա՞նք արդյոք մարդիկ, ում հետ ցանկանում եք ավելի խորը փոխհարաբերություններ զարգացնել: Կա՞նք առեք և աղոթե՛ք. «Սուրբ Հոգի, ի՞նչ կարող եմ անել, որպեսզի ավելի խորը, հոգևոր փոխհարաբերություններ ունենամ այն մարդկանց հետ, ում բերել ես իմ կյանքում»: Լո՛ւմ եղեք և լսե՛ք: Գրե՛ք այն, ինչ Նա ասում է ձեզ:

---

---

---

---

---

---

---

---

**Աղոթք աստվածային կապերի համար.**

*Սուրբ Հոգի, շնորհի՛ր ինձ աստվածային կապեր: Ինչպես Հովնաթանն էր Դավթի համար, ինչպես Հռութը՝ Նոյեմիի, և ինչպես Հովհաննեսը՝ Հիսուսի, այնպես էլ կապեր ստեղծի՛ր իմ և այն մարդկանց միջև, ում հետ Դու ցանկանում ես, որ շփվեմ: Տուր ինձ Քո շնորհքը՝ առողջ ընկերություններ զարգացնելու համար, որոնց թվում կլինեն նաև ընկերություններ հոգևոր մակարդակի վրա, Հիսուսի անունով, ամեն:*

**Հետագա ուսումնասիրության համար...**  
Առակաց 13.20, 17.9, 17, 27.6, 10, 17, Հովհաննես 15.13, Ա Հովհաննես 1.7, Ա Թագավորաց 18.1-4

## ՆՓՎԵՔ ԱՍՏԾՈՒ ՀԵՏ ԱՄԵՆԱԽՈՐԸ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՎՐԱ

«...Սովորի՞ր մտերմորեն ճանաչել քո նախնիների Աստծուն:  
Երկրպագի՞ր և ծառայի՞ր Նրան քո ամբողջ սրբով և հոժար մտքով»:

— (Ա Մնացորդաց 28.9, NLT)

Աստծո ամենամեծ ձգտումը՝ ձեզ մտերմորեն ճանաչելն է: Նա առաջարկում է ձեր ամբողջ կյանքն իր հետ անցկացնել: Մի՞թե կարող է ավելի լավ առաջարկ լինել: Պողոսն ասաց. «Մնացած ամեն ինչն անպետք է՝ իմ Տեր Քրիստոս Չիսուսին ճանաչելու անսահման արժեքի համեմատ: Հանուն Նրա ես հրաժարվել եմ մնացած ամեն ինչից՝ այդ ամենը աղբ համարելով, որպեսզի կարողանամ շահել Քրիստոսին» (Փիլիպեցիների 3.8, NLT):

*Հիսուս Քրիստոսի խորությունները ճանաչելը՝ ժանճա Գիյոնի* փափագն էր: Այս առաքելությունն այն աստիճան կարևոր էր նրա համար, որ նա մի գիրք գրեց՝ հենց այդպես վերնագրելով: Տասնյոթերորդ դարում ապրող այս ֆրանսուհին ազդեցություն թողեց այնպիսի հավատացյալների կյանքերում, ինչպիսիք են Ջոն Վեսլին, Հադսոն Թեյլորը և Վոչման Նին: Նա գրում է մտերմության մասին.

«Թույլ տվեք հարցնել ձեզ... արդյո՞ք ցանկանում եք խորապես ճանաչել Տիրոջը: Աստված *հնարավոր է դարձրել* նման վերապրումը, նման ընթացքը ձեզ համար: Նա հնարավոր է դարձրել սա այն շնորհքով, որ տվել է իր բոլոր *փրկված* զավակներին: Նա արել է սա Սուրբ Հոգու միջոցով: Ուրեմն, ինչպե՞ս կարող եք գալ Տիրոջ մոտ՝ Նրան խորապես ճանաչելու համար: Բանալին՝ աղոթքն է»<sup>5</sup>:

Ինչպե՞ս կնկարագրեիք աղոթքը՝ որպես Աստծուն մտերմորեն ճանաչելու միջոց: Ուշադրությամբ կարդացե՛ք Հիսուսի աղոթքը Մատթեոս 6.5-15-ում: Ի՞նչ կարող եք սովորել Նրանից և կիրառել ձեր կյանքում:

Ինչպես իմացանք, երբ մենք վերստին ծնվում ենք, Սուրբ Յոզիմ բնակություն է հաստատում մեր հոգում: Այնպես որ, Յոզիմ հաղորդակցվում է մեզ հետ մեր հոգու միջոցով: Ժամնա Գիյոնը շարունակում է.

«Դուք կարող եք գտնել Տիրոջը միայն ձեր հոգու խորքում՝ ձեր էության ծածուկ անկյուններում, ձեր Սրբություն Սրբոցում. ահա թե որտեղ է Նա բնակվում: Մի անգամ Տերը խոստացավ, որ կգա և կբնակվի ձեզանում (տե՛ս Յովհ. 14.23): Նա խոստացավ, որ կհանդիպի նրանց, ովքեր երկրպագում են Իրեն և կատարում Իր կամքը այդտեղ: Տերը *կհանդիպի* ձեզ ձեր հոգում: Յենց որ ձեր սիրտը ներքուստ դառնա դեպի Տերը, դուք կզգաք Նրա ներկայությունը»<sup>6</sup>:

Ամենամտերիմ միջոցը, որով կարող ենք ճանաչել Աստծուն, Նրա Յոզով է՝ Նրա Սուրբ Յոզով, Ում Նա տվել է մեզ (տե՛ս Ա Կորնթ. 2.9-12): Կանգ առեք և աղոթեք. «Սուրբ Յոզի, արդյո՞ք իմ ներսում կան որևէ թյուրըմբռնումներ, բացասական փորձառություններ կամ անձնական նախապաշարմունքներ Քո վերաբերյալ, որոնք աղավաղում են իմ պատկերացումը Քո մասին: Յանդարտվեք և լսեք: Խնդրե՛ք Նրան՝ հեռացնել ցանկացած մտածելակերպ, որը ետ է պահում ձեզ Նրա ներկայությունից: Գրե՛ք այն, ինչ Նա հայտնում է:

Ստորեք այս ճշմարտության շուրջ. խնդրե՛ք Սուրբ Յոզուն՝ հայտնել այս հատվածի նշանակությունը ձեր սրտում:

*«Բայց երբ ինչ-որ մեկը դառնում է Տիրոջը, այդ քողը վերցվում է: Որովհետև Տերը՝ Հոգին է, և որտեղ Տիրոջ Հոգին է, այնտեղ ազատություն է: Այնպես որ, ում քողը հեռացվել է, կարող է տեսնել և արտացոլել Տիրոջ փառքը: Եվ Տերը, Ով Հոգին է, դարձնում է մեզ ավելի ու ավելի Իր նման, երբ մենք փոխվում ենք Նրա փառավոր պատկերով»:*

— (Բ Կորնթացիների 3.16-18, NLT)

# ՀԱՐՑԵՐ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

Եթե դուք ուսումնասիրում եք «Սուրբ Յոզի. Ներածություն» գիրքը՝ որպես «Մեսիաններ Չավաքածու»-ի ամբողջական դասընթացի մաս, խնդրում ենք՝ դիտե՛ք ուսումնական տեսանյութ 3-ը:

- 1 | Հիսուսն ասաց, որ փարիսեցիները կարևորում էին մարդկանց ավանդույթներն ավելի, քան Աստծո խոսքի հեղինակությունը: Ի՞նչ են մարդկանց ավանդույթները, և ինչո՞ւ են դրանք վնասում մեր փոխհարաբերություններն Արարչի հետ: Բերե՛ք առնվազն մեկ ժամանակակից օրինակ այն մասին, թե ինչպես են մարդկանց ավանդույթներն ավելի կարևորվում Աստծո խոսքի ճշմարտությունից:
- 2 | Սուրբ Յոզին փափագում է լինել մեր լավագույն ընկերը և նախանձավոր է մեզ հետ մտերմորեն շփվելու համար: Կան բաներ այս աշխարհում, որոնք գողացել են Եկեղեցու (հավատացյալների) ուշադրությունը և սերը Յոզուց: Ձեր կարծիքով, որո՞նք են դրանք: Ի՞նչ կկատարվի, եթե մենք սիրախաղեր անենք այս աշխարհի հետ՝ ձգտելով աշխարհի հաճույքներին, ունեցվածքին և կարգավիճակին ավելի, քան Յոզու հետ հաղորդությամբ:
- 3 | Ի՞նչ է հայտնում Հիսուսը Թովմաս առաքյալին Հովհաննես 20.29-ում: Ինչպե՞ս է այս ճշմարտությունը կապակցվում Պողոս առաքյալի խոսքերի հետ Բ Կորնթացիների 5.16-ում: Համաձայն այս ճշմարտության՝ ինչո՞վ է մեր մտերիմ շփումը Տիրոջ հետ ավելի գերազանց:
- 4 | Անվանե՛ք և նկարագրե՛ք *փոխհարաբերությունների երեք մակարդակները*, որ ունենք մարդկանց հետ: Ո՞րն է ամենախորը մակարդակը և ինչո՞ւ: Ինչպե՞ս մենք կարող ենք կապ հաստատել մարդկանց հետ այս ամենախորը մակարդակով:
- 5 | Մեզ աներևակայելի պարզև է տրվել Սուրբ Յոզու մեջ՝ Աստծուն մտերմորեն ճանաչելու կարողությունը: Ուշադրու-

թյամբ կարդացե՛ք Ա Կորնթացիների 2.11-16-ը: Ի՞նչ է հայտնում Սուրբ Չոզին այս հատվածում՝ Աստծուն ճշմարտապես ճանաչելու մասին:

6 | Պետրոսը և մյուս աշակերտները եզակի փորձառություն ունեին. նրանք անձամբ շփվել էին Չիսուսի հետ: Պողոսը չուներ այդ փորձառությունը, սակայն նա նույնպես գորավոր կերպով օգտագործվեց Աստծո կողմից: Ինչպե՞ս էր դա հնարավոր:

**Կարդացե՛ք ավելին.** Չովհաննես 20.29, Բ Կորնթացիների 5.16 և Բ Պետրոս 3.15,16

7 | Ինչպիսի՞ն կլինեն մեր և Աստծո փոխհարաբերությունները, եթե մենք չձգտենք հաղորդություն ունենալ Սուրբ Չոզու հետ: Եթե կամենում եք, կիսվեք ձեր խմբի հետ որոշ գործնական միջոցներով, որոնցով դուք շփվել եք Սուրբ Չոզու հետ և վերապրել եք Նրա զարմանալի ընկերությունը:





## ԳԼԽԻ ԱՄՓՈՓՈՒՄ

- Եթե ցանկանում եմք խորը, մտերիմ փոխհարաբերություն ունենալ Աստծո հետ, մենք պետք է ճանաչենք Նրան՝ Նրա Հոգով:
- Միայն Հոգին գիտի, և միայն Նա է հայտնում Աստծո սրտի մտքերը, զգացմունքները և նպատակները:
- Մեզ տրվել է Աստծո Հոգին. Նա մեծագույն Ուսուցիչն է, Ով առաջնորդում է մեզ ամբողջ ճշմարտության մեջ:
- Սիրել այս աշխարհը (եսասիրաբար ձգտել դիրքի և հաճույքների) նշանակում է՝ լինել Աստծո թշնամին:
- Սուրբ Հոգին ջենտլմենն է. Նա չի հարկադրի մեզ Իր կամքը կամ ընկերությունը:
- Փոխհարաբերությունների երեք մակարդակները հետևյալն են. ֆիզիկականը (ամենացածրը և ամենամակերեսայինը), շնչավորը (կամ՝ անձնականը) և հոգևորը (ամենախորը և ամենամտերիմը):
- Մենք կարող ենք խորապես և մտերմորեն ճանաչել Աստծուն Նրա Հոգու միջոցով, քան մարմնավորված Հիսուսի հետ ֆիզիկապես շփվելով:



# ՅԻՍՈՒՄԻ անուհը

Ճեր կենտրոնացուհը, փափազը և նպատակը՝ Ավետարանն է






# ՍՈՎՈՐԵՑՆԵԼ

իրահանգել, խրատել, մարզել, փոխանցել կամ ցուցադրել





Մեր հանձնարարականն է՝  
փոխանցել կյանքեր փոխող


ԵՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ



# ՄԻ ԶՈՑՆԵՐ

Ճարտարապետական ճանաչումը ընկերությունում և ընկերությունում թափանցիկության և արդյունավետության համար:





իսկել, կապ հաստատել,  
տարաբար լուրջ և լուրջ փոխանցել

# ԴԳՂՈՂԷ



# ԴԴԴՑ ՈՄԵՍ

Առաջադիմացի գրականության արժեքների փոխանակումը, ազգային արժեքների և մշակութային ժառանգության պահպանումը









Ուրեմն զնացե՛ք, բոլոր ազգերն աշակերտե՛ք...  
 նրանց սովորեցնելով, որ ամեն ինչ,  
 որ ձեզ պատվիրեցի, պահեն:  
 Մատթեոս 28.19,20

ԵՂՊԻՄԻՏԻԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



Ինացեք ավելին՝ @ [www.CloudLibrary.org](http://www.CloudLibrary.org)

## Զորացված՝ Հոգով

### Օր 1

**Մ**տովի պատկերացրեք միջնադարյան թագավորի: Փորձեք տեսնել այն միջավայրը, որտեղ նա ապրում էր. անրոցը և աշտարակները, ասպետներին և արքունական տիկնանց, նրա պատերազմները, նրա թագավորությունը և փառքը: Հաճախ համարվում էր, որ թագավորի դիրքը և տոհմը սահմանված էին Աստծո կողմից, այնպես որ ենթակաները մեծ երկյուղածություն էին տածում թագավորների հանդեպ, և նրանք ապրում էին հարստության մեջ: Թագավորի խոսքը՝ օրենք էր. նրա որոշումները վերջնական էին: Լավ թագավորը հասկանում էր, որ պարտավոր էր պաշտպանել իր թագավորության սահմաններում ապրող մարդկանց: Նա նույնպես պետք է պաշտպաներ թագավորության շահերը՝ ընդլայնելով իր երկրի սահմանները և ձեռք բերելով հավելյալ ռեսուրսներ:

Այս պաշտոնը անասելի պատասխանատվություն էր ենթադրում և, հետևաբար, թագավորին տրվում էր հսկայական, իսկ երբեմն, նույնիսկ, լիակատար իշխանություն: Հիշեք՝ ես չեմ խոսում ձևական ղեկավարների մասին (որոնք բնորոշ են մեր ժամանակաշրջանին, երբ ժողովրդավարական և հանրապետական համակարգերը կառավարության ամենատարածված ձևերն են): Ես խոսում եմ բացարձակ մենիշխանության մասին: Այժմ պատկերացրեք, որ նման թագավորը մերժում է այն իշխանությունը, որը տրվել է իր դիրքի հետ, կամ լիովին անտեղյակ է այդ մասին: Ի՞նչ կկատարվի նրա թագավորության հետ: Շուտով թշնամիները կգրավեն երկիրը, կստրկացնեն բնակիչներին և կտիրանան երկրի բոլոր ռեսուրսներին: Բավական չէ, որ թագավորը պարզապես զբաղեցնի իր դիրքը (այսինքն՝ ընդամենը շքեղ կյանք վայելի իր պալատում): Նա պետք է կատարի *թագավորի պարտականությունները*, որոնք հնարավոր է իրականացնել միայն *իր զբաղեցրած դիրքին հատուկ իշխանությամբ*: Թագավորի զբաղեցրած դիրքն անարդյունավետ է, եթե նա չի օգտագործում այն իշխանությունը, որը տրվել է իրեն այդ դիրքի հետ:

Որպես Աստծո զավակներ՝ մենք դարձել ենք ժառանգակիցներ Քրիստոսի հետ: Հռոմեացիների թղթում գրված է. «Եվ քանի որ մենք Նրա զավակներն ենք, մենք Նրա ժառանգներն ենք: Իրականում, մենք Աստծո փառքի ժառանգներն ենք՝ *Քրիստոսի հետ միասին*» (Հռոմ. 8.17, NLT): Այս դիրքի մասին պարզորեն գրված է նաև Եփեսացիների 2.6-ում. «[Աստված] Նրա հետ մեզ հարություն տվեց և Նրա հետ երկնավորներում նստեցրեց՝ *Քրիստոս Հիսուսում*»: Մենք նոր դիրք ենք զբաղեցրել Քրիստոսի մեջ և Նրա միջոցով: Մենք այլևս այս աշխարհի զավակները չենք, այլ՝ թագավորական ընտանիքի անդամներ և ժառանգներ՝ Երկնքի թագավորության մեջ: Որպես այս թագավորության ժառանգներ՝ մենք պատասխանատու ենք մեր Տիրոջ առաքելությունն իրականացնելու համար: Նրա նվաճած տարածքները և Նրա թագավորությունը դարձել են մերը, որովհետև մենք որդեգրվեցինք՝ ընդգրկվելով Նրա տոհմի մեջ: Ինչպիսիք ցնցող ճշմարտություն: Բայց ինչպես թագավորը մեր օրինակի մեջ, եթե մենք ցանկանում ենք արդյունավետ լինել այն դիրքում, որ ունենք Քրիստոսում, մենք պետք է հայտնաբերենք և գործադրենք այն իշխանությունը, որը տրվել է այդ դիրքի հետ: Այս գլխում կուսումնասիրենք, թե ինչով է Աստված զորացրել մեզ, որպեսզի կատարենք մեր դերը՝ Նրա թագավորությունը տարածելու մեջ:

Պետրոսը հայտարարեց.

«Դուք թագավորական քահանաներ եք, սուրբ ազգ, Աստծո սեփականությունը: Որպես արդյունք՝ դուք կարող եք ցույց տալ ուրիշներին Աստծո բարությունը, որովհետև Նա կանչեց ձեզ խավարից Իր հրաշալի լույսի մեջ» (Ա Պետրոս 2.9, NLT):

Մինչև շարունակելը, կարևոր է նշել հետևյալը. դիրքը մշտապես նախորդում է զորությանը: Մենք պետք է լինենք Քրիստոսի մեջ, մինչև կկարողանանք որևէ բան անել Նրա թագավորության համար:

## Այն զորությունը, որն անհրաժեշտ է մեզ

«Եվ նրանց միասին ժողովված ժամանակ պատվեր էր տալիս՝ Երուսաղմից չհեռանալ, այլ սպասել Հոր ավետիքին, որ ասաց՝ Ինձնից լսեցիք: Որովհետև Հովհաննեսը հիրավի ջրով մկրտեց, բայց դուք Սուրբ Հոգով կմկրտվեք, ոչ թե շատ օրեր սրանից հետո» (Գործք 1.4,5):



Հիսուսը *չառաջարկեց* աշակերտներին՝ սպասել Խոստմանը, և ոչ էլ *խորհուրդ տվեց*, որ հետևեն Իր հրահանգին: Փոխարենը՝ Նա «*պատվեր էր տալիս նրանց՝ Երուսաղմից չհեռանալ*», մինչև Խոստման գալը: Հիսուսն ստիպված էր այդ աստիճան կարևորել Իր հրահանգը, որովհետև Հոգու զորությունն էապես կարևոր էր Աստծո թագավորության ամբողջ գործի համար: Նա գիտեր, որ աշակերտներն Իր հարության Բարի լուրը պատմելու մեծ ցանկություն ունեին, և միգուցե չհամբերեին՝ սպասելով Սուրբ Հոգու խոստմանը: Գործք առաքելոցի 1.3-ում տեսնում ենք, որ նրանք օրեր անցկացրին Հիսուսի հետ՝ լսելով, թե ինչպես էր Նա սովորեցնում Աստծո թագավորության մասին: Աստվածաշունչը պնդում է, որ առաքյալներն ստացան Նրա հարության «անհերքելի ապացույցները» (Գործք 1.3, NKJV): Կարիք չկար համոզել նրանց, որ Հիսուսի հարությունն իրական էր, որովհետև նրանք անձամբ ականատես եղան, թե ինչպես Քրիստոսը հաղթեց մահը: Այլ խոսքով՝ նրանք պատրաստ էին գործի անցնել:

Բայց Հիսուսը նայեց նրանց և ասաց. «Մի՛ սկսեք ձեր ծառայությունը: Մի՛ սկսեք աշխարհով մեկ քարոզել Ավետարանը, ո՛չ էլ եկեղեցիներ սկսեք, մինչև չհազնեք Հոգու զորությունը» (Ղուկ. 24.49, հեղինակի բառափոխումը): Համաձայն Աստծո Խոսքի՝ ես հավատում եմ, որ Հիսուսը հանձնարարեց սա գրեթե հինգ հարյուր մարդու (տե՛ս Ա Կորնթ. 15.6): Բայց Գործք 1.15-ում տեսնում ենք, որ մարդկանց քանակը վերնատանը կրճատվել էր՝ հասնելով հարյուր քսանի: Ի՞նչ կատարվեց մնացած երեք հարյուր ութսունի հետ: Անձամբ ես հավատում եմ, որ ամեն օր ավելի շատ մարդիկ էին հեռանում, մինչև որ հինգ հարյուրից մնացին ընդամենը հարյուր քսանը: Միգուցե այն երեք հարյուր ութսունը, ովքեր հեռացան, մտածում էին. «*Եկեք վերադառնանք ժողովարաններ, եկեղեցիներ սկսենք և պատմենք Հիսուսի հարության հրաշալի լուրը: Ի՛ վերջո, ծիշտ չէ վատնել նույնիսկ մեկ օր՝ չպատմելով այս Բարի լուրը*»: Միայն հարյուր քսանը պատրաստակամորեն սպասեցին, ինչպես որ Տերը պատվիրել էր:

Այժմ դուք կարող եք մտածել. «*Այո, Ձոն, իհարկե՛ նրանք պետք է սպասեին Սուրբ Հոգուն: Նրանք դեռ չէին ստացել Սուրբ Հոգին: Այսօր այդպես չէ, որովհետև մենք ստանում ենք Սուրբ Հոգին, երբ փրկվում ենք*»:

Կարդացե՛ք Յովհաննես 20.21,22-ը.

«Խաղաղություն ձեզ, ինչպես Իմ Հայրն Ինձ ուղարկեց, ես էլ ձեզ եմ ուղարկում»: Եվ սա ասելով՝ փչեց նրանց վրա. «Առե՛ք Սուրբ Հոգին»:

Հիսուսը փչեց աշակերտների վրա և ասաց. «Առե՛ք Սուրբ Հոգին»: Հունարենում «առեք» բառը նշանակում է՝ «ստանալ անմիջապես կամ հենց հիմա»<sup>1</sup>: Սա մի բանի նախանշան չէր, որը դեռ պետք է տեղի ունենար: Աշակերտներն իսկապես *ստացան* Սուրբ Հոգին, մինչև որ Հիսուսը համբարձվեց Երկինք: Բայց նրանք չէին հագել զորությունը մինչև Հոգով *լցվելը*, որը տեղի ունեցավ Պենտեկոստի օրը:

### Պենտեկոստի օրը

«Եվ երբ որ Պենտեկոստի օրերը լրացան, ամենքը միաբան մեկտեղ էին: Եվ հանկարծակի Երկնքից մի հնչյուն եղավ՝ սաստիկ փչող քամու պես, և լցրեց ամբողջ տունը, ուր նստած էին: Եվ երևացին նրանց բաժանված լեզուներ, ինչպես կրակից, և նստեցին նրանցից ամեն մեկի վրա: Եվ ամենքը Սուրբ Հոգով *լցվեցին*, և սկսեցին ուրիշ լեզուներով խոսել, ինչպես որ Հոգին նրանց խոսել էր տալիս» (Գործք 2.1-4):

Ես գիտեմ, որ մեզնից շատերը կիրակնօրյա դպրոցի դասերի ժամանակ տեսել են այս իրադարձությունը նկարագրող պատկերները: Սովորաբար, մեկտեղ հավաքված հավատացյալների գլխավերևում փոքրիկ կրակե լեզուներ են պատկերված: Կարելի է ասել, որ սա լավագույնս չի ներկայացնում տեղի ունեցածը: Հին կտակարանում կրակը հաճախ խորհրդանշում է Աստծո ներկայությունը: Գրելով «Լեզուներ՝ *ինչպես կրակից*», հեղինակը նկարագրում է Աստծո ներկայության դրսևորումը: Հիսուսի հետևորդները՝ թե՛ տղամարդիկ, և թե՛ կանայք, կլանվել էին Աստծո ներկայությամբ կամ մկրտվել էին Աստծո ներկայության մեջ: Այս հայտնված ներկայությունը նույնպես դրսևորվեց «սաստիկ փչող քամիով»: Ինչպես ասացինք առաջին գլխում, Սուրբ Հոգին «սաստիկ փչող քամի» չէ. Նա Անձ է: Այնուամենայնիվ, Նրա ժամանումը վերնատուն դրսևորվեց սաստիկ փչող քամիով:

Այն բառը, որը Գործք 2.4-ում թարգմանվել է որպես «լցվեցին», բառացիորեն նշանակում է «հազեցան»<sup>2</sup>: *Հազեցնել* բառը սահմանվում է որպես «լրացնել չափից ավելի»: Վերնատան ներկաները *չափից ավելի* լցվեցին Սուրբ Հոգով: Բոլորը վերապրեցին Աստծո դրսևորված ներկայությունն ավելի մեծ չափով: Կրակի և քանու դրսևորումների հետ մեկտեղ, կար Սուրբ Հոգով լցվելու ևս մեկ նշան. հավատացյալներն սկսեցին խոսել այլ լեզուներով:

## Օր 2

### Ինչո՞ւ լեզուներ

«Լեզու» բառն այս դեպքում պարզապես նշանակում է՝ լեզու, որով խոսում են: Եթե ես Իսպանիայում լինեի և հանդիպեի մեկին, ով ակնհայտորեն իսպաներեն չէր խոսում, ես կարող էի հարցնել նրան. «Ո՞րն է ձեր մայրենի լեզուն»: Մյուս կողմից, եթե հանդիպեի ինչ-որ մեկին, ով անգլերեն էր խոսում, կարիք չէր լինի հարցնել նրա մայրենի լեզվի մասին. ես կհասկանայի նրան, քանի որ անգլերենը իմ մայրենի լեզուն է: Այդ իսկ պատճառով, անգլերենը «հայտնի» լեզու է ինձ համար, մինչդեռ ես կարող էի «անհայտ» համարել մյուս լեզուն: Մի փոքր ուշ ավելի մանրամասն կխոսենք այս մասին:

Պենտեկոստեի օրը Երուսաղեմում տարբեր երկրներից հրեաներ էին հավաքվել՝ կրոնական տոնակատարության համար: Այդ հրեաներն ապրում էին տարբեր երկրներում և տարածաշրջաններում, և այդ պատճառով բազմաթիվ «մայրենի լեզուներ» ունեին:

«Եվ Երուսաղեմում բնակված էին հրեաներ՝ աստվածավախ մարդիկ երկնքի տակի ամեն ազգերից: Եվ երբ որ այս ծայնը եղավ, բազմությունը մեկտեղ կիտվեց, որովհետև ամեն մեկը լսում էր նրանց, որ իր լեզվով խոսում էին: Եվ ամենքը հիանում էին, զարմանում և իրար ասում. «Չէ՞ որ ահա սրանք ամենքը, որ խոսում են, գալիլեացի են: Եվ ինչպե՞ս մենք ամեն մեկս մեր լեզվով լսում ենք, որ նրանում ծնված ենք»» (Գործք 2.5-8):

Ուշադրություն դարձրեք. Աստվածաշունչը պնդում է, որ «երբ այս ծայնը եղավ, բազմությունը մեկտեղ կիտվեց»: Այն շատերին

գրավեց դեպի լեզուներով խոսող աշակերտները: Բազմությունը ցնցված էր, որ գալիլեացիները (որոնցից շատերը անուսում և անկիրթ մարդիկ էին համարվում) խոսում էին տարբեր լեզուներով: Աստծո Յոզուսի աշակերտները նշան էր նրանց համար, ովքեր դեռ Յիսուսի հետևորդները չէին:

«...լսում ենք, որ նրանք մեր լեզուներով Աստծո մեծամեծ բաները խոսում են»: Եվ հիանում էին ամենքը և զարմանում, և մեկը մյուսին ասում էր. «Սա ի՞նչ պիտի լինի» (Գործք 2.11,12):

Յոզուս այս թափումը հնարավորություն ստեղծեց Պետրոսի համար՝ քարոզելու ամենահայտնի քարոզներից մեկն Աստվածաշնչում, որում նա ասաց. «Սույն այս Յիսուսին Աստված հարություն տվեց, որի վկաներն ենք մենք ամենքս: Արդ Աստծո աջով բարձրացած և Սուրբ Յոզուս խոստմունքը Յորից առած՝ թափեց այս, որ դուք հիմա տեսնում և լսում եք» (Գործք 2.32,33): Ուշադրություն դարձրեք, որ բոլորը և՛ տեսնում էին, և՛ լսում Սուրբ Յոզուս զորության ապացույցը:

Մի քանի խոսք հետո գրված է, որ հավաքվածները պատասխանեցին.

«Եվ երբ որ այս լսեցին, իրենց սրտերում զոջացին և ասացին Պետրոսին և մյուս առաքյալներին. «Ի՞նչ անենք, մարդի՛կ եղբայրներ»» (Գործք 2.37):

Պետրոսը պատասխանեց.

«Ապաշխարե՛ք և ձեզնից ամեն մեկը թող մկրտվի Յիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերի թողության համար, և Սուրբ Յոզուս պարգևը կընդունեք: Որովհետև ձեզ և ձեր որդիների համար է այս խոստմունքը, և այն բոլոր հեռավորների համար, որոնց մեր Տեր Աստվածը կկանչի» (Գործք 2.38,39):

Յոզակելով Բարի լուրը փրկության մասին, որը շնորհվել էր բոլոր՝ Տիրոջ անունը կանչողներին (տե՛ս Յոզուս. 10.13), Պետրոսը հստակ հայտնեց, որ Սուրբ Յոզուս պարգևը նույնպես շնորհվել է յուրաքանչյուր հավատացողի: Որքա՛ն զարմանալի է: Այս խոստումը վերաբերում է յուրաքանչյուր հավատացյալի՝ անցյալում, ներկայում և ապագայում:



## Չորս դեպք

Գործք առաքելոց գրքում կա ևս չորս դեպք, երբ Պենտեկոստեի օրվանից հետո մարդիկ լցվում են Սուրբ Հոգով: Այս դեպքերն ուսումնասիրելու ընթացքում ես ցանկանում եմ, որ հատուկ ուշադրություն դարձնեք երկու հանգամանքի: Առաջինը՝ բոլոր դեպքերում, բացառությամբ մեկի, Սուրբ Հոգով լցվելու իրադարձությունն անջատ է փրկության փորձառությունից: Երկրորդը՝ այն մարդիկ, ովքեր ակնատես էին, թե ինչպես էին նորադարձները լցվում Սուրբ Հոգով, և՛ տեսնում, և՛ լսում էին Հոգու ներկայության ապացույցը նորադարձների մեջ:

### Փիլիպոսը և սամարացիները

Առաջին դեպքը նկարագրված է Գործք առաքելոցի 8-րդ գլխում: Փիլիպոսն ուղարկվեց Սամարիա՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանը քարոզելու համար: Նա հռչակեց Ավետարանը, և ամբողջ քաղաքն արթնություն վերապրեց: Կաղերը բժշկվում էին, պիղծ ոգիները դուրս էին գալիս, և շատերն ընդունում էին Աստծո փրկության հրաշալի լուրը:

«Բայց երբ նրանք հավատացին Փիլիպոսին, երբ նա հռչակում էր Աստծո թագավորության Բարի լուրը և Հիսուս Քրիստոսի անունը, նրանք մկրտվեցին՝ և՛ տղամարդիկ, և՛ կանայք: Սիմոն ինքը հավատաց և մկրտվեց: Եվ նա հետևում էր Փիլիպոսին ամենուր՝ ցնցված այն մեծ նշաններով և հրաշքներով, որ տեսնում էր» (Գործք 8.12,13, NIV):

Արդյո՞ք սամարացիները վերստին ծնվեցին, երբ հավատացին Հիսուս Քրիստոսի Բարի լուրին: Իհարկե: Երբ մարդը հավատում է Ավետարանին, նա ընդունում է Հիսուս Քրիստոսին և դառնում է Աստծո զավակ: Այս նորահավատները մկրտվեցին ջրով՝ որպես Քրիստոսի հանդեպ ունեցած հավատքի նշան: Այնուամենայնիվ, հետագա խոսքերից պարզ երևում է, որ առաջին եկեղեցու առաջնորդները գիտեին՝ կար ևս մեկ բան: Դարձի գալու և ջրի մկրտության հետ մեկտեղ, նորահավատները պետք է ընդունեին Սուրբ Հոգու մկրտությունը:

«Երբ առաքյալները Երուսաղեմում լսեցին, որ Սամարիան ընդունեց Աստծո խոսքը *[փրկությունը]*, նրանք Սամարիա ուղարկեցին Պետրոսին և Յովհաննեսին: Տեղ հասնելուն պես, նրանք աղոթեցին այնտեղ գտնվող նորահավատների համար, *որպեսզի նրանք կարողանային ստանալ Սուրբ Հոգին*, որովհետև Սուրբ Հոգին դեռևս չէր իջել նրանցից որևէ մեկի վրա. նրանք պարզապես մկրտվել էին Տեր Հիսուսի անունով *[ջրի մկրտություն]*» (Գործք 8.14-16, NIV):

Լսելով այն մասին, որ Սամարիան ընդունել էր Ավետարանը՝ առաքյալները որոշեցին ուղարկել Պետրոսին և Յովհաննեսին այնտեղի նորահավատների մոտ: Ինչո՞ւ առաքյալներն ուղարկեցին իրենց երկու ամենապատվելի անդամներին՝ աղոթելու սամարացիների համար: Չէ՞ որ սամարացիներն արդեն ընդունել էին փրկությունը և մկրտվել էին ջրով: Պետրոսը և Յովհաննեսը հատուկ ուղարկվեցին աղոթելու, «որպեսզի նրանք կարողանան ստանալ Սուրբ Հոգին» (խոսք 15): Մտապահեք, որ Սամարիան գրեթե հիսունվեց կիլոմետրով հեռու է Երուսաղեմից<sup>3</sup>: Այսօր այդ հեռավորությունը մեծ չի թվում, բայց առաքյալները չունեին մեքենաներ, և ո՛չ էլ կարող էին օգտվել ժամանակակից հասարակական փոխադրամիջոցներից: Այդ հիսունվեց կիլոմետրը նրանք առնվազն մեկ կամ երկու օր պետք է գնային ուղքով կամ որևէ կենդանու մեջքին նստած: Հասկանալի է, որ դա կարճ ճանապարհ չէր:

Կրկին կարևոր է նշել, որ նորահավատները մկրտվել էին Տեր Հիսուսի անունով և արդեն Աստծո զավակներ էին: Այնուամենայնիվ, փրկության պարզևի մեջ կար մի մաս, որը նրանք դեռ չէին վերապրել: Միգուցե դուք մտածում եք. «Սպասիր մի րոպե, Ջոն. ես կարծում էի, որ Հիսուս Քրիստոսի Հոգին բնակվում է մեր սրտերում, հենց որ մենք ընդունում ենք փրկության պարզևը»: Իհարկե, դա ճի՛շտ է: Առաջին Կորնթացիների 12.3-ում հստակ գրված է. «Ոչ ոք չի կարող Հիսուսին Տեր ասել, եթե ոչ Սուրբ Հոգով»: Մենք չենք կարող Հիսուսին որպես Տեր դավանել՝ առանց Սուրբ Հոգու ազդեցության, սակայն սա նույնը չէ, ինչ Նրանով *լցվելը*:

Աստվածաշունչը հստակ հայտնում է, որ նրանք, ովքեր Քրիստոսում են, սրբված են և կնքված Սուրբ Հոգով (տե՛ս Ա Պետր. 1.2, Եփես. 1.13): Այնպես որ, անկասկած, Սուրբ Հոգու ներբնակվող *մեր-կայությունը* փրկության մասն է կազմում: Նայելով ձեզ՝ Աստված տեսնում է Իր Որդու Հոգին: Հիշե՛ք, որ փրկություն ստանալով՝

դուք նոր դիրք եք ձեռք բերում Քրիստոսի մեջ և դառնում եք Նրա ժառանգության և թագավորության մասը: Այնուամենայնիվ, դուք չեք լքվում Յոզու *զորությանը*, քանի դեռ չեք խնդրում դա Յորից:

Հիսուսն ասաց.

«Ուրեմն, եթե դուք, չար լինելով, գիտեք, թե ինչպես բարի պարգևներ տալ ձեր երեխաներին, որքա՞ն ավելի ձեր երկնային Յայրը կտա Սուրբ Յոզին նրանց, *ովքեր խնդրում են Նրան*» (Դուկաս 11.13, NKJV):

Հիսուսն անվանեց Աստծուն «ձեր երկնային Յայրը»: Ակնհայտ է, որ Նա խոսում է հավատացյալների մասին: Մենք գիտենք սա, որովհետև Յովհաննեսի Ավետարանում Հիսուսն ասում էր. «...ճշմարտության Յոզին, Ուն այս աշխարհը չի կարող ընդունել, որովհետև այն ո՛չ տեսնում է Նրան, ո՛չ էլ ճանաչում» (Յովհ. 14.17, ESV): «Աշխարհը» այն մարդիկ են, ովքեր Աստծո թագավորության մեջ չեն: Ակնհայտ է՝ յուրաքանչյուրը, ով չի հնազանդվել Հիսուսի իշխանությանը, չի կարող ընդունել Սուրբ Յոզուն: Այնպես որ, «ձեր Յորը» խնդրելու հրահանգը չի վերաբերում փրկությանը: Փոխարենը՝ այն վերաբերում է հետագա լեցունությանը, որը կարող են ստանալ միայն նրանք, ովքեր արդեն փրկված են:

Այժմ վերադառնանք Գործք առաքելոց 8-րդ գլխին.

Այն ժամանակ Պետրոսը և Յովհաննեսը իրենց ձեռքերը դրեցին այս հավատացյալների վրա, և նրանք ստացան Սուրբ Յոզին: Երբ Սիմոնը *տեսավ*, որ Յոզին տրվեց, երբ առաքյալները ձեռնադրեցին մարդկանց, նա փող առաջարկեց նրանց՝ այս զորությունը գնելու համար: «Թույլ տվեք, որ ես նույնպես ունենամ այս զորությունը, - բացականչեց նա, - որպեսզի երբ ձեռնադրեմ մարդկանց, նրանք ստանան Սուրբ Յոզին» (Գործք 8.17-19, NLT):

Պետրոսը և Յովհաննեսը դրեցին իրենց ձեռքերը հավատացյալների վրա, և նրանք ստացան Սուրբ Յոզին: Յոզով լքվելը ակնհայտ էր բնական զգայարանների համար, որովհետև Աստվածաշնչում գրված է, որ «Սիմոնը տեսավ, որ Յոզին տրվեց, երբ առաքյալները դրեցին իրենց ձեռքերը մարդկանց վրա»: Սիմոնը, ով հավատացյալ էր, այնքան զարմացավ Սուրբ Յոզու *զորության* դրսևորումից հավատացյալների մեջ, որ գումար առաջարկեց առաքյալներին, որպեսզի նրանք սովորեցնեն իրեն՝ փոխանցել այս զորությունը:

(Նման արձագանքը Սիմոնի կողմից տեղին չէր, և Պետրոսն արագորեն հանդիմանեց նրան):

Ամբողջ Գործք առաքելոց գրքում Հոգով լցվելը սովորաբար ուղեկցվում էր արտաքին դրսևորումով, որը կարելի էր *տեսնել* և *լսել*, ամենից հաճախ՝ լեզուների կամ մարգարեության տեսքով: Ահա թե ինչու էին առաքյալները հաճախ ասում, որ Սուրբ Հոգին «*զալիս* էր հավատացյալների *վրա*»: Սամարիայում տեղի ունեցած դեպքի նկարագրության մեջ հատկապես չի նշվում, որ Հոգով լցվելուն հետևում էին լեզուները կամ մարգարեությունը: Այնուամենայնիվ, մենք կարող ենք եզրակացնել, որ նման դրսևորումը տեղի էր ունեցել. հակառակ դեպքում, Սիմոնը, ով նախկին կախարհ էր, չէր տեսնի Հոգու ներկայության ապացույցը հավատացյալների մեջ:

## ՕրՅ

### Տարսնացի Սողոս

Սողոսի դարձի գալու պատմությունը ամենաուշագրավ հատվածներից մեկն է Սուրբ գրքում: Ես ցանկանում եմ կենտրոնանալ այս զարմանալի հանդիպման ոչ այնքան նկատելի մի կողմի վրա: Գործք 9-ում Սողոսն ուղևորվում է Դամասկոս՝ հավատացյալներին հալածելու համար:

«Եվ նա գնալիս՝ մոտեցավ Դամասկոսին, և հանկարծակի նրա չորս կողմով լույս փայլեց երկնքից: Եվ նա գետնի վրա ընկած՝ մի ձայն լսեց, որ ասում էր նրան. «Սավո՛ւղ, Սավո՛ւղ, ինչո՞ւ ես ինձ հալածում»: Եվ նա ասաց. «Ո՞վ ես, Տե՛ր», և Տերն ասաց. «Ես Հիսուսն եմ, Ում դու հալածում ես. դժվար է քեզ խթանին քացի տալ»: Եվ դողալով ու զարհուրելով ասաց. «Տե՛ր, ի՞նչ ես կամենում, որ անեմ»: Եվ Տերն ասաց նրան. «Կանգնի՛ր և մտի՛ր քաղաքը, և կասվի քեզ, թե ինչ պետք է անել...»» (Գործք 9.3-6):

Ուշադրություն դարձրեք, որ Սողոսը Հիսուսին «Տե՛ր» անվանեց: Երբ Հիսուս Քրիստոսը դառնում է մեր կյանքի Տերը, մենք անմիջապես վերստին ծնվում ենք: Ես հավատում եմ, որ

Սողոսը հավատացյալ դարձավ այն պահին, երբ ճանաչեց Հիսուսի իշխանությունը:

Տիրոջ հետ այս հանդիպումից հետո Սողոսը երեք օր անցկացրեց ծոնապահության մեջ՝ սպասելով հետագա կարգադրություններին: Տերը խնդրեց Անանիա անունով մի աշակերտի՝ այցելել Սողոսին: Անանիան նտահոգվեց այդ հանձնարարությունից, որովհետև շատ պատմություններ էր լսել այն մասին, թե որքան խստորեն էր Սողոսը հալածում հավատացյալներին: Աստված նրան ասաց. «Գնա՛, որովհետև նա Ինձ համար ընտրված անոթ է, որ Իմ անունը տանի...» (Գործք 9.15): Երբ Անանիան եկավ այն տունը, որտեղ Սողոսն էր, նա դրեց իր ձեռքերը Սողոսի վրա և ասաց. «... Սավուղ եղբայր, Տերն ուղարկեց ինձ, այն Հիսուսը, որ երևաց քեզ ճանապարհին, որ գալիս էիր, որ տեսնես և Սուրբ Հոգով լցվես» (Գործք 9.17): Ակնհայտ է՝ Անանիան գիտեր, որ Սողոսը փրկված էր, որովհետև նա «Սավուղ եղբայր» անվանեց նրան: Այնուամենայնիվ, թեև Սողոսն արդեն հավատացյալ էր, սակայն Աստված ուղարկեց Անանիային՝ հատուկ աղոթելու, որ Սողոսը բժշկություն ստանար և լցվեր Սուրբ Հոգով:

Այս պատմության մեջ կրկին տեսնում ենք, որ Սուրբ Հոգով լցվելը տեղի ունեցավ փրկության պարզև ստանալուց հետո: Գործք 9-ում դուք չեք գտնի որևէ հիշատակում այն մասին, որ Սողոսը (կամ՝ Պողոսը) խոսեց լեզուներով: Այնուամենայնիվ, նույնիսկ կասկած չկա, որ Պողոսը խոսում էր լեզուներով, որովհետև ավելի ուշ նա գրեց. «Ես գոհանում եմ Աստծուց, որ խոսում եմ լեզուներով ավելի, քան դուք՝ բոլորդ» (Ա Կորնթ. 14.18, ESV): Անձամբ ես հավատում եմ, որ Պողոսն սկսեց խոսել լեզուներով այն պահից, երբ Անանիան աղոթեց նրա համար: Պողոսը պետք է ստանար այս լեցունությունը, թեև նա արդեն փրկված էր: Սուրբ Հոգով զորացումը կենսականորեն կարևոր էր Պողոսի ծառայության մեջ, որն էր՝ հռչակել Հիսուսին հեթանոսների, թագավորների և Իսրայելի զավակների առջև (տես Գործք 9.15):

### Պետրոսը և Կոռնելիոսը

Գործք առաքելոցի 10-րդ գլխում մի պահ տեսնում ենք մեր Աստծո հունորի զգացումը: Առաջին խոսքը ծանոթացնում է մեզ Կոռնելիոսի հետ, ով հռոմեացի սպա էր: Աստվածաշնչում ասվում

է, որ Կոռնելիոսը բարեպաշտ և աստվածավախ մարդ էր. նա ողորմած էր աղքատների հանդեպ և հաճախ էր աղոթում Աստծուն: Այդ ժամանակ փրկության Ավետարանը դեռ չէր պատմվել հեթանոսներին, այնպես որ, Աստված մի հրեշտակ ուղարկեց՝ Կոռնելիոսին այցելելու համար: Ինչևէ, հրեշտակը չհայտնեց Կոռնելիոսին Աստծո փրկության ծրագիրը, այլ պատվիրեց նրան՝ կանչել Պետրոսին: Ոգեշնչված Կոռնելիոսը անմիջապես մարդկանց ուղարկեց՝ գտնելու Պետրոսին այն վայրում, որի մասին ասել էր հրեշտակը:

Պետրոսը Յոպպեում էր, որտեղ նա մտքի հափշտակության մեջ ընկավ և տեսիլք ստացավ Երկնքից: Այս տեսիլքի մեջ Աստված մի շարք պատկերներ օգտագործեց, որպեսզի հայտներ Պետրոսին, որ նա չպետք է անմաքուր անվաներ այն, ինչը Աստված սրբել էր (տե՛ս Գործք 10.9-15): Այնհայտ է՝ Աստված գիտեր, որ Պետրոսը դժվարությամբ կհասկանար իր տեսիլքի իմաստը. ահա թե ինչու Նա երեք անգամ ցույց տվեց այն Պետրոսին: Մինչ նա մտորում էր տեսիլքի շուրջ, Կոռնելիոսի մարդիկ հասան այն տունը, որտեղ Պետրոսն էր: Սուրբ Յոպպե կարգադրեց Պետրոսին՝ գնալ նրանց հետ: Աստված չասաց Պետրոսին, թե ինչու էր նա ուղարկվում Կոռնելիոսի մոտ, թեև այդ ժամանակվա սովորույթներին հակառակ էր, որ բարեպաշտ հրեաները չփվեին հեթանոսների հետ: Կոռնելիոսի տուն հասնելով՝ Պետրոսն ասաց.

«Դուք գիտեք, որ մեր օրենքներին հակառակ է, որ հրեա մարդը այ այսպես մտնի հեթանոսների տունը կամ շփվի ձեզ հետ: Բայց Աստված ցույց տվեց ինձ, որ ես այլևս չպետք է մտածեմ, որ որևէ մեկը անմաքուր է: Այդ պատճառով, ես եկա առանց առարկելու, հենց որ կանչվեցի: Այժմ ասեք, թե ինչու եք կանչել ինձ» (Գործք 10.28,29, NLT):

Պետրոսն սկսում էր նկատել կապն իր տեսիլքի և այդ բարեպաշտ հեթանոսին հանդիպելու միջև: Նա սկսեց քարոզել Ավետարանը Կոռնելիոսին: Հանկարծ, Պետրոսի քարոզի ընթացքում, Աստծո Յոպպե հայտնվեց, և հեթանոսներն սկսեցին խոսել լեզուներով: Պետրոսը ցնցված էր, որովհետև անցյալում նման բան դեռ տեղի չէր ունեցել:

Աստված գիտեր՝ Պետրոսը և նրա հրեա ուղեկիցները դժվարությամբ կընդունեին այն փաստը, որ փրկության պարզևր նախա-

տեսված էր նաև հեթանոսների համար: Այդ պատճառով, Նա թափեց իր Յոգին հեթանոսների վրա՝ *Նախքան* Պետրոսը նրանց հետ աղոթելու կամ նրանց ջրով մկրտելու հնարավորություն կունենար: Սա ապացույց էր այն մասին, որ Իսրայելի ժողովրդին չպատկանող մարդիկ նույնպես ընդգրկված էին փրկության ծրագրի մեջ:

«Այն հրեա հավատացյալները, ովքեր եկել էին Պետրոսի հետ, զարմացան, որ Սուրբ Յոգու պարզևը նույնպես թափվեց հեթանոսների վրա: Որովհետև նրանք *լսեցին*, թե ինչպես էին հեթանոսները խոսում այլ լեզուներով և փառավորում Աստծուն: Դրանից հետո Պետրոսն ասաց. «Կարո՞ղ է ինչ-որ մեկն առարկել, որ նրանք մկրտվեն հիմա, երբ ստացան Սուրբ Յոգին, ինչպես որ մենք ստացանք»: Այնպես որ, նա պատվիրեց, որ նրանք մկրտվեն Յիսուս Քրիստոսի անունով» (Գործք 10.45-48, NLT):

Ներկա հրեաները չէին կարող ժխտել, որ Աստված փրկեց այդ հեթանոսներին, որովհետև նրանք *տեսան* և *լսեցին* Աստծո զորության դրսևորումը նրանց մեջ (Սուրբ Յոգով լցվելը): Յրեա հավատացյալները ցնցված էին: Աստված ոչ միայն շնորհեց փրկությունը հեթանոսներին, այլև ուղարկեց Յոգու լեցունությունը, քանի դեռ նրանք հրապարակային դավանություն էին անում և ջրով մկրտում, ինչը սովորաբար նախորդում էր Յոգով լցվելուն: Այս դեպքը միակն է Սուրբ գրքում, երբ Աստված նման կերպով է գործում:

Մնացած դեպքերում Աստծո Յոգին թափվում է դարձի գալուց *հետո*: Ես հավատում եմ, որ Աստված արեց սա՝ իմանալով, որ հրեաներին հատուկ նշան էր պետք, որպեսզի համոզվեին, որ Նա իր փրկության պարզևը տարածում էր նաև հեթանոսների վրա:

### Եփեսացիները

Չորրորդ դեպքը, որը ցանկանում եմ հետազոտել, Գործք առաքելոցի 19-րդ գլխում է: Պողոսը Եփեսոս եկավ իր բազմաթիվ ճանապարհորդություններից մեկի ընթացքում: Աստվածաշնչում ասվում է, որ ժամանելուն պես նա հանդիպեց մի խումբ մարդկանց, ովքեր Յովհաննես Սկրտչի աշակերտներն էին: Ամենաառաջին հարցը, որ նա տվեց այդ մարդկանց, հետևյալն էր. «Արդյոք Սուրբ Յոգին ընդունեցի՞ք, երբ որ հավատացիք...» (Գործք 19.2): Զարմանալի է: Եթե սա առաջին հարցն էր, որ Պողոսը տվեց այս եփեսացիներին,

մենք նույնպես պետք է տանք այս հարցը յուրաքանչյուր նորահավատի:

Կրկին, ինչո՞ւ էր Սուրբ Յոզով մկրտվելն այդքան կարևոր առաջին եկեղեցու առաջնորդների համար: Պատճառն այն է, որ Սուրբ Յոզով զորանալն անփոխարինելի է՝ Քրիստոսի մեջ մեր առաքելությունը կատարելու համար: Ինչո՞ւ մեզնից որևէ մեկը պետք է ցանկանա նույնիսկ մեկ ժամ ապրել՝ առանց այդ զորության (տե՛ս Գործք 1.8): Յոր թագավորության մեջ արդյունավետ լինելու համար՝ մենք պետք է և՛ դիրք ունենանք Քրիստոսի մեջ (փրկությունը), և՛ զորացված լինենք Սուրբ Յոզով (Յոզու լեցունությունը):

Պողոսը պարզեց, որ թեև այդ եփեսացիները Յովհաննես Մկրտչի աշակերտներն էին, նրանք չէին լսել Յիսուսի փրկության Բարի լուրը, այնպես որ, նա քարոզեց նրանց Ավետարանը:

Ինչպես արդեն նշեցի, Քրիստոսի մեջ մեր դիրքն ստանալը մշտապես նախորդում է այն զորությանը, որն ստանում ենք Նրա Յոզուց: Նույնիսկ եթե զորության արտաքին դրսևորումը (Յոզու լեցունությունը) նախորդում է փրկության արտաքին դավանությանը (ջրով մկրտության տեսքով), ինչպես Կոռնելիոսի դեպքում էր, փրկությունը մշտապես նախորդում է զորացմանը:

Այդ իսկ պատճառով, Պողոսի խոսքերը լսելուց հետո եփեսացիներն առաջին հերթին «...Տեր Յիսուսի անունով մկրտվեցին» (Գործք 19.5): Այլ խոսքով՝ նրանք ստացան փրկությունը, որը միայն Յիսուս Քրիստոսի մեջ է և տրվում է միայն Նրա միջոցով: Բայց նրանց հանդիպումը Պողոսի հետ դրանով չավարտվեց. «Եվ երբ որ Պողոսը ձեռք դրեց նրանց վրա, Սուրբ Յոզին եկավ նրանց վրա, և նրանք լեզուներով էին խոսում ու մարգարեանում» (Գործք 19.6):

Սուրբ Յոզու լեցունությունը եկավ այն բանից հետո, երբ նորահավատները մկրտվեցին մեր Տեր Յիսուսի անունով: Մինչև նրանց հանդիպումը Պողոսի հետ, այս մարդիկ շատ քիչ բան գիտեին Յիսուսի մասին, բայց հենց որ լցվեցին Յոզով, սկսեցին *մարգարեանալ*, ինչը նշանակում է՝ նրանք հռչակեցին Յիսուս Քրիստոսի ուղերձը: Նրանք զորություն ստացան և սկսեցին մարգարեանալ այն, ինչ չգիտեին ընդամենը մի քանի րոպե առաջ. այս զորացումը հնարավոր էր միայն Յոզու միջոցով: Անկարելի է, որ որևէ հավատացյալ իշխանությամբ հռչակի Աստծո խորհուրդները՝ առանց Նրա Յոզուն ճանաչելու (տե՛ս Ա Կորնթ. 2):



Ես այնքան շնորհակալ եմ, որ երբևէ ստիպված չեմ լինելու քարոզել առանց Յոզու զորության: Իմ ուժերով ես չեի կարող լավ հրապարակախոս և լավ գրող լինել: Ես այնքան թույլ էի անգլերենից, որ ձախողեցի պետական ավարտական քննություններս՝ 800-ից ստանալով 370 միավոր: Ինձնից լավ ոչ ոք չգիտի, որ այն, ինչ կամ, Աստծո շնորհքով և Սուրբ Յոզու զորությամբ է: Առանց Յոզու զորության՝ չեի կարողանա գրել այս գիրքը: Նա իմ կարողության և զորության աղբյուրն է: Առանց Նրա անհնարին կլինեի կատարել այն հանձնարարությունը Աստծո թագավորության համար, որը տրված է ինձ: Սուրբ Յոզին է տալիս ինձ Աստծո շնորհքը:

## Օր4

### Արդյո՞ք լեզուները դադարել են

«Սերը երբեք չի վերջանում: Ինչ վերաբերում է մարգարեություններին, դրանք կանցնեն. ինչ վերաբերում է լեզուներին, դրանք կանցնեն. ինչ վերաբերում է գիտությանը, այն կանցնի: Որովհետև մենք մասնակի գիտենք և մասնակի ենք մարգարեանում, բայց երբ կատարյալը գա, մասնակին կանցնի» (Ա Կորնթացիների 13.8-10, ESV):

Այժմ, երբ մենք ուսումնասիրեցինք Գործք առաքելոց գրքի պատմությունները Սուրբ Յոզով լցվելու մասին, ես ցանկանում եմ անդրադառնալ մի հարցի, որն ունեն ձեզնից շատերը: Ես հաճախ եմ լսում, թե ինչպես են մարդիկ ասում, որ լեզուները դադարել են: Հիմնականում նրանք վկայակոչում են վերը նշված հատվածի 10-րդ խոսքը: Նրանք, ովքեր համաձայնում են այս գաղափարին, հավատում են, որ «կատարյալը» ասելով՝ Պողոսը նկատի ուներ Աստվածաշունչը, որը պետք է գար: Նա այսպես է գրում. «...երբ կատարյալը գա, մասնակին կանցնի»: Նրանք այսպես են տրամաբանում. «Այժմ, երբ կատարյալը (Աստվածաշունչը) եկել է, լեզուները դադարել են»:

Կարևոր է, որ ուշադրությամբ ուսումնասիրենք այս հատվածը՝

որոշելու համար, թե ինչ նկատի ունենա՞նք Պողոսը: Երբ դիտարկենք 10-րդ խոսքի համատեքստը, ակնհայտ կդառնա, որ նման հետևությունն անհիմն է: Եթե լեզուները դադարել են, ապա գիտությունը և մարգարեությունները նույնպես դադարել են: Արդյո՞ք գիտությունը և մարգարեությունները դադարել են: Իհարկե՞ ո՛չ: Ուրեմն, ո՞րն է այն կատարյալը, որի մասին խոսում է Պողոսը: Պատասխանը գրված է տասներկուերորդ խոսքում.

«Որովհետև այժմ մենք տեսնում ենք հայելու մեջ աղոտ կերպով, բայց այն ժամանակ [երբ կատարյալը գա]՝ երես առ երես: Այժմ մասնակիորեն գիտենք, բայց այն ժամանակ ես կճանաչեմ լիովին, ինչպես որ լիովին ճանաչված եմ» (Ա Կորնթացիների 13.12, ESV):

Պողոսը խոսում է Հիսուսի հետ երես առ երես հանդիպման մասին: Ահա թե ինչ նկատի ունի նա՝ գրելով «կատարյալը» բառը. նա խոսում է Հիսուսին լիովին ճանաչելու մասին՝ Իր ամբողջ փառքով: Արդյո՞ք ներկայումս մենք նման վերապրում ունենք. արդյո՞ք տեսնում ենք Նրան՝ Իր փառքով: Երկրային կյանքի ընթացքում մեր շփումը Հիսուսի հետ նման է աղոտ հայելու արտացոլանքին, բայց գալիք աշխարհում մենք կճանաչենք Հիսուսին այնպես, *ինչպես որ Նա է ճանաչում մեզ*: Նման խորը մտերմության վերապրումը Հիսուսի հետ՝ նշան կլինի, որ «կատարյալը» եկել է: Թեև մեր ճանապարհորդությունն սկսում է երկրի վրա, այն չի ավարտվի, քանի դեռ մենք չենք տեսել Նրան երես առ երես հավիտենականության մեջ:

## Լեզուների չորս տեսակները

Կա ևս մեկ հարց, որն ինձ հաճախ են տալիս. «Ձո՞ն, ինչո՞ւ է Կորնթացիների առաջին թղթի 12.30-ում գրված. «...Մի՞թե ամենը լեզուներով են խոսում...»: Չէ՞ որ սա նշանակում է, որ ոչ բոլորն են խոսում լեզուներով»: Այո՛, այդպես է, սակայն այս հատվածում Պողոսը խոսում է լեզուների հատուկ *տեսակի* մասին, որով խոսում են ոչ բոլոր հավատացյալները: Սա հասկանալու համար պետք է ուսումնասիրենք լեզուների չորս տարբեր տեսակները, որոնց մասին գրված է Նոր կտակարանում:

Հարմարության համար լեզուները կբաժանեն երկու խմբի՝ *հրապարակային* և *անձնական* կիրառություն ունեցողների: Լեզուներից երկուսը հրապարակային ծառայության համար են: «Հրապարակային» ասելով՝ նկատի ունեն այն դեպքերը, երբ որևէ անհատ ինչ-որ մեկին կամ որոշակի մարդկանց խմբի ծառայում է նրանով, ինչ ստացել է Հոգուց: Ի հակադրություն՝ երկու «անձնական» լեզուները մեզ՝ որպես անհատների, կապակցում են անմիջապես Աստծո հետ. դրանք կան օգնում են՝ ավելի մտերմանալու Նրա հետ, կան բարեխոսելու կարողություն են տալիս՝ համաձայն Նրա կատարյալ կամքի: Դիտարկենք այս տեսակներից յուրաքանչյուրը:

### Առաջին. Լեզուները՝ որպես նշան անհավատներին

Լեզուների առաջին տեսակը հրապարակայնորեն ցուցադրելու համար է:

«Ուրեմն, լեզուները նշանի համար են ոչ թե հավատացյալներին, այլ՝ անհավատներին...» (Ա Կորնթացիների 14.22):

Այս պարզևզ գործում է, երբ Սուրբ Հոգին գերազանցում է մեր միտքը և տալիս է մեկ այլ երկրային լեզվով խոսելու կարողություն, հատկապես այնպիսի լեզվով, որը մենք չգիտենք և չենք սովորել: Լեզուների այս տեսակը գործեց Պենտեկոստեի օրը՝ առաքյալների միջոցով:

«Երուսաղեմում աստվածավախ հրեաներ կային երկնքի ներքո գտնվող ամեն ազգից: Երբ նրանք լսեցին այս ծայնը, շփոթված մարդկանց մի ամբոխ հավաքվեց, որովհետև յուրաքանչյուրը լսեց, թե ինչպես էին խոսում իր լեզվով: Նրանք լիովին ապշած՝ հարցրին. «Մի՞թե բոլոր այս խոսողները գալիլեացիներ չեն: Այդ դեպքում ինչպե՞ս է, որ յուրաքանչյուրս լսում ենք, որ նրանք խոսում են մեր մայրենի լեզվով: Պարթևացիներ, մարացիներ և եղամացիներ. Միջագետքի, Հուդայի և Կապադովկիայի, Պոնտոսի և Ասիայի, Փռյուգիայի և Պամփյուլիայի, Եգիպտոսի և Կյուրենեի մոտ եղող Լիբիայի շրջանների բնակիչներ, այցելուներ Հռոմից (և՛ հրեաներ, և՛ հուդաիզմին դարձածներ), կրետացիներ և արաբներ՝ մենք լսում ենք, թե ինչպես են նրանք մեր լեզուներով հռչակում Աստծո հրաշալիքները» (Գործք 2.5-11, NIV):

Այս հրեաները լսեցին, թե ինչպես էին հավատացյալները խոսում յուրաքանչյուրի մայրենի լեզվով: Այս ցուցադրումը նշան էր, որ Աստված գործում էր այն մարդկանց միջև, ովքեր հավատում էին Հիսուսի Ավետարանին, որովհետև անկարելի էր, որ անուսում գալիլեացիները կարողանային կատարելապես հռչակել Աստծո հրաշալիքները այդքան լեզուներով: Շատերը ճանաչեցին Հիսուսին՝ շնորհիվ Հոգու զորության այդպիսի դրսևորման:

Մի քանի տարի առաջ քարոզում էի մի եկեղեցում՝ Կոլորադո Սփրինգսում: Ծառայության ընթացքում մեր ծառայության աշխատակազմից մի կին նստած էր եկեղեցու դահլիճի ետնամասում: Ամբողջ քարոզի ընթացքում նա լեզուներով ցածրաձայն աղոթելու մղում էր զգում: Ծառայության ավարտից հետո մի պարոն, ով նստած էր նրա առջևի շարքում, մոտեցավ նրան և ասաց.

- Դուք կատարյալ ֆրանսերենով եք խոսում: Դուք նույնիսկ խոսում եք հին ֆրանսիական բարբառով՝ անզուգական առոգանությամբ: Ես ֆրանսերենի ուսուցիչ եմ, և աշխատանքային տարիների ընթացքում երբեք չեմ հանդիպել որևէ մեկի, ով ֆրանսերեն խոսեր այնպես, ինչպես դուք:

- Ես ֆրանսերեն չգիտեմ,- պատասխանեց մեր ծառայության աշխատակցուհին:

Այդ տղամարդն ապշել էր: Նա ասաց.

- Դուք ոչ միայն կատարյալ ֆրանսերենով էիք խոսում, այլ նույնպես աստվածաշնչյան խոսքեր էիք մեջբերում ֆրանսերենով, և ձեզմից հետո Ջոնը խնդրում էր, որ հավաքվածները բացեին նույն խոսքերը: Դուք մեջբերում էիք այդ խոսքերը, նախքան նրա կարդալը:

Այդ փորձառությունը նշան էր այդ մարդու համար: Նա հաստատություն ստացավ այն ուղերձի վերաբերյալ, որ Աստված փոխանցել էր իմ միջոցով: Նշան հանդիսացող լեզուների գլխավոր նպատակն է՝ գրավել նրա ուշադրությունը, ով դեռ հավատացյալ չէ:

### **Երկրորդ. Մեկնության լեզուներ**

Լեզուների երկրորդ տեսակը նույնպես հրապարակային ծառայության համար է: Ի տարբերություն որպես նշան ծառայող լեզուների՝ այս լեզուները երկնային են, և ոչ ոք երկրի վրա չգիտի

դրանք: Պողոսը նկարագրեց մեկնության լեզուները որպես հոգևոր պարզև՝ գրելով. «...ուրիշին՝ *այլևայլ լեզուներ*, ուրիշին՝ *լեզուների թարգմանություններ (կամ՝ մեկնություն)*» (Ա Կորնթ. 12.10): Քանի որ այս լեզուները երկրային չեն, դրանք մեկնության կարիք ունեն:

Տարիներ առաջ պետք է քարոզել Սինգապուրի եկեղեցիներից մեկում: Հանկարծ մի մարդ ծառայության ժամանակ սկսեց խոսել անհայտ լեզվով: Ես անմիջապես հասկացա, որ այդ լեզուն երկրային չէր, այլ՝ երկնային: Բոլորը դահլիճում զարմացած էին Հոգու այդպիսի դրսևորումից: Երբ այդ մարդն ավարտեց երկնային լեզվով խոսելը, նա մեկնեց այն, ինչ ասել էր: Նրա թարգմանությունը ճշտորեն համապատասխանում էր այն ուղերձին, որ Աստված տվել էր ինձ այդ եկեղեցու համար: Ես մտածեցի. «*Աստված, ես այնքան շնորհակալ եմ այս զարմանալի հաստատության համար*»: Աստված օգտագործեց *լեզուների մեկնության* պարզև, որպեսզի հաստատեր այն խոսքը, որ դրել էր իմ սրտում: Դա նշան էր և՛ ինձ համար, և՛ նրանց համար, ովքեր այդ դահլիճում էին:

Ուշադրություն դարձրեք, որ խոսելով լեզուների այս տեսակի մասին՝ ես օգտագործում եմ «մեկնել», ոչ թե «թարգմանել» բառը: Երկնային լեզուները (որոնց պատկանում են Նոր կտակարանում նշված չորս տեսակի լեզուներից երեքը) չեն կարող թարգմանվել, քանի որ գերազանցում են մեր մարդկային միտքը, սակայն կարող են մեկնվել:

Երբ գործում է *մեկնության լեզուների* պարզև, լեզուները պետք է մշտապես ուղեկցվեն մեկնությամբ: Այս տեսակի լեզուն տրված է հատկապես եկեղեցու շինության համար (տե՛ս Ա Կորնթ. 14), իսկ առանց մեկնության՝ եկեղեցին չի կարող շինություն ստանալ:

Պողոսը նկատի ուներ լեզուների հենց այս տեսակը, երբ հարցրեց. «Մի՞թե ամենը լեզուներով են խոսում»: Իսկ հիմա կարդանք այս խոսքը համատեքստով.

«Եվ ո՞նանց Աստված դրեց եկեղեցում. առաջինը՝ առաքյալներին, երկրորդը՝ մարգարեներին, երրորդը՝ վարդապետներին, հետո զորություններ, հետո բժշկությունների պարզևներ, օգնություններ, կառավարություններ, այլևայլ լեզուներ: Մի՞թե ամենը առաքյալներ են. մի՞թե ամենը մարգարեներ են. մի՞թե ամենը վարդապետներ են. մի՞թե ամենը զորություններ անող են: Մի՞թե ամենը բժշկությունների պարզևներ ունեն. մի՞թե ամենը լեզուներով են խոսում. մի՞թե ամենը թարգմանում են» (Ա Կորնթացիների 12.28-30):

Պողոսը խոսում է այն հրապարակային պարզւնների մասին, որոնք Աստված սահմանել է եկեղեցում՝ ծառայության համար: Մի՞թե բոլորը առաքյալներ են: Ո՛չ: Մի՞թե բոլորը մարգարեներ են: Ո՛չ: Մի՞թե բոլորը ուսուցիչներ են: Ո՛չ: Նմանապես, մի՞թե բոլորը խոսում են լեզուներով կամ մեկնում են դրանք՝ *հրապարակային ծառայության համար*: Ո՛չ: Պողոսը ցանկանում էր ասել, որ բոլորս պետք է զարգացնենք այն հատուկ պարզւնը, որ Աստված շնորհել է մեզ, և գործենք դրանում: Եկեղեցում բոլորը չէ, որ ունեն լեզուների մեկնության պարզւն՝ հրապարակային ծառայության համար:

### Տարբերությունը երկու հրապարակային լեզուների միջև

Կորնթացիներին ուղղված իր նամակում Պողոսը բացատրում է տարբերությունը երկու տեսակի հրապարակային լեզուների միջև.

«Ուրեմն լեզուները [*լեզուները՝ որպես նշան*] նշանի համար են՝ ոչ թե հավատացյալներին, այլ՝ անհավատներին... Արդ եթե ամբողջ եկեղեցին մեկտեղ գա, և ամենքը լեզուներով [մեկնության լեզուներով] խոսեն, և տգետներ կան անհավատներ մտնեն այնտեղ, մի՞թե չեն ասի, թե դուք գժված եք» (Ա Կորնթացիների 14.22,23):

Եթե չհասկանաք, որ կան տարբեր տեսակի լեզուներ, կարող եք մտածել, որ Պողոսը լիովին հակասում էր իրեն՝ գրելով այս հատվածը: Նախ՝ նա ասում է. «Լեզուները նշան են անհավատների համար»: Անմիջապես հաջորդ խոսքում, գրված է. «Եթե դուք լեզուներով խոսեք, անհավատները կմտածեն, որ խելագարվել եք»: Այնուամենայնիվ, իմանալով, որ կան չորս տարբեր տեսակի լեզուներ՝ մենք կարող ենք հասկանալ, որ Պողոսը գրում է լեզուների երկու տարբեր տեսակների մասին:

Առաջին տեսակի լեզուն, որը նշում է Պողոսը (լեզուները՝ որպես նշան), գրավում է անհավատներին, որովհետև այն ծառայում է նրանց՝ որպես նշան: Լեզուների երկրորդ տեսակը (մեկնության լեզուները) միայն եկեղեցու շինության համար են. այս լեզուները նշան չեն անհավատների համար: Իրականում, Պողոսն ասում է, որ եթե հավատացյալները խոսեն երկրորդ տեսակի լեզուներով՝ առանց դրանք մեկնելու, անհավատները կմտածեն, որ խելագարվել ենք:

Կարո՞ղ եք պատկերացնել մի կիրակնօրյա ծառայություն, որտեղ բոլորը միաժամանակ քարոզում են, սովորեցնում և մարգարեանում են: Նման վարքը տարօրինակ և անարդյունավետ կլիներ: Նմանապես, Պողոսը կարգադրում էր եկեղեցուն՝ չստեղծել շփոթության մթնոլորտ՝ սխալ գործածելով մեկնության լեզուները: Սխալ միջավայրում լեզուների նման դրսևորումը խառնաշփոթ կստեղծի և չի ծառայի որևէ նպատակի: Ավելի վաղ նույն գլխում Պողոսը պարզ ասում է, որ լեզուների նպատակը՝ շփոթություն ստեղծելը չէ, այլ՝ հասկացողություն և հայտնություն բերելն է:

«Գոհանում եմ իմ Աստուծոց, որ ձեր ամենից ավելի լեզուներով խոսում եմ: Բայց եկեղեցու մեջ ավելի կամենում եմ, որ հինգ խոսք իմ մտքով խոսեմ, որ ուրիշներին էլ բան սովորեցնեմ, քան թե բյուրավոր խոսքեր՝ լեզուներով» (Ա Կորնթացիների 14.18,19):

Ամեն ինչ շատ պարզ է. եթե մեկնության լեզուները գործածվում են հրապարակային ծառայության համար, դրանք պետք է մեկնվեն, որպեսզի ներկաներն օգուտ ստանան: Հակառակ դեպքում, ավելի լավ կլինի պարզապես շփվել որևէ հայտնի լեզվով:

## Օր 5

### Երրորդ. Լեզուներ անձնական աղոթքի համար

«Որովհետև եթե ես *աղոթք անեմ օտար լեզվով*, իմ հոգին է աղոթք անում, բայց միտքս անպտուղ է: Ուրեմն ի՞նչ է, աղոթք անեմ հոգով, աղոթք անեմ մտքով էլ. սաղմոս ասեմ հոգով, սաղմոս ասեմ մտքով էլ» (Ա Կորնթացիների 14.14,15):

Առաջին երկու տեսակի լեզուները, որոնք դիտարկեցինք, հրապարակային գործածման համար են. դրանց նպատակն է՝ Աստուծոց որևէ ուղերձ փոխանցել մարդուն: Նշանի համար նախատեսված լեզուների նպատակն է՝ հասնել և ծառայել անհավատներին. մեկնության լեզուների նպատակն է՝ ծառայել հավատացյալներին: Վերոնշյալ խոսքում Պողոսը ներկայացնում է լեզուների երրորդ տեսակը՝ *անձնական աղոթքի լեզուները*: Նա այլևս չի խոսում

հրապարակային ծառայության մասին, այլ սովորեցնում է, որ լեզուները կարելի է գործածել անձնական նպատակներով: Լեզուների այս տեսակը անձնական շինության և աղոթքի համար է: Պողոսը հատկապես պնդում է, որ մենք կարող ենք «աղոթել մտքով», ինչն ինձ համար նշանակում է՝ աղոթել անգլերենով: Մենք նույնպես կարող ենք «աղոթել հոգով», ինչը նշանակում է՝ աղոթել անժանոթ, երկնային լեզվով: Նա նույնպես պնդում է, որ մենք կարող ենք երգել (երկրպագել) այս երկու ձևերով:

Կորնթացիների առաջին թղթի 14-րդ գլխի սկզբում գրված է. «Որովհետև լեզուներով խոսողը մարդկանց հետ չի խոսում, այլ՝ Աստծո հետ...» (խոսք 2): Մենք գիտենք, որ Հոգու այս դրսևորումը չի կարող վերաբերել նշան հանդիսացող լեզուներին, որովհետև Պենտեկոստեի օրը աշակերտները խոսում էին մարդկանց հետ՝ հռչակելով Աստծո զարմանալի գործերը օտար լեզուներով: Պողոսը նույնպես չէր կարող նկատի ունենալ մեկնության լեզուները, որովհետև այդ պարզևը գործածելու դեպքում հավատացյալն ուղղում է իր խոսքը որևէ եկեղեցու՝ անհայտ երկնային լեզվով (որը մեկնության կարիք ունի): Այստեղ Պողոսը հատկապես նկատի ունի անհատի, ով հոգով «մարդկանց հետ չի խոսում, այլ՝ Աստծո հետ»:

Անձնական աղոթքի ժամանակ լեզուներով խոսելը՝ մասնավոր շփում է Աստծո և աղոթող մարդու միջև: Այս լեզուների նպատակը՝ աղոթող մարդուն զորացնելն է: «Բայց դուք, սիրելիներ, շինելով ձեզ ձեր ամենասուրբ հավատքով, և աղոթելով Սուրբ Հոգով, մնացե՛ք Աստծո սիրո մեջ» (Հուդա 20,21, ESV): Ուշադրություն դարձրե՛ք՝ Հուդան ասում է, որ երբ աղոթում ենք Սուրբ Հոգով (լեզուներով), մենք շինություն ենք տալիս ինքներս մեզ. այնուամենայնիվ, երբ խոսում ենք եկեղեցու հավատացյալների հետ մեկնության լեզուներով, օգուտ կան շինություն ենք տալիս եկեղեցուն (տե՛ս Ա Կորնթ. 14.5): Աստված երկուսն էլ ցանկանում է, քանի որ երկուսն էլ կարևոր են:

Շատ հավատացյալներ հարցնում են. «Արդյո՞ք հնարավոր է, որ ես լցված լինեմ Սուրբ Հոգով և չաղոթեմ լեզուներով»: Այո՛, ես հավատում եմ, որ մարդը կարող է լցված լինել Հոգով և չաղոթել լեզուներով: Այնուամենայնիվ, կավելացնեմ, որ յուրաքանչյուր ոք, ով լցված է Սուրբ Հոգով, լեզուներով աղոթելու *կարողություն ունի*: Շատ հավատացյալներ չեն գործածում այս պարզևը, որովհետև



դեռևս հավատքով չեն տրվել դրան: Աստծո յուրաքանչյուր պարզև ընդունվում և գործածվում է հավատքով:

Պատկերացրեք, որ երկու մարդ մտնում են գետը: Նրանցից մեկը որոշում է կանգնել հոսանքի մեջ, իսկ մյուսը որոշում է տրվել գետի հոսանքին: Ե՛վ նա, ով կանգնած է ջրի մեջ, և՛ նա, ով տրվում է հոսանքին, գետի մեջ են, բայց միայն վերջինն է հետևում հոսանքին: Լեզուներով աղոթող մարդուն կարելի է նմանեցնել նրան, ով տրվել է գետի հոսանքին. այն հավատացյալը, ով դեռ չի աղոթում լեզուներով, նույնպես գետի մեջ է, բայց դեռ չի տրվել հոսանքին: (Եթե ցանկանում եք իմանալ՝ ինչպես տրվել Յոզու, մենք կքննարկենք դա հաջորդ գլխում):

Հաղորդությունը Սուրբ Յոզու հետ՝ այն բազմաթիվ օրհնություններից մեկն է, որը հասանելի է մեզ Հիսուսի մահվան և հարության շնորհիվ: Այնուամենայնիվ, փրկվելիս՝ ինքնաբերաբար չենք վերապրում այս հաղորդության լիարժեք չափը: Ցավոք, շատ հավատացյալներ չեն վայելում փրկության պարզև որոշ կողմերը: Անչափ կարևոր է, որ ձգտենք *այն ամենին*, ինչ Աստված պատրաստել է մեզ համար: Մենք պետք է բացահայտենք այն ամենը, ինչը Հիսուսը տվել է մեզ Իր մահվան միջոցով. սա մեր քրիստոնեական ընթացքի կարևորագույն նպատակներից մեկն է: Ինչպես արդեն ասացինք, Սուրբ Յոզին զորացնում և սպառազինում է մեզ, որպեսզի կատարենք այն առաջադրանքները, որոնք վստահվել են մեզ Աստծո թագավորության մեջ: Եթե մենք անտեսենք այն պարզևները, որոնք Յոզին շնորհել է մեզ, չենք ունենա թե՛ ավելի խորը մտերմություն Աստծո հետ, և թե՛ այն զորության չափը, որի կարիքն ունենք՝ Նրան պատշաճ կերպով ծառայելու համար:

### **Չորրորդ. Բարեխոսական լեզուներ**

«Այսպես էլ Յոզին օգնում է մեր տկարություններին, որովհետև թե ինչ բանի համար պիտի աղոթք անենք՝ ինչպես արժան է, չգիտենք, բայց *Ինքը՝ Յոզին, անբարբառ հառաչանքով բարեխոս է լինում*: Եվ սրտերը քննողը գիտի, թե ինչ է Յոզու խորհուրդը, որովհետև Աստծուն վայելած կերպով սուրբերի համար բարեխոսում է» (Յոզուցիների 8.26,27):

Պողոսն սկսում է այս հատվածը՝ ասելով, որ «Յոգին օգնում է մեր *տկարությունների*»: Ի՞նչ տկարությունների մասին է նա խոսում: «Որովհետև թե ինչ բանի համար պիտի աղոթք անենք... չգիտենք, բայց Ինքը՝ Յոգին, անբարբառ հառաչանքով բարեխոս է լինում»: Պարզ ասած, մեր տկարությունը հետևյալն է. մենք սահմանափակ հասկացողություն ունենք այն մասին, թե ինչ է կատարվում մեր շուրջը: Այդ իսկ պատճառով, կան պահեր, երբ չգիտենք, թե ինչպես աղոթել: Բայց երբ վստահում ենք Յոգուն և բարեխոսում ենք Յոգով (Ով գիտի ամեն ինչ), Նա աղոթում է Աստծո կատարյալ կամքը մեր միջոցով:

«Փուրդյու» համալսարանում սովորելու ընթացքում ես Աստվածաշնչի ուսումնասիրության դասեր էի անցկացնում, որոնց մասնակցում էին համալսարանի տղաների և աղջիկների հանրակացարաններում ապրող ուսանողները: Այդ դասերին հաճախում էր գրեթե վաթսուն ուսանող. ոմանք նախկինում չէին հաճախել որևէ եկեղեցի, իսկ մյուսները տարբեր եկեղեցական հարանվանություններից էին: Հաճախող աղջիկներից մեկը մեծացել էր մի հարանվանությունում, որտեղ հավատում էին, որ լեզուները դադարել են: Մի երեկո, երբ սովորեցնում էի Սուրբ Յոգու մասին, նա հասկացավ, որ *լեզուները կան նաև այսօր: Աստվածաշնչի մեջ գրված է այս մասին*: Եվ հենց այդ երեկո այդ աղջիկը լցվեց Սուրբ Յոգով:

Հաջորդ օրը արթնացա հեռախոսազանգից ժամը 6.30-ին՝ շատ ավելի վաղ, քան ես՝ համալսարանի ուսանողս, ցանկանում էի արթնանալ: Այդ աղջիկը, ով հաճախում էր Աստվածաշնչի ուսումնասիրության դասերին, խնդրեց հանդիպել իրեն: Նա ապրում էր աղջիկների հանրակացարանում, որը տղաների հանրակացարանի փողոցի հակառակ կողմում էր: Ես հազիվ վեր կացա անկողնուց, դուրս եկա շենքից և անցա փողոցը, որտեղ նա սպասում էր ինձ:

Ես կիսաքնած էի և մի փոքր վրդովված՝ այդքան վաղ քունս ընդհատելու պատճառով, իսկ նա անչափ ոգեշնչված էր: Ես հարցրի.

- Ի՞նչ է պատահել:

Նա ասաց.

- Աստված արթնացրեց ինձ առավոտյան ժամը հինգին, ես զգացի, որ պետք է լեզուներով աղոթեմ և պարզապես սկսեցի աղոթել:

Ես հասկացա, որ բարեխոսում էի, և խնդրեցի Աստծուն՝ ցույց տալ, թե ինչու էի այդքան ջանասիրաբար աղոթում լեզուներով: Տերն ասաց. «Դու աղոթում և բարեխոսում ես մի տարեց մարդու կյանքի համար»: Ես շարունակեցի աղոթել լեզուներով: Ժամը վեցին իմ սենյակակից աղջկան շտապ զանգահարեցին և ասացին, որ նրա պապը սրտի կաթված էր ստացել: Նրան արագորեն հիվանդանոց էին տեղափոխել, և բժիշկներին հաջողվել էր փրկել նրա կյանքը:

Այնուհետև այդ աղջիկը շարունակեց.

- Սուրբ Հոգին ինձ ասաց. «Դու աղոթում էիր այդ մարդու համար»:

Սա բարեխոսական լեզուների գործածության կատարյալ օրինակ է: Նա նույնիսկ գաղափար չուներ, որ այդ մարդու կյանքը վտանգված է, բայց Սուրբ Հոգին գիտեր այդ մասին: Եթե նա աղոթեր միայն մտքով, ոչ մի դեպքում չէր կարողանա բարեխոսել այդ տարեց մարդու համար:

Մայրս ապրում է Ֆլորիդայում, և ես չգիտեմ, թե ինչ է կատարվում նրա կյանքում տվյալ պահին: Ես չգիտեմ, թե ինչ է կատարվում քրոջս կյանքում, ով ապրում է Կալիֆոռնիայում: Բայց Սուրբ Հոգին գիտի Աստծո կատարյալ կամքը նրանց համար, և Նա կբարեխոսի իմ միջոցով, եթե վստահեմ Նրան և համագործակցեմ Նրա հետ աղոթքի մեջ: Հոգին քննում է ամեն ինչ և գիտի ամեն ինչ: Բացի այդ, մենք լցվում ենք խաղաղությամբ՝ գիտակցելով, որ թույլ ենք տալիս Սուրբ Հոգուն՝ աղոթել մեր միջոցով:

## **Պարզաբանում «անձնական» լեզուների մասին**

Կարևոր է նշել մի բացառություն՝ կապված երկու տեսակի «անձնական» լեզուների հետ: Հոգով լցված հավատացյալները հաճախ են հավաքվում՝ միասին լեզուներով աղոթելու համար: Երբ հավաքույթներին ներկա են միայն Սուրբ Հոգով լցված հավատացյալները, թույլատրելի է, որ բոլորն աղոթեն Հոգով: Այնուամենայնիվ, կան այլ դեպքեր, երբ հավատացյալները չպետք է հրապարակավ գործածեն իրենց աղոթքի լեզուները: Պողոսն ասաց հետևյալը.

«Արդ եթե ամբողջ եկեղեցին մեկտեղ գա, և ամենքը լեզուներով խոսեն, և *տգետներ* կամ *անհավատներ* մտնեն այնտեղ, մի՞թե չեն ասի, թե դուք գժված եք» (Ա Կորնթացիների 14.23):

Այս հատվածում գրված է մարդկանց երկու խմբի մասին: Նախ՝ Պողոսը հիշատակում է *անհավատներին*: Խոսքն այն մարդկանց մասին է, ովքեր չեն ընդունել Հիսուս Քրիստոսին որպես Տեր, այսինքն՝ հավատքից դուրս են: Երկրորդ խումբը *տգետներն* (անտեղյակ մարդիկ) են: Այս մարդիկ հավատում են Հիսուսին, բայց նրանց չեն սովորեցրել Սուրբ Հոգու լեզուների մասին: Երկու խմբերին պատկանող մարդիկ էլ անհարմար կզգան իրենց այնպիսի մթնոլորտում, որտեղ մարդիկ միասին աղոթում են լեզուներով: Նրանք հեշտությամբ կարող են մտածել կամ ասել. «Դուք խելագարներ՞ եք»:

Ցավոք, մեկ կամ երկու անգամ ականատես են եղել, թե ինչպես էին բազմաթիվ մարդիկ բարձրաձայն աղոթում լեզուներով կիրակնօրյա առավոտյան ծառայությունների ժամանակ: Առաջնորդները խրախուսում էին հավատացյալներին՝ այդպես վարվել: Նույնիսկ ես եմ առաջնորդել մարդկանց այդպիսի աղոթքի մեջ՝ գիտության պակասի պատճառով: Նման ծառայություններին, ինչպես բոլոր կիրակնօրյա առավոտյան ծառայություններին, սովորաբար նորեկներ կան, որոնց մեծ մասը պատկանում է *անհավատների* և *անտեղյակների* խմբերին: Նրանք, հավանաբար, մտածում են. «Այս մարդիկ խելագարվե՞լ են»: Ես նկատել եմ, որ այդպիսի եկեղեցիները դժվարությամբ են աճում և հասնում այն բնակավայրերին, որտեղ ապրում են: Միգուցե պատճառն այն է, որ նրանք չեն վարվում ըստ Կորնթացիների առաջին թղթի 14.23-ում գրված իմաստության: Համոզված եմ՝ եթե նրանք շարունակեն այդպես վարվել, *անհավատ* և *անտեղյակ* մարդիկ չեն վերադառնա նրանց մոտ:

Իհարկե, եկեղեցիները նաև աղոթքի ծառայություններ են անցկացնում, որտեղ ներկա են միայն հավատացյալները (օրինակ՝ շաբաթ առավոտյան կամ երկուշաբթի երեկոյան): Այս հավաքույթներին բոլորը թե՛ *տեղեկացված* են, թե՛ *հավատացյալ* են: Այս հավաքույթների նպատակն է՝ Տիրոջը միաբան ծառայելը կամ բարեխոսելը, այնպես որ, ներկաներն ազատորեն կարող են աղոթել լեզուներով:

Պարզ ասած՝ Պողոսը չի ասում, որ հավատացյալները երբեք և ոչ մի տեղ չեն կարող հավաքվել և միաբան խոսել «անձնական լեզուներով»: Նա պարզապես նշում է, որ երբ մեր միջև ներկա են

անհավատ կամ անտեղյակ մարդիկ, պետք է պատշաճ կերպով գործածել լեզուների պարզևը:

### Աստծո ցանկությունը ձեզ համար

«Ուրեմն, եղբայրներ, ջանք արեք, որ մարգարեանաք, և *լեզուներով խոսելը մի՛ արգելեք*: Ամեն բան թող պարկեշտությամբ և կարգով լինի» (Ա Կորնթացիների 14.39,40):

Պողոսը գիտեր, որ եկեղեցին սխալ էր գործածելու լեզուների զարմանալի պարզևը, այդ իսկ պատճառով, նա հորդորում է մեզ. «Գործածե՛ք ճիշտ տեսակի լեզուն ճիշտ միջավայրում, և մի՛ արգելեք լեզուներով խոսելը այն պատճառով, որ որոշ հավատացյալներ սխալ են գործածել Հոգու այս արտասովոր պարզևը»: Դժբախտաբար, եկեղեցին անտեղյակ է Հոգու բազմաթիվ իրողություններից: Սա ողբերգական է, որովհետև Սուրբ Հոգին Նա է, Ով ուղարկվել է՝ եկեղեցին զորացնելու համար: Աստված ընտրեց Իր եկեղեցին՝ որպես Իր թագավորությունը տարածելու միջոց: Եթե մենք չարթնանանք այն զորության համար, որը մեզ է պատկանում՝ շնորհիվ Քրիստոսի մեջ ունեցած դիրքի, մենք նման կլինենք մի թագավորի, ով անտեսում է իր իշխանությունը:

Որքա՛ն հավատացյալներ են բաց թողնում Հոգու զարմանալի պարզևներն ունենալու հնարավորությունը, որովհետև հավատում են, որ լեզուները դադարել են: Աստված պարզորեն ցույց է տալիս Իր սրտի ցանկությունը. «Ես կամենում եմ, որ դուք ամենդ լեզուներով խոսեք...» (Ա Կորնթ. 14.5): Ոմանք կվիճարկեն սա՝ ասելով. «Այս խոսքերը գրում է Պողոսը, ոչ թե Աստված»: Ամբողջ Սուրբ գիրքը գրվել է Աստծո ոգեշնչմամբ, և այս խոսքը բացառություն չէ (տես Բ Տիմոթ. 3.16):

Երբեք մի՛ սոռացեք, որ լեզուների պարզևը Սուրբ Հոգու զորացման կենսականորեն կարևոր գործոններից մեկն է, ինչպես և Աստծո հետ մտերմորեն շփվելու հիասքանչ կողմերից մեկը: Այնպես որ, ես ցանկանում եմ ձեզ նույնը, ինչ ցանկանում էր Պողոսը. ես աղոթում եմ, որ ընդունեք այս հիասքանչ պարզևը, որ ամեն օր աճեք Հոգու զորությամբ և ավելի շատ վերապրեք Նրա ներկայությունը:

## ՀՈԳԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ Ե ՄՂՈՒՄ

«Աստված հասարակեց այդ ուղերձը՝ փայլով նշաններ և փարայտասկ հրաշքներ և Սուրբ Հոգու պարզեցությունը, երբ կամեցավ»:

— (Եբրայեցիների 2.4, NLT)

Սուրբ Հոգին մշտապես գործողության է մղում մեզ: Նա հայտնվում է բազմաթիվ զարմանալի ձևերով: Սուրբ գրքում Նա ներկայացված է *աղավնու, կրակի, քամու և գինու* խորհրդապատկերներով: Հասկանալով այս դրսևորումները՝ մենք ավելի լավ կճանաչենք Նրա բնավորությունը և այն, թե ինչպես է Նա ցանկանում գործել մեզանում և մեր միջոցով:

**Հոգին՝ որպես աղավնի.** Չորս Ավետարաններում էլ գրված է, որ Հոգին իջնում է Հիսուսի վրա աղավնու պես: Աղավնիները մեղմ և հեզ բնավորություն ունեն. նրանք շատ երկչոտ են, և նրանց հեշտությամբ կարելի է վանել: Նրանք իջնում են հանգստանալու միայն անտեղ, որտեղ ապահով և հանգիստ են զգում իրենց: Ջույզ ընտրելիս՝ մինչև կյանքի վերջ չեն բաժանվում: Ինչպե՞ս են այս փաստերն օգնում ձեզ՝ ավելի լավ հասկանալ Սուրբ Հոգուն և ավելի մտերմորեն շփվել Նրա հետ:

---

**Կարդացե՛ք** Մատթեոս 3.16,17, Մարկոս 1.9-11, Ղուկաս 3.21,22, Հովհաննես 1.32,33

**Հոգին՝ որպես կրակ.** Նա հայտնվեց Մովսեսին վառվող մորենու միջից, իսկ Իսրայելին՝ որպես կրակե սյուն<sup>1</sup>: Պենտեկոստեի օրը Հոգին մկրտեց մարդկանց «...բաժանված լեզուներով՝ ինչպես կրակից...» (Գործք 2.3): Նա այն Կրակն է, որ Հիսուսը բերեց այս երկիր, և մենք պետք է զգույշ լինենք, որ չմարենք այն: Ստածեք կրակի հատկանիշների մասին. այն մաքրում է, լույս և ջերմություն է տալիս, կլանում է ամեն ինչ: Ինչպե՞ս է գիտելիքն այս մասին օգնում ձեզ՝ հասկանալ Աստծո Հոգու կրակը ձեր կյանքում: Ի՞նչն է բռնկում կրակը և ի՞նչն է օգնում թեժացնել այն:

---

**Կարդացե՛ք** Գործք 2.3,4, Ղուկաս 12.49, Ա Թեսաղոնիկեցիների 5.19-21, Մատթեոս 3.11,12, Ղուկաս 3.16,17, Երեմիա 20.9, Եբրայեցիների 12.29

**Յոգին՝ որպես քամի.** Նա հայտնվեց Պենտեկոստեի օրը ոչ միայն որպես կրակ, այլ նաև՝ որպես քամի: Քամիները տարբեր են՝ մեղմ գեփյուռից մինչև փոթորիկը: Մտածեք այն մասին, թե ինչ է անում քամին: Ինչպե՞ս կարող է Յոգու քամին գործողություն առաջացնել ձեր կյանքի տարբեր ժամանակաշրջանում: Ի՞նչ կարող է անել այն ձեր կյանքում:

---



---



---

**Կարդացե՛ք** Յովհաննես 3.5-8

**Յոգին՝ որպես գինի.** Պենտեկոստեի օրը աշակերտները խոսեցին լեզուներով՝ հռչակելով Աստծո հրաշալի գործերը: Այս դրսևորումն այնքան ուշագրավ էր, որ ոմանք ասացին, թե նրանք գինուց արբած են, բայց Պետրոսն ասաց, որ դա Յոգին էր: Կանգ առեք և մտածե՛ք: Ինչպե՞ս կարող է գինի խմելը ազդել մարդու զգացմունքների վրա: Ինչպե՞ս կարող է Յոգու «նոր գինին» ազդել ձեզ վրա:

---



---



---

**Կարդացե՛ք** Գործք 2.13-18, Ղուկաս 5.37,38 (ինչպես նաև՝ Մարկոս 2.22, Մատթեոս 9.17), Եփեսացիների 5.18,19, Եսթր 1.10, Երեմիա 31.11-13:

*«Երկինքը չի կարող տեղավորել Սուրբ Հոգուն. բայց և այնպես, Նա բնակվում է Իր ծառաների սրտերում: Մենք Նրա տաճարն ենք: Նրա ներգործություններից յուրաքանչյուրը գոհություն և փառաբանություն է առաջացնում մեզանում: Եթե Նա քամու նման է, մենք կլինենք զանգակների պես, որոնք դողանքում են քամու ժամանակ. եթե Նա ցողի նման է, մենք կծաղկենք ծաղիկների պես. եթե Նա կրակ է, մենք ջերմեռանդորեն կվառվենք: Ինչպես էլ Նա շարժվի մեզանում, մենք պատրաստակամորեն կարչազանքենք Նրա շայնին»:*

— Զարլգ Սփերջեն<sup>2</sup>

# ՆՐԱ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

«Հոգու ներկայության վկայությունը տրված է յուրաքանչյուր մարդու՝  
բոլորի օգտի համար»:

— (Ա Կորնթացիների 12.7, GW)

Աստծո Հոգու ներկայությունը մշտապես ուղեկցվում է վկայությամբ: Գետերը և ծովերը ետ են քաշվում, ումնում է ցամաքը: Կույր աչքերը և խուլ ականջները բացվում են: Կաղերը քայլում են, և համրերը՝ խոսում: Վախը պարտվում է, և կրկին հույս է ծնվում: Բազմապիսի նշանները և հրաշքերը հետքեր են թողնում մեր կյանքի ընթացքի վրա, երբ մենք մտերմորեն շփվում ենք Աստծո Հոգու հետ:

Կրկին ու կրկին, Գործք առաքելոց գրքի պատմությունները հաստատում են, որ երբ Սուրբ Հոգին ներկա էր, մարդիկ լսում և տեսնում էին վկայությունն այդ մասին: Ետ նայեք ձեր կյանքին. Հոգու ներկայության ինչպիսի՞ վկայություններ կարող եք հիշել: Մեկ կամ երկու նախադասություն գրեք՝ նկարագրելով այն իրավիճակները, որոնցում Հոգին հայտնվել է և շրջադարձային կերպով փոխել է ձեր կյանքը:

Ես հիշում եմ, երբ \_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

Ես հիշում եմ, երբ \_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

Ես հիշում եմ, երբ \_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

Մի՛ շտապեք: Աստծո բարության շուրջ: Թույլ տվեք, որ Հոգին նոր կյանք և աշխուժություն հաղորդի ձեզ, մինչև կհիշեք, թե որքան հավատարիմ է Նա եղել ձեր հանդեպ:



*«Եվս մեկ անգամ կվերհիշեմ այն, ինչ Աստված արել է. կրկին կմտաբերեմ  
հին հրաշքները. ես կմտորեմ այն ամենի շուրջ, ինչ արել ես, և երկարատև  
սիրով լի հայացք կգցեմ Քո գործերի վրա:*

*Ո՛վ Աստված. Քո ճանապարհը սուրբ է: Ոչ մի աստված այնքան մեծ չէ,  
որքան Աստված: Դու այն Աստվածն ես, Ով գործում է. Դու ցույց փվեցիր  
քոյորին, թե ինչ կարող ես անել»:*

— (Սաղմոս 77.11-14, MSG)

Սուրբ Հոգին օգնել է ձեզ նախկինում, և Նա ցանկանում է կրկին  
անել դա: Արդյո՞ք կարիք ունեք, որ Նա օգնի ձեզ հիմա, և ինչպե՞ս:  
Լռությամբ մոտեցե՞ք Նրան և խնդրե՞ք, որ Նա կրկին անի դա:  
Խնդրե՞ք Նրան՝ վկայություն տալ այն մասին, որ Նա իրական է և  
իրապես հոգում է ձեր և ձեզ շրջապատող մարդկանց մասին: Լուռ  
մնացեք: Ի՞նչ է Նա ասում ձեզ:

---

---

---

---

Կա՛նգ առեք և փառաբանություն մատուցեք Տիրոջը: Փառա-  
բանության և գոհության **աղոթք գրեք** Նրա համար. Նա արժանի՛ է:

---

---

---

---

## ԼՅՎԵԼԸ՝ ՆԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՊՐՈՒՄ Է

«Մի՛ արբեք գինով, որովհետև դա կկործանի ձեր կյանքը: Փոխարենը՝  
լցվեք Սուրբ Հոգով»:

— (Եփեսացիների 5.18, NLT)

Սուրբ Հոգով լցվելու մասին Աստծո պատվերը, որը Նա տվեց Պողոսի միջոցով, կենսականորեն կարևոր է: «Լցվել» բառը հունարենում «պլերոո»-ն է, որը նշանակում է՝ «լցվել և ամբողջովին տարածվել ինչ-որ մեկի անձի մեջ»<sup>3</sup>: Այս բայի ձևը նույնպես կարևոր նշանակություն ունի. այն կրավորական սեռի է, հրամայական եղանակով և ներկա ժամանակով: **Կրավորական սեռը** նշանակում է, որ սա պետք է կատարվի ձեր՝ գործողության առարկայի հետ. **հրամայական եղանակը** պարզ է դարձնում, որ սա պատվիրան է, ոչ թե առաջարկ, և **ներկա ժամանակը** ցույց է տալիս, որ սա շարունակական գործողություն է:

Եփեսացիների 5.18-ը՝ «Էմփիֆայդ» Աստվածաշնչում (AMP), ավելի է շեշտադրում այս ճշմարտությունը. «Եվ մի՛ արբեք գինով, որովհետև դա անառակություն է, բայց **մշտապես լցվեք** և քաջալերվեք [Սուրբ] Հոգով»: Հոգով լցվելու շարունակական վերապրումը մեզ տալիս է այն ամենը, ինչի կարիքն ունենք, որպեսզի ապրենք Հիսուսի նման և բերենք Աստծո կամքը երկրի վրա այնպես, ինչպես այն Երկնքում է: Ավետարանիչ **Սմիթ Վիգլսվորթն** ասել է.

«Ես երբեք չեմ կարողանա լիարժեք կերպով գնահատել, թե ինչ է Սուրբ Հոգով մկրտությունն ինձ համար... Հոգով լցված լինելը շքեղություն է, բայց միևնույն ժամանակ՝ աստվածային պատվիրան է մեզ համար... Լինելով Սուրբ Հոգով մկրտված՝ ես մշտապես *լցվում եմ*. դուք պետք է խոսեք լեզուներով առավոտյան, կեսօրին և երեկոյան: Երբ ապրեք Հոգու մեջ, դեռևս ձեր տան աստիճաններից իջնելու ժամանակ սատանան հարկադրված կլինի հեռանալ ձեր առջևից: Նրա աչքին դուք կլինեք ավելին, քան հաղթող:

Ապրելով Հոգու մեջ՝ դուք շարժվում, գործում, ուտում, խմում և անում եք ամեն ինչ Աստծո փառքի համար: Մեր ուղերձը մշտապես հետևյալն է. «Լցվե՛ք Հոգով»: Կյանքը Հոգու մեջ՝ այն վայրն է, որն Աստված պատրաստել է ձեզ համար. այն շատ ավելի բարձր է բնական կյանքից, ինչպես որ երկինքն է բարձր երկրից: Տրվե՛ք Աստծուն, որպեսզի Նա լցնի ձեզ»<sup>4</sup>:

Պետրոսը, Հովհաննեսը և այլ աշակերտներ Պենտեկոստեի օրը մկրտվեցին Սուրբ Հոգով: Կարճ ժամանակ անց տեղի ունեցած աղոթքի ընթացքում նրանք կրկին լցվեցին Հոգով: Ուշադրությամբ կարդացե՛ք Գործք 4.23-31-ը: Ի՞նչ կարող եք սովորել այս պատմությունից՝ մշտապես Հոգով լցված լինելու համար:

---



---



---



---

Աստված ասում է Պողոսի միջոցով. «Անփութորեն մի՛ վերաբերվիր այն պարզեհին» (Սուրբ Հոգու պարզեհին), այլ՝ «բորբոքի՛ր այն ներքին կրակը, որ Աստված տվել է քեզ» (Ա Տիմոթ. 4.14, Բ Տիմոթ. 1.6, Ֆիլիպսի թարգմանությունը): Ուշադրությամբ կարդացե՛ք Եփեսացիների 5.18,19, 6.18 և Հուդա 20 խոսքերը: Ի՞նչ է ցույց տալիս ձեզ Հոգին՝ Իր կրակը ձեր մեջ բորբոքված պահելու մասին:

---



---



---



---

*«Այնպես որ, տես թե ինչ եմ ցանկանում, որ անեք՝ Աստծո օգնությամբ. ձեր առօրյա կյանքը՝ քունը, սնվելը, աշխատանքի գնալը, ձեր կյանքի ընթացքը դրե՛ք Աստծո առջև՝ որպես զոհաբերություն: Լավագույն բանը, որ կարող եք անել Աստծո համար, հետևյալն է. ընդունե՛ք այն, ինչ Նա անում է ձեզ համար: Մի՛ հարմարվեք ձեր մշակույթին այն աստիճան, որ առանց մտածելու՝ նմանվեք դրան: Փոխարենը՝ ձեր ուշադրությունն ուղղե՛ք Աստծուն. դուք կփոխվեք՝ ներսից դուրս»:*

## ՆԱ ՊԱՐԳԵՎՆԵՐ Է ՏՎԵԼ ՁԵՁ ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՈՎ

*«Ամեն մարդուն տրված է ինչ-որ բան՝ անելու համար, ինչը ցույց է տալիս, թե Ով է Աստված. քոլորն ունեն իրենց դերը. քոլորն օգուտ են սրանում»:*

— (Ա Կորնթացիների 12.7, MSG)

Սուրբ Հոգին հատուկ պարգևներ է տվել մեզ, որպեսզի շարունակենք այն աշխատանքը, որ Հիսուսը սկսեց: Թեև պարգևները բազմապիսի են, «Մեկ և միակ Հոգին է, Ով բաժանում է այդ բոլոր պարգևները: Միայն Նա է որոշում, թե ինչ պարգև պետք է ունենա յուրաքանչյուրը» (Ա Կորնթ. 12.11, NLT):

Արդյո՞ք այդ պարգևները գործում են այսօր: Արդյո՞ք մենք պետք է անենք այն գործերը, որ Հիսուսն արեց: Իհարկե: Ավետարանիչ **Ռեյնհարդ Բոնկեն**, ում ծառայության շնորհիվ միլիոնավոր մարդիկ ընդունել են Քրիստոսին ամբողջ Աֆրիկյան մայրցամաքում, հռչակում է.

«Ես հաստատ համոզված եմ, որ Աստված՝ Իր ժողովրդի հրաշագործն է: Ես հավատում եմ՝ այն նշանները, որոնք հետևում էին Հիսուսին, երբ նա քայլում էր այս երկրի վրա, կարող են իրական լինել, և այսօր էլ պետք է իրական լինեն մեր կյանքերում: Հիսուսն Իր աշակերտներինասաց. «Ինձ հավատացողը՝ այն գործերը, որ ես գործում եմ, նա՛ էլ կգործի, և նրանցից էլ ավելի մեծ բաներ կգործի, որովհետև ես Իմ Հոր մոտ եմ գնում»<sup>5</sup>:

Ուշադրությամբ կարդացե՛ք **Հռոմեացիների 12.3-8**-ը և անվանե՛ք այս հատվածում նշված պարգևները: Ընդհանուր առմամբ, ինչպե՞ս կնկարագրեիք այս պարգևները (դրանց նպատակը և գործառույթը):

---

---

---

---

Այժմ կարդացե՛ք **Ա Կորնթացիների 12.4-11**-ը և առանձնացրե՛ք ինը պարգև: Ընդհանուր առմամբ, ինչպե՞ս կնկարագրեք այս պարգևները (դրանց նպատակը և գործառույթը):

---

---

---

---

Ուսումնասիրե՛ք այն պարզևները, որոնք նշված են այս երկու հատվածներում: Արդյո՞ք այս պարզևներից որևէ մեկը գործում է ձեզանում:

---

---

---

---

Դժվարան՞ում եք պատասխանել: Այս պարզևներից որո՞նք են ոգեշնչում ձեզ: Խնդրե՛ք Սուրբ Հոգուն՝ ցույց տալ, թե ինչպիսի պարզևներով է օժտել ձեզ:

Երբ գործում եք այն պարզևներով, որոնցով Հոգին օժտել է ձեզ, կարևոր է ձեր վերաբերմունքը մարդկանց հանդեպ: Աստված ասում է. «Թող Ինքը՝ Քրիստոսը, լինի ձեր օրինակը այն ամենի մեջ, թե ինչպիսին պետք է լինի ձեր վերաբերմունքը» (Փիլիպ. 2.5, Ֆիլիպսի թարգմանությունը): Ռեյնհարդ Բոնկեն հաստատում է սա՝ ավելացնելով.

«Աստծո գործի հաջողությունը կախված չէ մեզնից որևէ մեկից: ...Ամեն ինչ կատարվում է Նրանից կախված լինելու միջոցով: ...Ես ոչինչ եմ, և Աստված կարող է գործածել ինձ զուտ այն պատճառով, որ արժևորում են Նրա ձայնը՝ մյուս բոլոր ձայներից առավել: ...Ես երբեք չպետք է համարեմ, որ ավելին եմ, քան Աստծո ծառաներից որևէ մեկը»<sup>6</sup>:

Ուշադրությամբ կարդացե՛ք Ա Կորնթացիների 12.12-26 և Հռոմեացիների 12.3-5 հատվածները: Ի՞նչ է հայտնում Հոգին ձեր վերաբերմունքի մասին: Որքա՞ն կարևոր է յուրաքանչյուր մարդու պարզևը, ներառյալ՝ ձերը: Ի՞նչ կկատարվի Քրիստոսի Մարմնի հետ, եթե անտեսեք ձեր պարզևը:

---

---

---

---

**Ջետազա ուսումնասիրության համար...**  
Ծիշտ վերաբերմունք ունենալու նասին. Փիլիպեցիների 2.1-8, Բ  
Կորնթացիների 8.9, Սատթեոս 23.11,12  
Չոգին նույնպես ծառայությունների է նշանակում հավատացյալ-  
ներին՝ հատուկ նպատակով. Ա Կորնթացիների 12.28-31, Եփեսա-  
ցիների 4.11-14

## ԹՈՒՅԼ ՏՎԵՔ ՆՐԱՆ՝ ՁԵՐ ՄԻՋՈՑՈՎ ԱՂՈԹԵԼ ՀԱՄԱՁԱՅՆ ԱՍՏԾՈՒ ԿԱՄՔԻ

*«Աստուծո Հոգին հենց մեր կողքին է և մշտապես օգնում է մեզ: Եթե մենք չզփոքենք, թե ինչպես կամ ինչ աղոթել, դա կարևոր չէ: Նա աղոթում է մեր փոխարեն՝ մեր ներսում և մեզ համար՝ աղոթք կազմելով մեր անհոս հառաչանքներից, մեր սասարիկ հոգոցներից»:*

— (Հռոմեացիների 8.26, MSG)

Երբևէ պատահե՞լ է, որ այնքան համակված եք եղել զգացմունքներով և այնքան կոտրված եք եղել կյանքի հանգամանքներից, որ չեք իմացել՝ ինչպես աղոթել: Դուք միայնակ չեք: Անթիվ սրբեր նման վերապրումներ են ունեցել: Այդ պահերին Աստված ցանկանում է, որ *վազեք Իր մոտ*, ոչ թե փախչեք Իրենից: Նա ցանկանում է, որ դուք բացվեք՝ փակվելու փոխարեն: Երբ չգիտեք՝ ինչ ասել կամ ինչպես աղոթել, Քրիստոսի Հոգին, Ով ապրում է ձեզանում, Նա՛ գիտի:

Անչափ կարևոր է, որ ոչ միայն ձեր մտքում, այլև ձեր սրտում իմանաք, որ Աստծո Հոգին ապրում է ձեզանում: Ժամանակ հատկացրեք՝ ստորելու հետևյալ խոսքերի շուրջ: Ինչպիսի՞ իմաստություն է հայտնում ձեզ Սուրբ Հոգին:

**Ստորեք հետևյալ խոսքերի շուրջ.** Գաղատացիների 4.6, Հռոմեացիների 8.16, Ա Կորնթացիների 6.19, Հովհաննես 14.23, Ա Հովհաննես 3.24, 4.12,13: Խնդրեք Հոգուն, որ օգնի ձեզ՝ իրապես ճանաչել Նրան:

---

---

---

Աստված ցանկանում է, որ մենք «աղոթենք Հոգով ամեն ժամանակ և ամեն իրավիճակում» (Եփես. 6.18, NLT): **Վոչման Նին**, ով համարձակությամբ մարմնական զրկանքներ էր կրել և տարիներ շարունակ բանտարկված էր եղել, գրում է.

«Գոհություն Աստծուն, որ Ամենակարող Սուրբ Հոգին մեզ հետ է՝ մեզ օգնելու համար: Մենք պետք է ապավինենք ներքնակվող Սուրբ Հոգուն, Ով զորությամբ գործում է մեր ներսում, որովհետև Նա մեր օգնությունն է տկարության և անիրազեկության պահերին: Թեև

մենք չգիտենք՝ ինչպես աղոթել, բայց ներբնակվող Սուրբ Հոգին, Ով անձամբ գիտի Աստծո կամքը, կսովորեցնի մեզ աղոթել՝ համաձայն Աստծո մտքի»<sup>7</sup>:

Կանգ առեք և մտածեք: Որքա՞ն հաճախ եք իմանում, թե ինչպես աղոթեք ձեզ համար, այլ մարդկանց համար, նաև այն իրավիճակների համար, որոնց բախվում եք: Ինչպիսի՞ն պետք է լինի մեր վերաբերմունքը և մոտեցումն Աստծո հանդեպ ամեն անգամ աղոթելիս:

**Կարդացե՛ք** Առակաց 3.5-8, 28.26, Ղուկաս 18.9-14, Հակոբոս 4.6-10:

*Ցանկանո՞ւմ եք ապրել Աստծո կատարյալ կամքի մեջ: Հոգին կօգնի ձեզ. Նա կաղոթի ձեր միջոցով՝ աղաղակներով, հառաչանքներով, հոգոցներով և երկնային լեզուներով: «Եվ Հայրը, Ով գիտի բոլոր սրտերը, գիտի, թե ինչ է Հոգին ասում, որովհետև Հոգին խնդրում է հավատացյալների համար, համաձայն Աստծո կամքի» (Հռոմ. 8.27, NLT): Ուշադրությամբ կարդացե՛ք այս հատվածը: Ի՞նչ է հայտնում ձեզ Հոգին այս խոսքերի միջոցով:*

*«Որովհետև եթե լեզուներով խոսելու կարողություն ունեք, դուք կխոսեք միայն Աստծո հետ... Դուք կխոսեք Հոգու զորությամբ, բայց այդ ամենը կլինի խորհրդավոր կերպով: Այն մարդը, ով խոսում է լեզուներով, զորանում է իր անձում... Որովհետև եթե աղոթում եմ լեզուներով, իմ հոգին է աղոթում, բայց ես չեմ հասկանում, թե ինչ եմ ասում: Ուրեմն, ի՞նչ անեմ: Ես կաղոթեմ հոգով և նույնպես կաղոթեմ այն բառերով, որոնք հասկանում եմ: Ես կերգեմ հոգով և նույնպես կերգեմ այն բառերով, որոնք հասկանում եմ»:*

— (Ա Կորնթացիների 14.2,4,14,15, NLT)

*«Երբ անձնատուր լինեք Հոգուն, Նա կներկայացնի ձեզ և ձեր կարիքը Հոր գահի առջև: Սուրբ Հոգին գիտի Աստծո կատարյալ միտքը և կամքը: Նա, Ով քննում է ձեր սիրտը և գիտի ձեզ ավելի լավ, քան դուք ինքներդ, կբերի այդ կարիքը Աստծո գահի առջև: Դուք չեք կարող վրիպել, երբ Սուրբ Հոգին աղոթում է ձեր միջոցով»:*

— Քեթրին Կովման



# ՀԱՐՑԵՐ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

Եթե դուք ուսումնասիրում եք «Սուրբ Յոզի. Ներածություն» գիրքը՝ որպես «Մեսիաններ Յավաքածու»-ի ամբողջական դասընթացի մաս, խնդրում ենք՝ դիտելք ուսումնական տեսանյութ 4-ը:

- 1 | Կարևոր է հասկանալ, որ փրկության պահին Սուրբ Յոզու ներբնակությունը մեզանում և Սուրբ Յոզով լցվելը՝ տարբեր փորձառություններ են: Ինչպե՞ս կնկարագրեիք այս երկու արտասովոր փորձառությունները:
- 2 | Ձեր կարծիքով, ինչո՞ւ Յիսուսը պատվիրեց Իր աշակերտներին սպասել Սուրբ Յոզով լցվելուն, մինչև Իր թագավորության համար որևէ բան անելը (կարդացե՛ք Գործք 1.4,5): Ի՞նչ կարող ենք սովորել «սպասել՝ ի վերուստ զորությունն ընդունելու համար» սկզբունքից: Ինչպե՞ս կարող ենք կիրառել այն այսօր:
- 3 | Սուրբ Յոզով լցվելը զորացնում է մեզ այլ լեզուներով խոսելու համար: Մենք չգիտենք այն լեզուները, որոնցով խոսում ենք: Պատկերացրե՛ք, որ այն բարեպաշտ հրեաներից մեկն եք, որոնց մասին զրված է Գործք առաքելոցի 2-րդ գլխում, և երուսաղեմ եք այցելել որևէ օտար երկրից՝ Պենտեկոստեի օրվա առթիվ: Ձեր կարծիքով, ինչպե՞ս կարծագանքեիք, երբ լսեիք, որ հավատացյալները խոսում են ձեր մայրենի լեզվով այն փրկության մասին, որը Յիսուս Քրիստոսով է:
- 4 | Երբ հավատացյալները լցվում են Սուրբ Յոզով, առհասարակ, ի՞նչ երկու դրսևորում է տեղի ունենում: Ո՞րն էր պատճառը, որ Աստված միաժամանակ շնորհեց փրկությունը և Սուրբ Յոզու լեցունությունը Կոռնելիոսին և նրա ընտանիքին: Պատմե՛ք որևէ պատմություն այն մասին, թե ինչպես Աստված դուրս եկավ այն «կրոնական կաղապարից», որի մեջ դուք դրել էիք Նրան, և ընդլայնեց ձեր պատկերացումն Իր մասին:

- 5 | Եթե մարգարեության և լեզուներով խոսելու դրսևորումները

վերաբերում են նաև ժամանակակից հավատացյալներին, ի՞նչ նկատի ունեն Պողոսը՝ ասելով, որ *ոչ բոլորն են խոսում լեզուներով* (տե՛ս Ա Կորնթ. 12.27-30), և որ *լեզուները կդադարեն* (տե՛ս Ա Կորնթ. 13.8-12): Ուշադրությամբ կարդացե՛ք այս խոսքերը և բացատրե՛ք:

6 | Աստվածաշունչը խոսում է չորս տեսակի լեզուների մասին: Կարդացե՛ք հետևյալ հատվածները և անվանե՛ք լեզուների չորս տեսակները՝ բացատրելով, թե ինչո՞ւ է Աստված տվել Սուրբ Յոգու այս տարբեր դրսևորումները Իր Եկեղեցուն:

Ա Կորնթացիների 14.22

Ա Կորնթացիների 12.10

Ա Կորնթացիների 14.14,15

Յոռնեացիների 8.26-28

Ինչո՞ւ է կարևոր հասկանալ տարբերությունները լեզուների տեսակների միջև:

7 | Կարո՞ղ է որևէ հավատացյալ լցված լինել Սուրբ Յոգով, բայց չխոսել լեզուներով: Ինչո՞ւ կամ ինչո՞ւ ոչ: Ինչո՞ւ է նման բան տեղի ունենում: Անվանե՛ք մի քանի պատճառ:



## ԳԼԽԻ ԱՄՓՈՓՈՒՄ

- Հոգով գորանալն էապես կարևոր է Աստծո թագավորության ամբողջ աշխատանքի համար:
- Սուրբ Հոգու լեցունությունն առանձին վերապրում է, որը հետևում է փրկությանը:
- Փրկությունը *նոր դիրք է շնորհում մեզ* Քրիստոսի մեջ. Հոգու լեցունությունը *գորացնում է մեզ`* Նրա նման ապրելու համար:
- Լեզուները չեն դադարել. դրանք գործելու են, քանի դեռ մենք երես առ երես չենք տեսել Հիսուսին:
- Կան չորս տեսակի լեզուներ. որպես նշան անհավատներին, մեկնության, անձնական աղոթքի համար և բարեխոսական: Առաջին երկուսը հրապարակային գործածության համար է, իսկ մյուս երկուսը` անձնական:

## Հոգու լեզուն

«Եթե դուք փառաբանում եք Աստծուն անձնական լեզուներով,  
Նա հասկանում է ձեզ..., որովհետև դուք մտերմաբար շփվում եք  
միայն ձեր և Նրա միջև»:

— (Ա Կորնթացիների 14.2, MSG)

### Օր 1

**Ի**նձ դուր է գալիս, թե ինչպես է «Մեսիջ» Աստվածաշունչը (MSG) պատկերում անձնական հանդիպումը մեր Աստծո հետ: *Լեզուների* նման գործածության միջոցով տեղի է ունենում հրաշալի շփում «միայն ձեր և Նրա [Աստծո] միջև»:

Նախորդ գլխում դիտարկեցինք լեզուների չորս տեսակները, որոնք նկարագրված են Նոր կտակարանում. լեզուները՝ որպես նշան անհավատներին, մեկնության լեզուները, որոնք գործածվում են եկեղեցում, անձնական աղոթքի լեզուները և բարեխոսական լեզուները: Լեզուների առաջին երկու տեսակը պետք է գործածվի հրապարակային ծառայության ժամանակ (երկու կամ ավելի մարդկանց ներկայության դեպքում), իսկ մյուս երկու տեսակը՝ անձնական են: Այս գլխում կշարունակենք ուսումնասիրել Սուրբ Հոգու հետ մեր *անձնական* շփման գործառույթները և բնույթը, որն ընդգրկում է խոսելը և՛ լեզուներով, և՛ մտքով: Միասին այս աղոթքի արտահայտությունները կազմում են *Հոգու լեզուն*:

Թույլ տվեք կրկին պարզաբանել. անվանելով այս դրսևորումները «անձնական»՝ ես նկատի չունեմ, որ դրանք պետք է գործածվեն միայն այն ժամանակ, երբ մարդը մենակ է: Ես ցանկանում եմ ասել, որ անձնական դրսևորումները երկնային լեզուներով պետք է գործածել՝ զգայուն լինելով այն մարդկանց հանդեպ, ում Աստվածաշունչն անվանում է «անտեղյակներ» կամ «անհավատներ»: Նման դրսևորումները կարող են գործածվել, երբ մարդը մենակ է կամ այլ հավատացյալների հետ է, ովքեր հասկանում են Հոգու այս դրսևորումը: Օրինակ՝ իմ ընտանիքում

կան *անձնական* թեմաներ, որոնք չէի քննարկի իմ նոր ծանոթների հետ, քանի որ նրանք չեն հասկանա ինձ (տե՛ս Ա Կորնթ. 14.22-25-ը՝ ավելիի համար):

Ուշադրություն դարձրեք, որ Ա Կորնթացիների 14.2-ում Պողոսը լեզուների այս գործածությունն անվանում է «անձնական լեզու»: Ցավոք, բազմաթիվ եկեղեցական խմբեր սխալ են ընկալել կամ լիովին մերժել են անձնական լեզուների զարմանալի պարզևը, որովհետև չեն հասկացել, որ մտերմությունը պահանջում է պատշաճ *ժամանակ* և *վայր*:

Ցանկացած զույգ ունի հատուկ ժամանակ և վայր՝ մտերիմ հարաբերությունների համար: Արդյո՞ք դա տեղի է ունենում ամուսնությունից առաջ: Ո՛չ: Միգուցե՝ որևէ հասարակական վայրո՞ւմ: Անկասկած՝ ո՛չ: Այն, ինչ գեղեցիկ է և սահմանված է Աստծո կողմից մի միջավայրում, կարող է տհաճ և անպատշաճ լինել մեկ այլ միջավայրում: Աստված նախատեսել է, որ մտերիմ սեռական հարաբերությունները տեղի ունենան ծածուկ վայրում և միայն ամուսնական ուխտերի փոխանակումից հետո: Նմանապես, լեզուների որոշ տեսակները պետք է գործածվեն միայն ծածուկ վայրում, որովհետև դրանց նպատակը՝ մտերիմ հարաբերություններն են: Հոգևոր մտերմության, ինչպես և մարմնական մտերմության պատշաճ արտահայտությունը պետք է տեղի ունենա որոշակի ժամանակ և որոշակի վայրում: Մի՞թե քրիստոնյաները պետք է հրաժարվեն սեռական հարաբերությունների պարզևից այն պատճառով, որ մարդկությունը աղավաղել է Աստծո սկզբնական մտադրությունը և նպատակը դրա վերաբերյալ: Իհարկե՝ ո՛չ: Նմանապես, մենք չենք կարող անտեսել կամ անարգել լեզուների պարզևը:

Ես գիտեմ, որ շատերը տեսել են, թե ինչպես են եկեղեցում լեզուների պարզևի տեսակները սխալ գործածվել կամ նույնիսկ՝ չարաշահվել: Այնուամենայնիվ, մենք չպետք է հրաժարվենք Քրիստոսի Մարմինը կրթելուց և հավատացյալներին այս պարզևի մասին սովորեցնելուց զուտ այն պատճառով, որ ոմանք սխալ են հասկացել կամ սխալ են գործածել այն: Ահա թե ինչու այս գլխում ցանկանում եմ հետազոտել մեր երկնային լեզվի մտերմիկ բնույթը, և օգնել ձեզ, որ ավելի լավ հասկանաք դրա նպատակն ու կարևորությունը:

Հիշե՛ք, որ Սուրբ Հոգին՝ ճշմարտության Հոգին է: Երբ տրվեք

Աստժո խոսքի իմաստությանը, Հոգին կհայտնի ձեզ *ամբողջ* ճշմարտությունը: Մի պահ կանգ առեք և հրավիրե՛ք Նրան՝ ձեզ հետ անցկացնելու այս ուսուցմանը նվիրված ժամանակը: Խնդրե՛ք Նրան՝ հեռացնել ձեր մտքից ցանկացած կանխակալ գաղափարներ կամ հանդուժողություններ, որոնք հակառակ են Նրա խոսքին: Դուք երբեք չեք կարողանա վերապրել Աստժո լիությունը, եթե թույլ տաք ձեր սահմանափակ մտքին՝ սահմանել և սահմանափակել Նրա անսահման մեծությունը:

### Նախագահը և թագավորը

Որպես Միացյալ Նահանգների քաղաքացի՝ ես մեծ պատիվ կհամարեի, եթե մեր երկրի նախագահի հետ ընթրելու հրավեր ստանայի: Մեր երկրի նախագահը ամենահայտնի և ամենաազդեցիկ մարդկանցից մեկն է ամբողջ աշխարհում: Հաշվի առնելով այն բազմաթիվ գործակալությունները, որոնք նրա տրամադրության ներքո են, շատ քիչ տեղեկություններ կան, որ նա չի կարող ստանալ: Մեր նախագահի գիտելիքները երկրի գործերի մասին մեծապես գերազանցում են իմ գիտելիքները. նա Գլխավոր հրամանատարն է, իսկ ես՝ հասարակ քաղաքացի, ով չի զբաղեցնում ոչ մի կառավարական պաշտոն: Այդ իսկ պատճառով, մեր երկրի գործերը քննարկելու դեպքում նախագահը հարկադրված կլինի խոսել ինձ հետ իմ գիտելիքների մակարդակի վրա: Եթե նա այդպես չվարվի, ես չեմ կարողանա շփվել նրա հետ, որովհետև հաջողակ հաղորդակցության համար մենք պետք է խոսենք ընդհանուր թեմաների շուրջ:

Նմանապես, շփվելով տիեզերքի Թագավորի հետ՝ ես ոչ մի դեպքում չեմ կարողանա շփվել Նրա հետ Նրա մակարդակի վրա: Միգուցե ԱՄՆ-ի նախագահը շատ տեղեկություններ ունենա մեր երկրի մասին, բայց Աստված գիտի ամեն ինչ, և ոչինչ թաքնված չէ Նրանից: Երբ աղոթում եմ Աստժուն իմ մտքով, ես սահմանափակված եմ նրանով, ինչ տեսնում եմ և գիտեմ: Աստժուն չէր բավարարում մտերիմ շփման սահմանափակ մակարդակը Իր զավակների հետ. ուստի, Նա հնարավորություն տվեց ձեզ հաղորդակցվելու Իր հետ *Իր մակարդակի վրա*. Նա արեց դա

Իր Յոգու պարզևի միջոցով: Աստված կարծես թե ասեր. «Ես չեմ ցանկանում շփվել Իմ զավակների հետ այնպիսի մակարդակի վրա, որը շատ ավելի ցածր է Իմ գիտելիքներից, հասկացողությունից և իմաստությունից: Ես ցանկանում եմ, որ նրանք կարողանան մտերմորեն շփվել Ինձ հետ: Հենց այդ պատճառով էլ տալու եմ Իմ զավակներին Օգնական` Իմ Հոգին»: Սուրբ Հոգու ներկայությունը և հաղորդությունը հնարավորություն են տալիս մեզ խորը մտերմություն վերապրել Արարչի հետ:

Աստծո կամքը և ճանապարհները գերազանցում են մեր սահմանափակ միտքը, բայց Հոգով աղոթելիս մենք չենք աղոթում համաձայն մեր մտքի, այլ համաձայն Նրա Հոգու կամքի: Դուք հասկացա՞ք սա: Հոգով աղոթելիս *մենք աղոթում ենք համաձայն Աստծո կատարյալ կամքի:*

## Պատերազմական լեզու

«Որովհետև մենք չենք պայքարում մարմնի և արյան դեմ, այլ` ընդդեմ տերությունների, իշխանությունների, տիեզերական զորությունների, որոնք իշխում են ներկա խավարում, ընդդեմ չար հոգևոր ուժերի` երկնային վայրերում» (Եփեսացիների 6.12, ESV):

Երբեմն հեշտորեն մոռանում ենք, որ սատանան պատերազմ է հայտարարել մարդկության դեմ` օգտագործելով բոլոր ուժերը և միջոցները, որոնք իր տրամադրության տակ են: Նրա մարտավարությունը մշտապես եղել է` բաժանել մեզ մեր Արարչից, Ով կյանքի աղբյուրն է: Բայց Աստված գիտի թշնամու հնարները: Իր անսահման իմաստությամբ Նա գաղտնի մարտավարություն է մշակել` սատանայի ծրագրերը խափանելու համար: Պողոսը նկարագրում է այդ մարտավարությունը Ա Կորնթացիների 2.7,8-ում. «Այն իմաստությունը, որի մասին մենք խոսում ենք, Աստծո *խորհուրդն* է` Նրա ծրագիրը, որը նախկինում ծածկված էր, թեև Նա կազմել էր այն մեր վերջնական փառքի համար մինչև աշխարհի սկիզբը: Բայց այս աշխարհի իշխանները չհասկացան այն. եթե նրանք հասկանային, չէին խաչի մեր փառավոր Տիրոջը» (NLT): Պողոսը նկարագրում է խաչի զորությունը` այն *խորհուրդը*, որը «նախկինում ծածկված էր», բայց հայտնվեց Հիսուսի մահից և հարությունից հետո: Հիսուսի



զոհը խաչի վրա հնարավորություն տվեց մեզ ավելի մտերիմ շփում ունենալ Աստծո հետ՝ այսպիսով խափանելով մեր թշնամու վաղուց կազմած ծրագրերը:

Աստծո ծրագիրը խաչի համար՝ միակ խորհուրդը չէր, որը թաքնված էր այս աշխարհի իշխաններից: Աստծո իմաստությունը (Նրա Խոսքը) շատ ծածկված կողմեր ունի, որոնք կարող են բացահայտվել և զանազանվել միայն Նրա Հոգով: Մենք՝ հավատացյալներս, կարող ենք իմանալ այդ խորհուրդները Հոգու հետ հաղորդության միջոցով: Ինչպես արդեն հիշատակեցի այս գլխում, Աստված չբավականացավ պարզապես մեզ «փրկելով»: Աստված նաև դիրք շնորհեց մեզ *Քրիստոսի մեջ* և իշխանություն ու զորություն տվեց նույն թշնամու վրա, ով արդեն երկար ժամանակ է՝ չարչարում էր մեզ: Այժմ մենք Աստծո թագավորության ժառանգներն ու պատերազմողներն ենք, և մեր նպատակն է՝ տարածել Քրիստոսի գործը: Իր իմաստությամբ Աստված մի միջոց ստեղծեց, որով կարող է գաղտնի հաղորդել Իր կատարյալ ծրագիրը այն հավատացյալներին, ովքեր պայքարում են Իր նպատակների համար:

Պատերազմների ժամանակ զինվորականներն ամբողջական «լեզուներ» էին մշակում՝ իրենց ծրագրերը և տեղեկությունները գաղտնի հաղորդելու համար: Հաճախ նրանք բարդ ազդանշանային համակարգեր էին հնարում և հաղորդում էին տեղեկությունները պաշտպանված հաճախականություններով: Ո՞րն էր պատճառը: Շնորհիվ գաղտնիության, նրանց կյանքերին վտանգ չէր սպառնում և նրանց ծրագրերը պսակվում էին հաջողությամբ: Եթե թշնամին բացահայտեր նրանց ծրագրերը, նա կարող էր տեղեկացված հակադրոհ իրականացնել: Մենք Աստծո զավակներն ենք, և մեզ տրված է Երկնքի գաղտնի հաճախականությունը Սուրբ Հոգու միջոցով. այն թույլ է տալիս մեզ՝ բացահայտել Աստծո մարտավարական խորհուրդները՝ առանց հայտնելու մեր Հրամանատարի ծրագրերը թշնամուն: Պողոսը շարունակում է.

«Աղոթե՛ք Հոգով ամեն ժամանակ և ամեն իրավիճակում: Մշտապես զգո՛ն և հետևողական եղե՛ք ձեր աղոթքներում բոլոր հավատացյալների համար» (Եփեսացիների 6.18, NLT):

Աստված պատվիրեց մեզ աղոթել հատուկ պատճառով: Մենք Նրա զինվորներն ենք երկրի վրա և պետք է պայքարենք խավարի ուժերի դեմ: Մեր ամենասահարկու զենքերից մեկը՝ Յոզով աղոթքն է: Երբ աղոթում ենք Յոզով, թշնամին անտեղյակ է Աստծո մարտավարության, ծրագրերի և նպատակների մասին:

Ժամանակ առ ժամանակ Աստված կխոսի որևէ մոր սրտի հետ, որպեսզի նա բարեխոսի իր որդու համար: Միգուցե նա չիմանա, թե ինչ է կատարվում իր որդու կյանքում, բայց Յոզու մղումով կհասկանա, որ պետք է աղոթել: Երկնային լեզուներով բարեխոսելիս նա իրականում հրամաններ կարծակի հոգևոր իրականության մեջ և կհռչակի Աստծո կատարյալ կամքն իր որդու կյանքում: Ահա թե ինչու է գրված. «Վարի՛ր պատերազմն իմաստուն խորհրդով» (Առակ. 20.18, NKJV):

Մեր երկնային լեզուն գերազանցում է մեր միտքը և սահմանափակված չէ ժամանակի կամ տարածության մեջ: Յոզով աղոթելիս մենք դադարում ենք ապավինել մեր մտքին և փոխարենը՝ ապավինում ենք Նրա անսահման իմաստության մեծությանը: Սա այն բազմաթիվ պատճառներից մեկն է, թե ինչու Պողոսն ասաց. «Ես կամենում եմ, որ դուք ամենդ լեզուներով խոսեք»: Թշնամին չի կարող գաղտնագրծել մեր երկնային լեզուն, քանի որ այն մտերիմ փոխանակում է Աստծո և Նրա զավակների միջև. այդ իսկ պատճառով, այն շատ արդյունավետ միջոց է՝ թշնամու չար ծրագրերը մեր և մեր հավատակիցների կյանքերում խափանելու համար:

«Ահա ես իշխանություն տվեցի ձեզ... թշնամու ամբողջ զորության վրա» (Դուկաս 10.19, ESV):

Մենք՝ հավատացյալներս, սպառազինված ենք, որպեսզի ուժով տարածենք Աստծո թագավորությունը (տե՛ս Մատթ. 11.12): Եկեղեցին Քրիստոսի Մարմինն է այս երկրի վրա: Ինչպես արդեն տեսանք, Յիսուսն այլևս այս երկրի վրա չէ: Մենք Աստծո թագավորության դեսպաններն ու պատերազմողներն ենք: Մենք կրում ենք Նրա վերափոխող զորությունը և մատակարարում ենք այն մարդկանց, ովքեր վերականգնման, ազատության և փրկության կարիք ունեն: Բայց երբեք չենք կարողանա լինել Քրիստոսի Մարմինը այս կորած և մահացող աշխարհում՝ առանց Նրա Յոզու զորացման: Սատանան

և նրա դիվային զորքերը չեն վախենում ձեզնից. նրանք սարսափած են ձեր *ինքնությունից Քրիստոսի մեջ* և *այն զորությունից, որը պատկանում է ձեզ՝* որպես Բարձրյալի որդի կամ դուստր:

## Օր 2

### Մտերմության լեզու

Կինս և ես բավականին երկար ժամանակ միասին ենք ապրել և զարգացրել ենք մեր սեփական փոքրիկ լեզուն: Ես կարող եմ պարզապես ասել «ՍՍԱ», և կինս կհասկանա, թե ինչ նկատի ունեմ: Բանն այն է, որ երբ նոր էինք ամուսնացել, թվում էր՝ բոլոր նորաստեղծ քրիստոնեական ծառայությունների անվանումներն ընդգրկում էին «Միջազգային ավետարանչական» արտահայտությունը: Այնպես որ, Լիզան և ես որոշեցինք սկսել «Սիրունիկ միջազգային ավետարանչական» ծառայությունը («ՍՍԱ»): Մենք կարող էինք նայել մեկս մյուսին և ասել. «ՍՍԱ», և երկուսս էլ գիտեինք, որ պետք է գրկախառնվեինք կամ համբուրվեինք: Եթե ինչ-որ մեկը լսեր մեզ, միզուցե մտածեր. «*Ի՞նչ են նրանք խոսում*»: Այդ լեզուն մի փոքր ծիծաղելի էր, բայց այն մեր մտերիմ լեզուն էր, որը գիտեինք միայն Լիզան և ես: Սա պարզապես մեկ օրինակ է այն բազմաթիվ մտերիմ հաղորդակցման միջոցներից, որ մենք ունենք:

Նմանապես, մենք կարող ենք մտերմորեն հաղորդակցվել Աստծո հետ, երբ աղոթում ենք մեր երկնային լեզվով: Ինչ-որ մեկը կարող է ասել. «Բայց Ջոն, ես չեմ հասկանում այն, ինչ աղոթում եմ: Մի՞թե Աստվածաշնչում գրված չէ. «Եթե ես աղոթք անեմ օտար լեզվով, իմ հոգին է աղոթք անում, բայց միտքս անպտուղ է» (Ա Կորնթ. 14.14)»: Այո՛, ճիշտ է, բայց նախորդ խոսքում գրված է. «Լեզվով խոսողը թող աղոթք անի, որ թարգմանի (կամ՝ մեկնի) էլ» (խոսք 13): Երբ աղոթում եմ Աստծուն կամ հաղորդակցվում Նրա հետ լեզուներով, ես խնդրում եմ Նրան՝ տալ ինձ աղոթքներիս մեկնությունը: Գիտե՞ք, թե ինչ է տեղի ունենում այդ ժամանակ: Գաղափարները, իմաստությունը և հայտնությունն սկսում են բարձրանալ հոգուցս:

Լավագույն ձևը, որով կարող են նկարագրել այդ երևույթը, հետևյալն է. այդ մտքերը նման են օդային պղպջակների, որոնք բարձրանում են ծովի խորքից: Դրանք արձակվում են իմ ներսի մարդու խորքից՝ հասնելով մտքիս մակերեսին:

Թույլ տվեք մի օրինակ բերել: Երբ որևէ աստվածաշնչյան խոսք են կարդում և չեն հասկանում այն, ասում են. «Սուրբ Յոզի, սովորեցրո՛ւ ինձ», և սկսում են աղոթել լեզուներով: Միգուցե հայտնությունն անմիջապես չգա. սովորաբար այն գալիս է ավելի ուշ, օրինակ՝ մեքենա վարելիս, ցնցուղ ընդունելիս, պարզապես հանգստանալիս կամ գոլֆ խաղալիս: Հանկարծ իմ ներսը փայլատակում է: Այս հայտնությունները Սուրբ Յոզու հետ մտերմության արդյունքն են. ես խնդրում եմ, որ Նա հայտնի ինձ Իր իմաստությունը: Աստված հայտնում է Իր խորհուրդները խոնարհներին: Երբ խոնարհեցնենք մեզ (խնդրելով Յոզու առաջնորդությունը), մենք կվերապրենք ավելի խորը մտերմություն Նրա հետ և ավելի մեծ հոգևոր հայտնություն կստանանք:

Նույնը ճշմարիտ է հոգևոր զորության համար: Պողոսը գրեց այս խոսքերը, որոնք ստացել էր անմիջապես Աստծո Յոզուց:

«Իմ շնորհքը բավական է քեզ համար, որովհետև Իմ զորությունը [շնորհքը] կատարյալ է դառնում տկարության մեջ»: Այդ իսկ պատճառով, ես ավելի մեծ ուրախությամբ կպարծենամ իմ տկարություններով, որպեսզի Քրիստոսի զորությունը կարողանա հանգչել ինձ վրա» (Բ Կորնթացիների 12.9, ESV):

Աստծո շնորհքը, որը Նրա զորությունն է, նույնպես տրվում է խոնարհներին (Պողոսը ցույց է տալիս, որ խոնարհ է՝ խոստովանելով իր «տկարությունը»): Աստծո զորությունն ավելի մեծ չափով կհանգչի ձեզ վրա, երբ խոնարհեցնեք ձեզ՝ անձնատուր լինելով Նրա Յոզու անսահման իմաստությանը: Սա նույնպես Յոզու հետ մտերմության արդյունք է:

Արևմտյան հասարակությունը կենտրոնացած է արդյունքների վրա: Հաճախ, երբ չենք տեսնում մեր ջանքերի կամ ներդրումների արագ արդյունքը, մենք կորցնում ենք վճռականությունը: Մենք պետք է հասկանանք, որ Յոզով աղոթելիս ներդրում ենք կատարում մեր ապագայի մեջ: Երբեմն որոշակի ժամանակ է պահանջվում,

մինչև հայտնությունը կբարձրանա մեր մտքի «մակերեսին»: Յոգով աղոթելու համար հավատք է պահանջվում, որովհետև այն սկսվում է այնտեղ, որտեղ ավարտվում է մեր բնական միտքը: Յոգով աղոթքն ավելացնում է մեր հավատքն ու կարողությունը՝ Աստծո իմաստությունը հասկանալու համար:

## Աղոթել մտքով

Այս գլուխը՝ Յոգով աղոթելու մասին է, սակայն մտքով աղոթելը նույնպես խիստ օգտավետ է: Պողոսը պարզ հայտնեց, որ մենք պետք է աղոթենք թե՛ մտքով, թե՛ Յոգով:

«Ուրեմն, ի՞նչ է, աղոթք անեն հոգով, աղոթք անեն մտքով էլ. սաղմոս ասեն հոգով, սաղմոս ասեն մտքով էլ» (Ա Կորնթացիների 14.15):

Երբ աղոթում են մտքով, այսինքն՝ հասկանալի լեզվով, իմ միտքն անմիջապես շինություն է ստանում: Այս աղոթքը մեծ ոգևորություն և ջերմեռանդություն է առաջացնում ինձանում: Մտքով աղոթքը կապակցում է ինձ այն մարդու հետ, ում համար աղոթում են՝ Լիզայի, Երեխաներիս, ընկերներիս, աշխատակազմիս և այլոց: Նմանապես, երբ խոսում են իմ մտքից՝ հռչակելով իմ Յոր մեծությունը, ես հեղեղվում եմ գոհության և շնորհակալության զգացումով:

Բացի այդ, երբեմն աղոթում են մտքով՝ համաձայն Յոգու առաջնորդության: Իրականում, սա Յոգով աղոթելու մեկ այլ ձև է: Բայց ամենից հաճախ նախ՝ աղոթում են Յոգով, այնուհետև՝ Աստված մեկնություն կամ գիտություն է տալիս այն մասին, թե ինչ են աղոթել, և խոսքերը գետի պես հեղեղում են միտքս:

Գրելով Յոգով աղոթելու կարևորության մասին՝ ես ոչ մի դեպքում չեմ նվազեցնում մտքով աղոթելու անհրաժեշտությունը: Ընդհակառակը՝ ես ցանկանում եմ ցույց տալ, որ առողջ աղոթքի կյանքն ընդգրկում է թե՛ Յոգով, և թե՛ մտքով արվող աղոթքը: Երկուսն էլ կենսականորեն կարևոր են մեզ համար Աստծո մեջ:

## Մեր կյանքի աղբյուրը

Առակաց 20.27-ում գրված է. «Մարդու հոգին Տիրոջ ճրագն է. նա քննում է սրտի բոլոր ներսերը»: Աստծո Յոգու հրաշալիքները լուսավորվում են և սկզբնականորեն հայտնվում են մեր հոգում, ոչ թե մտքում: Ահա թե ինչու, երբ աղոթում ենք Յոգով, մենք պետք է նույնպես հավատանք մեկնությանը և խնդրենք այն: Յայտնությունը, որը Սուրբ Յոգին տալիս է մեր հոգուն, կբարձրանա մեր մտքի մակերեսին:

Առակաց 20.5-ում գրված է. «Խորը ջրեր է մարդու սրտի խորհուրդը [իմաստությունը, առաջնորդությունը, նպատակը], բայց խելոք մարդը [կամ՝ կինը] այն կհամի»: Խաչի զորությամբ Աստված նոր սիրտ է տվել մեզ (տե՛ս Եզեկ. 36.26): Այժմ մենք կարող ենք դուրս հանել Աստծո խորհուրդը (Սուրբ Յոգու անուններից մեկը խորհրդական է) մեր նորոգված սրտի խորքերից: Յիսուսի խոսքերը Յովհաննես 7.38,39-ում հաստատում են սա.

«Յուրաքանչյուրը, ով հավատում է Ինձ, կարող է գալ և խմել: Որովհետև Սուրբ գիրքը հռչակում է. «Կենդանի ջրի գետերը կհոսեն *նրա սրտից*»: (Ասելով «կենդանի ջուր»՝ Նա խոսում էր Յոգու մասին, Ով կտրվեր յուրաքանչյուրին, որ կհավատար Իրեն: Բայց Յոգին դեռևս տրված չէր, որովհետև Յիսուսը դեռ մուտք չէր գործել Իր փառքի մեջ)» (NLT):

Այս խոսքը նույնպես հիշեցնում է Եսայի 12.3-ը.

«Դուք ուրախությամբ կխմեք, մինչև հագենալը, փրկության աղբյուրից [կենդանի ջրից]» (NLT):

Յովհաննեսը պարզ նշեց, որ «կենդանի ջուրը», որը, ինչպես Յիսուսն ասաց, կհոսի մեր սրտերից, «Յոգին» է: Ինչո՞ւ Յիսուսը համեմատեց Յոգուն ջրի հետ: Ջուրը կյանք և կենսական ուժեր է պարունակում. առանց դրա կյանքն այս երկրի վրա կդադարեր: Յոգուն «կենդանի ջուր» անվանելով՝ Յիսուսը նկատի ուներ, որ Նա՝ կյանքի եղբայրն է:

Աստված ասում է. «Իմ ժողովուրդը բնաջինջ եղավ գիտություն չլինելու համար» (Ովսե 4.6): Ինչպիսի՞ գիտության մասին է խոսում Աստված: Նա մասնավորապես խոսում է Իր ճանապարհներն ու

նպատակն իմանալու մասին: Հրաշալի է, որ Աստված ուղարկել է Իր Հոգին, որպեսզի մենք կարողանանք ապրել կյանքի լիությամբ՝ ճանաչելով Նրա սիրտը:

Անկարելի է ծառայել Աստծուն՝ առանց հասկանալու նախ՝ թե Ով է Նա, ինչպես որ իմ ծառայողական թիմի անդամները չեն կարող ճիշտ ձևով ծառայել ինձ առանց՝ սկզբուն իմ սիրտը ճանաչելու: Երբ մենք կարդում ենք Աստծո Խոսքը և ժամանակ ենք անցկացնում աղոթքի մեջ, Հոգին հայտնում է մեզ Աստծո սիրտը: Սա այն զորությունն է, որն անհրաժեշտ է ուրախությամբ լի կյանքի համար: Նենմիա 8.10-ում գրված է. «Տիրոջ ուրախությունը՝ ձեր զորությունն է»: Այլ խոսքով՝ երբ մենք բերկրանք ենք ապրում Նրանում (վերապրում ենք Նրա Հոգու թարմությունը), մենք զորություն ենք ստանում այն ամենի համար, ինչ սպասվում է մեզ ապագայում: Չգիտեմ՝ դուք ինչպես, բայց ես նույնիսկ մեկ օր չեմ ցանկանում ապրել առանց Նրա ուրախության:

## Աստծո խորհուրդները

Առակաց գրքից և Հովհաննեսի Ավետարանից մեջբերված վերոհիշյալ խոսքերում կարող ենք տեսնել, որ մեր սրտից բխող կենդանի ջուրը պարունակում է Աստծո խորհուրդները կամ ծածուկ իմաստությունը: Մենք նույնպես գիտենք, որ Աստված Իր իմաստությունն ու խորհուրդները հայտնում է Իր Հոգով: Այնպես որ, ևս մեկ անգամ կարդանք Ա Կորնթացիների 2.7-ում Պողոսի խոսքերը. «Այլ՝ Աստծո ծածուկ իմաստությունն ենք խոսում *խորհրդով*...»:

Այն հունարեն բառը, որը թարգմանված է որպես «խորհուրդ», չի նշանակում «առեղծվածային» կամ «անորոշ», այլ՝ «ծածկված կամ ոչ ամբողջովին բացահայտված»<sup>1</sup>:

Պատկերացրեք, թե խիստ թանկարժեք ռեստորանում եք: Ավագ խոհարարը մոտենում է ձեր սեղանին՝ ձեր նախընտրությունն իմանալու համար, ապա նախընտրած ուտեստն է պատրաստում ձեր ճաշակով: Երբ ուտեստը պատրաստ է, մատուցողը մոտենում է ձեր սեղանին և կափարիչով ծածկված ափսեմ դնում ձեր առջև: Բայց այդ ռեստորանն այնքան կարգ ու կանոնով է, որ ուտեստը ծածկված է մնում, մինչև կափարիչը բարձրացնելու ժամանակը գա:

Դուք գիտեք, որ ձեր առջևում դրվածը՝ ձեր նախընտրած ուսեստն է, բայց դրա պարունակությունը խորհուրդ է ձեզ համար:

Երբ գալիս է ճիշտ ժամանակը, մատուցողը մոտենում և բարձրացնում է կափարիչը: Այժմ դուք կարող եք տեսնել այն ուսեստը, որն ավագ խոհարարը վարպետորեն պատրաստել է ձեզ համար: Այնպես չէ, որ այն գոյություն չուներ մինչև կափարիչը բարձրացնելը. այդ կերակուրը ձեզ մոտ էր նույնիսկ մինչև ձեր իմանալը, թե ինչ էր այն: Մատուցողը բացահայտեց ձեր ընթրիքի *խորհուրդը*: Այն միշտ հայտնի էր ավագ խոհարարին, բայց ծածկված էր ձեզնից, մինչև կափարիչը բարձրացնելը:

Իր Յոգով Աստված հեռացնում է ծածկոցը Իր ծածուկ ծրագրի՝ Իր *խորհրդի* վրայից: Այժմ մենք համագործակցում ենք Յոգու հետ, և...

«...Աստծո ծածուկ իմաստությունն ենք խոսում *խորհրդով*..., որ ճանաչենք այն բաները, որ Աստուծո տրվեցին մեզ: Որն էլ խոսում ենք՝ ոչ թե մարդկային իմաստության սովորած խոսքերով, այլ Սուրբ Յոգու սովորեցրածներով՝ հոգևորները հոգևորների հետ համեմատելով» (Ա Կորնթացիների 2.7,12,13):

Ավելի ուշ նույն նամակում Պողոսը գրեց. «Որովհետև լեզուներով խոսողը մարդկանց հետ չի խոսում, այլ՝ Աստծո հետ, որովհետև ոչ ոք չի լսում, բայց հոգով *խորհուրդներ* է խոսում» (Ա Կորնթ. 14.2): Դուք տեսնո՞ւմ եք այն կապը, որ կա այստեղ: Լեզուներով խոսելիս մենք խոսում ենք Աստծո խորհուրդները: Մենք արդեն գիտենք, որ այս խորհուրդները ծածկված են մեր սրտի խորքերում (տես Առակ. 20.5) և դուրս են հանվում, երբ Յոգու իմաստության կենդանի ջուրը բխում է մեզնից (տես Յովի. 7.38,39): Ահա թե ինչու է լեզուներով աղոթելը շինություն տալիս մեզ. այն դուրս է հանում «կենդանի ջուրը»՝ կյանքի էությունը, որպեսզի կարողանանք հասկանալ Յոգու ամենածածուկ խորհուրդները:

Ինչպես արդեն նշեցի, հաճախ Աստվածաշնչում հանդիպել են որևէ խոսքի, որը չեն կարողացել հասկանալ: Երբ դա տեղի է ունենում, ես աղոթում եմ Յոգով, այնուհետև հասկացողություն եմ ստանում այդ մասին: Անթիվ անգամներ, երբ որևէ գիրք գրելուց եմ եղել, հանկարծ փակուղու առջև եմ կանգնել: Այդ պահերին թվում է, թե այլևս ասելիք չունեն: Միակ բանը, որ կարող եմ անել նման իրավիճակում, հետևյալն է. ես հեռանում եմ համակարգչիս



առջևից և սկսում են աղոթել լեզուներով: Անելով սա՝ ես հաճախ նոր հայտնություն են ստանում: Ի՞նչ է կատարվում այդ պահերին. իմ սրտից հոսում է Աստծո Յոգու կենդանի ջուրը:

Եթե դուք չունեք հաղորդություն Աստծո հետ, որոշ խորհուրդներ ծածկված են մնալու ձեր բնական մտքից: Ահա այդ խորհուրդների մի քանի օրինակ. ո՞ր եկեղեցին պետք է գնաք, ո՞ւմ հետ պետք է ամուսնանաք, ի՞նչ աշխատանք պետք է ընտրեք, ո՞ր տունը պետք է գնեք, ինչպե՞ս պետք է աղոթեք ձեր առաջնորդների համար, ինչպե՞ս ավելի լավ ամուսին կամ կին պետք է լինեք, ինչպե՞ս պետք է հաղթահարեք այն դժվարությունները, որ ունեք ձեր երեխաների հետ, ինչպե՞ս պետք է գերազանց կատարեք ձեր աշխատանքը, և ավելին: Մի՞թե ուրախ չեք, որ Աստված չի թողել, որ պարզապես հոգանք մեր մասին մեր սեփական հասկացողությամբ: Իր Յոգու միջոցով մենք կարող ենք բացահայտել Նրա ծրագրերը (այն, ինչ լավագույնն է) մեր կյանքի համար և վայելել Նրա խոստացած խաղաղությունը:

### Օր 3

#### Խաղաղություն. մտերմության պարզևը

Գաղատացիների 5-րդ գլխում գրված է, որ խաղաղությունը՝ Յոգու ներկայության և համաձայնության նշանն է: Այն զարմանալի օրհնություն է, որը բազմաթիվ գործնական կիրառություններ ունի առօրյա կյանքում:

Երբ դեռ ամուրի էի, ինձ հարց էի տալիս, թե ով էր լինելու իմ ապագա կինը: Այդ ժամանակ ես ժամադրվում էի Լիզա Տոսկանո անունով մի աղջկա հետ: Որպես անհատականություն՝ նա ինձ շատ էր դուր գալիս, բացի այդ՝ շատ գրավիչ էր ինձ համար: Այնուամենայնիվ, ես ցանկանում էի ամուսնանալ այն աղջկա հետ, ում Աստված ընտրել էր ինձ համար: Լիզան ապրում էր Արիզոնայում, իսկ ես՝ Տեխասում: Երկուսս էլ ցանկանում էինք ստանալ Աստծո առաջնորդությունը՝ ապագայում մեր փոխհարաբերությունների համար: Այնպես որ, Լիզային առաջարկեցի.

- Եկ երեսուն օր՝ օրական երեսուն թույն աղոթենք Սուրբ Յոզով: Լսիր սրտիդ: Եթե տհաճ կամ անհանգիստ զգացում ունենաս, ուրեմն Աստված ասում է մեզ, որ այլևս չչարունակենք մեր հարաբերությունները: Բայց եթե խաղաղության զգացում ունենաս, ուրեմն Սուրբ Յոզովն խրախուսում է մեզ, որ մեր հարաբերությունների մեջ անենք հաջորդ քայլը:

Աղոթելիս երկուսս էլ լցվում էինք խաղաղությամբ, որն ուղեկցվում էր ուրախալի ակնկալիքով: Երբ երեսուն օրն անցավ, մենք անկեղծորեն քննարկեցինք, թե ինչ էինք զգում աղոթքի ընթացքում, և պարզեցինք, որ երկուսս էլ վերապրում էինք նույնը: Մենք շարունակեցինք մեր հարաբերությունները և, ի վերջո, ամուսնացանք: Արդեն երեսուն տարուց ավելի է անցել, և ես անչափ շնորհակալ եմ այդ խաղաղության զգացումի համար:

Հռոմեացիների 8.14-ում գրված է. «Որովհետև, ուլքեր Աստծո Յոզով եմ վարվում, նրանք Աստծո որդիներ [և դուստրեր] եմ»: Այս հատվածի շարունակությունը բացատրում է, թե ինչպես է Յոզովն առաջնորդում Աստծո զավակներին. «Նույն Ինքը՝ Յոզովն, *վկայություն է տալիս* մեր հոգուն» (8.16): Ահա այն գլխավոր միջոցը, որով Յոզովն առաջնորդում է մեզ. Իր խաղաղությամբ կամ *վկայությամբ*:

Արդյո՞ք երբևէ ցանկացել եք որևէ քայլի դիմել, որը ճիշտ և տրամաբանական է թվացել, բայց ամեն անգամ, երբ մտածել եք այդ մասին, տհաճ կամ անհանգիստ զգացում եք ունեցել: Միգուցե հարցրել եք ինքներդ ձեզ. «Ո՞րն է պատճառը: Ինչո՞ւ եմ ինձ այսպես զգում: Այս որոշումն այնքան ճիշտ է թվում»: Եթե այդ ժամանակ հաղորդություն եք ունեցել Սուրբ Յոզով հետ, Նա այդ տհաճ զգացողության միջոցով ասել է ձեզ. «Մի՛ վարվիր այդպես»: Ես բազում անգամներ վերապրել եմ սա: Երբեմն Յոզով առաջնորդությանը հետևելու իմ որոշումն անիմաստ էր թվում, քանի դեռ տարիներ անց ամեն ինչ չէր պարզաբանվում: Ես սովորեցի վստահել Նրան նման դեպքերում: Հիշեք՝ Նրա իմաստությունը չի սահմանափակվում ժամանակով կամ տարածությամբ, ինչը նշանակում է, որ առաջնորդելով ձեզ այսօր՝ Նա մշտապես մտածում է ձեր ապագայի մասին:

Այլ դեպքերում ես մեծ խաղաղություն եմ զգացել այնպիսի որոշման վերաբերյալ, որը կայացնելը մեծ ռիսկ էր թվում. նման

պահերին իմ սրտում իշխում էր Քրիստոսի խաղաղությունը: Կարդացե՛ք Պողոս առաքյալի հետևյալ խոսքերը.

«Եվ թույլ տվեք, որ Քրիստոսից եկած խաղաղությունը (անձի ներդաշնակությունը, որը գալիս է Քրիստոսից) իշխի (վարվի սպորտային դատավորի պես) ձեր սրտերում [որոշելով և վերջնականապես պարզելով բոլոր հարցերը, որոնք առաջանում են ձեր մտքերում, այդ խաղաղ վիճակում], որի համար, որպես մեկ մարմին [Քրիստոսի մարմնի անդամները], դուք նույնպես կանչված եք [ապրելու]» (Կողոսացիների 3.15, AMP):

Ինձ դուր է գալիս, թե ինչպես է «Էմփիլիֆայդ» թարգմանությունը (AMP) Սուրբ Հոգուն նմանեցնում սպորտային դատավորի: Լավ սպորտային դատավորը անվարան հանձնարարություններ է տալիս: Նմանապես, Սուրբ Հոգին վճռականորեն կպարզի բոլոր հարցերը (որոշումները, մտահոգությունները և այլն), որոնք առաջանում են ձեր մտքում: Նա կկիսվի ձեզ հետ Իր իմաստությամբ, եթե թույլ տաք Նրան՝ հանձնարարություններ տալ ձեզ: Շատ անգամ Նրա հանձնարարությունը հաղորդվում է այնպիսի խաղաղությամբ, որը վեր է մարդկային մտքից. սա Հոգու վկայությունն է: Սուրբ գիրքն ասում է.

«Եվ Աստծո խաղաղությունը, որ ամեն մտքից վեր է, կպահպանի ձեր սրտերն ու մտքերը Քրիստոս Հիսուսում» (Փիլիպեցիների 4.7):

Մենք *Քրիստոս Հիսուսի* մեջ ենք, նշանակում է՝ կարող ենք ունենալ այն խաղաղությունը, որն այնքան հազվագյուտ է մեր օրերում: Հիսուսը Խաղաղության Իշխանն է և խաղաղություն է խոստացել նրանց, ովքեր Իր մեջ են: Երբ հրավիրենք Սուրբ Հոգուն՝ մեզ հետ որոշումներ կայացնելու, Նա մշտապես վկայություն կտա Հիսուս Քրիստոսի խաղաղության միջոցով:

## **Խաղաղությունը և որոշումներ կայացնելը**

Որպես «Մեսինջեր Ինտերնեյշնլ» ծառայության ղեկավար՝ ես շատ որոշումներ եմ կայացրել, որոնք հաստատվել են միայն Նրա խաղաղությամբ: Միգուցե մեր առջևում դրված առաջադրանքն անկարելի է թվացել, բայց Աստծո խաղաղությունը թույլ չի տվել, որ

սահմանափակեմ «Մեսինջեր Ինտերնեյշնլ»-ի հնարավորություններն իմ մտքով:

Եղել են ժամանակներ, երբ պարզորեն լսել եմ, թե ինչպես է Յոզիմ խոսել ինձ հետ: Օրինակ՝ երբ պատրաստվում էի գրել այս գիրքը, իրականում ծրագրում էի բոլորովին այլ թեմայով մի գիրք գրել: Աղոթքի և ծոմի ժամանակ Սուրբ Յոզիմ պատվիրեց ինձ, որ որոշված թեմայի փոխարեն գրեի Նրա զարմանալի Անձի մասին:

Իմ որոշումների մեծ մասն առաջնորդվում է Աստծո խաղաղությամբ (որը մշտապես համաձայնեցված է Իր Խոսքի հետ), ոչ թե որևէ անմիջական կարգադրությամբ: Այնուամենայնիվ, եղել են ժամանակներ, երբ Աստծո Յոզիմ խոսել է ինձ հետ: Ես պարզել եմ, որ սովորաբար դա տեղի է ունենում, երբ Աստված առաջնորդում է ինձ բոլորովին նոր ուղղությամբ: Թույլ տվեք մի օրինակ բերել:

«Մեսինջեր Ինտերնեյշնլ» ծառայության առաջնային նպատակը՝ տեղական եկեղեցիներին շինություն տալն է: Մենք հավատում ենք, որ տեղական եկեղեցին Աստծո մեծագույն մարտավարական միջոցն է՝ կորածներին հասնելու, կարիքավորներին հույս և մատակարարում տալու և ազգերն աշակերտելու համար: Ավելի քան 20 000 եկեղեցիներ Յուսիսային Ամերիկայում օգտագործել են մեր դասընթացները: Տարիներ շարունակ մեր հիմնական նպատակն էր՝ հասնել եկեղեցիներին Միացյալ Նահանգներում, Կանադայում, Ավստրալիայում և Միացյալ Թագավորությունում:

Սակայն 2010թ.-ի մայիսի 31-ին Աստված խոսեց ինձ հետ, երբ կարդում էի Դանիելի գիրքը.

- Դու հավատարիմ եղար անգլախոս աշխարհի տեղական եկեղեցուն հասնելու մեջ: Այժմ ես ուղարկում եմ քեզ աշխարհով մեկ՝ դեպի բոլոր ազգերը:

Այդ պահը հրաշալի էր, բայց ես նույնիսկ գաղափար չունեի, թե ինչպես էր դա տեղի ունենալու: Ես հանդիպման հրավիրեցի մեր ծառայության տնօրեններին, պատմեցի այն տեսիլքը, որ Աստված դրել էր իմ սրտում, և ասացի նրանց, որ 2011թ.-ի ընթացքում ցանկանում էի բաժանել 250 000 գիրք՝ զարգացող երկրների քրիստոնեական առաջնորդներին: Բոլորը ցնցված էին: Մենք երբեք այդքան գիրք չէինք բաժանել մեկ տարվա ընթացքում: Իմ գլխավոր գործառնական տնօրենը և այլ բաժինների տնօրեններն սկսեցին բազմաթիվ հարցեր տալ ինձ՝ վիճարկելով այդ ծրագիրը:

Վերջապես, Գլխավոր գործառնական տնօրենը խնդրեց ինձ՝ այդ նպատակն աղոթքով բերել Աստծո առջև:

Ես պարզ լսել էի Աստծուց, որ մենք պետք է հասնեինք հովիվների՝ ամբողջ աշխարհով, բայց Աստված հատկապես չէր ասել ինձ, որ առաջին քայլը դեպի այդ նպատակը պետք է լիներ 250 000 գիրք բաժանելը գալիք տարվա ընթացքում: Այդ պատճառով, այդ նպատակը աղոթքով բերեցի Նրա առջև: Իհարկե, ես խաղաղություն զգացի: Սուրբ Հոգին կարիք չուներ խոսելու ինձ հետ լսելի ձայնով, որովհետև ես գիտեի՝ այս նպատակը համապատասխանում էր Նրա սկզբնական ցուցմանը: Ես զգացի Նրա *վկայությունը* այդ հարցում: Երբ այս մասին պատմեցի իմ թիմին, նրանք անմիջապես սատարեցին տեսիլքիս: Անկասկած, Աստված գործեց հրաշալի կերպով, և այդ տարի կարողացանք ավելի քան 270 000 գիրք բաժանել 47 երկրների հովիվների և ավագների:

2011թ.-ին Բեյրութում՝ Լիբանանում, հանդիպեցի մի իրաքցի հովիվի (ես Մերձավոր Արևելքում էի և քարոզում էի 2500 հովիվների և ավագների): Նրա եկեղեցին ամենամեծն էր քաղաքում. այդ երիտասարդ հովիվը, ով ընդամենը երեսունվեց տարեկան էր, ինձ ասաց.

- Պարոն Բիվեր, դուք կարծես իմ հայրը լինեք: Ես կարդացել եմ ձեր բոլոր գրքերը, որոնք կարողացել եմ ձեռք բերել, և նույնիսկ օգտագործել եմ իմ բանկային քարտը, որպեսզի նյութեր ներբեռնեմ ձեր կայքէջից:

Երբ դա ասաց, ես ցանկանում էի գետից մտնել: Այդ մարդն ապրում էր պատերազմից կեղեքված երկրում և շատ սուղ ֆինանսական միջոցներ ուներ: Այնուամենայնիվ, անում էր այն ամենը, ինչ կարող էր՝ «Մեսինջեր Ինտերնեյշնլ»-ի նյութերը ձեռք բերելու համար: Այս դեպքն ինձ դրդեց՝ ևս մեկ անգամ աղաղակել Աստծուն: Ես իմաստություն խնդրեցի, որպեսզի կարողանայի օգնել այդ տեղական եկեղեցիներին՝ նրանց առաջնորդներին գորացնելու միջոցով: Հոգով աղոթելու ընթացքում գաղափար ստացա այն մասին, որ զարգացող երկրների հովիվներին կարող ենք տալ ոչ միայն գրքեր, այլև ամբողջական դասընթացներ: Հաջորդ տարի 1.3 միլիոն նյութեր բաժանեցինք այդ եկեղեցիների հովիվներին և ավագներին: Այդ ժամանակվանից ի վեր, նյութերի քանակը շարունակ ավելանում է:

Այս խճապատկերի խիստ կարևոր մասը, որը ստացա Յոգով աղոթելիս, CloudLibrary.org կայքէջն էր, որը թույլ է տալիս տեղական եկեղեցիների հովիվներին և ավագներին, ինչպես և նրանց եկեղեցական համայնքների անդամներին՝ անվճար ներբեռնել միջոցները իրենց մայրենի լեզուներով: 2011թ.-ին մենք բաժանեցինք ավելի քան 270 000 նյութեր, իսկ այժմ այդ թիվն ամեն ամիս բազմապատկվում է: Ահա թե ինչպիսի աշխատանք Աստված կարող է կատարել մեր մեջ և մեր միջոցով, երբ հետևում ենք Սուրբ Յոգու խաղաղության *վկայությանը*:

## Օր 4

### Առաջնորդություն ստանալը

Կա մի բնագավառ, որը, թվում է՝ մտահոգում է հավատացյալների մեծ մասին. խոսքն Աստծո առաջնորդությունը ստանալու մասին է: Մարդիկ հաճախ են ինձ ասում. «Ես չգիտեմ, թե ինչ է Աստված ցանկանում ինձնից»: Հակորոսն ասում է, թե ինչպես պետք է վարվենք, եթե ցանկանում ենք առաջնորդություն ստանալ. «...եթե մեկը ձեզնից իմաստության պակասություն ունի, թող խնդրի Աստծուց...» (Հակոր. 1.5): «Իմաստություն» բառը հունարենում «սոֆիա»-ն է, որը սահմանվում է որպես «հասկանալու, և որպես արդյունք՝ իմաստությամբ գործելու կարողություն»<sup>2</sup>: Սա նշանակում է, որ Աստծո իմաստությամբ մենք կարող ենք նախ՝ հասկանալ, *այնուհետև՝ գործել*:

Ո՞վ է մեզ տալիս Աստծո իմաստությունը հասկանալու և գործադրելու կարողություն՝ Սուրբ Յոգին: Ես եղել եմ այնպիսի հանգամանքներում, որոնցում իսկապես առաջնորդության կարիք ունեի: Երբ սկսել եմ աղոթել լեզուներով, Աստծո իմաստությունը և առաջնորդությունը բարձրացել են իմ հոգուց դեպի միտքս: Լեզուներով աղոթքը լուսավորում է մեզ՝ հայտնելով Աստծո առաջնորդությունը մեզ համար:

Կրկին կարդանք Առակաց 20.5-ը. «Խորը ջրեր է մարդու սրտի խորհուրդը, բայց խելոք մարդը [կամ՝ կինը] այն կհամի»: Որոշ

անգլերեն թարգմանություններում «խորհուրդ» բառի փոխարեն օգտագործվում է «նպատակ» բառը: Քրիստոսի մեջ դուք ստացել եք առաջադրանք կամ նպատակ, որը միմիայն ձերն է: Այս նպատակը կորոշի, թե ինչպես պետք է վարվեք, և այն թաքնված է ձեր սրտի խորքում: Երբ աղոթեք Հոգով և բացահայտեք Աստծո խորհուրդը, Նա կհայտնի ձեր կյանքի նպատակը: Սա չի կատարվի մեկ օրում, այնպես որ, համբերատար եղեք: Երբ ժամանակ անցկացնեք Աստծո Խոսքի և աղոթքի մեջ, Նա կհայտնի ձեր կյանքի նպատակը: Իմ որդիներից մեկն այսպես է ասում. «Աստվածաշունչը մեր քարտեզն է, իսկ Հոգին՝ մեր Գիրդը:

Աստծո առաջնորդության պարզևը ձեր կյանքի յուրաքանչյուր բնագավառի համար է: Եթե ձեր երեխաներից մեկն անկառավարելի է դարձել, կանգ առեք և ժամանակ հատկացրեք՝ Հոգով աղոթելու համար: Նա ցույց կտա ձեզ՝ ինչ անել: Եթե գործարար եք և չգիտեք՝ ինչպես վարվել, փակեք ձեր գրասենյակի դուռը և իմաստություն խնդրեք Նրանից, Ով գիտի ամեն ինչ: Նա արդեն բնակվում է ձեր մեջ. այժմ պարզապես դուրս հանեք այն, ինչ դեռ հայտնված չէ ձեզ: Նա ցանկանում է առաջնորդել ձեզ: Եսայի 48.17-ում գրված է. «...Ես եմ քո Աստվածը, որ քեզ սովորեցնում եմ օգտակար եղողը, որ քեզ առաջնորդում եմ քո գնալու ճանապարհում»: Աստված ցանկանում է, որ իրականացնեք ձեր նպատակն իր թագավորության համար, և ավելին՝ Նա ցանկանում է քայլ առ քայլ առաջնորդել ձեզ դրանում:

Երբեմն մարդիկ ասում են ինձ. «Ձո՛ն, դա պարզապես չափից դուրս «հոգևոր» է և մի փոքր տարօրինակ: Մենք չենք կարող նման բաներ խնդրել Աստծուց: Նա միայն հոգում է ծառայողական հարցերի մասին»: Նախ և առաջ՝ Աստծո մեջ ոչ մի տարօրինակ բան չկա, և այդ պատճառով բոլորովին տարօրինակ չէ, եթե Նա մասնակցություն ունենա մեր կյանքի յուրաքանչյուր բնագավառում: Տարօրինակ կարող են լինել մարդիկ, բայց ոչ՝ Աստված: Մենք նույնպես ոչ մի դեպքում չպետք է անտեսենք Աստծո խոստումը ընդամենը այն պատճառով, որ որոշ մարդիկ աղավաղել կամ չարաշահել են Նրա Հոգու դրսևորումներից որևէ մեկը:

Երկրորդը՝ Աստված պատվիրում է մեզ. «Անդադար աղոթք արեք» (Ա Թեսաղ. 5.17): Շատ քրիստոնյաներ չեն ուսումնասիրել այս խոսքի համատեքստը՝ հասկանալու համար, թե ինչ է այն նշանակում: Ակնհայտ է, որ Պողոսը չի ցանկանում ասել. «Թող ձեր

շուրթերը շարժվեն և աղոթեն ամբողջ օրը՝ ամեն րոպե»։ Ի վերջո, Աստվածաշունչը պատվիրում է՝ պատմել մարդկանց Ավետարանը և խրախուսել միմյանց։ Մենք չենք կարող անել ո՛չ մեկը, ո՛չ մյուսը, եթե ամեն վայրկյան շարժենք մեր շուրթերը՝ Աստծուն աղոթելով։

Իրականում այս խոսքում Պողոսը նկատի ունի *մշտական հաղորդությունը Աստծո Յոզու հետ*։ Ինչպե՞ս հասնել սրան։ Պողոսը հայտնում է պատասխանը. «Յոզին մի՛ հանգցրեք» (խոսք 19)։ Անդադար աղոթելը նշանակում է՝ երբեք չհանգցնել Սուրբ Յոզու ներկայությունը։ Սա նշանակում է, որ դուք գիտեք Նրա ներկայության մասին և զգայուն եք Նրա ծայնի նկատմամբ։ Այլ խոսքով՝ մի՛ մերժեք Նրա մասնակցությունը ձեր կյանքում։ Յոզին ցանկանում է ներգրավված լինել ձեր կյանքի յուրաքանչյուր բնագավառում։ Նա ցանկանում է առաջնորդել ձեզ։ Նա փափագում է մշտական հաղորդություն ունենալ ձեզ հետ, ինչի շնորհիվ ձեր կյանքում կլինեն Նրա խաղաղությունը, գորությունը և առաջնորդությունը։

Ես կանչված չեմ գործարար լինելու համար, բայց եթե կանչված լինեի, շատ ժամանակ կանցկացնեի՝ իմ գործի համար Սուրբ Յոզով աղոթելով։ Ապա որոշում կկայացնեի՝ հետևելով սրտիս խաղաղությանը։ Երբեք կասկածի մի՛ ենթարկեք՝ Արարչից ստանալու ձեր կարողությունը պարզապես այն պատճառով, որ դուք «լրիվ ժամանակվա ծառայության» մեջ չեք։ Նա առաջնորդում է ձեր ճանապարհը ճիշտ այնպես, ինչպես և իմը։

## Անձնական աղոթքի ժամանակը

Ես հայտնաբերել եմ, որ իմ աղոթքի ժամանակը շատ ավելի արդյունավետ է լինում, երբ սկսում եմ Աստվածաշունչ ընթերցելով։ Աստծո խոսքը պարզեցնում է միտքս. այն ասես ուղի է բացում իմ հոգուց դեպի միտքս։ Ընթերցումից հետո ես շատ ավելի կապված եմ դառնում Սուրբ Յոզու հետ, և աղոթքիս ժամանակը հագեցած է լինում Նրա հայտնված ներկայությամբ։

Ես հայտնաբերեցի նաև, որ Աստված արագորեն հայտնում է իրեն, երբ գիտակցաբար պատվում եմ Նրա ներկայությունն իմ կյանքում։ Երբ սկսում եմ մտորել Նրա մեծության և բարության



շուրջ, հանկարծ Սուրբ Հոգին հայտնում է Իրեն: Ինչո՞ւ: Սաղմոսերգուն պատասխանում է այս հարցին. «Աստծուն... պետք է երկյուղածությամբ վերաբերվեն բոլորը, ովքեր շրջապատում են Նրան» (Սաղմ. 89.7, NKJV): Եթե ցանկանում եք վերապրել Աստծո ներկայությունը, դուք պետք է երկյուղածությամբ մոտենաք Նրան: Աստծո ներկայության դրսևորումն ընդհատելու ամենաարագ միջոցը Նրան անարգելն է՝ Նրա Հոգուն սովորականի պես վերաբերվելով:

Երբ Հիսուսը սովորեցրեց Իր աշակերտներին (որոնց թվում նաև մենք ենք)՝ ինչպես աղոթել, Նա սկսեց՝ ասելով. «Մեր Հայր, որ երկնքում ես, սուրբ լինի Քո անունը» (Մատթ. 6.9): Այլ կերպ ասած՝ երբ մոտենում ենք մեր Հորը, նախ՝ պետք է մուտք գործենք Նրա ներկայության մեջ սուրբ երկյուղով: Երբ այդպես վարվենք, Սուրբ Հոգին կհայտնի Իր ներկայությունը, քանի որ Նա գիտի, որ մենք երկյուղածությամբ ենք վերաբերվում Իրեն: Նրա ներկայությունը ողջախոհություն, իմաստություն, գիտություն և զորություն կտա մեզ: Նա իրապես մեր կյանքի աղբյուրն է: Ինչո՞ւ մենք պետք է ցանկանանք բաժանվել Նրանից:

## Բարեխոսել Հոգով

Մի ժամանակ ես պարբերաբար աղոթում էի մի հովվի հետ, ով իմ ընկերն էր: Աղոթքի ժամանակ մենք հաճախ էինք բարեխոսում լեզուներով: Մի անգամ աղոթելիս՝ մենք հրահանգներ էինք տալիս ինչ-որ տարածաշրջանի վերաբերյալ Մերձավոր Արևելքում: Հաջորդ օրն իմացանք, որ Թուրքիայում հզոր երկրաշարժ է տեղի ունեցել: Ես համոզված եմ՝ ընկերս և ես բարեխոսում էինք այդ ժողովրդի համար: Մենք կապ ունեինք նրանց հետ Հոգու միջոցով, որովհետև միևնույն Հոգին բնակվում է բոլոր հավատացյալների մեջ: Աստված մեր միջոցով հռչակում էր Իր կամքը Թուրքիայում ապրող մարդկանց համար:

Այս հոգևոր բարեխոսությունը ծայրաստիճան կարևոր է՝ Աստծո թագավորությունը տարածելու համար: Թշնամին ատում է այն փաստը, որ մենք կարող ենք հռչակել Աստծո կամքը մեր եղբայրների և քույրերի կյանքերում, ովքեր մեզմից շատ հեռու

են: Նրա նպատակն է՝ բաժանել և մասնատել Եկեղեցին, և նրան դուր է գալիս սահմանափակել մեր բարեխոսությունը մեր մտավոր գիտելիքներով:

Միգուցե դուք երբևէ չեք հասկացել, թե որքան կապված եք աշխարհով մեկ սփռված հավատացյալների հետ: Լիովին հնարավոր է, որ դուք առանց սխալվելու բարեխոսեք այլ երկրներում ապրող հավատացյալների համար՝ առանց նրանցից որևէ տեղեկություն ունենալու:

Մի անգամ, երբ Քենիայում էի, հանդիպեցի Մասայի ցեղից մի մարդու: Ավելի ուշ նա այցելեց Միացյալ Նահանգներ և հյուրընկալվեց իմ ընկերների տանը՝ Փենսիլվանիայում: Այդ մարդը մնաց ընկերներիս հետ մոտավորապես մեկ ամիս: Մի քանի անգամ նա իրեն հյուրընկալած մարդկանց տեղեկություններ հայտնեց Աֆրիկայում ապրող իր ընտանիքի անդամների մասին: Ի վերջո, տանտիրուհին հարցրեց.

- Որտեղի՞ց գիտեք, թե ինչպես է ձեր ընտանիքը: Նրանք նույնիսկ հեռախոս չունեն:

Նա պատասխանեց.

- Պողոսը, շատ հեռու լինելով Կողոսիայի և Կորնթոսի եկեղեցիներից, միևնույն է՝ գիտեր, թե ինչ է կատարվում իրենց հետ: Երբ աղոթում եմ Հոգով, Տերը ցույց է տալիս, թե ինչ է կատարվում ընտանիքիս անդամների հետ:

Նա նկատի ուներ հետևյալ աստվածաշնչյան խոսքերը. «Որովհետև թեև բացակա եմ մարմնով, բայց ձեզ հետ եմ Հոգով, և ուրախանում եմ՝ տեսնելով ձեր բարի կարգը» (Կողոս. 2.5.), և «Թեև անձամբ ձեզ հետ չեմ, բայց ես ձեզ հետ եմ Հոգով» (Ա Կորնթ. 5.3, NLT): Պողոսը կապ ուներ այդ եկեղեցիների հետ, և տեղյակ էր նրանց գործերի մասին՝ առանց ֆիզիկապես ներկա լինելու:

Ես հաճախ իմացել եմ, որ իմ թիմի անդամներից կամ գործընկերներից որևէ մեկն աղոթել է ինձ համար: Երբեմն դժվարին և վտանգավոր հանգամանքների մեջ եմ եղել, երբ հանկարծ Աստված հրաշքով միջամտել է: Ես գիտեմ, որ նման իրավիճակներում ինչ-որ մեկն աղոթել է իմ պաշտպանության համար և Հոգով բարեխոսել ինձ համար:

## Չանգիստ

«Եղբայրներ, մտքով տղա մի՛ եղեք... Օրենքում գրված է, թե՛ օտար լեզուներով և օտար շրթունքներով կխոսեն այս ժողովրդի հետ...»  
(Ա Կորնթացիների 14.20,21):

Չավանաբար, արդեն կռահել եք, որ Պողոսը շատ է գրում լեզուների մասին Ա Կորնթացիների 14-րդ գլխում: Այս խոսքերում Պողոսը բառափոխության է ենթարկում Եսայու խոսքերը, որովհետև Եսայի 28.11,12-ում գրված է.

«Իրավ թոթովախոս շրթունքով և օտար լեզվով պիտի խոսի Նա այս ժողովրդի հետ: Նա, որ նրանց ասաց. «Սա է ձեր հոգնածին հանգստացնելու *հանգստությունը*», և «Սա է մխիթարությունը...»:

Աստված Եսայի մարգարեի միջոցով մարգարեացավ, որ լեզուներով խոսելը հանգիստ կպարզևի: Մի անգամ իմ ընկերներից մեկը, ով մեծ եկեղեցու հովիվ է, խոսում էր մեկ այլ մեծ եկեղեցու հովվի հետ: Երկրորդ հովիվն ասաց ընկերոջս.

- Ես պատրաստվում եմ թողնել ծառայությունը: Ես հոգնել և ուժասպառ եմ եղել: Ես հյուժված եմ:

- Դու դադարել ես Սուրբ Հոգով աղոթելուց, այնպես չէ՞,- ասաց ընկերս:

- Դե... - կմկմաց այդ հովիվը:

- Որքա՞ն ժամանակ ես անցկացնում Հոգով աղոթելով,- շարունակեց ընկերս:

Մյուս հովիվը դեռ չէր ցանկանում խոստովանել և ասաց.

- Դե, ես շարունակ քարոզներ եմ պատրաստում և շատ գործեր ունեն 15 000 անդամ ունեցող եկեղեցում, և...

- Դու աղոթո՞ւմ ես Հոգով,- կրկին հարցրեց ընկերս:

Ի վերջո, այդ հովիվը պատասխանեց.

- Ո՛չ. ես իսկապես անկեղծ կլինեմ քեզ հետ՝ ո՛չ:

- Սկսի՛ր աղոթել լեզուներով,- ասաց ընկերս:

Կարճ ժամանակ անց այդ հովիվը, որ մի ժամանակ հյուժված էր, այլևս չէր ցանկանում հեռանալ ծառայությունից: Այսօր թե՛ նա, թե՛ նրա եկեղեցին ծաղկունք են ապրում:

Ինչո՞ւ է այդքան կարևոր, որ հովիվներն աղոթեն լեզուներով: Մենք գերբնական հանգիստ և վերականգնում ենք ստանում, երբ աղոթում ենք Հոգով:

Ինչպե՞ս դր. Չոն կարող է 800 000 անդամ ունեցող եկեղեցի առաջնորդել և երբեք չսպառվել: Նա աղոթում է Հոգով: Ես չեմ կարող մտաբերել մի հովվի, ում ուսերին ավելի շատ ճնշում և պատասխանատվություն կա, քան դր. Չոյի: Նրա եկեղեցին լիովին վերափոխեց Հարավային Կորեան, և նա ամենահարգարժան հովիվներից մեկն է ամբողջ աշխարհում: Ցանկացած տղամարդու կամ կնոջ համար անկարելի կլիներ կրել այս ծանրությունը սեփական կարողությամբ, բայց ես գիտեմ, որ դր. Չոն չի վստահում իր մտքին: Նա առաջնային է համարում իր աղոթքի ժամանակը և ամեն օր ժամեր շարունակ աղոթում է Հոգով: Աղոթքի ժամանակը մեծ գործություն և հանգիստ է տալիս նրան:

Լեսթեր Սամրալը հզոր ծառայող էր: Մի քանի անգամ նրա հետ ժամանակ անցկացնելու արտոնություն եմ ունեցել: Դր. Սամրալը քնում էր ընդամենը չորս ժամ և կարող էր միաժամանակ չորս գիրք գրել: Նա ավելի շատ ուժ ուներ, քան իր ծառայողական անձնակազմի անդամները (ովքեր ավելի երիտասարդ էին նրանից) և շատ երիտասարդ քարոզիչներ: Որտեղի՞ց նրան այդ ուժերը. նա շատ ժամանակ էր անցկացնում Հոգով աղոթքի մեջ:

Խնդրում եմ, հասկացե՛ք, որ մենք երբեք չպետք է չարաշահենք մեր մարմինները: Աստված հստակ պատվիրում է մեզ՝ պատվել և պահել շաբաթ օրը: Բոլորս էլ պետք է հանգիստ տանք մեր մարմիններին: Ես գու՛՛ֆ եմ խաղում, որովհետև այն հեռացնում է ուշադրությունս աշխատանքից և թարմացնում է միտքս ու մարմինս: Այդ խաղը հանգստի հրաշալի աղբյուր է ինձ համար: Բայց շաբաթ օրվա հանգիստը պահելու հետ մեկտեղ, Հոգով աղոթքը հանգստություն կպարգևի մեր մարմնին և անձին: Դժբախտաբար, շատերը ժամանակից շուտ են սպառվել, քանի որ հանգիստ չեն գտել Հոգու մեջ:

## Օր 5

## Մեր ներսի մարդը

«Լեզվով խոսողն իր անձն է շինում...» (Ա Կորնթացիների 14.4):

«Շինել» բառը հունարենում «օյկոդմետ»-ն է, որը բառացիորեն նշանակում է «կառուցել կամ շինել»<sup>3</sup>: Երբ աղոթում ենք Յոզով, մենք ավելացնում ենք այն կարողությունը, որը կա մեր ներսում՝ Աստծո ներկայությունը և գորությունը տեղավորելու համար: Հիսուսն օգտագործեց նույն հունարեն բառը, երբ ասաց. «Յուրաքանչյուր ոք, ով լսում է Իմ այս խոսքերը և գործադրում է դրանք, նման է իմաստուն մարդու, ով շինում է [օյկոդմետ] իր տունը ժայռի վրա» (Մատթ. 7.24, NIV):

Նմանապես, Աստված ասում է Յուդայի միջոցով.

«Բայց դուք, սիրելիներ, ձեր անձերը ձեր սուրբ հավատքի վրա շինեք՝ Սուրբ Յոզով աղոթելով» (Յուդա 20):

Հիշում են, որ ընկերներիցս մեկի որդին ծանր հիվանդացել էր: Բժիշկները չէին կարողանում հասկանալ, թե ինչ էր կատարվում այդ երեխայի հետ, իսկ ընկերս չգիտեր՝ ինչ անել: Ի վերջո, նա գնաց իր գրասենյակ և հինգ ժամ աղոթեց Սուրբ Յոզով: Նա դուրս եկավ գրասենյակից և տուն վերադառնալուն պես անմիջապես գնաց որդու ննջասենյակը: Մեծ իշխանությամբ նա հրամայեց իր որդուն՝ վեր կենալ անկողնուց: Եվ այդ պահից նրա որդին լիովին բժշկվեց: Ի՞նչ տեղի ունեցավ. այն ժամերը, որ ընկերս տրամադրեց Յոզով աղոթելուն, ավելացրին նրա կարողությունը՝ բարեխոսելու և իր որդուն ծառայելու համար: Այն ամենը, ինչ մենք ստանում ենք Աստծուց, հավատքով է: Այլ ճանապարհ չկա: Յոզու հետ անցկացրած ժամանակն ավելացնում է մեր կարողությունը՝ Աստծո խոստումները և հայտնված ներկայությունն ստանալու համար, որովհետև Յոզով աղոթքը շինություն է տալիս մեր ներսի մարդուն:

## Ավելի խորը երկրպագություն

«Մեր երկնային լեզվով աղոթելը հնարավորություն է տալիս մեզ՝ երկրպագելու և փառաբանելու Աստծուն ավելի խորը մակարդակի վրա: Պողոսը գրում է.

«Ապա եթե դու օրհնես Յոզով, նա, որ տգետի տեղն է բռնում, ինչպե՞ս «ամեն» ասի քո օրհնությանը, քանի որ չգիտի, թե ինչ ես ասում: *Դու իրավ որ լավ ես գոհանում...*»:

(Ա Կորնթացիների 14.16,17)

Պողոսը խոսում է խմբային փառաբանության մասին և նշում է, որ երբ «օրհնում ենք Յոզով» (փառաբանում ենք Աստծուն լեզուներով), մենք ոչ մի օգուտ չենք տալիս մեր կողքինին: Քանի որ լեզուներով փառաբանելը անձնական արտահայտություն է, այն շինություն է տալիս անձին, ոչ թե խմբին: Պողոսը չի արժեզրկում Աստծուն լեզուներով փառաբանելը: Նա պարզապես ասում է, որ դրա համար կա տեղ և ժամանակ:

Ուշադրություն դարձրեք, թե ինչպես է Պողոսը եզրափակում իր խոսքը. «Դու իրավ որ լավ ես գոհանում»: Երբ մենք փառաբանում ենք Աստծուն լեզուներով, թույլ ենք տալիս Յոզուն՝ լիարժեքորեն մեծարել Աստծո հրաշալիքները և առեղծվածները մեր միջոցով: Կա երկրպագության ավելի խորը մակարդակ. այդ տեսակի երկրպագությունը տեղի է ունենում, երբ մենք փառաբանում ենք Աստծուն երկնային լեզվով: Ահա թե ինչու էր Պողոսը երգում և՛ Յոզով, և՛ մտքով (տե՛ս Ա Կորնթ. 14.15):

## Յուրաքանչյուր ոք կարող է լցվել Սուրբ Յոզով

Իմ սիրտը տրտմում է, երբ քրիստոնյաներն անարգում են այլ հավատացյալներին այն պատճառով, որ նրանք չեն խոսում կամ աղոթում լեզուներով: Այդ եղբայրները և քույրերը Քրիստոսի մեջ պարզապես դեռ չեն վերապրել Յոզու այս զարմանալի պարզևը: Պետք չէ անաչեցնել կամ թերագնահատել նրանց, որովհետև բոլորս մեկ ենք Քրիստոսում:

Ինչպես նշեցինք նախորդ գլխում, լեզուներով խոսելու պարզևը

հասանելի է յուրաքանչյուր հավատացյալի, և նրանք, ովքեր դեռ չեն խոսում լեզուներով, չեն զրկվել այս խոստումից: Հիսուսն ասաց. «Նրանց էլ, որ հավատացին, այս նշանները կհետևեն... նոր լեզուներով կխոսեն» (Մարկ. 16.17): Պողոսն ասաց. «Ես կամենում եմ, որ դուք *ամենդ* լեզուներով խոսեք...» (Ա Կորնթ. 14.5): Աստված ի սրտե ցանկանում է, որ Իր բոլոր զավակները վայելեն մեր երկնային լեզուների զարմանալի առավելությունները:

### Ինչպե՞ս ընդունել Սուրբ Հոգին

Մինչև շարունակելը, թույլ տվեք նախ՝ նշել, որ իմ ընկերներից շատերը Հոգու լեցունությունն ընդունել են ավտոմեքենայի մեջ, տանը և նույնիսկ իրենց գրասենյակներում: Մենք պետք է միայն խնդրենք, և մեր երկնային Հայրը կտա Իր Հոգին: Եթե դուք արդեն խնդրել եք այս պարզևր, ապա պետք է պարզապես սովորեք՝ ինչպես տրվել դրան:

Նախ և առաջ, մինչև կարողանաք ընդունել Սուրբ Հոգու լեցունությունը, դուք պետք է ընդունեք Հիսուս Քրիստոսին՝ որպես ձեր Տեր և Փրկիչ: Հիսուսն ասաց, որ այս աշխարհը (նրանք, ովքեր չեն ընդունել փրկությունը) չի կարող ընդունել Սուրբ Հոգին (տե՛ս Հովհ. 14.17): Եթե դուք չեք ընդունել Հիսուսին՝ որպես ձեր կյանքի Տեր, դուք կարող եք հնազանդվել Նրա իշխանությանը հենց հիմա: (Եթե ցանկանում եք իմանալ՝ ինչպես անել դա, կարդացե՛ք Հավելվածը):

Եթե դուք արդեն Աստծո զավակ եք, բայց ձեր կյանքում *գիտակցված* և շարունակական մեղք կա, այն կխոչընդոտի, որ վայելեք Հոգու լեցունությունը: Աստված տալիս է Սուրբ Հոգին «Իրեն հնազանդվողներին» (Գործք 5.32): Սա չի նշանակում, որ դուք պետք է կատարյալ լինեք, այլ, պարզապես, պետք է խոնարհեցնեք ձեզ Նրա առջև՝ անձնատուր լինելով Նրա կամքին: Երբ խոնարհեցնեք ձեզ, Աստված կտա Իր շնորհքը, որպեսզի հաղթահարեք մեղքի որոգայթները, և դուք ևս մեկ անգամ բաց կլինեք Հոգու լեցունության համար:

Անհնազանդության ամենամեծ որոգայթներից մեկը շատ հավատացյալների կյանքում՝ վիրավորանքն է: Դուք պետք է գիտակցաբար ներքե նրանց, ովքեր սխալ են վարվել ձեր հանդեպ:

Ես նկատել եմ, որ երբ վիրավորված հավատացյալը, ով ցանկանում է ընդունել Յոզու լեցունությունը, ներում է, Յոզին անմիջապես հայտնում է Իրեն. սա օրինաչափություն է՝ առանց բացառության: Յենց հիմա մի պահ կանգ առեք. ներե՛ք նրանց, ովքեր սխալ են վարվել ձեզ հետ, և խնդրե՛ք Աստծուն՝ ձեզ հաղորդել Իր սրտի վերաբերմունքը նրանց հանդեպ: (Ես մանրամասնորեն քննարկում եմ վիրավորանքի թեման իմ «Սատանայի խայծը» գրքում):

### Պարզապես խնդրե՛ք հավատքով...

«Եվ ձեզնից ո՞ր հորից, երբ որդին հաց ուզի, փոխարենը՝ քար կտա նրան, կամ եթե ձուկ՝ մի՞թե օձ կտա նրան: Եվ կամ՝ ձու ուզի, մի՞թե կարի՞ծ կտա նրան: Արդ եթե դուք, որ չար եք, գիտեք բարի պարգևներ տալ ձեր որդիներին, էլ որքա՞ն ավելի երկնավոր Յայրը Սուրբ Յոզին կտա նրանց, որ ուզում են Նրանից» (Ղուկաս 11.11-13):

Ոմանք սովորեցրել են, որ խնդրելով Սուրբ Յոզին՝ դուք կարող եք չար ոգի ստանալ: Յիսուսի խոսքերը պետք է լիովին փարատեն այդ վախը: Աստված ամեն *բարի* և *կատարյալ* պարգևներ տվողն է (տե՛ս Յակոբ. 1.17): Եթե դուք խնդրում եք Յորից Սուրբ Յոզին, Նա ձեզ դև չի տա. Նա կտա Իր Յոզին: Այնպես որ, մի՛ վախեցեք բացել ձեր սիրտը՝ Նրա Յոզով լցվելու համար:

Ձեր սիրտը Սուրբ Յոզու առջև բացելուց հետո մի՛ ակնկալեք, որ Նա կբռնի ձեր լեզվից և կստիպի, որ խոսեք: Նա ազատ կամք է տվել ձեզ: Յոզին ջենտլմեն է և երբեք չի հարկադրի ձեզ: Սատանան է հարկադրում, իսկ Սուրբ Յոզին առաջնորդում է: Յոզին կտա ձեզ բառեր (միզուցե ամեն ինչ սկսվի վանկերից, հնչյուններից կամ կմկմոցի մմանվող բառերի հատվածներից), բայց դուք պետք է հանձնեք Նրան ձեր շուրթերը, լեզուն և ձայնալարերը: Այդ ժամանակ երկնային լեզուն կբխի ձեր հոգուց: Միզուցե սկզբում դուք միայն մեկ վանկ արտաբերեք, բայց եթե հավատքով խոսեք այդ վանկը, կգա ավելին: Այն ամենը, ինչ ստանում ենք Աստծուց, հավատքով է, և լեզուների պարզև բացառությունն է: Պարզապես հավատքով խոսեք այն, ինչ Նա տալիս է ձեզ. թեկուզ սկսեք կմկմացող շրթունքներով, բայց այն, ինչ արտաբերում եք, լիովին ձևավորված լեզու կդառնա:



## Ավելի բարձր մակարդակներ

Վերջին երկու գլուխների մեծ մասը նվիրեցի լեզուների պարզևին հատուկ նպատակով: Համոզված եմ՝ Աստված ցանկանում է, որ մենք երկնային լեզու ունենանք, որի միջոցով ավելի խորը կապ կհաստատենք Իր և Իր ժողովրդի հետ՝ Իր թագավորության նպատակների համար: Սուրբ Հոգին փափագում է, որ բոլորը ճանաչեն Հիսուսին: Երբ մենք ավելի մտերմանանք և ավելի սերտորեն համագործակցենք Նրա հետ, Նա կբարձրացնի մեր հայացքը և ցույց կտա այս աշխարհը նոր լույսով: Մենք կտեսնենք, որ այս աշխարհը հուսահատորեն Քրիստոսի կարիքն ունի, բայց նույնպես կտեսնենք և կիմանանք Նրա Հոգով, թե որն է մեր դերը Քրիստոսին հայտնելու մեջ:

Հուսով եմ՝ ձեզ դուր եկավ այս ներածությունն Աստծո Հոգու մասին: Այն ամենը, ինչ դուք սովորեցիք այս գլուխներում, իրականում Նրա անսահման, հավիտենական, անզուգական, հրաշալի էության փոքր մասնիկն է: Նա փափագում է ամեն օր տանել ձեզ ավելի բարձր մակարդակների վրա: Ես խրախուսում եմ, որ ժամանակ առ ժամանակ կարդաք այս գիրքը, որպեսզի Հոգին կարողանա արթնացնել ձեր սիրտը՝ Իրեն նորովի և ավելի խորը ճանաչելու համար:

Սուրբ Հոգին բերկրանք է ապրում՝ հայտնելով ձեզ Հիսուսին: Պատվե՛ք Նրա ներկայությունը և հրավիրե՛ք Նրան ձեր կյանքի յուրաքանչյուր բնագավառ, ոչ թե միայն «հոգևոր» բնագավառները: Նա խոստացել է՝ երբեք չթողնել և չլքել ձեզ, այնպես որ, վայելե՛ք այդ զարմանալի խոստումը ամեն օր և ամեն բոլոր: Կարդալով Աստծո Խոսքը և ժամանակ անցկացնելով Նրա ներկայության մեջ՝ դուք ավելի ու ավելի մտերմորեն կճանաչեք Հոգուն: Կա մի ոգեշնչող լուր. Նրան ճանաչելու ընթացքն անվերջ է: Միշտ կլինի ավելին, որ Նա ցանկանում է հայտնել ձեզ: Մի՛ բավարարվե՛ք նրանով, ինչ լսել եք, տեսել կամ իմացել եք: Մարտահրավեր նետե՛ք ձեր մտքի սահմաններին՝ թույլ տալով, որ Հիսուս Քրիստոսի Հոգին իշխի ձեր կյանքում: Ես համոզված եմ՝ եթե այդպես վարվեք, կտեսնեք Աստծո փառքը և մեծությունը ձեր կյանքում, ինչպես երբևէ:

Հոգով աղոթքը...

## ԴՈՒՌ Ե ԲԱՑՈՒՄ ԱՎԵԼԻ ԽՈՐԸ ՄՏԵՐՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

*«Եթե դուք փառաբանում եք Աստծուն անչնական լեզուներով,  
Նա հասկանում է ձեզ... որովհետև դուք մերժում եք  
միայն ձեր և Նրա միջև»:*

— Ա Կորնթացիների 14.2, MSG

Հոգու լեզվով աղոթելու ամենամեծ օրհնությունը՝ ավելի խորը մտերմությունն է Աստծո հետ: Արարչագործության Տերը այնքան է ցանկանում շփվել և հաղորդություն ունենալ մեզ հետ, որ դրեց Իր Հոգին մեր հոգիներում՝ զորացնելով մեզ, որպեսզի հաղորդակցվենք Նրա հետ Իր մակարդակի վրա: Որքան զարմանալի է: Հովիվ **Քենեթ Հեգին Ավագը** գրում է.

«Աստված՝ Հոգի է: Երբ աղոթում ենք լեզուներով, մեր հոգին անմիջական կապի մեջ է մտնում Աստծո հետ, Ով Հոգի է: Մենք խոսում ենք Նրա հետ աստվածային, գերբնական միջոցով: ...Այլ լեզուներով խոսելը ոչ միայն Սուրբ Հոգու լեցունության *սկզբնական* վկայությունն է, այլ նույնպես *շարունակական* փորձառություն է, որը տևում է մինչև մեր կյանքի վերջը: Դրա նպատակն է՝ օգնել մեզ՝ Աստծուն երկրպագելու մեջ:

Աստծուն լեզուներով աղոթելն ու երկրպագելը մեզ օգնում են՝ մշտապես գիտակցել մեր ներսում բնակվող Նրա ներկայությունը: Եթե ամեն օր կարողանամ գիտակցել իմ ներսում բնակվող Աստծո ներկայությունը, դա անպայման կազդի իմ կենսաժիվի վրա»<sup>1</sup>:

Հոգով աղոթելիս մենք աղոթում ենք ոչ թե մեր մտքով, այլ՝ Աստծո մտքով: Նրա Հոգին մեր միջոցով աղոթում է Աստծո կատարյալ կամքը:

Ամեն օր Հոգով աղոթելն ու Աստծո խոսքով սնվելը շատ կարևոր են, որովհետև այսպես մենք մտերմորեն կապվում ենք Նրա հետ: Արդյո՞ք շփվում եք Աստծո հետ ամեն օր. եթե այո, ապա որտե՞ղ և

որքա՞ն ժամանակով: Ինչպե՞ս է Հոգին ցույց տվել ձեզ Իր խորը, անձնական սերը:

---

---

---

---

Եթե դուք չունեք աղոթքի ժամանակ և վայր, աղոթե՛ք և հարցրե՛ք Սուրբ Հոգուն, թե որտե՞ղ և ե՞րբ ես կցանկանա հանդիպել ձեզ և հայտնել Իր խորը սերը ձեր հանդեպ:

Արդյո՞ք անտեսել կամ անարգել եք լեզուներով խոսելու պարզևը: Եթե այո, ապա ինչո՞ւ: Արդյո՞ք այս դասն օգնեց ձեզ դիտարկել Հոգու լեզուն դրական լույսի ներքո:

---

---

---

---

Եթե դուք անտեսել կամ անարգել եք լեզուների պարզևը, խնդրե՛ք Աստծուն՝ ներել ձեզ և նորովի լցնել ձեզ Իր Հոգով:

Ոմանք դժվարանում են գործածել իրենց աղոթքի լեզուները, որովհետև ունեն ընդամենը մեկ կամ երկու բառ: Արդյո՞ք սա վերաբերում է ձեզ: Եթե այո, պատկերացրե՛ք, որ Հոգին մեղմորեն ասում է. *«Ես սիրում եմ քեզ: Կօզտագործե՞ս այն, ինչ տվել եմ քեզ: Արդյո՞ք կսիրես և կպատվես Ինձ՝ խոսելով այն բառերը, որ ունես: Թեև դրանք քիչ են, սակայն հատուկ են Իմ և քո միջև»:*

---

---

---

---

Մի՛ համեմատեք ձեր աղոթքի մտերիմ լեզուն այլ մարդկանց լեզուների հետ: Եղե՛ք այն բառերի տնտեսը, որ Հոգին տվել է ձեզ: Երբ հավատարիմ լինեք փոքրի մեջ, ես ձեզ կտա ավելին՝ տնտեսելու համար: **Կարդացե՛ք** Մատթեոս 25.14-23-ը՝ հատուկ ուշադրություն դարձնելով 20-23 խոսքերին:

Յոգով աղոթքը...

## ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ Է ԱՍՏԾՈՒ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

*«Գիտությունը երկնքի թագավորության խորհուրդների մասին փրվել է ձեզ:  
...Նրանք, ովքեր հասկանում են այս խորհուրդները, ավելի շար գիտություն  
կստանան, և նրանք գերազանցության կհասնեն՝ հասկանալով դրանք...»:*

— Մատթեոս 13.11,12, GW

Հիսուսն ասաց, որ դուք հնարավորություն եք ստացել՝ հասկանալու Իր թագավորության գաղտնիքները և խորհուրդները: Ինչպե՞ս եք ստանում և հասկանում այս գաղտնիքները. բնակվելով Իր Յոգու հաղորդության մեջ: Աստծո խորհուրդները հայտնվում են, երբ դուք աղոթում եք Յոգով և ժամանակ եք անցկացնում Նրա հետ:

**Օսվալդ Չեմբերսը** հեղինակ և քարոզիչ էր.բացի այդ՝ նա մտերմորեն նվիրված էր Աստծուն: Իր հայտնի գրքում, որը կոչվում է «Այն ամենը, ինչ կարող եմ՝ Նրա փառքի համար», նա գրում է.

«Ո՞րն է ընկեր լինելու նշանը: Որ նա պատմում է ձեզ իր ծածուկ վշտե՞րը: Ո՛չ, այլ որ նա պատմում է ձեզ իր ծածուկ ուրախությունները: Շատերը կվստահեն ձեզ իրենց ծածուկ վշտերը, բայց մտերմության վերջին նշանը՝ ծածուկ ուրախությունները վստահելն է»<sup>2</sup>:

Ո՞րն է Աստծո ամենազարմանալի խորհուրդներից մեկը, որ Յոգին հայտնել է ձեզ: Ինչո՞ւ է այն հատուկ ձեզ համար:

---

---

Արդյո՞ք Յոգու հետ կիսում եք ձեր անձնական մտքերը, զգացմունքները և ցանկությունները: Արդյո՞ք երբևէ խոսում եք Նրա հետ ձեր մեծագույն երազանքների կամ վախերի մասին: Ընկերները խոսում են նման թեմաներով: Կանգ առեք և պատմե՛ք Նրան մի այնպիսի բան, որ թանկ է ձեզ համար, որի մասին նախկինում չէիք պատմել կամ երկար ժամանակ չէիք հիշատակել:

Եթե դուք մտերմորեն չեք զրուցում Հոգու հետ, ապա ո՞րն է պատճառը: Խնդրե՞ք Սուրբ Հոգուն՝ ցույց տալ, թե ի՞նչն է խոչընդոտում ձեզ, և օգնել, որ ազատորեն բացեք ձեր սիրտը Նրա առջև:

Աստժո հետ հաղորդակցվելը միայն խոսելը չէ, այլ նույնպես՝ *լսելը*: Շփման այս երկու կողմերը պետք է հավասարակշռված լինեն: Եթե ժամանակ չհատկացնենք լսելու համար, չենք լսի, թե ինչ է ասում Հոգին: Չենքերսը շարունակում է.

«Արդյո՞ք երբևէ թույլ ենք տվել, որ Աստված պատմի մեզ Իր ուրախություններից որևէ մեկը, թե՞ այնքան շատ ենք պատմում Աստժոն մեր գաղտնիքները, որ Նա մեզ հետ խոսելու հնարավորություն չի ունենում: Մեր քրիստոնեական կյանքի սկզբում այնքան բան ենք խնդրում Աստժուց, սակայն հետո պարզում ենք, որ Աստված ցանկանում է, որ սկսենք շփվել Իր հետ և ծանոթանալ Իր նպատակներին: Արդյո՞ք մենք այնքան նվիրված ենք Հիսուս Քրիստոսի այս աղոթքի գաղափարին՝ «Քո կամքը լինի», որ որսում ենք Աստժո գաղտնիքները»<sup>3</sup>:

Աստված ասում է, որ կա ժամանակ ամեն ինչի համար, ինչը նշանակում է, որ աղոթքի մեջ կա խոսելու և լռելու ժամանակ (տե՛ս Ժողով. 3.1-7): Հարցրեք Հոգուն. «Արդյո՞ք ես անդադար խոսում եմ աղոթքի ժամանակ: Արդյո՞ք խլում եմ Քո ժամանակը, երբ Դու ցանկանում ես հայտնել խորհուրդներդ: Արդյո՞ք Դու փորձել ես ինչ-որ բան ասել ինձ, որը լսելու համար բավականաչափ լուռ չեմ մնացել: Եթե այո, ապա ի՞նչ»: Լուռ մնացեք և լսեք: Ի՞նչ է Սուրբ Հոգին ասում ձեզ:

*Սա իմ աղոթքն է: «Որ Աստված... քա չեզ հոգևոր իմաստություն և խորաթափանցություն՝ Նրա մասին ավելին իմանալու համար, որ դուք կարողանաք սրանալ հոգու այդ ներքին լուսավորումը, որը կդրդի չեզ՝ գիտակցել, թե որքա՛ն մեծ է այն հույսը, որ Նա կանչում է չեզ, այն ժառանգության մեծությունը և ճոխությունը, որը խոստացված է քրիստոնյաներին, և որքա՛ն մեծ է այն զորությունը, որը հասանելի է նրանց, ովքեր հավատում են Աստժուն»:*

— (Եփեսացիների 1.17-19, Ֆիլիպսի թարգմանությունը)

Հոգով աղոթքը...

# ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ Է ԱՌԱՋԱՅՆՈՒՄ ՄԵՐ ՆԵՐՍՈՒՄ

*«Բայց Սուրբ Հոգին այսպիսի պարուղ է առաջացնում մեր կյանքերում. ...  
խաղաղություն...»:*

— Գաղատացիների 5.22, NLT

Ի՞նչ է խաղաղությունը: Երբեմն որևէ երևույթ հասկանալու համար, անհրաժեշտ է իմանալ, թե այն ինչ է: Ճշմարիտ խաղաղությունը, որ Հիսուսը տալիս է Իր Հոգով, *չի* նշանակում՝ ունենալ խոշոր բանկային հաշիվ, կատարյալ առողջություն, գեղեցիկ տուն, ճոխ ունեցվածք կամ փոխհարաբերություններ՝ առանց բախումների:

Ճշմարիտ խաղաղությունը՝ Աստծո խաղաղությունը, *չի* սահմանվում արտաքին հանգամանքներով կամ պայմաններով: Դա կայունությունն է՝ դժվարությունների մեջ, զգացմունքայնորեն, ֆիզիկապես և հոգևորապես հանդարտ ու սթափ մնալու կարողությունը՝ խնդիրների մեջ:

Կանգ առեք և հարցրեք ձեզ. *«Ինչպե՞ս եմ պատկերացնում խաղաղությունը: Ինչի՞ վրա է խարսխված իմ խաղաղությունը: Ինչպե՞ս է իմ պատկերացումը խաղաղության մասին տարբերվում Հոգու ճշմարիտ խաղաղությունից: Ի՞նչ պետք է փոխեմ»:*

---

---

---

---

---

Շնորհիվ Քրիստոսի զոհի՝ մենք խաղաղություն ունենք *Աստծո հետ*: Շնորհիվ Սուրբ Հոգու լեցունության՝ մեզ տրվել է *Աստծո* խաղաղությունը: Հիսուսն ասաց.

*«Ես թողնում եմ ձեզ հետ խաղաղություն. ես տալիս եմ ձեզ իմ խաղաղությունը, և իմ պարզևը բոլորովին նման չէ այս աշխարհի խաղաղությանը: Դուք չպետք է մտահոգվեք և վախենաք»:*

— (Հովհաննես 14.27, Ֆիլիպսի թարգմանությունը)

Ի՞նչ պետք է անենք այն խաղաղությամբ, որը ստացել ենք խաղաղության Իշխանից:

*«Եվ թույլ տվեք, որ խաղաղությունը (անձի ներդաշնակությունը, որը գալիս է) Քրիստոսից, իշխի (վարվի սպորտային դատավորի պես) ձեր սրտերում [որոշելով և վերջնականապես պարզելով բոլոր հարցերը, որոնք ծագում են ձեր մտքերում, այդ խաղաղ վիճակում], որի համար, որպես մեկ մարմին [Քրիստոսի մարմնի անդամները], դուք նույնպես կանչված եք [պարելու]»:*

— (Կողոսացիների 3.15, AMP)

Պատկերացրեք, որ հարվածող եք բեյսբոլի խաղի ժամանակ և կանգնած եք ձեր դիրքում: Ձեր ետևում է խաղաղության Դատավորը, իսկ յուրաքանչյուր գնդակ, որը նետում են ձեզ՝ այն որոշումն է, որը դուք պետք է կայացնեք: Այժմ կրկին ուշադիր կարդացե՛ք Կողոսացիների 3.15-ը: Որքա՞ն կարևոր են սպորտային դատավորի հրահանգները: Ի՞նչ է ցույց է տալիս Սուրբ Հոգին. ինչպե՞ս պետք է թույլ տաք Նրան՝ լինել ձեր խաղաղության Դատավորը:

---



---



---



---



---

Գլխավոր միջոցը, որով Հոգին առաջնորդում է մեզ դեպի Աստծո կատարյալ կամքը՝ մեր ներսի խաղաղության զգացումն է: Ահա թե ինչ նկատի ունի Սուրբ գիրքը՝ ասելով. «Նույն Ինքը՝ Հոգին, վկայություն է տալիս մեր հոգու հետ...» (Հռոմ. 8.16): Արդյո՞ք ներկայումս կան որոշումներ, որոնք կայացնելու համար Աստծո առաջնորդության կարիքն ունեք: Կա՞նգ առեք և աղոթե՛ք Հոգով: Դրանից հետո սպասե՛ք Նրա խաղաղության վկայությանը: Ի՞նչ է Նա ասում ձեզ:

---



---



---



---

Հոգով աղոթքը...

## ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ Է ՏԱԼԻՍ

*«Եթե դուք ուզում եք իմանալ, թե ինչ է Աստված ցանկանում, որ անեք, խնդրե՛ք Նրան, և Նա ուրախությամբ կասի ձեզ, որովհետև Նա միշտ պատրաստ է առաջորեն իմաստություն տալ նրանց, ովքեր խնդրում են Իրենից. Նա չի վրդովվի դրա համար»:*

— Հակոբոս 1.5, TLB

Ո՞վ է իմաստություն և առաջնորդություն տվողը: Սուրբ Հոգին: Եսային անվանում է Նրան իմաստության և հանճարի Հոգի, գիտության Հոգի և խորհրդի Հոգի: Հիսուսն ասաց, որ Նա մեր Ուսուցիչն է, Ով առաջնորդում է մեզ ամբողջ ճշմարտության մեջ: Որտե՞ղ է ապրում մեր Ուսուցիչը: Մեր մեջ՝ Իր տաճարի ներսում: Երբ իմաստության պակաս ունեք և չգիտեք՝ ինչպես վարվել, աղոթե՛ք ձեր մտքով և *Հոգով*, և Նա կտա ձեզ այն առաջնորդությունը, որի կարիքն ունեք:

Ժամանակ հատկացրե՛ք՝ մտորելու այս հզոր խոստումների շուրջ. հիշե՛ք, որ Տերը և Հոգին նույնն են:

«Ահա թե ինչ է Տերն ասում... «Ես՝ Տերս, քո Աստվածն եմ, Ով սովորեցնում է քեզ այն, ինչ բարի է քեզ համար, և առաջնորդում է քեզ այն շավիղներով, որոնցով դու պետք է գնաս»:  
(Եսայի 48.17, NLT)

«Թե՛ աջ թեքվես, և թե՛ ձախ, քո ականջները կլսեն մի ձայն քո ետևից, որն ասում է. «Սա՛ է ճանապարհը. քայլի՛ր սրանով»:  
— (Եսայի 30.21, NIV84)

«Ես՝ [Տերս], կուսուցանեմ քեզ և կսովորեցնեմ այն ճանապարհի մեջ, որով պետք է գնաս: Ես կխրատեմ քեզ, և Իմ աչքը քեզ վրա կլինի»:  
— (Սաղմոս 38.2, AMP)

«Ընկերը՝ Սուրբ Հոգին, Ուն Հայրը կուղարկի Իմ խնդրանքով, ամեն ինչ պարզ կդարձնի ձեզ համար»:

— (Հովհաննես 14.26, MSG)



«Երբ ճշմարտության Յոգին գա, Նա կառաջնորդի ձեզ ամբողջ ճշմարտության մեջ»:

— (Հովհաննես 16.13, NLT)

«Տույց տուր ինձ այն շավիղը, որով ես պետք է գնամ, ո՛վ Տեր. մատնացույց արա ճիշտ ճանապարհը, որով ես պետք է քայլեմ: Առաջնորդի՛ր ինձ. սովորեցրո՛ւ ինձ. որովհետև Դու այն Աստվածն ես, Ով փրկություն է տալիս ինձ: Միմիայն Քեզ եմ հուսացած: ...Նա կսովորեցնի այն ճանապարհները, որոնք արդար են և լավագույնն են նրանց համար, ովքեր խոնարհաբար դառնում են Նրան: ...Ո՛ր է այն մարդը, ով վախենում է Տիրոջից: Աստված կսովորեցնի Նրան՝ ինչպես ընտրել լավագույնը»:

— (Սաղմոս 25.4,5,9,12, TLB)

Ո՞ր բնագավառում իմաստության և առաջնորդության կարիք ունեք. աշխատանքի՞, առողջությա՞ն, ամուսնությա՞ն, երեխաների՞, ֆինանսների՞, ընկերական հարաբերությունների՞: Ինչպիսին էլ լինի ձեր իրավիճակը, փորձեք կատարել այս քայլերը.

1. *Յայտնե՛ք Աստծուն, թե ինչի համար եք իմաստություն խնդրում՝* գոհանալով այն առաջնորդության համար, որ Նա տվել է ձեզ անցյալում (տե՛ս Փիլիպ. 4.6,7):
2. *Աղոթե՛ք Յոգով:* Գործածեք լեզուների պարզևը՝ աղոթելով այնքան ժամանակ և այնքան ջերմեռանդորեն, որքան Յոգին ցանկանում է աղոթել ձեր միջոցով (տե՛ս Եփես. 6.18, Յոռմ. 8.26,27):
3. *Խնդրե՛ք Յոգուց մեկնությունը:* Նա կհայտնի ձեզ ձեր աղոթքի խորհուրդը (տե՛ս Ա Կորնթ. 14.13):
4. *Գրի՛ առեք այն, ինչ Նա հայտնում է* (մտապահեք, որ միզուցե հայտնությունը անմիջապես չգա, բայց այն կգա):
5. *Շնորհք խնդրեք Սուրբ Յոգուց*, որպեսզի վարվեք ըստ այն առաջնորդության, որ Նա տալիս է:

**Առաջին հերթին ինձ իմաստություն և առաջնորդություն է հարկավոր հետևյալ հարցում.**

**Ահա այն իմաստությունը և առաջնորդությունը, որ Սուրբ Յոգին տալիս է ինձ.**

Հոգով աղոթքը...

## ԶՈՐԱՑՆՈՒՄ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ Է ՏԱԼԻՍ ՁԵՉ

«Այն մարդը, ով խոսում է լեզուներով, գորակում է իր սնչում...»:

— Ա Կորնթացիների 14.4, NLT

Ինչո՞ւ է թշնամին այդքան համառորեն պայքարում, որ թույլ չտա ձեզ աղոթել լեզուներով: Առաջին Կորնթացիների 14.4-ում մի կարևոր պատճառ է բերված. նա չի ցանկանում, որ դուք զորանաք: Որքան ավելի զորանաք ձեր հոգում, այնքան ավելի ուժեղ կդառնաք Քրիստոսի մեջ, և ավելի մեծ սպառնալիք կլինեք սատանայի թագավորության համար:

Ինչպես որ ձեր մեքենայի գեներատորը վերալիցքավորում է մարտկոցը, այնպես էլ Հոգով աղոթքը վերալիցքավորում է ձեր հոգին: Այն քշում է վախը, ընկճվածությունը և բացասական տրամադրվածությունը: Այն շինություն է տալիս ձեզ անբացատրելի կերպով: Երբ աղոթում եք լեզուներով, դուք ավելացնում եք այնկարողությունը, որը կա ձեր ներսում՝ Աստծո ներկայությունը և զորությունը տեղավորելու համար:

Դուք *պարբերաբա՞ր* եք աղոթում Հոգով, թե՞ *հազվադեպ*: Եթե պարբերաբար եք աղոթում, *ի՞նչ հաճախականությամբ* և *որքա՞ն ժամանակ*: Եթե հազվադեպ եք աղոթում, ո՞րն է պատճառը:

---

Ի՞նչ է կատարվում ձեր ներսում, երբ ժամանակ եք հատկացնում լեզուներով աղոթքին: Արդյո՞ք ձեր կյանքում արտահայտվել է Հոգու պտուղը. արդյո՞ք վերապրել եք Հոգու այլ դրսևորումների դրա արդյունքում: Այդ ամենը խրախուստ՞ում է ձեզ, որ աղոթեք:

---

Սովորաբար ինչպե՞ս եք արձագանքում այն դեպքում, երբ ընկճված և սպառված եք զգում ձեզ: Արդյո՞ք փորձել եք աղոթել լեզուներով: Կանգ առեք և աղոթե՛ք. «Սուրբ Հոգի, լեզուներով աղոթքի միջոցով փոխի՛ր իմ բնական բացասական արձագանքը՝ գերբնական դրական արձագանքի: Լցրո՛ւ ինձ Քեզնով այնպես, ինչպես երբևէ»:

---



---

Ինչպիսի՞ քայլեր է պատվիրում Սուրբ Հոգին, որ ձեռնարկեք, որպեսզի Նա ավելի շատ ներգրավված լինի ձեր առօրյա կյանքում: Գրի՛ առեք և կատարե՛ք դրանք:

Անկասկած, թշնամին մտքեր է տվել ձեզ և տարբեր զգացմունքներ է առաջացրել ձեր մեջ, որպեսզի թույլ չտա աղոթել լեզուներով: Նա այսպես է վարվում շատ հավատացյալների հետ: Ստորև բերված են մի քանի տարածված պատճառաբանություններ և արդարացումներ, որոնք նա առաջարկում է: Արդյո՞ք սրանք ծանոթ են ձեզ: Գրե՛ք ևս մի քանիսը, որոնք կարող եք հիշել, այնուհետև աղոթե՛ք և խնդրե՛ք, որ Սուրբ Հոգին Աստուծուց զորացած պատասխան տա յուրաքանչյուր ստին, որը գալիս է թշնամուց:

*Սա Աստված չէ. սա դո՛ւ ես հնարել:*

---

*Ես այնպիսի անհեթեթ զգացում ունեմ / անհեթեթ բառեր եմ ասում:*

---

*Դու պարզապես կրկնում ես այն, ինչ մեկ ուրիշն է ասում:*

---

*Սա անօգուտ զբաղմունք է:*

---

*Ես պարզապես չեմ ցանկանում աղոթել լեզուներով:*

---

*Ես ընդամենը մեկ կամ երկու բառ ունեմ:*

---

*Ի՞նչ կմտածեին իմ մասին այսինչ մարդիկ, եթե լսեին ինձ:*

---

---

Ընկե՛ր, թույլ մի՛ տվեք, որ թշնամին խաբի ձեզ՝ համոզելով, որ դուք չպետք է աղոթեք լեզուներով: Դե՛ն նետեք այն մտքերը և վանե՛ք այն զգացումները, որ նրանից են: Բացե՛ք ձեր բերանը ամեն օր և «զգուշորեն շինություն տվեք ինքներդ ձեզ այս ամենասուրբ հավատքի մեջ՝ Սուրբ Բոգով աղոթելով» (Հուդա 20, MSG):

# ՀԱՐՑԵՐ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

*Եթե դուք ուսումնասիրում եք «Սուրբ Հոգի. Ներածություն» գիրքը՝ որպես «Մեսիաներ Հավաքածու»-ի ամբողջական դասընթացի մաս, խնդրում ենք՝ դիտելք ուսումնական տեսանկյուն 5-ը:*

- 1 | Լեզուներով (Հոգու լեզվով) աղոթելը խիստ օգտավետ է: Մի քանի րոպե հատկացրեք, որպեսզի անվանեք լեզուներով աղոթքի այնքան առավելություններ, որքան կարող եք հիշել: Ներկայումս այդ առավելություններից ո՞րն է ամենաարժեքավորը ձեզ համար: Եթե հարմար եք գտնում, ասեք, թե ինչու:
- 2 | Պատճառներից մեկը, թե ինչու է Աստված տվել մեզ լեզուների պարզևը, այն է, որ թշնամին տեղյակ չլինի մեր գործունեության մասին: Աստված ամենագետ է, իսկ սատանան՝ ոչ: Սատանան չի հասկանում Հոգու լեզվի աստվածային հաճախականությունը: Պատմեք որևէ հատուկ դեպք(եր), երբ դուք աղոթել եք լեզուներով (բարեխոսել եք) և հաղթել եք սատանայի ծրագրերը ձեր և այլ մարդկանց կյանքերում:

**Ավագների համար.** Խոսքեր, որոնք կարելի է կարդալ. Ղուկաս 10.19, Եփեսացիների 6.10-18, Բ Կորնթացիների 10.3-5, Մատթեոս 11.12, Հայտնություն 12.11:

*«Աղոթելք Հոգով ամեն ժամանակ և ամեն իրավիճակում: Մշտապես զգո՛ւն և հեղևողակա՛ն եղեք ձեր աղոթքների մեջ ամենուր գրկվող բոլոր հավաքացյալների համար»:*

— (Եփեսացիների 6.18, NLT)

- 3 | Սուրբ Հոգով աղոթելը՝ կենսականորեն կարևոր բանալի է աստվածային առաջնորդություն ստանալու համար այն իրավիճակներում, որոնցում մենք իմաստության կարիք ունենք: Ուշադրությամբ կարդացե՛ք Առակաց 20.5, Ա Կորնթացիների 14.13 և Հովհաննես 7.38,39 հատվածները: Նկարագրե՛ք, թե ինչպես է լեզուներով աղոթքը հայտնում Աստծո խորհուրդը, որն ավանդված է մեր սրտերում:
- 4 | Շնորհիվ Սուրբ Հոգու հետ մշտական հաղորդության՝ ծածուկ

«խորհուրդները» հայտնվում են մեզ: Այս խորհուրդներն ընդգրկում են հետևյալը. ո՞ր եկեղեցին պետք է հաճախենք, ո՞ւմ հետ պետք է ամուսնանանք, ի՞նչ աշխատանք պետք է ունենանք, ո՞ր տունը պետք է գնենք. բացի այդ՝ ինչպե՞ս աղոթել այլ մարդկանց համար, ինչպե՞ս ավելի լավ ամուսին կամ ծնող լինել, ինչպե՞ս հաղթահարել դժվարությունները աշխատավայրում: Եթե ցանկանում եք, պատմեք, թե ինչպես է Չոզով աղոթքը պատասխաններ տվել ձեզ՝ նշված իրավիճակներից մեկի կամ մի քանիսի դեպքում:

- 5 | Ա Կորնթացիների 14.15-ում տեսնում ենք, որ կարևոր է աղոթել թե՛ Չոզով, թե՛ մտքով: Անվանեք մտքով աղոթելու մի քանի առավելություն: Ինչպե՞ս է Չոզով աղոթքն օգնում ձեզ ավելի ճշգրտորեն աղոթել մտքով:
- 6 | Թեսաղոնիկեցիների առաջին թղթի 5.17-ը հանձնարարում է մեզ «անդադար աղոթք անել»: Արդյո՞ք սա նշանակում է, որ մենք պետք է աղոթենք օրը քսանչորս ժամ և շաբաթը յոթ օր, թե՞ մեկ այլ բան է նշանակում: Կարդացե՛ք Ա Թեսաղոնիկեցիների 5.16-19-ը և քննարկեք, թե ինչ է Աստված ասում մեզ:
- 7 | Որոշ հավատացյալներ, ովքեր լցված են Սուրբ Չոզով, անարգել են նրանց, ովքեր չեն ստացել այս զարմանալի պարզև՝ համարելով նրանց երկրորդ կարգի քրիստոնյաներ: Արդյո՞ք ձեզ երբևէ վերաբերվել են նման ձևով: Եթե այո, ապա ինչպե՞ս է դա ազդել Աստծո և այլ հավատացյալների հետ ձեր փոխհարաբերությունների վրա: Արդյո՞ք դուք երբևէ վերաբերվել եք ինչ-որ մեկին այդ ձևով՝ զիտակցաբար կամ անզիտակցաբար: Ինչպիսի՞ն պետք է լինի մեր վերաբերմունքը Չոզով լցվելու վերաբերյալ:



## ԳԼԽԻ ԱՄՓՈՓՈՒՄ

- Յոգու հետ մտերմության արտահայտությունները, ներառյալ՝ լեզուներով աղոթելը, ունեն պատշաճ ժամանակ և տեղ:
- Մի՛ անտեսեք և մի՛ անարգեք լեզուների պարզևը: Մի՛ հրաժարվեք լեզուների պարզևից այն պատճառով, որ ոմանք սխալ են կիրառել այն:
- Լեզուներով աղոթելիս դուք խոսում եք Աստծո խորհուրդները, և կարող եք խնդրել Նրանից ձեր աղոթքների մեկնությունը:
- Յոգու զորությունը տրվում է խոնարհներին: Խոնարհությունը բացահայտում է Աստծո խորհուրդները:
- Մենք կարող ենք աղոթել Յոգով, երբ իմաստության կարիք ունենք, ցանկանում եք երկրպագել Աստծուն ավելի խորը մակարդակի վրա կամ բարեխոսել մարդկանց համար: Յոգին ընդլայնում է մեր կարողությունները բոլոր բնագավառներում:
- Աստծո առաջնորդությունը հաճախ գալիս է խաղաղության տեսքով. երբ մենք աղոթում ենք Յոգով և խաղաղություն ենք զգում ինչ-որ հարցում, դրանով Սուրբ Յոգին վկայություն է տալիս մեր հոգիներին՝ քայլ անելու համար:
- Լեզուներով աղոթքը թարմացնում, վերականգնում և շինություն է տալիս մեր ամբողջ էությանը: Ժամանակ հատկացրեք անեն օր Յոգով աղոթելու համար:



## Հավելյալ գլուխ

### Հարցեր և պատասխաններ

Հետևյալ նյութը վերցված է «Հարցեր և պատասխաններ» հաղորդումից, որը ծայնագրվել է Ջոն և Լիզա Բիվերների մասնակցությամբ: Այս հաղորդումը հասանելի է ծայնային և տեսաձևաչափերով՝ որպես «Մեսիցներ Հավաքածու»-ի «Սուրբ Հոգի. Ներածություն» ամբողջական դասընթացի մաս:

**Լիզա.** Դու խոսում էիր այն մասին, որ որոշ եկեղեցիներ այնքան են կենտրոնացել լավ մթնոլորտ ստեղծելու վրա, որ անտեսել են Սուրբ Հոգու ներկայությունը: Շատ եկեղեցիներ ցանկանում են իմանալ, թե ինչպես կարող են կրկին հրավիրել Սուրբ Հոգու ներկայությունը՝ առանց վերադարձնելու «տարօրինակ» կամ երկարատև ծառայությունները, որոնց կարիքը չկա: Ինչպե՞ս նրանք կարող են անել դա:

**Ջոն.** Պետք է պարզապես խնդրել: Ինչպես արդեն ասացի, Սուրբ Հոգին ջենտլմեն է: Նա թույլ է տալիս, որ մենք առաջինը քայլ անենք:

Հաճախ, երբ ծառայում են եկեղեցիներում և մարդիկ առաջ են գալիս՝ փրկություն ստանալու համար, ես ասում եմ. «Սուրբ Հոգի, խնդրում եմ, հավիր նրանց»: Ընդամենը մի քանի րոպե է պահանջվում, որպեսզի Նրա ներկայությունը հայտնվի, և մարդիկ ամբողջ եկեղեցում սկսում են լաց լինել: Ես սիրում եմ դա, որովհետև Աստվածաշունչը խոսում է երկնային պարզևը ճաշակելու մասին (տե՛ս Եբր. 6.1-6), և ես պարզել եմ, որ մարդիկ ավելի հազվադեպ են նահանջում, եթե ճաշակել են երկնային պարզևը՝ Հոգու ներկայության դրսևորումը:

Մի անգամ ես մի մեծ եկեղեցում էի, որը հեռացել էր այնպիսի ձևերից կամ դրսևորումներից, որոնք կարող էին հիշեցնել մեզ ավելի հին խարիզմատիկ ծառայությունները: Հավաքույթներից մեկի ընթացքում Աստծո Հոգին հայտնեց Իր ներկայությունը:

Մարդիկ սկսեցին լաց լինել. Աստծո ներկայությունն այնքան շոշափելի էր: Տերն ինձ ասաց. «Իսկ հիմա ասա՛ մարդկանց, որ Աստծուց գոհանալու և Նրան փառաբանելու ժամանակն է»:  
 Ես այդպես էլ վարվեցի և ավարտեցի ծառայությունը: Քիչ անց եկեղեցու հովիվն ինձ ասաց. «Որքան լավ էր: Ես մտածեցի. *«Մենք ևս մեկ ժամ կմնանք այստեղ: Այդ տարօրինակությունները կրկին դրսևորվելու են, ինչպես անցյալում»*: Նա շարունակեց. «Ինձ դուր եկավ, թե ինչպես Աստված առաջնորդեց քեզ: Երբ ասացիր, որ Աստված ավարտել է Իր գործը, ես դա զգացի, ասես Նա իրագործել էր Իր նպատակը: Այնուհետև ասացիր. «Եկեք ավարտենք ծառայությունը»»:

Ես տեսա, թե ինչպես Աստծո Հոգու ներկայությունը հայտնվեց գրեթե երկու րոպեների ընթացքում և խորապես հպվեց մարդկանց:

**Լիզա.** Ջոնը և ես վերջերս զրուցում էինք մի թեմայի շուրջ: Երբեմն մեզ տրվում է ընդամենը երեսունհինգ րոպե՝ որևէ ծառայությանը քարոզելու համար, բայց իրականում այդ երեսունհինգ րոպեն պատկանում է մեզ: Այնպես որ, երեսունհինգ րոպե քարոզելու փոխարեն...

**Ջոն.** Քարոզե՛ք երեսուն րոպե:

**Լիզա.** Քարոզե՛ք երեսուն րոպե կամ կանգ առեք ձեր ուղերձի կեսից և ժամանակ տվեք Սուրբ Հոգուն: Թույլ տվեք, որ Նա գործի: Երբեմն ծառայողներն այնքան զբաղված են՝ փորձելով հնարավորինս շատ տեղեկություններ զետեղել իրենց ուղերձների մեջ, որ մոռանում են հետևյալը. իրենց ուղերձները պետք է հագեցած լինեն Սուրբ Հոգով:

**Լիզա.** Դու շատ ես խոսել այն մասին, թե ինչպես է Սուրբ Հոգին «լցնում մեզ», բայց կարո՞ղ ես պատմել այն մասին, թե ինչպես է Նա արգելում մեզ:

**Ջոն.** Կողոսացիների գիրքը սովորեցնում է. «Աստծո խաղաղությունը իշխի ձեր սրտերում...» (Կողոս. 3.15): Իսկ Հռոմեացիների

8.14-ում գրված է. «Որովհետև, որոնք որ Աստծո Յոգով են վարվում, նրանք Աստծո որդիներ են»: «Որդիներ» բառն այս խոսքում հունարեն «հույոս»-ն է: Այն վերաբերում է թե՛ որդիներին, թե՛ դուստրերին, և նշանակում է «հասուն որդիներ»<sup>1</sup>: Ամեն քրիստոնյա չէ, որ առաջնորդվում է Յոգով: Շատերն առաջնորդվում են իրենց զգացմունքներով, մտքով, իրավիճակներով կամ հանգամանքներով: Աստված ասում է, որ *հասուն որդիներն ու դուստրերն* են առաջնորդվում Յոգով: Ինչպե՞ս է Յոգին առաջնորդում մեզ: Նա վկայություն է տալիս մեր հոգիներին (խոսք 16): Օրինակ՝ ես ցանկանում եմ որևէ քաղաք գնալ և շարունակ անհանգստացնող, գրեթե վրդովնունք առաջացնող տհաճություն են զգում հոգումս...

**Լիզա.** Արդյո՞ք դա երբևէ տեղի է ունեցել, երբ գնացել ես մի տեղ, որտեղ չպետք է գնայիր:

**Ջոն.** Այո՛:

**Լիզա.** Եվ ի՞նչ եղավ արդյունքում:

**Ջոն.** Ես որոշում կայացրի. «Այլևս այդպես չեմ վարվելու»: Իրավիճակն աղետալի էր: Ես հասկացա, որ երբ նման զգուշացում եմ ստանում, պետք է կանգ առնեմ:

Մի անգամ համաձայնեցիզգնալ մի հավաքության, բայց հետո զգացի, որ Տերը դա չէր ցանկանում: Ինչևէ, ես արդեն խոստացել էի, ուստի ասացի. «Աստված, Քո խոսքն ասում է, որ ես պետք է այնպիսի մարդ լինեմ, ով երդում է տալիս և պահում է այն, նույնիսկ՝ ի վնաս իրեն: Ես պետք է գնամ այդ հավաքության, և Քո պաշտպանության կարիքն ունեմ»: Նա ինձ չհանդիմանեց դրա համար: Այդ ճանապարհորդությունն առանձնահատուկ չէր, բայց ես զգում էի Նրա պաշտպանությունը:

Այնուամենայնիվ, ավելի լավ կլիներ, որսկզբում հասկանայի Նրա զգուշացումը. «Մի՛ արա դա: Դու չես ցանկանա գնալ այդտեղ»: Իսկապես զարմանալի է, որդուք կարող եք ճանաչել Նրա զգուշացումները: Դրանք շատ արտահայտիչ են: Եվ որքան ավելի եք շփվում Նրա հետ, այնքան ավելի զգայուն եք դառնում Նրա զգուշացումների հանդեպ:

**Լիզա.** Դու խոսում էիր Դր. Չոյի և նրա կատարած զարմանալի գործերի մասին: Պատմում էիր, որ նա մշտապես աղոթում էր Սուրբ Յոզով լցվելու համար: Ես նույնպես գիտեմ այն բանալիներից մեկը, որ շատերը չեն հասկանում: Դր. Չոն «ոչ» է ասում շատ բաների, որպեսզի պաշտպանի այն ժամանակը, որ անցկացնում է Յոզու հետ: Սուրբ Յոզին մեզ «ոչ» կասի որոշ հարցերում, որոնք *հնարավոր* են, որպեսզի մեր կյանքում կարողանա անել *անհնարինը*:

**Ջոն.** Գործք առաքելոց գրքի երկրորդ գլխում աշակերտները լցվեցին Սուրբ Յոզով, ապա՝ Գործք 4.8-ում Պետրոսը խոսեց իշխանների հետ «Սուրբ Յոզով լցված», և Գործք 4.31-ում հավատացյալները կրկին լցվեցին «Սուրբ Յոզով»: Սուրբ Յոզով լցվելը մեկանգամյա վերապրում չէ: Աստված ասում է. «Մի՛ արբեք գինով, բայց **մշտապես լցվե՛ք** Յոզով» (Եփես. 5.18, AMP): Այնպես չէ, որ մենք լեցունության «արտահոսք» ունենք. պարզապես ցանկանում ենք շարունակ հազեցած լինել Յոզով: Մեր ամուսնության մեջ եղել են ժամանակներ, երբ հազեցած ենք եղել միմյանց սիրուց: Երբեմն հեռու ենք եղել իրարից, և այնուհետև կրկին հազեցնալու կարիք ենք ունեցել:

**Լիզա.** Դուք պետք է գիտակցաբար՝ անեք դա:

**Ջոն.** Գիտակցաբար՝ արեք դա: Մշտապես լցված եղեք: Յոզով լցվելը շարունակական գործընթաց է, և այն կարտահայտվի սաղմոսներով, օրհնություններով և հոգևոր երգերով (տե՛ս Եփես. 5.18-20): Հանկարծ դուք պարզապես կսկսեք երգել: Այս շաբաթ ես ավելի շատ եմ երգել, քան...

**Լիզա.** Անջատե՛ք հեռուստացույցը:

**Ջոն.** Այո՛, անջատե՛ք հեռուստացույցը:

**Լիզա.** Սահմանափակե՛ք այն բաները, որոնք «ցամաքեցնելու» են ձեզ:

**Լիզա.** Արդյո՞ք բոլոր հավատացյալները կարող են գործել հոգևոր պարգևներով, թե՞ միայն ծառայողները:

**Ջոն.** Ես հավատում եմ, որ յուրաքանչյուր հավատացյալ կարող է գործել Հոգու ցանկացած պարգևով: Եթե որևէ հավատացյալ մեծ հրաշքի կարիք ունի, հրաշագործության պարգևը կարող է գործել նրա կյանքում: Աստված նույնպես հատուկ պարգևներ է շնորհում առանձին մարդկանց, և այդ պարգևները մշտապես գործում են նրանց կյանքում:

Լիզան և ես ճանաչում էինք մի մարդու, ով սրտային հիվանդություններ բժշկելու պարգև ուներ: Այդպիսի մարդիկ ԱՄՆ-ի տարբեր մասերից գնում էին, որպեսզի մասնակցեին նրա հավաքույթներին, և բժշկություն էին ստանում: Այդ բժշկության պարգևն օգնեց նրան կատարել այն ծառայությունը, որի համար նա կանչված էր:

Բայց ես նույնպես հիշում եմ իմ ընկերներից մեկի պատմությունը, ում որդին խեղդվել էր լոգարանում: Էլեկտրական հոսանքը սպանել էր նրան, և նա 45 րոպե մահացած էր մնացել: Ընկերս պատմում էր. «Ջոն, ես աղոթեցի երեսուն րոպե, և ոչինչ չկատարվեց: Շտապ օգնության աշխատակիցները նողկանքով էին նայում ինձ: Հանկարծ ինչ-որ բան հարվածեց գլխիս: Ինչ-որ մեկը նայեց աչքերիս միջով, և ես ասացի որդուս՝ դու չե՛ս մահանա և կապրե՛ս»: Եվ նրա որդին հարություն առավ մեռելներից: Նա հավատաց, և «հավատքի պարգևն» էր, որ գործեց նրա միջոցով: Այդ պահին նա ուներ այդ պարգևի կարիքը:

**Լիզա.** Եվ այդ ժամանակ նա ծառայող չէր:

**Ջոն.** Նա ոստիկանության սպա էր:

**Լիզա.** Եվ նա ոչ մի ծառայություն չէր առաջնորդում:

**Ջոն.** Նա պարզապես տուն էր եկել մի հավաքույթից, որտեղ կյանքում առաջին անգամ քարոզել էր:

**Լիզա.** Ես ցանկանում եմ հասկանալի դարձնել, որ...

**Ջոն.** Հավատացյալները: Ցանկացած հավատացյալ:

**Լիզա.** Ցանկացած հավատացյալ, ով լցված է Սուրբ Հոգով՝ իր կյանքի ցանկացած պահին:

**Ջոն.** Եվ կարիք չկա, որ սպասեք ինչ-որ մեկին, ով բժշկության պարզև ունի: Հիսուսն ասաց. «Նրանց էլ, որ հավատացին, այս նշանները կհետևեն. Իմ անունով... հիվանդների վրա ձեռք կդնեն...» (Մարկ. 16.17,18): Սա նշանակում է, որ դուք պետք է հավատքով աղոթեք մարդկանց բժշկության համար, և Աստված կպատվի ձեր քայլը, որովհետև Նա պատվում է Իր Խոսքը:

**Լիզա.** Կարիք չկա, որ ձեր հովիվը ամբիոնի մոտ կանգնեցնի ձեզ: Կարիք չկա, որ սպասեք, թե երբ կհանդիպեք ինչ-որ ծառայողի եկեղեցու նախասրահում. դուք կարող եք գործածել Աստծո զորությունը և Աստծո խոստումները ձեր առօրյա կյանքում: Եվ եթե զգում եք, որ Հոգին առաջնորդում է ձեզ՝ խոսելու ինչ-որ մեկի հետ, հավելու ինչ-որ մեկին, աղոթելու ինչ-որ մեկի համար, կամ առատաձեռն լինելու ինչ-որ մեկի հանդեպ (միզուցե դուք պարզապես պետք է սկսեք առատաձեռն լինելուց), դա հրաշալի կլինի: Մենք կարող ենք հետևել Նրա առաջնորդությանը:

**Ջոն.** Ի դեպ, տալու պարզևը կամ առատաձեռնությունը՝ Աստծո պարզևներից մեկն է:

**Լիզա.** Մենք գիտենք, որ Սուրբ Հոգին եկել է՝ Հիսուսին հայտնելու համար: Վերջին երկու տասնամյակների ընթացքում բազմաթիվ դրսևորումների ականատես եղանք՝ ցնցվելը, ծիծաղելը, հատակին գալարվելը և ընկնելը. ինչպե՞ս են դրանք հայտնում Հիսուսին:

**Ջոն.** Աստվածաշունչը խոսում է անսովոր նշանների մասին, բայց, որպես կանոն, դրանք կարճատև են: Կան ժամանակներ, երբ անսովոր նշաններ և հրաշքներ են տեղի ունենում, և դրանք գրավում են մարդկանց դեպի Հիսուսը: Ինձ համար անչափ տհաճ է, երբ մարդկանց ավելի շատ գրավում են դրսևորումները, քան դրսևորումներ Պարզևողը:

Մի անգամ ծառայում էի Սինգապուրի մի եկեղեցում: Նախքան իմ գնալը, մի ավետարանիչ էր եկել այդ եկեղեցի, ով բժշկելու պարզև ուներ, որի դրսևորման ժամանակ մարդիկ խելահեղորեն ծիծաղում էին:

Մեր ծառայության ժամանակ ես հանկարծ զգացի, որ Աստծո ներկայությունն իջնում է այդ մեծ եկեղեցու վրա: Հանկարծ մարդիկ սկսեցին ծիծաղել. դա այնքան տհաճ էր և նման էր մեխը գրատախտակին քսելուն. ես հենց դա՛ զգացի հոգումս:

**Լիզա.** Միգուցե նրանք անում էին ճիշտ բանը՝ սխալ ժամանա՞կ:

**Ջոն.** Ես ասացի. «Դադարե՛ք: Դուք կանգ եք առել այդ դրսևորման վրա: Դուք չեք հետևում Աստծո Հոգուն: Այս անգամ Նա չէր պատրաստվում այդպես գործել: Նա պատրաստվում էր խորապես հպվել բոլորին Տիրոջ երկյուղով: Այժմ մենք կիուսանք, որ Աստծո Հոգին կվերադառնա և կծառայի ձեզ»: Դրանից հետո ես կրկին առաջնորդեցի մարդկանց աղոթքի մեջ: Աստծո Հոգին եկավ, և դահլիճով մեկ մարդիկ սկսեցին լաց լինել:

Նման իրավիճակներում, երբ մարդիկ սկսում են գրեթե ցուցադրաբար վարվել, դրսևորումները հակակրանք են առաջացնում: Անուսնացած զույգը մտերիմ հարաբերություններ չի ունենում բոլորի առջև: Մարդիկ ցուցադրում են այն մտերմությունը, որ Աստված տվել է իրենց՝ կարծես թե ցանկանալով ասել. «Նայե՛ք: Մենք հոգևոր ենք»: Ես հայտնաբերել եմ հետևյալը. որքան ավելի եմ ճանաչում Սուրբ Հոգուն, այնքան ավելի եմ ցանկանում պաշտպանել Նրան (Նրա պարզևները, Նրա կարողությունը և Նրա զորությունը) հարգալից, պատվելի ձևով, ոչ թե հանգցնելով Նրան: Թեսաղոնիկեցիների առաջին թղթի 5.19-21-ում խոսվում է Հոգուն հանգցնելու մասին: Դուք հանգցնում եք Հոգուն, երբ հանգցնում եք Նրա զորությունը և Նրա պարզևները: Այդպես մի՛ վարվեք: Փոխարենը՝ պատվեք Նրան: Մի՛ ցուցադրեք Նրան, ասես Նա՛ էժամագին ազդեցություն կամ զորություն է:

**Լիզա.** Ես ցանկանում եմ նշել, որ մենք պետք է խնդրենք և հրավիրենք Աստծուն՝ անելու այն, ինչ Նա ցանկանում է: Ես հայտնաբերել եմ, որ երբեմն Սուրբ Հոգին կգործի այնպես կամ

այն ժամանակ, որը, միգուցե, անհարմար լինի մեզ համար, բայց Նա երբեք ոչինչ չի անի հարկադրելով, խորամանկելով կամ ձանձրացնելով: Նա ոչ մի դեպքում չի ձգտում ուշադրություն գրավել մարդկանց հանդեպ, այլ՝ ձգտում է ուշադրություն գրավել Աստծո հանդեպ: Սովորաբար պետք է համապատասխան մթնոլորտ և ներկայություն լինի, որպեսզի Նա գործի:

Վերջերս մի խումբ մարդկանց հետ էի՝ տարբեր հարանվանություններից: Ես լսեցի, թե ինչպես էին նրանցից ոմանք ծաղրում այն դրսևորումները, որոնք, համոզված եմ, իրական են եղել մի ժամանակ, իսկ հետո մարդիկ պարզապես պահպանել են դրանք, քանի որ հույս են ունեցել, որ Աստված կշարունակեր օրհնել այն, ինչ օրհնել էր անցյալում: Դրսևորումների գործառույթը կորել էր ժամանակի ընթացքում, բայց ձևը մնացել էր, և նրանք ծաղրում էին այդ ձևը: Մենք չենք ծաղրում այդ դրսևորումներից որևէ մեկը: Մենք ցանկանում ենք այն ամենը, ինչ Սուրբ Գոգուց է, բայց որ ամեն ինչ լինի հավատքով: Մենք ցանկանում ենք, որ դրսևորումները պատշաճ ձևով լինեն և ուղեկցվեն Աստծո ներկայությամբ:

**Լիզա. Արդյո՞ք հնարավոր է, որ մարդը իրապես խաղաղություն զգա ինչ-որ բանի վերաբերյալ, բայց դա Աստծուց չլինի:**

**Ջոն. Այո՛, իհարկե:** Եզեկիելի տասնչորսերորդ գլխում Աստված խոսում է այն մարդկանց մասին, ովքեր Աստծո մոտ են գալիս իրենց սրտերում ունեցած կուռքերով: Ի՞նչ է կուռքը: Նոր կտակարանում կռապաշտությունը ազահությունն է (տե՛ս Կողոս. 3.5), այսինքն՝ ինչ-որ բան սխալ ձևով ցանկանալը: Այն մարդիկ, ում սրտերում կուռքեր կան, նույնիսկ գնում են որևէ մարգարեի մոտ և ասում. «Խնդրում եմ, աղոթե՛ք ինձ համար և Տիրոջ խոսքը խոսեք իմ կյանքում»: Աստված ասաց. «Ես կպատասխանեմ նրանց՝ նրանց կուռքերի շատության համեմատ» (տե՛ս Եզեկ. 14.4): Երբ գալիս են Աստծո ներկայության մեջ և ինչ-որ բան են խնդրում, ես պետք է համոզված լինեմ, որ իմ սիրտը չէզոք դիրքում է: Եղել են դեպքեր, երբ չեմ հետևել այս սկզբունքին: Քանի որ իմ սիրտը չէզոք դիրքում չէր, ես ունեի խաղաղություն, որն Աստծուց չէր: Դետագայում ես շատ եմ զղջացել այդ ժամանակ կայացրած որոշումների համար:



Ահա թե ինչու են ուրախ, որ Լիզան և ես տարբեր քաղաքներում էինք այն ժամանակ, երբ նոր էինք հանդիպում: Մենք երեսուն օր աղոթեցինք այն բանի համար, թե արդյո՞ք պետք է շարունակենք մեր հարաբերությունները: Ես այնքան էի հրապուրված նրանով, որ ինձնից, հավանաբար, քսանհինգ օր պահանջվեց, մինչև կարողացա հաղթահարել այդ հրապուրանքը: Բայց այդ երեսուն օրվա ընթացքում ես հասա այնպիսի մի կետի, որ գիտեի. եթե Աստված «ոչ» ասեր, ես չէի առարկելու: Ես գիտեի՝ դա կնշանակեր, որ Նա ուներ մեկ այլ կին ինձ համար և մեկ այլ տղամարդ՝ նրա համար: Յենց որ հասա այդ չեզոք դիրքին, ես իսկապես սկսեցի լսել Աստծուց:

Եթե ես գնում եմ իմ ծածուկ աղոթքի վայրը և զգում եմ, որ չունեմ սրտի չեզոք դիրք, ես պետք է աշխատեմ դրա վրա Աստծո հոսքով և աղոթքով, մինչև որ ձեռք բերեմ այդ չեզոք դիրքը: Ես պետք է կարողանամ լսել թե՛ «այո»-ն, թե՛ «ոչ»-ը, որովհետև եթե կողմնակի մոտեցում ունենամ, կեղծ խաղաղություն եմ ստանալու:

**Լիզա.** Մենք հաճախ ենք արել սա մեր կյանքի այն փուլերում, երբ մտածում էինք. *«Ամեն ինչ դասավորվելու է մեր որոշած ձևով, մեր որոշած ժամանակ և մեր որոշած տեղում»*, այնուհետև հասկացել ենք, որ ոչինչ չէր լինելու ըստ մեր պատկերացման: Մենք պետք է ջնջենք «ամբողջ գրատախտակը» և ասենք. «Աստված, արա այն, ինչ ցանկանում ես»:

Դու խոսում ես «գիտության» մասին, որը գալիս է Յոզուց: Երբ ուսումնասիրություններ էի կատարում՝ «Կնոջ հոգատարության ուժը» գրքի համար, ես փնտրում էի «ներըմբռնողություն» կամ «ինտուիցիա» բառի սահմանումը: Այն առաջացել է լատիներեն «ին» և «տուեոր» բառերից, որոնք միասին նշանակում են «ներքին ուսուցիչ»: Սուրբ Յոզին մեր ներքին Ուսուցիչն է: Նա նոր սիրտ է տալիս (տե՛ս Եզեկ. 36.26) և սկսում է սովորեցնել մեզ:

**Լիզա.** Կյանքում կան դեպքեր՝ կապված մարդկանց կամ իրավիճակների հետ, երբ ամեն ինչ ճիշտ է թվում, բայց մեր ներսում սխալ զգացողություն կա: Կարո՞ղ ես խոսել այդ մասին:

**Ջոն.** Ամեն անգամ, երբ չեմ լսել այդ ներքին ուսուցչին՝ երբ հոգումս զգացել եմ, որ ինչ-որ բան սխալ է, բայց արտաքինապես ամեն ինչ լավ տեսք է ունեցել, ես ծուղակն եմ ընկել:

**Լիզա.** Արդյո՞ք սովորաբար դու սկզբնական արձագանք ես զգում, այնուհետև սկսում ես վիճարկել այն:

**Ջոն.** Այո՛: Սովորաբար սկզբնական արձագանքը Աստծո Յոգուց է: Եվ միևնույն խնդիրներն առաջացել են, երբ անտեսել եմ քո խորհուրդը, Լիզա:


Թույլ տուր ամուսիններիս և կանանց ասել հետևյալը: Երբ Լիզան և ես նոր էինք ամուսնացել, ես աղոթում էի օրական գրեթե մեկ ու կես ժամ: Իսկ Լիզան, որքան գիտեի, աղոթում էր օրական տասը րոպե, երբ ցնցուղ էր ընդունում:

**Լիզա.** Ես աշխատում էի լրիվ դրույքո՞վ:

**Ջոն.** Հաճախ էր պատահում, որ ասում էի. «Լիզա, ես համոզված եմ, որ մենք պետք է այսպես վարվենք: Ինձ թվում է՝ պետք է այսպիսի քայլ անենք», բայց նա պատասխանում էր. «Չեմ զգում, որ պետք է այդպես անենք»: Արդյունքում, նա ճիշտ էր լինում կեսից ավելի հարցերում: Դա շատ էր հիասթափեցնում ինձ:

Մի օր ասացի. «Աստված, ամեն առավոտ ես աղոթում եմ մեկ ու կես ժամ, իսկ Լիզան աղոթում է տասը րոպե՝ լոգարանում: Սակայն նա ճիշտ է լինում կեսից ավելի հարցերում»:

Տերն ինձ ասաց. «Շրջանագիծ գծիր»: Ես շրջանագիծ գծեցի թղթի վրա: Այնուհետև Աստված ասաց. ««X»-եր նկարի՛ր ամբողջ շրջանագծի մեջ»: Ես «X»-եր նկարեցի շրջանագծի մեջ: Նա շարունակեց. «Այժմ գիծ քաշիր շրջանագծի մեջտեղում»: Ես գիծ քաշեցի անմիջապես շրջանագծի մեջտեղում:



Նա ասաց. «Ուշադրություն դարձրի՞ր, որ «X»-երի կեսը հայտնվեց մի կողմում, իսկ մյուս կեսը՝ մյուս: Ջոն, երբ դու ամուրի էիր, կատարյալ էիր Ինձանում և քեզանում: Բայց ամուսնանալուց հետո մեկ մարմին դարձար Լիզայի հետ, և այս շրջանը պատկերում է քեզ ու Լիզային. դու ծախ կեսն ես, իսկ նա՝ աջը»:

Այնուհետև Աստված ասաց. «Գիտե՞ս, թե ինչ են նշանակում «X»-երը: Դրանք Ինձնից եկող այն տեղեկություններն են, որոնց կարիքը դու ունես, որպեսզի կարողանաս իմաստուն որոշումներ կայացնել: Խնդիրն այն է, որ քո բոլոր որոշումները կայացնում ես տեղեկությունների կեսի հիման վրա: Դու պետք է սովորես՝ կնոջիցդ վերցնել այն, ինչ հայտնում են նրան, որպեսզի դու, որպես տան գլուխ, կարողանաս որոշումներ կայացնել՝ ունենալով բոլոր տեղեկությունները»:

Ինչ վերաբերում է ներըմբռնողությանը, ապա՝ այո, ես տուժել եմ, երբ ստացել եմ առաջին զգուշացումը և անտեսել եմ: Բայց նաև եղել են դեպքեր, երբ Լիզան ինձ որոշ բաներ է ասել և ես անտեսել եմ դրանք, թեև սրտումս իմացել եմ, որ նրա ասածը Չոգուց էր: Ես գիտեի դա, որովհետև Չոգին վկայություն է տալիս մեզ:

Երբեմն Լիզան այնպիսի բաներ է ասում(և դա տեղի է ունենում ընդամենը մի քանի տարին մեկ անգամ), որ ես գիտեմ՝ *այդ խոսքերը հավատքից չեն, այլ՝ վախից, և չեն համաձայնի դրանց հետ*: Բայց հիմնականում, երբ Լիզան խոսում է, ես գիտեմ հոգուս խորքում, որ *նա ճիշտ է*: Եթե անտեսեմ այդ վկայությունը, ապա վճարելու եմ դրա համար:

**Լիզա.** Կարծում եմ՝ Ջոնը շատ մեծահոգի է, բայց ես ցանկանում եմ, որ մարդիկ հասկանան հետևյալը. երբ Աստված ինչ-որ բան է ասում իրենց, իրենք կարող են վստահել Նրա խոսքերին: Որոշ հետազոտողներ ասում են, որ հոգին շատ ավելին է կանխագուշակում, քան մենք հասկանում ենք: Երբ միջամտում ենք մեր մտքով և սկսում ենք այլ տարբերակներ առաջարկել, մենք կասկածի չենք ենթարկում մեզ. այլ՝ կասկածի ենք ենթարկում Աստծուն: Երբ Աստված ինչ-որ բան է ասում մեզ, մենք պետք է համաձայնենք նրա ասածի հետ:

Վերջերս, երբ ավտոբուսում էի մի խումբ մարդկանց հետ, մի դեպք պատահեց. պետք է ասեմ, որ ատում եմ ավտոբուսները: Մեր

խումբն իսկապես երկար մնաց օդանավակայանում՝ ավտոբուսի մեջ: Պատճառն այն էր, որմեր խմբից մի կին չէր կարողանում գտնել ավտոբուս տանող ճանապարհը: Մենք կանչում էինք նրան, բայց չէինք գտնում:

Վերջապես տեսա այդ կնոջը. նա թռչկոտում և թափահարում էր ձեռքերը հեռվում կանգնած տաքսիների մոտ, որտեղ մենք չպետք է հավաքվեինք: Ներսումն զայրույթ բարձրացավ, բայց նայելով նրան՝ անմիջապես մտածեցի. «Ես սիրում եմ նրան»: Մեր սրտերի միջև ակնթարթային կապ ստեղծվեց: Ես սիրով լցվեցի նրա հանդեպ, հենց որ տեսա, և մեր միջև շատ ուժեղ կապ հաստատվեց:

Աստված ձեր կյանքի ճանապարհին կուղարկի այդպիսի մարդկանց: Բնական տեսանկյունից՝ ամեն ինչ ասում էր. «Ինչո՞ւ պետք է սիրեն այդ կնոջը»: Բայց ես սիրո վերաբերմունք ցուցաբերեցի նրա հանդեպ: Այսօր երկար էլեկտրոնային նամակ ստացա այդ կնոջից, որտեղ գրված էր. «Դուք անմիջապես սիրով լցվեցիք իմ հանդեպ, և այդ սերն ինձ օգնեց զգալու Աստծո սերը կյանքիս այն պահին, երբ խիստմիայնակ էի զգում»: Ահա թե ինչ կարող ենք անել՝ պարզապես լինելով այնպիսի մարդիկ, ովքեր ունակ են նմանօրինակ փոխհարաբերություններ հաստատել մարդկանց հետ, այլ ոչ թե թույլ տալու, որ հանգամանքները թելադրեն իրենց:

Սակայն եղել են ժամանակներ, երբ Ջոնն ինձ ինչ-որ մեկի մասին ասել է. «Լի՛զա, ես վատ նախազգացում ունեմ այդ կնոջ վերաբերյալ»: Ես պատասխանել եմ. «Թանկագինս, դու կին չես: Կան բաներ, որդու չես հասկանում այնպես, ինչպես ես»: Նա այդ ձևով զգուշացրել է ինձ գրեթե երեք կամ չորս անգամ, և ես տուժել եմ ամեն անգամ, երբ չեմ լսել նրան:

**Ջոն.** Թույլ տուր ասել հետևյալը. Գործք առաքելոցի 15-րդ գլխում Պողոսը և Բառնաբասը տարածայնության հանդիպեցին այն հարցի վերաբերյալ, թե արդյո՞ք հեթանոս հավատացյալները պետք է հետևեին Մովսեսի օրենքին: Եկեղեցին Երուսաղեմ ուղարկեց նրանց՝ հանդիպելու առաքյալների և երեցների հետ: Ինչո՞ւ Պողոսը և Բառնաբասը անձամբ որոշում չկայացրին այդ հարցի վերաբերյալ: Ինչո՞ւ էին նրանք հարկադրված՝ զնալ Երուսաղեմի առաջնորդների մոտ: Պատճառն այն է, որ գորությունը

և առաջնորդությունը միաբանության մեջ են: Այս պատճառով, ամուսինները և կանայք պետք է անեն այն ամենը, ինչ իրենց ուժերի մեջ է՝ միաբան մնալու համար: Միաբանության մեջ մենք կարող ենք պարզ պատասխաններ ստանալ Աստծուց:

**Լիզա. Ո՞րն է տարբերությունը Յոզու պարզևների և Յոզու պտուղների միջև:**

**Ջոն.** Յոզու պարզևը այնպիսի բան է, որով Աստված օժտում է մարդուն: Կարիք չկա, որ այն մշակվի կամ զարգացվի: Այն ինքնաբերաբար է գործում: Միակ բանը, որը պետք է զարգացվի, այն է, թե *ինչպես* է տվյալ անձնավորությունը գործածում այդ պարզևը: Ի տարբերություն դրան՝ Յոզու պտուղը պետք է մշակվի: Այնպես որ, պարզևները տրվում են, իսկ պտուղը մշակվում է:

Յոզու պտուղը՝ Յոզով առաջնորդվող կյանքի արդյունքն է: Երբ հոգով եք վարվում, ձեր մեջ պտուղ է ձևավորվում, և դուք լցվում եք ավելի մեծ ուրախությամբ, խաղաղությամբ, համբերությամբ, սիրով և այլն (տե՛ս Գաղատ. 5.22,23): Այդ սերը, ուրախությունը կամ խաղաղությունը ճառագելու են ձեզնից, որովհետև դուք քայլում եք Յոզով և ազդեցություն եք թողնում ձեր անձնական կյանքի վրա: Յոզու պտուղն այն հիմքն է, շնորհիվ որի դուք ապահովություն կունենաք ձեր ծառայողական կյանքում: Իսկ Յոզու պարզևները կապված են ձեր ծառայողական կյանքի հետ, և դժբախտաբար, շատերն ավելի ձգտում են պարզևներին, քան՝ պտղին:

Ես այսպես եմ աղոթել. «Աստված, ես ոչ մի դեպքում չեմ ցանկանում, որ այն պարզևները, որոնք տվել ես ինձ, արտահայտվեն ավելի, քան պտուղը, որը զարգացրել ես ինձանում»: Ես աղոթել եմ այդպես, որպեսզի կարողանամ բարեհաջող ավարտել իմ ընթացքը, քանի որ հաճախ է լինում, որ մարդիկ սկսում են ձգտել պարզևներին: Աստվածաշնչում ասվում է. «Ձգտե՛ք սիրուն և ցանկացե՛ք հոգևոր պարզևները» (Ա Կորնթ. 14.1, NKJV), սակայն մարդիկ ձգտում են պարզևներին և անտեսում են պտուղը (սերը):

Պարզևները չունեն մարդկանց ապահովության մեջ պահելու հատկություն և, ի վերջո, կարող են կործանել նրանց: Յուզան դևեր էր հանում և բժշկում էր հիվանդներին, սակայն նա դժոխքում է: Յիսուսն ասաց. «Նրա համար ավելի լավ կլիներ, եթե ընդհանրա-

պես ծնված չլիներ» (Մատթ. 26.24, NET): Հուդայի կյանքում գործում էին հոգևոր պարզւնները, բայց ակնհայտ է՝ նա չէր զարգացրել Հոգու պտուղը:

**Լիզա.** Կան մարդիկ, ովքեր գործում են հզոր պարզւներով, սակայն նրանց կյանքի պտուղը լիովին հակասում է պարզւների զորութեանը: Ինչպե՞ս է դա հնարավոր:

**Ջոն.** Պարզապես հիշիր Բաղասմին: Բաղասմը մարգարեության պարզւ ուներ: Ավելին՝ նրա մարգարեությունները գրված են Աստվածաշնչում: Այն խոսքերը, որ նա ասում էր, Աստծո խոսքերն էին: Սակայն Աստված պատվիրեց՝ սպանել Բաղասմին նրա իսկ թրով, որովհետև նա չար և անհնազանդ էր: Սավուղ թագավորը խելագար էր: Նա իսկապես խելքը թռցրած էր: Կար ժամանակ, երբ նա հետապնդում էր Դավթին՝ Աստծո օժյալին, որպեսզի սպաներ նրան: Չնայած դրան, մի օր նա մարգարեացավ մարգարեների հետ (տե՛ս Ա Թագ. 19):

Այն փաստը, որ հոգևոր պարզւները գործում են մարդու կյանքում, դեռ չի նշանակում, որ Աստված հավանում է նրան: Հիսուսն ասաց, որ շատերը կասեն Ինձ, թե՛ դևեր քշեցինք Քո անունով, հրաշքներ գործեցինք Քո անունով, մեծ գործեր արեցինք Քո անունով, մարգարեացանք և քարոզեցինք Քո անունով: Իսկ Նա կասի՝ հեռացե՛ք Ինձնից, ես երբեք չեմ ճանաչել ձեզ՝ անօրենություն գործողներիդ: Դուք չեք զարգացրել պտուղը ձեր կյանքում (տե՛ս Մատթ. 7.22,23): Մի օր Տերը խոսեց ինձ հետ.«Դու նկատեցի՞ր, որ նրանք չասացին. «Չէ՞ որ մենք կերակրեցինք աղքատներին Քո անունով: Մենք այցելեցինք բանտարկյալներին Քո անունով»: Այն մարդիկ, ովքեր նման գործեր են անում, զարգացնում են պտուղն իրենց կյանքերում»: Հոգևոր պտուղը զարգացնելը՝ ապահովություն է, որի շնորհիվ բարեհաջող ավարտում ենք մեր ընթացքը:

Առաջին անգամ ես հասկացա այս ճշմարտությունը, երբ աշխատում էի մի մեծ եկեղեցում, որն ամենահայտնի եկեղեցիներից է աշխարհում: Մեզ այցելում էինինչպես ամենահայտնի քարոզիչները, այնպես էլ բազմաթիվ ոչ շատ հայտնի քարոզիչներ, այսինքն՝ բազմապիսի քրիստոնյա ծառայողներ: Իմ պարտական

նությունն էր՝ դիմավորել այդ քարոզիչներին օգանավակայանում և հյուրընկալել նրանց: Ես նկատեցի, որ երբ որոշ ծառայողներ նստում էին իմ մեքենան, այնպիսի տպավորություն էր, որ Հիսուսն էր նստած կողքիս: Երբ նրանք բարձրանում էին քարոզելու, այնպիսի տպավորություն էր, որ Հիսուսն էր բարձրացել և քարոզում էր:

Երբ այլ ծառայողներ էին նստում մեքենաս, ես մտածում էի. *«Ի՞նչ կատարվեց: Ինչո՞ւ եմ այդքան կեղտոտ զգում ինձ: Ինչո՞ւ եմ նրանք այդքան անպարկեշտ խոսում»:* Իսկ հետո նրանք բեմ էին բարձրանում, և մարդիկ փրկվում էին, բժշկվում և խոսք էին ստանում Աստծուց: Այդ փրկությունները կամ բժշկությունները կեղծ չէին. դրանք տեղի էին ունենում Սուրբ Յոզու գործությամբ: Ես մտածում էի. *«Աստված, ես չեմ հասկանում սա: Ի՞նչ է կատարվում: Ինչպե՞ս նրանք կարող են այդպիսի վարք ունենալ, երբ ինձ հետ են, այնուհետև բարձրանալ՝ քարոզելու, և փրկությունների ու բժշկությունների ականատես լինել»:* Ահա թե երբ Աստված ցույց տվեց ինձ, որ Յուդան քարոզեց Աստծո թագավորության մասին, դևեր քշեց, հիվանդներին բժշկեց և հրաշքներ գործեց, սակայն նա հիմա դժոխքում է: Բաղասմը մարգարեացավ, բայց Աստված թրով սպանեց նրան: Սավուղը նույնպես մարգարեացավ, բայց բարեհաջող չավարտեց իր ընթացքը: Տերն ասաց ինձ. *«Աստծո օծությունը՝ Աստծո պարգևները, որոնք գործում են մարդու կյանքում, պարտադիր չէ, որ Աստծո հավանության նշանը լինեն»:* Դուք կճանաչեք նրանց իրենց պտուղներով (տե՛ս Մատթ. 7.16):

**Լիզա.** Այդ դեպքում, կարելի՞ է ասել, որ պարզևըտրվում է մարդուն, իսկ պտուղը զարգանում է մարդու ներսում և նրա ներքին բնավորությունն է:

**Ջոն.** Այո՛, դու շատ ճիշտ ասացիր:

**Լիզա.** Դու խոսում էիր այն մասին, որ կարելի է առաջնորդվել ներքին խաղաղությամբ, նաև զգալ, թե ինչպես է Յոզին արգելում զգուշացման միջոցով, որը նման է տհաճ կամ անհանգիստ զգացումի: Բայց ոմանք նույնիսկ վիճարկում են այն փաստը, որ այսօր Աստված խոսում է մեզ հետ: Նրանք հավատում են, որ Աստված խոսում է միայն Սուրբ գրքի

**միջոցով: Դու հավատո՞ւմ ես, որ Աստված խոսում է այսօր, և արդյո՞ք Նա խոսում է միայն համաձայն Իր Խոսքի:**

**Ջոն.** Նախ և առաջ՝ Պողոսը Կորնթոսի եկեղեցուն ասաց. «...անձայն կուռքերի մոտ էիք տարվում, ինչպես որ առաջնորդվում էիք» (տե՛ս Ա Կորնթ. 12.2): «Անձայն» բառը նշանակում է «համր»: Այլ խոսքով՝ այն աստվածները, ում ծառայում էին կորնթացիները, չէին խոսում: Պողոսն ասում է. «Տարբերությունն այն է, որ մեր Աստված խոսում է»: Եվ Նա պարզ է խոսում:

Ինչպե՞ս է խոսում Աստված: Նոր կտակարանը ցույց է տալիս բազմապիսի միջոցներ, որով Նա խոսում է մեզ հետ: Առաջին հերթին Աստված խոսում է *ներքին վկայության*՝ խաղաղության զգացման միջոցով:

**Լիզա.** Նույնիսկ ավելի, քան Իր Խոսքով:

**Ջոն.** Ո՛չ, Աստծո Խոսքը միշտ համապատասխանում է դրան: Եթե դուք խաղաղության զգացում ունեք ինչ-որ հարցում, որը չի համապատասխանում Աստծո Խոսքին, ուշադրություն մի՛ դարձրեք այդ զգացմանը: Ակնհայտ է, որ դուք սխալ դրդապատճառներ ունեք ձեր սրտում. սկզբում պետք է վերադառնաք սրտի չեզոք վիճակին: Վերջին խոսքը պատկանում է Աստվածաշնչին:

**Լիզա.** Խոսքը մշտապես թե՛ հիմքն է, թե՛ կառուցվածքը:

**Ջոն.** Այո՛, ճիշտ է: Ուրեմն, ներքին վկայությունը՝ առաջին միջոցն է: Երկրորդը՝ *մեղմ ու բարակ ձայնն* է, որի մասին խոսում է Աստվածաշունչը: Հիսուսն ասաց, որ Իր գառները ճանաչում են Իր ձայնը (տե՛ս Յովհ. 10.27): Աստծո Հոգին խոսում է այն, ինչ Նա լսում է Հիսուսից. հենց դա է մեղմ ու բարակ ձայնը:

Որոշ մարդիկ կապվածության մեջ են հայտնվել, որովհետև սկսել են հետևել ձայների՝ առանց որևէ ներքին վկայության: Ամեն անգամ, երբ լսել են Աստծո ձայնը, այն ուղեկցվել է ներքին վկայությամբ, և երկուսն էլ համապատասխանել են Աստծո Խոսքին: Ահա այն հիմքը, որը պետք է ունենաք՝ վկայությունը, Խոսքը և ձայնը: Եթե դուք ձայն եք լսել, բայց չունեք ներքին



վկայություն, մի՛ հետևեք դրան: Ես ներկա եմ եղել հավաքույթների, որտեղ ինձ համար մարգարեացել են, բայց ես չեմ վերապրել Աստծո ներկայությունը, ո՛չ էլ ներքին վկայություն եմ ունեցել: Ես ուշադրություն չեմ դարձնում նման մարգարեություններին:

Հաջորդ միջոցը, որի մասին խոսում է Նոր կտակարանը, *երազներն* են: Գործք առաքելոց գրքի 16-րդ գլխում մի պատմություն կա այն մասին, որ Պողոսը երազ տեսավ: Երազում մի մակեդոնացի մոտեցավ նրան՝ ասելով. «Խնդրո՞ւմ եմ, ե՛կ և օգնի՛ր մեզ»: Սուրբ Հոգին օգտագործեց այդ երազը՝ ասելով. «Գնա՛ Մակեդոնիա»: Որոշ մարդկանց հետ Աստված ավելի հաճախ է խոսում երազներով, քան մյուսների հետ: Աստված հաճախ կնոջս հետ խոսում էրազներով, բայց ինձ հետ սովորաբար խոսում է ներքին վկայությամբ և մեղմ, բարակ ձայնով:

Ըստ Աստծո Խոսքի՝ հաջորդ միջոցը, որով Աստված խոսում է մարդկանց հետ, *տեսիլքներն* են: Պողոսը նկարագրում էր իր տեսիլքը՝ ասելով, որ չգիտեր՝ մարմնո՞ւմ էր, թե՞ մարմնից դուրս (տե՛ս Բ Կորնթ. 12.2): Տեսիլքի դեպքում դուք չգիտեք՝ մարմնո՞ւմ եք, թե՞ մարմնից դուրս, բայց բառացիորեն տեսնում եք հոգևոր աշխարհը: 1989թ.-ին, երբ իմ հովիվը Լիզային և ինձ ասաց, որ ժամանակն է սկսել մեր ծառայությունը, նա արեց դա տեսիլքի շնորհիվ: Աշխատակազմի հավաքույթի ժամանակնա ասաց. «Անցած գիշերտեսիլք եմ տեսել: Ես ասես այն դիտում էի հեռու-տացույցի էկրանով: Հովիվներ, ձեզնից մեկը կարճ ժամանակ անց կլքի մեզ: Դու ճանապարհորդելու ես երկրով մեկ և օրհնություն ես լինելու Քրիստոսի Մարմնի համար»: Նա շարունակեց. «Ջոն Բի՛վեր, դո՛ւ ես այդ մարդը»: Գրեթե ութ ամիս առաջ աղոթքի ժամանակԱստված ասել էր ինձ միևնույն բանը, այնպես որ, նրա խոսքը հաստատություն էր ինձ համար:

Վերջին միջոցը, որով, ըստ Նոր կտակարանի, Աստված խոսում է մեզ հետ, *մտքի հափշտակությունն* է: Գործք առաքելոց գրքի 10-րդ գլխում Պետրոսի հետ մտքի հափշտակություն տեղի ունեցավ: Մտքի հափշտակության դեպքում ձեր զգայարանները ժամանակավորապես դադարում են գործել: Ահա թե ինչով է այն տարբերվում տեսիլքից. տեսիլքի դեպքում ձեր զգայարանները լիարժեք գործում են. դուք կարող եք տեղաշարժվել... Թե՛ Պողոսը, թե՛ Հովհաննեսը կարողանում էին տեղաշարժվել, երբ Երկինք

զմացին: Մտքի հափշտակության ժամանակ դուք ինչ-որ բան եք *տեսնում* և *լսում* եք Աստծո ձայնը: Մնացած բոլոր զգայարանները ժամանակավորապես չեն գործում:

Բայց ինչ-որ մեկը կարող է հարցնել. «Իսկ ի՞նչ կասեք Գեդեոնի բրդի մասին»: Բուրդը՝ Աստծուց լսելու հինկտակարանյան միջոց է: Դուք պետք է վերցնեք այն ամենը, ինչ Յին կտակարանում էր, և քննեք խաչի տեսանկյունից: Խաչը կանցկացնի, կվերանայի կամ կջնջի այն ամենը, ինչ կբերեք իր առջև: Երբ բուրդը դիտարկում եք խաչի լույսի ներքո, տեսնում եք, որ խաչն այն ջնջում է: Աստվածաշնչում ասվում է. «Որովհետև, ովքեր *Աստծո Յոգով* են վարվում (կամ՝ առաջնորդվում)» ոչ թե «ովքեր բրդերով են առաջնորդվում» (Ղեմ. 8.14): Յին կտակարանում Աստծո Յոգին չէր բնակվում մարդկանց ներսում, այնպես որ, Աստված խոսում էր նրանց հետ այլ կերպով, և բուրդը դրա վառ օրինակներից մեկն է: Անձամբ ես չեմ խրախուսի Նոր կտակարանի հավատացյալներին՝ օգտագործել բուրդը՝ Աստծուց լսելու համար: Աշխատեք առաջնորդվել Խոսքով և ներքին վկայությամբ: Բուրդը ֆիզիկական իրողության մեջ է, և դուք հազիվ թե ցանկանաք շփոթվել՝ գործելով այդ իրողության մեջ: Մենք կանչված ենք Յոգումեջ ապրելու և վարվելու համար:

**Լիզա.** Ես ցանկանում եմ մեկ բան ավելացնել: Բոլոր այս պատասխանները վերաբերում էին հոգևոր իրողությանը: Մենք նույնպես շատ հստակ պատվիրան ունենք՝ եթե տեսնում եք ձեր եղբորը կարիքի մեջ, մի՛ փակեք ձեր գուրը նրանից (տե՛ս Ա Յովի. 3.16-18): Երբեմն կարիք չկա, որ ձայն լսեք երկնքից: Երբեմն պարզապես պետք է *տեսնեք* կամ *լսեք* ինչ-որ մեկի կարիքի մասին: Երբ մենք *լսեցինք*, որ մարդիկ պոկումէին մեր գրքերի էջերը և փոխանցում մեկը մյուսին, ասացինք. «Ինչպե՞ս կարող ենք փակել մեր գուրը»: Մենք երբեք չենք տեսել դա, բայց երբ *լսեցինք* այդ մասին, ասացինք. «Մենք պատասխանելու ենք այդ կարիքին»:

**Ջոն.** Երբ ես լսեցի թրաֆիքինգի ենթարկվող աղջիկների մասին, Աստված չխոսեց ինձ հետ, բայց ես ասացի. «Լիզա, մենք պետք է օգնենք»:

**Լիզա.** Ես *կարդացի* այդ մասին մի ամսագրում, տեսա դա այլ երկրներում: Երբեմն մարդիկ նշանի, մտքի հափշտակության, տեսիլքի կամ երազի են սպասում այն դեպքում, երբ Աստվածաշնչում ասվում է. «Եթե *տեսնես...*»:

**Ջոն.** «Եթե տեսնես եղբորդ կարիքի մեջ»:

**Լիզա.** Եվ մենք սկսում ենք մեր եղբորից կամ քրոջից, ով կարիքի մեջ է: Մենք սկսում ենք կարիքավոր քրիստոնյաներից: Մենք սկսում ենք նրանցից, ում կարող ենք տեսնել, ում կարող ենք հպվել, ում ձանձր կարող ենք լսել, և չենք կարող փակել մեր գուրջը: Ես հայտնաբերել եմ, որ ամեն անգամ, երբ մենք արձագանքում ենք նրան, ինչ տեսնում ենք իրականության մեջ, Աստված վստահում է մեզ ավելին՝ հոգևոր իրականության մեջ: Նա ասում է. «Ես տեսնում եմ, որ դու հավատարիմ ես սրանում: Ես կարող եմ մի փոքր ավելին վստահել քեզ հավատքի իրականության մեջ»:

## Հավելյալ պատասխաններ Ջոնից

**Չարց. Ի՞նչ է նշանակում՝ հայիոյութուն Սուրբ Յոզու հանդէպ:**

**Ձոն.** Մատթեոս 12.22-32, Մարկոս 3.22-30 և Ղուկաս 12.10 խոսքերուն Յիսուսը խոսում էր Սուրբ Յոզուն հայիոյելու մասին: Մատթեոսի և Մարկոսի Ավետարաններուն պարզ տեսնում ենք Նրա խոսքերի համատեքստը: Կրոնական առաջնորդները Յիսուսին մեղադրեցին, որ Նա դևեր էր հանում դևերի իշխան Բեեղզբուրդի ուժով: Յենց այդ ժամանակ Յիսուսն ասաց. «Ամեն մեղք և հայիոյանք կթողվի մարդկանց, բայց Յոզու դեմ հայիոյանքը չի թողվի մարդկանց» (Մատթ. 12.31): Այդ իսկ պատճառով, հայիոյել Սուրբ Յոզուն նշանակում է՝ բացահայտ կերպով չարախոսել Նրա մասին, մասնավորապես՝ խոսել Սուրբ Յոզու դրսևորումների մասին այնպես, ասես դրանք սատանայի գործերն են:

**Չարց. Արդյո՞ք Աստվածաշնչի համաձայն է՝ աղոթել և երգել Սուրբ Յոզուն ճիշտ այնպես, ինչպես Յորը կամ Որդուն:**

**Ձոն.** Միանշանակ՝ այո՛: Սուրբ Յոզին Աստված է, և Նրան պետք է երկրպագել Աստծո պես: Յովհաննես 4.24-ում գրված է. «Աստված Յոզի է, և Նրան երկրպագողները պետք է Յոզով և ճշմարտությամբ երկրպագեն»: Ես հավատում եմ, որ դուք պետք է երկրպագեք և փառաբանեք Սուրբ Յոզուն ճիշտ այնպես, ինչպես փառաբանում եք Յայր Աստծուն և Որդի Աստծուն:

**Չարց. Ինչպե՞ս իմանալ, թե ինչպիսի աղոթքներ և երգեր պետք է ուղղել Յոզուն:**

**Ձոն.** Յիսուսն ասաց իր աշակերտներին.

«Տակավին շատ բան ունեն ձեզ ասելու, բայց հիմա չեք կարող տանել: Բայց երբ որ Նա՝ ճշմարտության Յոզին կգա, Նա կառաջնորդի ձեզ ամեն ճշմարտության մեջ, որովհետև իր անձից չի խոսի, այլ՝ ինչ որ կլսի, կխոսի, և գալու բաները կպատմի ձեզ: Նա Ինձ կփառավորի, որովհետև Իմից կառնի և կպատմի ձեզ...»

Մի քիչ ժամանակ էլ, և չեք տեսնի Ինձ, և դարձյալ մի քիչ՝ և կտեսնեք Ինձ, որովհետև Ես Յոր մոտ եմ գնում:

*Եվ այն օրը ոչինչ չեք հարցնի Ինձ. ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ, թե՛ ինչ-որ Յորդից խնդրեք Իմ անունով, կտա ձեզ»:*

(Յովհաննես 16.12-14,16,23)

Մենք խնդրում ենք Հայր Աստծուն Հիսուսի *անունով* (իշխանությունում): Այնուհետև շփվում ենք Սուրբ Հոգու հետ (այսինքն՝ հաղորդակցվում ենք, զրուցում կամ հարցեր ենք ուղղում): Այս գիրքը հենց Սուրբ Հոգու հետ շփվելու մասին է:

**Հարց. Արդյո՞ք Աստվածաշնչին համապատասխանում է՝ խնդրել Սուրբ Հոգուն, որպեսզի «գա» հավաքույթին կամ ծառայությանը՝ հաշվի առնելով, որ Նա ամենագո է:**

**Ջոն.** Այո՛: Աստվածաշունչը սովորեցնում է թե՛ Աստծո ամենագո լինելու, թե՛ Նրա հայտնված ներկայության մասին: Դավթի խոսքերից մենք տեսնում ենք, որ Աստված Ամենակարող է.

«Ո՛ւր գնամ Քո Հոգուց

Եվ Քո երեսից ո՛ւր փախչեմ:

Եթե վերանամ երկինքը, Դու այնտեղ ես,

Եվ եթե դժոխքը փաթաթվեմ, ահա Դու այնտեղ ես:

Եթե արշալույսի թևերն առնեմ

Եվ ծովի վերջին ծայրերում բնակվեմ,

Այնտեղ էլ Քո ձեռքը կառաջնորդի ինձ,

Եվ Քո աջը կպահի ինձ» (Սաղմոս 139.7-10):

Աստվածաշնչուն նույնպես գրված է, որ Աստված երբեք չի թողնի և չի լքի մեզ (տե՛ս Եբր. 13.5): Այս խոսքերում կրկին գրված է Նրա ամենագո լինելու մասին՝ Աստծո այն ներկայության մասին, որն ամենուր է:

Բացի այդ, կա նաև Աստծո հայտնված ներկայությունը: *Հայտնել* նշանակում է՝ դարձնել անտեսանելի՝ տեսանելի, չլսվածը՝ լսելի կամ անհայտը՝ հայտնի: Երբ Աստված հայտնում է Իր ներկայությունը, մենք կարողանում ենք ընկալել Նրան մեր զգայարաններով (տե՛ս Յովհ. 14.19-24): Ես հավատում եմ, որ մյուսն խնդրանքը համապատասխանում է Աստվածաշնչին:

**Հարց. Ինչո՞ւ ենք մենք աղոթում, որ Աստված թափի Իր Հոգին: Մի՞թե Նա արդեն չի արել դա:**

**Ջոն.** Ձաքարիա 10.1-ում գրված է. «Խնդրե՛ք Տիրոջից անձրև ետքի անձրևի ժամանակ...»: Սուրբ գրքում անձրևը մշտապես խորհրդանշում է Սուրբ Հոգու թափումը: Ես հավատում եմ, որ երբ խնդրում ենք Աստծուն՝ թափել Իր Հոգին, մենք խնդրում ենք Հոգու թարմ անձրևը մեր եկեղեցիների, քաղաքների և ազգերի վրա: Մենք խնդրում ենք Նրա հայտնված ներկայության ավելի մեծ դրսևորում, որը կգորացնի մեզ՝ կատարելու Նրա գործը, և կառաջնորդիավելի մեծ հունձքի՝ Աստծո թագավորության համար:

**Հարց. Ինչպե՞ս կարող եմ ավելի խորը փոխհարաբերություններ ունենալ Սուրբ Հոգու հետ: Ինչպե՞ս կարող եմ ավելի շատ վերապրել Նրա ներկայությունը և զորությունը:**

**Ջոն.** Ժամանակ անցկացնելով Աստծո և Նրա Խոսքի հետ: Այս գրքի երկրորդ և երրորդ գլուխներում կարող եք ավելի մանրամասն կարդալ այն մասին, թե ինչպես զարգացնեք մտերմությունը Աստծո հետ:

**Հարց. Եթե Սուրբ Հոգին գիտի ամեն ինչ, ինչո՞ւ մենք պետք է կարդանք Աստվածաշունչը:**

**Ջոն.** Աստված տվել է մեզ Իր կողմից ոգեշնչված Սուրբ գրքերը, որովհետև դրանք «օգտակար են ուսուցման, հանդիմանելու, ուղղելու և արդարության մեջ խրատելու համար, որպեսզի Աստծո ծառան ամբողջովին սպառազինված լինի ամեն բարի գործի համար» (Բ Տիմոթ. 3.16,17, NIV): Սուրբ Հոգին օգտագործում է Իր՝ գրված Խոսքը (հունարենում՝ *լոգոս*), որպեսզի մեզ տա Իր՝ ասված խոսքը (*ռեմա*): Հոգին կենդանացնում է *լոգոսը*, և այն դառնում է *ռեմա*, որն ուղղված է մեզ: Եթե մենք ժամանակ չենք անցկացնում *լոգոսի* մեջ՝ բացելով մեր սրտերը Հոգու համար, ապա շատ ավելի դժվարությամբ կստանանք *ռեմա* խոսքը: Չինաստանի ընդհատակյա եկեղեցին լցված էր Հոգով, բայց տարիներ շարունակայդ հավատացյալները հուսահատորեն Աստվածաշնչերի կարիք ունեին: Նրանք ցանկանում էին կարդալ Աստծո Խոսքը, որպեսզի Սուրբ Հոգին կարողանար խոսել իրենց հետ Խոսքի միջոցով և կենդանացներ այն իրենց սրտերում: Այնքա՞ն կարևոր է, որ դուք Աստվածաշունչ կարդաք: Աստծո Խոսքը և Աստծո Հոգին միասին են գործում: Սա համագործակցություն է:

Հիշեք՝ Աստվածաշնչում գրված են Աստծո խորհուրդները, և Սուրբ Հոգին հայտնում է այդ խորհուրդները մեզ: Եթե որևէ հատված կարդաք Սուրբ գրքից՝ առանց Հոգու ներգործության, դուք միայն կտեսնեք, թե ինչ է գրված այդտեղ մարդկային լեզվով: Բայց Հոգուն իջոցով դուք կարող եք հասկանալ այդ հատվածի հոգևոր նշանակությունը, որը գերազանցում է մարդկային միտքը, որովհետև Հոգու մեջ մենք ունենք Քրիստոսի միտքը:

«Այլ՝ Աստծո ծածուկ իմաստությունն ենք խոսում խորհրդով, որ Աստված հավիտենից առաջ սահմանեց այն մեր փառքի համար: Որն այս աշխարհի իշխաններից ոչ ոք չճանաչեց, քանի որ, եթե ճանաչած լինեին, փառքի Տիրոջը չէին հանի խաչը: Այլ՝ ինչպես գրված է՝ ինչ որ աչք չտեսավ և ականջ չլսեց և մարդու սիրտ չընկավ, այն պատրաստեց Աստված Իրեն սիրողների համար: Բայց մեզ հայտնեց Աստված Իր Հոգով, որովհետև Հոգին բոլոր բաները քննում է և Աստծո խորքն էլ: Որովհետև մարդկանցից ո՞վ գիտի մարդու բաները, եթե ոչ՝ մարդու հոգին, որ նրանում է. այնպես էլ Աստծո բաները ոչ ոք չգիտի, եթե ոչ՝ Աստծո Հոգին: Եվ մենք ոչ թե այս աշխարհի հոգին առանք, այլ այն Հոգին, որ Աստծուց է, որ ճանաչենք այն բաները, որ Աստծուց տրվեց մեզ: Որն էլ խոսում ենք՝ ոչ թե մարդկային իմաստության սովորած խոսքերով, այլ Սուրբ Հոգու սովորեցրածներով՝ հոգևորները հոգևորների հետ համեմատելով: Բայց շնչավոր մարդն Աստծո Հոգու բաները չի ընդունում, որովհետև նրանք հիմարություն են նրա համար, և չի կարող գիտենալ էլ, որովհետև հոգևոր կերպով են քննվում: Բայց հոգևոր մարդը ամենբան քննում է, և ինքը ոչ ոքից չի քննվում: Որովհետև ո՞վ իմացավ Տիրոջ միտքը, որ բան սովորեցնի նրան. բայց մենք Քրիստոսի միտքն ունենք» (Ա Կորնթացիների 2.7-16):

**Հարց. Այն եկեղեցուն, որտեղ ես հաճախում եմ, հոգևոր չորություն կա: Ի՞նչ կարող եմ անել՝ որպես առանձին անդամ, որպեսզի Հոգու ներկայությունն ավելանա այնտեղ:**

**Ձոն.** Եթե դուք առաջնորդ չեք եկեղեցուն, միակ բանը, որ կարող եք անել՝ աղոթելն է: Առաջինը՝ հրավիրե՛ք Հոգուն ձեր կյանքի մեջ, որպեսզի ձեզ հետ եկեղեցի բերեք Նրա հայտնված ներկայությունը: Երկրորդը՝ խնդրե՛ք, որպեսզի Աստված աշխատի ձեր առաջնորդների սրտերի հետ, և նրանք ավելի բաց լինեն Սուրբ Հոգու ներկայության դրսևորումների հանդեպ:

## ՀԱՐՑԵՐ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

*Եթե դուք ուսումնասիրում եք «Սուրբ Հոգի. Ներածություն» գիրքը՝ որպես «Մեսիանիկ Հավաքածու»-ի ամբողջական դասընթացի մաս, խնդրում ենք՝ դիտել ք ուսումնական տեսանկյունից 6-ը:*

- 1 | Բոլոր հավատացյալները հոգևոր պարգևները գործածելու կարողություն ունեն: Ինչպե՞ս կարելի է գործածել այդ պարգևները՝ պաշտոնական «ծառայության» շրջանակներից դուրս:
  - 2 | Երբ դուք հավատում եք, որ Աստված խաղաղություն է տալիս ձեզ որևէ որոշման վերաբերյալ, ինչո՞վ կարող եք հանդաված լինել, որ ճշմարտապես լսել եք Նրանից:
  - 3 | Արդյո՞ք Սուրբ Հոգին երբևէ խոսել է ոչ թե անձամբ ձեզ հետ, այլ ձեր ամուսնու կամ կնոջ միջոցով: Ձեր կարծիքով, ինչո՞ւ է Նա գործում այդ կերպով, և արդյո՞ք կարող եք ընդունել այդ առաջնորդությունը ձեր կյանքում:
  - 4 | Երբ ձեր կյանքում կարիք եք ունենում լուրջ որոշումներ կայացնելու և թվում է, թե առաջնորդություն չեք գտնում, ի՞նչ կարող եք անել:
- Կարդացե՛ք** Առակաց 11.14, 15.22, 24.6 և Հռոմեացիների 8.26,27
- 5 | Դուք հավատո՞ւմ եք, որ այսօր Աստված դեռ խոսում է Իր ժողովրդի հետ: Ինչպե՞ս է Նա խոսել ձեզ հետ:





# ՀԱՎԵԼՎԱԾ

## Ինչպե՞ս փրկություն ստանալ

*«Եթե դու դավանես քո բերանով, որ Հիսուսը Տեր է, և հավատաս քո սրտում, որ Աստված հարություն տվեց Նրան մեռելիներից, կփրկվես: Որովհետև քո սրտի հավատքով է, որ արդարանում ես Աստծո առջև, և քո բերանի դավանանքով է, որ փրկվում ես»:*

— (Հռոմեացիների 10.9,10, NLT)

**Ս**ուրբ Հոգին փափագում է շփվել ձեզ հետ ամեն վայրկյան, որպեսզի խրախուսի և սպառազինի ձեզ՝ Աստծուն ճանաչելու և Նրա թագավորությունը տարածելու համար: Բայց Աստծո Հոգու հետ մտերմության առաջին քայլը՝ Աստծո Որդի Հիսուս Քրիստոսի միջոցով փրկություն ստանալն է:

Հիսուսի մահվան և հարության միջոցով Աստված ճանապարհ բացեց, որպեսզի մուտք գործեք Նրա թագավորություն՝ որպես սիրելիորդի կամ դուստր: Հիսուսի զոհը խաչի վրա ձրիաբար շնորհեց ձեզ հավիտենական և լիառատ կյանքը: Փրկությունը՝ Աստծո պարգևն է ձեզ: Դուք չեք կարող որևէ բան անել՝ փրկությունը վաստակելու կամ դրան արժանանալու համար:

Այս թանկ պարգևն ստանալու համար նախ՝ խոստովանեք, որ մեղավոր եք՝ ձեր Արարչից անկախ ապրելու մեջ (որովհետև սա բոլոր մեղքերի պատճառն է, որ երբևէ գործել եք): Մեղքերից ապաշխարելը՝ փրկությունն ստանալու կարևորագույն պայմաններից մեկն է: Գործք առաքելոց գրքում Պետրոսը պարզ ասաց սա այն օրը, երբ 5000 մարդ փրկվեց. «Ուրեմն, ապաշխարե՛ք և դարձի՛ եկեք, որ ձեր մեղքերը ջնջվեն» (Գործք 3.19, NKJV): Սուրբ գիրքը հայտարարում է, որ յուրաքանչյուր ոք ծնվել է՝ որպես մեղքի ստրուկ: Այդ ստրկության արմատը Ադամի մեղքն է, ով առաջինը համառորեն չհնազանդվեց Աստծուն: Ապաշխարությունը որոշում է՝ հրաժարվել հնազանդվելուց մեր սեփական անձին և սատանային, ով ստի հայրն է, և հնազանդվել մեր նոր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին, Ով Իր կյանքը տվեց մեզ համար:

Ձեր կյանքում իշխանությունը պետք է տաք Հիսուսին: Հիսուսին Տեր դարձնելը նշանակում է՝ ձեր կյանքը (հոգին, անձը և մարմինը)

և այն ամենը, ինչ ունեք, դարձնել Նրա սեփականությունը: Նրա իշխանությունը ձեր կյանքում բացառիկ է դառնում: Այն պահին, երբ անում եք սա, Աստված ազատում է ձեզ խավարից և տեղափոխում է Իր թագավորության լույսի և փառքի մեջ: Պարզ ասած՝ դուք անցնում եք մահից դեպի կյանք. դուք դառնում եք Նրա զավակը:

Եթե ցանկանում եք ընդունել փրկությունը Հիսուսի միջոցով, կրկնե՛ք այս աղոթքը.

*Աստված, որ երկնքում ես, ես գիտակցում եմ, որ մեղավոր եմ և ընկել եմ Քո արդար չափանիշից: Ես հավիտենական դատաստանի եմ արժանի իմ մեղքի պատճառով: Շնորհակալություն, որ չես թողնում ինձ այս վիճակում, որովհետև ես հավատում եմ՝ Դու ուղարկեցիր Քո միածին Որդի Հիսուս Քրիստոսին, Ով ծնվեց կույս Սարիսամից, որպեսզի Նա մահանար ինձ համար և կրեր իմ դատաստանը խաչի վրա: Ես հավատում եմ, որ Նա հարություն առավ երրորդ օրը, և այժմ նստած է Քո աջ կողմում՝ որպես իմ Տեր և Փրկիչ: Այսօր ապաշխարում եմ, որ անկախ եմ եղել Քեզնից, և կյանքս լիովին հանձնում եմ Հիսուսի իշխանությանը:*

*Հիսուս, ես դավանում եմ Քեզ՝ որպես Իմ Տեր և Փրկիչ: Ել իմ կյանքի մեջ Քո Հոգով: Փոխիր ինձ՝ Աստծո զավակ դարձնելով: Ես ուրանում եմ այն ամենը, ինչ կապված է խավարի հետ և ինչին ես մի ժամանակ հարում էի: Այսօրվանից այլևս չեմ ապրի ինձ համար, այլ՝ Քո շնորհքով կապրեմ Քեզ համար, քանի որ Դու մահացար, որպեսզի ես կարողանամ հավիտյան ապրել:*

*Շնորհակալություն, Տեր: Այժմ իմ կյանքը լիովին Քո ձեռքերի մեջ է, և համաձայն Քո Խոսքի՝ ես ամոթով չեմ մնա:*

Բարի գալուստ Աստծո ընտանիք: Ես խրախուսում եմ ձեզ, որպեսզի պատմեք այս հրաշալի լուրը այլ հավատացյալների: Կարևոր է, որ դուք միանաք տեղական եկեղեցու, որտեղ հավատում են Աստվածաշնչին, և շփվեք այն մարդկանց հետ, ովքեր կարող են խրախուսել ձեզ հավատքի մեջ: Ազատորեն կապվեք մեր ծառայության հետ, որպեսզի օգնեն ձեզ՝ ձեր տարածաշրջանում եկեղեցի գտնելու համար (այցելե՛ք [MessengerInternational.org](http://MessengerInternational.org)):

Դուք սկսել եք ամենաուշագրավ ճանապարհորդությունը ձեր կյանքում՝ մտերմությունը Բարձրյալ Աստծո հետ: Ամեն օր ավելի՛ մտերմացե՛ք Նրա հետ:

# ՆՇՈՒՄՆԵՐ

## Գլուխ 1

1. Ջեյմս Սթրոնգ. հատոր 1, «*Հունարեն Նոր կտակարանի և եբրայերեն Աստվածաշնչի համառոտ բառարան*», էջ 44 (Բելինգեմ, Վաշինգտոն. «Logos Bible Software, 2009թ.»), (այսուհետև՝ Սթրոնգի համառոտ բառարան):
2. Վ. Է. Վայն, Մերիլ Ֆ. Անգեր և Վիլյամ Ուայթ Կրոսեր. հատոր 2, «*Հին և Նոր կտակարանների բառերի ամբողջական բացատրական բառարան*», էջ 29 (Նեշվիլ, Տենեսի. «Thomas Nelson Publishing», 1996թ.), (այսուհետև՝ Վայնի բացատրական բառարան):
3. Նույնը, էջ 111:
4. Ռիկ Ռեններ. «*Հունարենի գանձեր*» (Տալսա, Օկլահոմա «Teach All Nations», 2003թ.), էջ 737 (այսուհետև՝ Հունարենի գանձեր):
5. Նույնը, էջ 26:

## Գլուխ 1. Սերտողություններ

1. Է. Ու. Թոգեր. «*Է. Ու. Թոգերի գանձարանը*» (Հարիսբուրգ, Փենսիլվանիա, «Christian Publications Inc.», 1980թ.), էջեր 290-291:
2. Նույնը, էջեր 295-296:
3. Էնդրյու Սյուրի. «*Սուրբ Հոգին՝ Ընտանիքում*», «Herald of His Coming», փետրվար, 2013թ., էջ 8:
4. Լեսթեր Սամրալ. «*Հոգի, շունչ և մարմին*» (Նյու Քենսիդգթոն, Փենսիլվանիա. «Whitaker House», 1995թ.), էջ 113:
5. Ռ. Ա. Տորեյ. «*Սուրբ Հոգու զորությունը հավատացյալի մեջ*», տե՛ս նշում 3, էջ 1:

## Գլուխ 2

1. Աստվածաբանության դոկտոր Սփիրոս Ջոդիխաթեսի խմբ., «*Նոր կտակարանի բառերի ուսումնասիրության ամբողջական բառարան*» (Չատանուգա, Տենեսի, «AMG Publishers», 1992թ.), «մետոքոս» բառահոդվածը:

## Գլուխ 2. Սերտողություններ

1. Հենրի Թ. Բլեքբերի և Կլաուս Վ. Քինգ. «*Վերապրել Աստծուն*» (Նեշվիլ, Տենեսի, «Broadman & Holman Publishers», 1994թ.), էջեր 86-87:
2. Նույնը, էջ 87:
3. Նույնը, էջեր 87-88:

4. Եղբայր Լուրենս. «Գործադրել Աստծո ներկայությունը» (Նյու Քեմսիդգթոն, Փենսիլվանիա, «Whitaker House», 1982թ.), էջեր 61, 65:
5. Նույնը, էջ 37:
6. Նույնը, էջեր 41,46,47,49:
7. Քեթրին Կուլման. «Աշխարհի մեծագույն գորությունը» (Նորթ Բրունսվիք, Նյու Ջերսի, «Bridge-Logos Publishers», 1997թ.), էջ 122:
8. «Յունարենի գանձեր», էջ 116:

### **Գլուխ 3. Սերտողություններ**

1. Ֆրենսիս Ֆրենչիփեյն. «Սրբություն, ճշմարտություն և Աստծո ներկայությունը» (Սեդար Ռեփիդս, Այովա, «Arrow Publications», 1999թ.), էջեր 56-57:
2. Նույնը, էջեր 58-59:
3. Կարդացե՛ք Հռոմեացիների 1.17, Բ Կորնթացիների 3.18:
4. Չ. Յ. Սփերջեն. «Ողջ շնորհքը» (Նյու Քեմսիդգթոն, Փենսիլվանիա, «Whitaker House», 1981թ.), էջ 115:
5. Ժաննա Գիյոն. «Ճանաչել Հիսուս Քրիստոսի խորությունները» (Ջեքսոնվիլ, Ֆլորիդա, «SeedSowers Publishing», 1975թ.), էջ 3:
6. Նույնը, էջ 11:

### **Գլուխ 4**

1. Ռիկ Ռեններ. «Դինամիկ զույգ՝ Սուրբ Հոգին և դու», էջ 105 (Լեյք Սերի, Ֆլորիդա, «Charisma House», 1994):
2. Ջոզեֆ Յենրի Թայեր. «Նոր կտակարանի հունարեն-անգլերեն բառարան՝ Գրիմմի և Վիլկեի «Կլավիս Նովի Տեստամենտի» աշխատության թարգմանությունը», էջ 509 (Նյու Յորք, «Harper & Brothers», 1889թ.):
3. Մ. Գ. Իսթոն. «Իսթոնի աստվածաշնչյան բառարան» (Նյու Յորք, «Harper & Brothers», 1893թ.):

### **Գլուխ 4. Սերտողություններ**

1. Կարդացե՛ք Ելից 3.2-4, 13.21, 14.24, Սաղմոս 78.14:
2. Չարլզ Սփերջեն. «Ձորությունը՝ Աստծուն փառաբանելու մեջ» (Նյու Քեմսիդգթոն, Փենսիլվանիա, «Whitaker House», 1998թ.), էջ 31:
3. Ջոզեֆ Յ. Թայեր, Աստվածաբանության դոկտոր. «Նոր կտակարանի հունարեն-անգլերեն բառարան» (Գրանդ Ռեփիդս, Միչիգան, «Baker Book House», 1977թ.) էջ 517, փոփոխված:

4. Սմիթ Վիզգլսվորթ. «Հարաճուն հավատք» (Սփրինգֆիլդ, Միսսուրի, «Gospel Publishing House», 1971թ.), էջեր 96-97:
5. Ռեյնհարդ Բոնկե. «Ապրել կրակոտ կյանքով» (Օռլանդո, Ֆլորիդա, «E-R Productions LLC», 2009թ.), էջ 237:
6. Նույնը, էջեր 274, 369:
7. Վոչմեն Նի. «Եկե՛ք աղոթենք» (Նյու Յորք, «Christian Fellowship Publishers, Inc», 1997թ.), էջ 71:
8. Քեթրին Կուլման. «Աշխարհի մեծագույն զորությունը» (Նորթ Բրունսվիք, Նյու Ջերսի, «Bridge-Logos Publishers», 1997թ.), էջ 79:

#### **Գլուխ 5**

1. Աստվածաբանության դոկտոր Սփիրոս Ջոզիաթեսի խմբ., «Նոր կտակարանի բառերի ուսումնասիրության ամբողջական բառարան» (Չատանուգա, Տենեսի, «AMG Publishers», 1992թ.), «միստերիոն» բառահոդվածը:
2. Յոհաննես Պ. Լոու և Յուջին Ալբերդ Նիդա. հատոր 1, «Նոր Կտակարանի հունարեն-անգլերեն իմաստաբանական բառարան», 2-րդ հրատարակության էլեկտրոնային հրատարակություն, էջ 383 (Նյու Յորք. «United Bible Societies», 1996թ.):
3. «Սթրոնգի համառոտ բառարան», էջ 51:

#### **Գլուխ 5. Սերտողություններ**

1. Քենեթ Ջեզին. «Ինչո՞ւ լեզուներ» (Տալսա, Օկլահոմա. «Rhema Bible Church», 1975թ.), էջեր 14-16:
2. Օսվալդ Չեմբերս. «Այն ամենը, ինչ կարող եմ՝ Նրա փառքի համար» (Ուիլիամսվիլ, Օհայո, «Barbour Publishing, Inc.», 1997թ.), էջ 155:
3. Նույնը:

#### **Գլուխ 6**

1. «Վայնի բացատրական բառարան», էջ 585: Տե՛ս նշումը այս հոդվածի ներքևում, որտեղ քննարկվում է տարբերությունը «տեկնոն»-ի և «հույոս»-ի միջև:
2. «Նոյ Վեբսթերի Անգլերենի ամերիկյան բառարանի առաջին հրատարակություն» (Սան Ֆրանցիսկո, «Foundation for Americal Christian Education», 1967, 1995թթ.), էջ 113:

# ՍՈՒՐԲ ՀՈԳԻ

Այս գիրքը, որը ձեր ձեռքում է, Ջոն Բիվերի «Սուրբ Յոգի» ուսումնական դասընթացի մի մասն է: Կարդալով գիրքը և օգտագործելով հավելյալ ուսումնական նյութերը, որոնք հասանելի են DVD սկավառակում, և որոնք կարելի է ներբեռնել CloudLibrary.org կայքից՝ դուք կկարողանաք ամբողջովին ուսումնասիրել այս դինամիկ և կյանք փոխող դասընթացը: Ջանասիրաբար ուսումնասիրելով՝ ձեր քրիստոնեական կյանքի ընթացքը կզորանա, և դուք Աստծո համար կկարողանաք անել ավելին:

«Սուրբ Յոգի» ամբողջական դասընթացը բաղկացած է հետևյալ մասերից.

– **«Սուրբ Յոգի» գիրք**

Այս դասընթացի միակ տպագրված մասը:

Գիրքը նույնպես առկա է հավաքածու-սկավառակում՝ PDF ձևաչափով:

– **«Սուրբ Յոգի» հավաքածու-սկավառակ**

Կցված սկավառակը պարունակում է դասընթացի բոլոր նյութերը՝ թվային ձևաչափերով: Դուք չեք կարողանա նվազարկել այս սկավառակը ձեր տնային CD կամ DVD նվազարկիչներով: Այնուամենայնիվ, բոլոր ֆայլերը կարելի է բեռնել ձեր պլանշետների, iPad-ների, համակարգիչների և սմարթֆոնների մեջ:

– **«Սուրբ Յոգի» աուդիո գիրք**

«Սուրբ Յոգի» գրքի բոլոր վեց գլուխները, ընթերցված հայերենով՝ MP3 ձևաչափով:

– **«Սուրբ Յոգի» վիդեո դասեր**

Բոլոր 6 վիդեո դասերը՝ MP4 ձևաչափով:

– **«Սուրբ Յոգի» աուդիո դասեր**

Բոլոր 6 աուդիո դասերը՝ MP3 ձևաչափով:

– **Հավելյալ նյութեր**

Այս DVD սկավառակը նույնպես պարունակում է այլ գրքեր և նյութեր, ներառյալ՝ «Անկոտրում Յոգի» և «Թերեր կրող կանայք» գրքերը:

# Այս դասընթացի բոլոր նյութերը սկեր են ձեզ համար



Ազատորեն կրկնօրինակեք այս սկավառակը, պատճենեք դրանում առկա նյութերը, ուղարկեք էլ. փոստով՝ ձեր ընկերներին, պատճենեք տեքստը և տեղադրեք «Word» ֆայլերի մեջ, տրամադրեք այս ուսմունքները ձեր եկեղեցուն, վերբեռնեք դրանք ինտերնետային կայքերի մեջ, որպեսզի այլ մարդիկ կարողանան օգտվել դրանցից: Տարածեք այս նյութերն ամենուր, ուր մարդիկ քաղց ունեն Աստծո խոսքի ողջամիտ ուսմունքների հանդեպ և ցանկանում են ապրել զորացված քրիստոնեական կյանքով:

Ցանկանում եք ավելի՞ն  
Տեսաձրեք պատկերակը



Այցելե՛ք [CloudLibrary.org](http://CloudLibrary.org) Ձոն և Լիզա Բիվերների այլ  
հեղինակային նյութեր ներբեռնելու համար:



# ՍՈՒՐԲ ՅՈԳԻ

## ՀԱՎԱՔԱԾՈՒ-ՍԿԱՎԱՌԱԿ



Դիտեք հավաքածուի նյութերը ձեր համակարգչով և ներբեռնեք հավելյալ նյութերը առցանց [www.CloudLibrary.org](http://www.CloudLibrary.org) կայքից:



Messenger  
International  
[MessengerInternational.org](http://MessengerInternational.org)

Միայն համակարգչի համար

## ՋՈՆ ԲԻՎԵՐ

### ԷԴԻՍՈՆ ԲԻՎԵՐԻ ՅԵՏ



Այս հավաքածու-սկավառակը անձնական նվեր է ձեզ Ջոն Բիվերից: Այն տրամադրում է մի շարք ազդեցիկ նյութեր, որոնք կօգնեն ձեզ՝ շարունակել այս դինամիկ դասընթացի ուսումնասիրությունը և կիսվել սրանով այլ մարդկանց հետ: Դուք կարող եք ազատորեն տարածել կամ կրկնօրինակել այս դասընթացի ցանկացած մասը: Կարող եք ուղարկել դասընթացի նյութերն այլ մարդկանց էլեկտրոնային փոստով, բաժանել Աստվածաշնչյան դպրոցի ուսանողներին, վերբեռնել ինտերնետային կայքերում կամ բազմացնել: Այս սկավառակը պատրաստվել է հատկապես ամենուր գտնվող քրիստոնյա հավատացյալներին ոգեշնչելու և խրախուսելու համար:

Ջոն և Լիզա Բիվերներն ունեն այլ ուսմունքներ հայերենով, որոնք ներբեռնելու համար հասանելի են հետևյալ կայքերում.

[www.MessengerInternational.org](http://www.MessengerInternational.org)  
[www.CloudLibrary.org](http://www.CloudLibrary.org)

Հավելյալ նյութերը բազմաթիվ լեզուներով հասանելի են դիտելու և ներբեռնելու համար [Youtube.com](http://Youtube.com), [Youku.com](http://Youku.com) և նյութեր տարածող այլ կայքերում:

# ԴՈՒՔ ԳԻՏԵՔ ՆՐԱ ՄԱՍԻՆ, ԲԱՅՑ ԱՐԴՅՈՒՔ ՃԱՆԱԳՈՒՄ ԵՔ ՆՐԱՆ

Աշակերտները երեք տարի շարունակ Հիսուսի հետ էին: Նրանք քայլում էին Հիսուսի հետ և լսում այն ամենը, ինչ Նա ասում էր իրենց: Այնուամենայնիվ, Հիսուսն իր ամենամտերիմ ընկերներին ասաց, որ Ինքը պետք է թողնի նրանց, որպեսզի Սուրբ Հոգին կարողանա գալ, և որ նրանց համար ավելի լավ կլինի, եթե Ինքը գնա (տե՛ս Հովհ. 16.7,13,14): Եթե սա ճշմարիտ է աշակերտների համար, ովքեր ամեն օր Հիսուսի հետ էին, ապա որքա՞ն ավելի մենք կարիք ունենք, որ Սուրբ Հոգին գործուն մասնակցություն ունենա մեր կյանքերում:

Ցավոք, Սուրբ Հոգուն հաճախ սխալ են հասկանում. շատերն անտեղյակ են, թե Ով է Նա և ինչպես է հայտնվում մեզ: Սուրբ Հոգին հաճախ պատկերվում է որպես «տարօրինակ» մի երևույթ, բայց Աստվածաշունչը պարզորեն ցույց է տալիս, որ Նա անանձնական էակ չէ: Սուրբ Հոգին Անձ է, Ով խոստացել է՝ երբեք չհեռանալ ձեզանից: Այս ինտերակտիվ գրքում Ջոն Բիվերը ձեզ հրավիրում է անձամբ հայտնաբերել Եկեղեցուն ամենից անտեսված և սխալ հասկացված անձնավորությանը՝ Սուրբ Հոգուն:

Բաց մի՛ թողեք այս գարմանալի ներածությունը:



**ՋՈՆ ԲԻՎԵՐԸ** և նրա կինը՝ Լիզան, «Մեսինջեր Ինտերնեյշնլ» ծառայության հիմնադիրներն են: Ջոնը քարոզիչ է, նաև՝ հանրաճանաչ գրող: Առանց փոխզիջման՝ նա համարձակորեն և ջերմեռանդորեն քարոզում է ճշմարտությունը: Նա ցանկանում է սատարել տեղական եկեղեցիներին և ապահովել առաջնորդներին քրիստոնեական նյութերով՝ անկախ նրանց բնակության վայրից, լեզվից կամ ֆինանսական վիճակից: Մինչև օրս նրա նյութերը թարգմանվել են ավելի քան 60 լեզուներով: Երբ Ջոնը տանն է, սովորաբար փորձում է համոզել Լիզային, որ միասին գոլֆ խաղան, նաև շփվում է իր չորս որդիների, հարսի և թոռնիկների հետ:

## ԸՆԴԳՐԿՈՒՄ Է «ՍՈՒՐԲ ՀՈԳԻ» DVD ՀԱՎԱՔԱԾՈՒՄ

Ներբեռնե՛ք այս և այլ նյութերը հետևյալ կայքերում.  
[www.CloudLibrary.org](http://www.CloudLibrary.org)  
[www.MessengerInternational.org](http://www.MessengerInternational.org)



Ցանկանում եմ ավելի ու ավելի ծանոթանալ Ձեր աշխատանքին



**Messenger International**  
MessengerInternational.org

Այս գիրքը նվեր է հեղինակի կողմից և վաճառքի ենթակա չէ:

